ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՀԱՐ ԺՈՐԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

Գիտական ղեկավար՝

Պատմական գիտությունների դոկտոր

ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… 4

Գ Լ Ո Ւ Խ I.

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ…… 18

1.1. ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԿԻՍԱՆԿԱԽ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ…… 24

1.2. ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԵՐԸ XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ…… 42

1.3. ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ…… 50

1.4. ԴՐԱՄԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ…….. 63

Գ Լ Ո Ւ Խ II.

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ XVIII Դ. 50-80-ԱԿԱՆ ԹԹ. ……. 76

2.1. ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ ՌՈՒՍ-ԻՐԱՆԱ-ՕՍՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ XVIII Դ. 50-70-ԱԿԱՆ ԹԹ. ……... 76

2.2. ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII Դ. 80-ԱԿԱՆ ԹԹ. ……. 95

Գ Լ Ո Ւ Խ III.

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII Դ. ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ……. 116

3.1. ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

XVIII ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ…….. 116
3.2. Վ. ԶՈՒԲՈՎԻ 1796 Թ. ԿԱՍՊԻԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ
ԵՎ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……..... 131
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……. 144
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……. 150

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի [1] խանությունների և Ռուսական կայսրության XVIII դ. երկրորդ կեսի հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը կարևոր գիտական նշանակություն ունի Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ այսրկովկասյան ուղղության պատմական, աշխարհաքաղաքական և տնտեսական գործընթացների, ինչպես նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի էթնոքաղաքական իրավիճակի առավել խոր ու համակողմանի ընկալման և ժամանակակից խեղաթյուրումների բացահայտման տեսանկյունից։

Թեմայի համակողմանի վերլուծությունն արդիական է ոչ միայն Հյուսիս-արևելյան Այսրկովասում ծավալվող պատմական ու քաղաքական զործընթացների քննարկման և լուսաբանման առումով, այլև ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումները ճիշտ գնահատելու համար։

Հյուսիս-արևելյան Այսրկովկասը Սև և Կասպից ծովերի ավազանի աշխարհաքաղաքական կարևորագույն հանգույց է՝ ռազմավարական ճանապարհ դեպի Մերձավոր Արևելք։ XVIII դ. երկրորդ կեսին Այսրկովկասը, մասնավորապես նրա հյուսիս-արևելյան հատվածը, վերածվել էր ռուս-իրանա-օսմանյան ռազմաքաղաքական շահերի բախման թատերաբեմի։ Ժամանակաշրջանի պատմական առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ Նադիր շահի մահից (1747 թ.) հետո նրա ստեղծած պետությունը տրոհվել էր կիսանկախ և ինքնուրույնության ձգտող պետական միավորների՝ խանությունների։ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունները ինքնուրույն դիվանագիտական հարաբերություններ կառուցելու հնարավորություն էին ձեռք բերել։ Նրանք ստիպված էին իրենց անվտանգությունն ու ինքնուրույնությունը պահպանելու նպատակով Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև խուսանավելու քաղաքականությանը։

Նշված ժամանակաշրջանում Ռուսական կայսրության այսրկովկասյան քաղաքականության համար անհրաժեշտ էին լուծումներ, որոնք թույլ կտային կարգավորել հարաբերությունները թե՛ Օսմանյան կայսրության, թե՛ Իրանի տերության

[11] «Այսրկովկաս» կամ «Անդրկովկաս» եզրույթը համարժեք է «Հարավային Կովկաս» աշխարհագրական անվանը։ Հյուսիս-արևելյան Այսրկովկաս ասելով մենք նկատի ունենք Կուր գետի ստորին հոսանքից հյուսիս ընկած շրջանները, մինչև Սամուր գետը (կամ Դերբենդի անցքը)։

և թե՛ այսրկովկասյան տիրակալների հետ: XVIII դ. երկրորդ կեսին Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերին անհրաժեշտ էր հավասարակշռված ու կայուն Այսրկովկաս, բայց՝ միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված խաներով և տիրակալներով: Ուստի 1750-1770-ական թթ. ռուսական դիվանագիտությունը, Այսրկովկասում և Դաղստանում թուրք-իրանական աշխարհաքաղաքական գործոնը հաշվի առնելով, առժամանակ հրաժարվել էր տարածաշրջանում ռազմական միջամտություն կատարելուց՝ ռազմաքաղաքական ներկայության փոխարեն բավարարվելով իր քաղաքական ազդեցության հաստատմամբ: 1750-1770-ական թթ. խանությունների նկատմամբ ռուսական քաղաքականությունը դիվանագիտական միջամտության բնույթ էր կրում: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի նկատմամբ վարվող դիվանագիտական միջամտության քաղաքականությունը հետագա տասնամյակներում վերածվել էր հայեցակարգի՝ հակակշիռների ստեղծման մեխանիզմի: 1780-ական թթ. Ռուսական կայսրությունը, Մերձսևծովյան, մասնավորապես Ղրիմի հիմնախնդիրը հաջողությամբ լուծելով, Այսրկովկասի առավել ազդեցիկ տիրակալների՝ Արևելյան Վրաստանի (իմա՝ Քարթլի-Կախեթի միացյալ թագավորություն)[2] Հերակլ Բ արքայի և Ղուբայի Ֆաթհ Ալի խանի նկատմամբ հմտորեն կիրառում էր քաղաքական հավասարակշռության սկզբունքը՝ թույլ չտալով Այսրկովկասում միաբևեռ ուժի ի հայտ գալը:

1790-ական թթ. սկզբին Ռուսաստանն, օգտվելով Զենդերի արքայատոհմի երերուն վիճակից և հաղթելով երկրորդ ռուս-թուրքական պատերազմում, ծրագրում էր իրականացնել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը դիվանագիտական ճանապարհով:

1790-ական թթ. կեսին խանություններն, առաջին անգամ քաղաքական կիսանկախ կարգավիճակի կորստյան իրական վտանգի հետ բախվեցին՝ ի դեմս Աղա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքի: Խանությունների համար հասունացել էր Իրանի տերության, Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև քաղաքականապես կողմնորոշվելու

[2] XVIII դ. երկրորդ կեսին Վրաստան եզրույթը ենթադրում էր «Քարթլիի և Կախեթի թացավորությունը» (տե՛ս **С. Бурнашев,** Описание областей Адребижанских в Персии и их политического состояния, Курск, 1793, с. 3):

պահը: 1795 թվականից հետո խանությունների խուսանավելու հայեցակարգը կորցրել էր իր կենսունակությունը՝ Հյուսիս-արևելյան Այսրկովկասը վերադարձնելով Իրանի տերության պետական համակարգ:

1796 թ. փետրվարի 19-ին Վ. Զուբովին տրված հրամանագրով Ռուսաստանի այսրկովկասյան քաղաքականության մեջ ձևավորվում է Հյուսիս-արևելյան Այսրկովկասը զենքի ուժով միավորելու հայեցակարգը: 1796 թ. Ռուսական պետության հարավային սահմաններից վտանգի հեռացումը ռուսական կառավարող շրջանակները կապում էին Կասպից ծովի արևմտյան ափին անվտանգության գոտու ստեղծման հետ՝ ի դեմս մուսուլմանական բուֆերային իշխանությունների:

Ատենախոսության թեմայի արդիականությունը կարևորվում է Ռուսական պետության և Հյուսիս-արևելյան Այսրկովկասի քաղաքական կազմավորումների աշխարհաքաղաքական շահերի ուսումնասիրության տեսանկյունից, ինչը թույլ է տալիս ներկայումս Այսրկովկասում առկա մի շարք չլուծված խնդիրների, մասնավորապես Արցախի հիմնախնդրի, առավել խորքային վերլուծությունը՝ պատմագիտական հենքի վրա:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ուսումնասիրության նպատակն է՝ հետազոտել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունները՝ XVIII դ. երկրորդ կեսի աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների համատեքստում:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը խնդիր ունի.

- Հետազոտել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի կիսանկախ խանությունների ձևավորման գործընթացը:
- Ներկայացնել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների էթնոքաղաքական պատկերը:
- Ուսումնասիրել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում հայ ազգաբնակչության սոցիալ-իրավական դրությունը:
- Վերլուծել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում իրականացվող դրամահատության պատմագիտական նշանակությունը:

- Լուսաբանել և քննության ենթարկել խանությունների քաղաքական ռազմավարությունը Իրանի տերության, Օսմանյան և Ռուսական կայսրությունների նկատմամբ:
- Քննել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության փոխհարաբերությունների շրջափուլերը:
- Լուսաբանել Հյուսիս-արևելյան Այսրկովկասում Ռուսաստանին հակազդելու խնդրում Իրանի տերության և Օսմանյան կայսրության քաղաքականությունը խանությունների նկատմամբ:
- Վերլուծել Ռուսական կայսրության կովկասյան քաղաքականությունը ռուս-իրանական և ռուս-թուրքական ռազմաքաղաքական, առևտրա-տնտեսական շահերի համատեքստում:
- Վերլուծել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների քաղաքական դիրքորոշումը ռուս-իրանական հակամարտության խնդրում:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության մեջ ամբողջապես նորովի է գնահատվում Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունների քաղաքական պատմությունը.

- Ամբողջական և լիովին նոր վերլուծության են ենթարկվում XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունների զարգացման դինամիկան և շրջափուլերը:
- Բազմակողմանիորեն բացահայտվում են Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության երկկողմանի համագործակցությունը պայմանավորող տարածաշրջանային գործոնները:
- Հանգամանալիորեն ներկայացվում է Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև խանությունների՝ անվտանգության և ինքնիշխանության պահպանմանը միտված խուսանավելու հայեցակարգի ձևավորումը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները

Ատենախոսության ուսումնասիրության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են XVIII դ. երկրորդ կեսը, ավելի ստույգ՝ 1747-1796 թթ.: Ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է Հյուսիս-արևելյան Այսրկովկասում

նշված ժամանակահատվածում տեղի ունեցած պատմական իրադարձություններով, որոնց հետևանքով խանությունները կիսանկախ քաղաքական կարգավիճակ ձեռք բերեցին՝ ինքնուրույն հարաբերություններ հաստատելով Ռուսական պետության հետ:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Աղբյուրագիտական նյութի քննության ընթացքում բազմիցս բախվել ենք ադրբեջանական պատմագրության ոչ միայն փաստագրական, այլև տեսական և մեթոդական խեղաթյուրումների հետ: Մեր ուսումնասիրության հիմքում ընկած են սկզբնաղբյուրների քննական վերլուծության, պատմական փաստերի համեմատական համադրման և գիտական անաչառության մեթոդները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Ատենախոսության դրույթները կարևոր են ինչպես XVIII դ. երկրորդ կեսի Այսրկովկասի պատմության առանձին հիմնահարցերի ուսումնասիրության, այնպես էլ ժամանակակից փուլում տարածաշրջանում ծավալվող աշխարհաքաղաքական զարգացումների վերլուծության և լուսաբանման համար:

Արված եզրակացությունները կարող են հիմք դառնալ ինչպե՛ս նոր, էլ ավելի խորը հետազոտությունների, այնպե՛ս էլ ընդհանրացնող կովկասագիտական աշխատությունների և ուսումնական ձեռնարկների շարադրման համար:

Աղբյուրների և գրականության տեսություն

Ատենախոսական հետազոտության ժամանակ օգտագործվել է աղբյուրագիտական հարուստ բազա, ինչը հնարավորություն է ստեղծել համակողմանի ուսումնասիրել թեման: Հետազոտության սկզբնաղբյուրներ են ծառայել արխիվային նյութերը անտիպ փաստաթղթեր, վավերագրեր և ձեռագրեր, ինչպես նաև տպագիր սկզբնաղբյուրները: Արխիվային սկզբնաղբյուրները վեր են հանվել Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) ձեռագրական և արխիվային հավաքածոներից, Կաթողիկոսական դիվանի հայերեն և ռուսերեն վավերագրերից, ՌԴ արխիվային ֆոնդերից կատարված լուսապատճեններից:

Տպագիր սկզբնաղբյուրներից հետազոտության համար բացառիկ արժեք է ներկայացնում Ս. Գմելինի ուսումնասիրությունը [3], որն անձամբ է եղել

[3] **С. Гмелин,** Путешествие по России для исследования трех царств естества, часть III, I половина, СПб., 1785.

տարածաշրջանում և արժեքավոր դիտարկումներ կատարել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության ու էթնիկ պատկերի վերաբերյալ:

XVIII դ. երկրորդ կեսի Հյուսիս-արևելյան Այսրկովկասի առևտրա-տնտեսական և քաղաքական պատմության մի շարք հիմնահարցերի մասին ժամանակակից ականատեսի վկայություններ են հանդիսանում անգլիացի Ջ. Հենվեյի, Ֆ. Սոյմանովի և Մ. Չուլկովի, եվրոպացի ճանապարհորդներ ու հետազոտողներ՝ Ջ. Բելի, Ջ. Կուկի, Վ. Քոքսի, Ջ. Ֆորստերի և այլոց արձանագրություններում[4]:

XVIII դ. երկրորդ կեսի Այսրկովկասի և նրան հարակից իրանական տարածքների խանությունների քաղաքական պատմության լուսաբանմամբ աչքի են ընկնում Արևելյան Վրաստանում 1783-1787 թթ. հաստատված ռուսական լիազոր ներկայացուցիչ զնդապետ Ս. Բուրնաշևի[5], Հերակլ Բ և Սողոմոն Ա արքաների մոտ գտնվող (1782-1783 թթ.) գերմանացի բժիշկ Յ. Ռայնեգսի և Մ. Բիբերշտայնի աշխատությունները[6]:

---

[4] **J. Hanway,** An historical Account of the British Trade over the Caspian Sea: with the author's journal of Travels from England through Russia into Persia and back through Russia, Germany and Holland, col. I, London, 1753; **Ф. Сойманов,** О торгах за Каспийское море древних средних и новейших времен, СПб., 1765; նույնի՝ Описание Каспийского моря и чиненных на оном российских завоеваний, яко часть истории государя императора Петра Великого, СПб., 1763; **М. Чулков,** Историческое описание российского коммерции при всех портах и границах от древних времен до ныне настоящего и всех преимущественных узаконений по оной государя императора Петра Великого и ныне благополучно царствующей государыни императрицы Екатерины Великой, т. II, кн. II, 1785; **J. Bell,** Travels from St. Petersburgh in Russia, to various parts of Asia. A new edition, at one volume, Edinburgh, 1806; **J. Cook,** Voyages and travels through the Russian Empire, Tartary and Part of Kingdom of Persia, vol. II, Edinburgh, 1770; **W. Coxe,** Travels in Poland, Russia, Sweden and Denmark, the fifth edition, col. III, London, 1802; **J. Forster,** A Journey from Bengal to England, London, through the northern part of India, Kashmir, Afghanistan, and Persia, and into Caspian-sea, col. II, London, 1798: Հմմ. **Մ. Զուլալյան,** Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա. Քաղաքական պատմություն, Եր., 1990; Кавказ: европейские дневники XIII-XVIII веков, Сост. **В. Аталиков**, Нальчик, 2010, вып. III.

[5] **С. Бурнашев,** Описание областей Адребижанских в Персии и их политического состояния, Курск, 1793. Բուրնաշևների ազնվական տոհմի մասին հիշատակումները պահպանվել են XVII դարից, իսկ նրանց զինանշանի մասին տե՛ս Общий гербовник дворянских родов всероссийской империи, начатый в 1797 году, ч. IV, Гатчино, 1799, с. 119-120.

[6] **J. Reineggs and M. Bieberstein,** A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reineggs and Marshal Bieberstein, vol. 1, London, 1807; **Marschall fon Bieberstein,** Tableau des provinces situées sur la cote occidentale de la mer Caspienne entre les fleuves Terek et Kour, St. Pétérsbourg, 1798.

Ատենախոսության մեջ ընդգրկված ժամանակաշրջանի Կովկասի պատմության համակողմանի լուսաբանման համար մեծ նշանակություն ունեն Վ. Զուբովի Կասպիական արշավանքի մասնակից սպաներ՝ Ֆ. Սիմոնովիչի, Ն. Դրենյակինի, Պ. Բուտկովի, Ա. Սերեբրովի կատարած հետազոտությունները[7]:

Այսպիսով, XVIII դ. գրավոր սկզբնաղբյուրները հիմնված են դրանց հեղինակների անձնական դիտարկումների, զանազան ճանապարհներով (այդ թվում՝ նաև հետախուզական) ձեռք բերված տեղեկատվության, բանավոր փոխանցված խոսքի վրա[8], ինչը սակայն չի նվազեցրել սկզբնաղբյուրների գիտական նշանակությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի պատմության ուսումնասիրության համար:

XIX դ. առաջին քառորդին ռուսական կովկասյան քաղաքականության ակտիվացմանը զուգահեռ Կովկասի և նրա ժողովուրդների պատմության համակողմանի ուսումնասիրությունը գիտական նոր աստիճանի վրա է դրվում նախորդ ժամանակաշրջանի սկզբնաղբյուրների ներառմամբ: XIX դ. ուսումնասիրություններից հիշատակության է արժանի 1796 թ. Կասպիական արշավանքի մասնակից Ս. Բրոնևսկու արխիվային նյութերի և անձնական դիտարկումների հենքի վրա գրված երկհատոր աշխատությունը[9]: Թեմայի ուսումնասիրության համար ուշադրության է արժանի Օ. Եվեցկու Այսրկովկասի վիճակագրական նկարագրությունը, ուր զետեղված էր նաև Այսրկովկասի XVIII դարավերջի քաղաքական իրադարձություններին նվիրված

---

[7] **Ф. Симонович,** Описание Южного Дагестана. 1796 г.; **Н. Дренякин,** Описание Ширвана. 1796 г.; **П. Бутков,** Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.; նույնի՝ Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г.; **А. Ахвердов,** Описание Дагестан. 1804 г.; **А. Серебров**, Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева,** Москва, 1958.

[8] Օրինակ՝ Վ. Զուբովի 1796 թ. Կասպիական արշավանքի մասնակից Պ. Բուտկովն իր նամակներից մեկում գրում է, որ ի երջանկություն իրեն՝ հաջողվել է գտնել Ֆաթհ Ալի խանի առաջին քարտուղարին, ով տիրապետում է արաբերեն, թուրքերեն ու պարսկերեն լեզուներին և «լավ պատկերացում ունի իր հայրենիքի մասին» (**П. Бутков,** Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева**, Москва, 1958, с. 203):

[9] **С. Броневский,** Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и пополненные Семеном Броневским, ч. II, Москва, 1823.

ընդարձակ հոդվածը[10]: Այսրկովկասի և Դաղստանի էթնոքաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության մանրակրկիտ հետազոտություն է իրականացրել տարածաշրջան այցելած արևելագետ Ի. Բերեզինը[11]:

Կովկասի XVIII դ. քաղաքական պատմության ընդարձակ լուսաբանմանն է նվիրված ակադեմիկոս Պ. Բուտկովի եռահատոր հետազոտությունը[12], որի հիմքում դրված են արխիվային մեծաթիվ փաստաթղթեր, վավերագրեր, դիվանագիտական գրագրություններ և արժեքավոր այլ սկզբաղբյուրներ, որոնց մի մասը մեզ չի հասել: XVIII դ. երկրորդ կեսի Այսրկովկասի ռազմաքաղաքական պատմությունը, Աղա Մուհամմադ խանի Այսրկովկաս կատարած արշավանքն իր արտացոլումն է գտել Ն. Դուբրովինի քառահատոր հետազոտության մեջ[13]: Խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների լուսաբանման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Վ. Պոտտոյի բազմահատոր հետազոտությունը[14]:

Տեղին նշենք, որ XIX դ. ռուսական կայսերական պատմագիտական միտքը հաճախ կողմնակալ մոտեցում է ցուցաբերում ռուս-իրանա-օսմանյան աշխարհաքաղաքական հակամարտության մեջ այսրկովկասյան խաների ու տիրակալների որդեգրած դիրքորոշումների վերաբերյալ:

Հիմնահարցի ուսումնասիրման համար օգտագործել ենք վրացական, թուրքական և պարսկական աղբյուրներից կատարված թարգմանությունները՝ Լ. Մելիքսեթ-Բեկի[15],

---

[10] **Օ. Евецкий,** Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи: Политическое состояние Закавказского края в исходе XVIII в. и сравнение оного с нынешним, СПб., 1835.

[11] **И. Березин,** Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1849.

[12] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., ч. II, СПб., 1869.

[13] **Н. Дубровин,** История войны и владычества русских на Кавказе, ч. III, СПб., 1886; նույնի՝ Закавказье от 1803 по 1806 гг., СПб., 1866; նույնի՝ Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, СПб., 1867; նույնի՝ Поход графа Зубова в Персию в 1796 г., – «Военный сборник», 1874, № 2-6.

[14] **В. Потто,** Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, т. I, вып. I, СПб., 1887; նույնի՝ Исторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии, Под ред. **В. Потто**, Тифлис, 1899.

[15] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Եր., 1955; **Л. Меликсет-Беков,** Описание сопредельных с Грузиею стран второй половины XVIII века, – Труды Тбилисского государственного университета, т. XVIII, Тбилиси, 1941.

Ա. Սաֆրաստյանի [16] և Ք. Կոստիկյանի [17] աշխատասիրությամբ և Զնդեթ փաշայի աշխատության հատվածային հրատարակությունը XIX դ. ռուսական մամուլի էջերում[18]:

XIX դ. երկրորդ կեսին հրատարակված տպագիր սկզբնաղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Ռուսական կայսրության օրենքների լիակատար ժողովածոն (ПСЗРИ)[19], Հնագրական հանձնաժողովի կողմից 12 հատորով վավերագրերի հրատարակությունը (Ա. Բերժեի խմբագրությամբ)[20], Պետական Խորհրդի արխիվի Ա և Բ հատորները [21] և Ա. Ցագարելիի կողմից հրատարակած «Հրովարտակներ»-ի ժողովածոն [22] : Կայսերական հրամանագրեր, նամակագրություն և պաշտոնական գրագրություններ են ամփոփված Ռուսական կայսերական պատմական ընկերակցության ժողովածոյի (СИРИО) մի շարք հատորներում[23]:

XVIII դ. հայկական սկզբնաղբյուրներից օգտագործել ենք պատմիչների ու պատմագիրների՝ Եսայի Հասան-Զալալյանցի, Աբրահամ Երևանցու, Աբրահամ Կրետացու, Սիմեոն Երևանցու, Միքայել Չամչյանի աշխատությունները[24]:

---

[16] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և մասնավորապես պատմական Հայաստանում XVI դ. երկրորդ կեսից), թուրքական պատմագիտությունը սկզբից մինչև XVIII դարի վերջերը, հտ. Ա, Կազմեց՝ **Ա. Խ. Սաֆրաստյան,** Եր., 1961:

[17] **Ք. Կոստիկյան,** Իրանի տերության պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ խանի 1795 թ. ղարաբաղյան արշավանքի մասին, – «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» (հետայսու՝ ՄՄԱԵԺ), հտ. XXVII, Եր., 2011; Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները **Ք. Կոստիկյանի,** Եր., 2000:

[18] Описание событий в Грузии и Черкесии по отношению к Оттоманской империи от 1192 по 1202 г. хиджры (1774-1784), Сочинение **Джевдета-паши,** Перевод с турецкого с предисловием и примечаниями **М. А. Гамазова,** – «Русский архив», т. III, Москва, 1888.

[19] Полное Собрание Законов Российской Империи (ПСЗРИ). Собрание первое, 1649-1825 гг., Под ред. **М. М. Сперанского,** СПб., 1830, т. VII, XXI, XXIII, XXIV, XXV.

[20] Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, Под ред. **Ад. Берже,** Тифлис, 1866-1904.

[21] Архив Государственного Совета, Под ред. **Н. В. Калачова, П. М. фон Кауфмана, И. А. Чистовича, Г. Ф. Штендмана и др.,** в 5-ти тт., 12-ти чч., СПб., 1869–1904, т. I, Совет в царствование императрицы Екатерины II, 1768–1896 гг., 1869; т. II, Совет в царствование императора Павла I, 1796–1801 гг., 1888.

[22] Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, Под ред. **А. А. Цагарели,** СПб., т. I, 1891; т. II, вып. II, 1902.

[23] Сборник Императорского русского исторического общества, СПб., 1911, т. 27, 1880, т. 42, т. 135, 1885, т. 143.

[24] **Եսայի Հասան-Զալալեանց,** Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868; **Զամբռ,** Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի **Սիմէօնէ** ցաւահար եւ վշտակոծ **կաթուղիկոսէ Երեւանցւոյ,** Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1873; **Աբրահամ Երեւանցի,** Պատմութիւն

Ընդգրկված ժամանակաշրջանի աղբյուրագիտական հարուստ նյութեր են ամփոփված նաև XIX դ. հայ հետազոտողներ Ղ. Ալիշանի, Մ. Սմբատյանցի, Մ. Բարխուտարյանցի երկերում և «Դիւան հայոց պատմութեան» շարքի հատորներում[25]:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում փաստաթղթային հարուստ նյութեր ենք օգտագործել Մ. Ներսիսյանի, Վ. Գամրեկելիի, Վ. Գաջիևի, Վ. Մաճարաձեի, Պ. Շաստիտկոյի և Գ. Բուռնությանի խմբագրություններով [26] 1950-1990-ական թթ. հրատարակված տպագիր սկզբնաղբյուրների ժողովածոներից:

Աշխատանքն առավել ամբողջական դարձնելու համար օգտագործել ենք մի շարք կարևոր գիտա-հետազոտական ուսումնասիրություններ: Խորհրդային տարիներին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի և Ռուսաստանի հարաբերությունների պատմությամբ, թեպետև կողմնակալ գնահատականներով, հիմնականում զբաղվել են ռուս և ադրբեջանցի պատմաբանները: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և

պատերազմացն 1721-1736 թթ., Պատ. խմբագիր՝ պրոֆ. **Ս. Վ. Տեր-Ավետիսյան,** Եր., 1938; **Աբրահամ կաթողիկոս Կրետացւոյ,** Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1870; **Միքայէլ Չամչեանց,** Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թ.), հտ. Գ, Եր., 1984:

[25] **Ղ. Ալիշան,** Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855; Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ տեառն **Սարգսի Սանահնեցւոյ Ջալալեանցի**՝ թեմական արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմէրէթի և այլոց, մասն Բ, Տփխիս, 1858; **Մ. Սմբատեանց,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896; **Մ. Բարխուտարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893; նույնի՝ Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1902; Դիւան հայոց պատմութեան, հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Գիրք Ա-Բ (1780-1834), Թիֆլիս, 1893; Գիրք Գ, մասն Բ, **Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը** (1763-1767), Թիֆլիս, 1894; Գիրք Դ, **Ղուկաս կաթողիկոս** (1780-1800), Թիֆլիս, 1899; Գիրք Ը, **Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը,** մասն Բ (1767-1776), Թիֆլիս, 1908; Գիրք Թ, **Հովսէփ կաթողիկոս Արղութեան** (1778-1800), Թիֆլիս, 1911; Գիրք Ժ, Մանր մատենագիրք (ԺԵ-ԺԹ դդ.), Թիֆլիս, 1912; Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք առաջին, **Ղուկաս Կարնեցի,** հտ. Ա (1780-1785), Աշխատասիրությամբ՝ **Վ. Գրիգորյանի,** Եր., 1984:

[26] Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг. Сборник документов, Под ред. **М. Нерсисяна**, Ер., 1990, т. IV; Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60 – х-начало 90-х годов XVIII в.). Документы и материалы, вып. I, Материал подобрал и подготовил к печати **В. Гамрекели,** Тбилиси, 1980; Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сборник документов, Отв. ред. **В. Гаджиев,** Москва, 1988; Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, /**В. Мачарадзе,** ч. II, Посольство Теймураза II в Россию, Тбилиси, [б. и.], 1968; նույնի՝ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, ч. III, вып. I, Русско-турецкая война 1768-1774 годов и Грузия, Тбилиси, 1988; նույնի՝ Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века. ч. III, вып. II, Тбилиси, 1997; Русско-индийские отношения в XIX в. Сборник архивных документов и материалов, Отв. ред. **П. Шаститко**, Москва, 1997; Russia and the Armenians of Transcaucasia, 1797-1889; A documentary record. Annotated translation and commentary by **George A. Bournoutian,** Costa Mesa, 1998.

Ռուսաստանի հարաբերությունների XVIII դ. պատմության առանձին հարցերի լուսաբանման համար անդրադարձել ենք խորհրդային պատմաբաններ Վ. Լևիատովի[27], Օ. Մարկովայի [28] , Գ. Աբդուլլաևի [29] , Ջ. Մուստաֆաևի [30] և Պ. Չոբանյանի [31] հետազոտություններին՝ դրանք համադրելով ժամանակաշրջանի գրավոր աղբյուրների հետ:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական պատմությունը որոշ կողմնակալ մեկնաբանություններով է ներկայացված «Ադրբեջանի միացումը Ռուսաստանին» ծավալուն աշխատության մեջ: Ըստ նրա՝ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի համար օրհասական 1790-ական թթ. պատմական ժամանակաշրջանում խանությունների միակ ելքը՝ «փրկությունը», Ռուսաստանին միացումն էր[32]:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների քաղաքական պատմությանը և մասնավորապես XVIII դ. 80-ական թթ. պատմա-քաղաքական իրադարձություններին է անդրադառնում է նաև Ա. Հովհաննիսյանը «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII դ. 80-ական թվականներին» աշխատության մեջ: Հեղինակն արխիվային և անտիպ այլ սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանել է Ռուսաստանի և Այսրկովկասի քաղաքական պատմության մի շարք հիմնահարցեր՝ շեշտը դնելով հայ ազատագրական շարժման պատմության վրա (այդ պատճառով ուսումնասիրողի ուշադրությունից դուրս են մնացել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսաստանի հարաբերությունների պատմության մի շարք մանրամասներ)[33]:

---

[27] **В. Левиатов,** Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948.

[28] **О. Маркова,** Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966.

[29] **Г. Абдуллаев,** Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80-х гг. XVIII в., Баку, 1958; նույնի՝ Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965.

[30] **Дж. Мустафаев,** Северные ханства Азербайджана и Россия (конец XVIII – начало XIX в.), Баку, 1989.

[31] **Պ. Չորանյան,** Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները XVIII դ. երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006; նույնի՝ Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), – «Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 2:

[32] Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX – начало XX вв.), Под ред. **А. Гулиева, В. Мочалова,** Баку, 1955, с. 19.

[33] **А. Иоаннисян,** Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990. Տե՛ս նաև թեմայի վերաբերյալ Ա. Հովհաննիսյանի մյուս հիմնարար մենագրությունը՝ Иосиф Эмин, Ер., 1989:

Թեմայի ուսումնասիրության մի շարք հիմնահարցերի նորովի գնահատմամբ ետխորհդային տարիների ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել կովկասագետ Վ. Դեգոևի հետազոտությունը[34], որտեղ, թեև հիմնական շեշտը դրվում է Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության վրա, սակայն անդրադարձ է կատարվում նաև Շիրվանի XVIII դ. երկրորդ կեսի պատմության առանձին հարցերի ուսումնասիրությանը։

Ուշադրության արժանի է նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության պատմության բազմահատորյակի XVIII դարն ընդգրկող պրակը՝ Ժ. Անանյանի աշխատասիրությամբ[35]:

Հայ պատմագիտության մեջ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի առանձին խանությունների XVIII դ. երկրորդ կեսի պատմությանը նվիրված գիտական ուսումնասիրություններ գրեթե չեն կատարվել: Բացառություն են կազմում Վ. Գրիգորյանի [36] և Ս. Մարգարյանի [37] հետազոտությունները։ Հայկական հարուստ աղբյուրները մանրակրկիտ վերլուծելով՝ Վ. Գրիգորյանը վերականգնում է XVIII դ. 80-90-ական թթ. քաղաքական իրավիճակն Այսրկովկասում: Շաքիի խանության XVIII-XIX դդ. քաղաքական պատմության մի շարք հարցեր խոր քննության են ենթարկվում Ս. Մարգարյանի ուսումնասիրության մեջ:

---

[34] **В. Дегоев,** Большая игра на Кавказе: история и современность. Статьи, очерки, эссе, Москва, 2003.

[35] История внешней политики России. XVIII век (от Северной войны до войн России против Наполеона), – История внешней политики России. Конец XV в. – 1917 г., Отв. ред. **А. Н. Сахаров,** Москва, 1998, с. 150-167. Տե՛ս նաև թեմայի վերաբերյալ Ժ. Անանյանի մյուս արժեքավոր ուսումնասիրությունը՝ Հայ-ռուսական հարաբերությունները, նախադրյալները, փուլերը, պրոբլեմի նկատմամբ մոտեցումները, – «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, № 1, էջ 3-19:

[36] **Վ. Գրիգորյան,** Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958:

[37] **С. Маркарян,** Независимое ханство Шаки в XVIII-XIX вв., – «Caucasica», Труды института политических и социальных исследований черноморско-каспийского региона, т. I, Под ред. В. А. Захарова, Москва, Изд-во «Панорама», 2011, с. 27-42.

Ղարաբաղի խանության և Արցախի մելիքությունների XVIII դ. երկրորդ կեսի պատմության մի շարք հիմնահարցերի լուսաբանմանն են նվիրված պատմաբան Ա. Մաղալյանի աշխատությունները[38]:

Ռուսական կայսրության XIX դ. Այսրկովկասում վարչա-տնտեսական քաղաքականության պատմության հիմնահարցերին են նվիրված պատմաբան Վ. Թունյանի արժեքավոր ուսումնասիրությունները[39]:

XIX դ. Բաքվի նահանգի հայ բնակչության, Բաքու քաղաքի հայության պատմաժողովրդագրական հիմնահարցերին են նվիրված հայագետ Գ. Ստեփանյանի արժեքավոր ուսումնասիրությունները[40]:

Հետազոտության կատարման ընթացքում օգտակար են եղել նաև անգլալեզու գիտական ուսումնասիրությունները[41]:

Այսպիսով, փաստագրական հարուստ ու բազմաբնույթ նյութերի համադրմամբ փորձել ենք ներկայացնել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և

---

[38] **Ա. Մաղալյան,** Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, նույնի՝ Арцахские меликства и меликские дома в XVII-XIX вв., Ер., Изд-во «Гитутюн» НАН РА, 2007; Арцахские меликства и возникновение карабахского ханства, – «Русский сборник: Исследования по истории России», Ред. О. Эльдман, т. VIII, Москва, Изд-во «Модест Колеров», 2010, с. 7-25.

[39] **В. Тунян,** Административно-экономическая политика самодержавия России в Закавказье. I пол. XIX в., Ер., 2007.

[40] **Գ. Ստեփանյան,** Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2010; նույնի՝ Բաքու քաղաքի հայության պատմությունը (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2011:

[41] **G. Hambly**, Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 104-143; **J. Perry**, Karim Khan Zand (1747-1779), London, Oneworld, 2006; նույնի՝ The Zand Dynasty, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 63-103; **S. Shaw,** Iranian relation with the Ottoman empire in the eighteenth and nineteenth centuries, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 297-313; The Cambridge History of Turkey, vol. III, The Later Ottoman Empire (1603-1839), Edited by **Suraiya N. Faroqhi,** Cambridge University Press, 2006; **R. Tapper,** Shāhsevan in Ṣafavid Persia, – «Bulletin of the School of Oriental and African Studies», University of London, vol. 37, № 2, 1974, p. 321-354; նույնի՝ Frontier Nomads of Iran: A Political and Social History of the Shahsevan (Cambridge Middle East Studies), Printed in the United Kingdom at the University Press, Cambridge, 1997; **F. Kazemzadeh,** Iranian relations with Russia and the Soviet Union to 1921, – The Cambridge history of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 314-349; **M. Atkin,** Russia and Iran 1780-1828, Minneapolis, 1980; **Ch. L. Krause, C. Mishler,** Standard Catalog of World Coins. Eighteenth century. 1701–1800, Edited by George Cuhaj, 6th edition, Krause Publications, 2013.

Ռուսական կայսրության XVIII դ. երկրորդ կեսի հարաբերությունների առավել ամբողջական և անաչառ պատմությունը:

ԳԼՈՒԽ I

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Նախքան այս գլխի հիմնական նյութին անցնելը, տեղին ենք համարում համառոտ ներկայացնել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի էթնոքաղաքական պատմությունը՝ XVIII դ. երկրորդ կեսին ծավալվող քաղաքական գործընթացների առավել օբյեկտիվ ու համակողմանի լուսաբանման համար։

Հյուսիս-արևելյան Այսրկովկաս եզրույթը XVIII դ. երկրորդ կեսին ներառում էր Բուն Աղվանքի (Կուրից հյուսիս) տարածքների՝ Դերբենդի, Ղուբայի, Շամախիի, Բաքվի և Շաքիի խանությունների պատմաաշխարհագրական սահմանները։ Անտիկ դարաշրջանից ի վեր մինչև 428 թ. Մեծ Հայքի և Բուն Աղվանքի թագավորությունների միջև սահմանն անցնում էր Կուր գետով, որից հարավ տարածվում էին հայկական Արցախ և Ուտիք նահանգները։ Նշված թվականին Հայաստանում Արշակունյաց արքայատոհմի իշխանությունը վերացնելուց հետո Սասանյանները նախ Ուտիքը, իսկ 450-451 թթ. նաև Արցախը միացնում են Աղվանից թագավորությանը, որն ինքը մտնում էր նույն 428 թվականի վարչական բարեփոխումով ստեղծված Աղվանից մարզպանության կազմի մեջ։ Պարսկական պետության վարչա-քաղաքական միավոր հանդիսացող մարզպանությունը, իր վրա կրելով Աղվանից թագավորության անվանումը, էթնոքաղաքական նոր միավոր էր՝ հայկական տարրի որոշակի գերակշռությամբ, ինչը և պայմանավորեց Աղվանքի վարչական կենտրոնի, ապա նաև կաթողիկոսարանի փոխադրումը Չող-Դերբենդից աջափնյա Պարտավ (VI դ. I կես)[42], իսկ հետագայում՝ Գանձակ (XII դ.) և Գանձասար (XV դ.)։ Հյուսիսից տափաստանաբնակ ցեղերի ներթափանցման, ինչպես նաև տարածքի վարչական նոր բաժանումների հետևանքով «Աղվանք» անվանումը որոշ առումով կիրառությունից դուրս է գալիս ձախափնյակի համար։ Շնորհիվ հոգևոր կենտրոնի առկայության, այն պահպանվում է առավելապես Արցախում և Ուտիքում։ Միաժամանակ հայկական հոծ բնակչության առկայության պատճառով «Աղվանք» եզրույթին զուգահեռ գործածվում են «Հայոց Արևելից կողմանք», «Արևելից կողմանք» և այլ հոմանիշներ։ Արաբական աղբյուրները

[42] Տե՛ս **А. Акопян,** Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, с. 134-140.

Կուր-արաքսյան միջագետքի (նեղ իմաստով՝ Արցախ, Ուտիք նահանգները) նկատմամբ կիրառում են «Առան» եզրույթը (=Աղվանք):

Սասանյանների և արաբների երկարատև տիրապետությունը նպաստել էր պարսկա-արաբական էթնիկ տարրերի ներմուծմանը և Աղվանքի էթնիկ պատկերն է՛լ ավելի բազմազան էր դարձրել: Սելջուկների, մոնղոլների, ապա թյուրքական ղզլբաշ քոչվոր ցեղերի տարածաշրջան ներթափանցելու հետևանքով Բուն Աղվանք – Ալբանիայի բնիկ նստակյաց էթնիկ տարրը մասամբ ուծացվել էր: Սակայն իրենց բուն էթնիկ դեմքը պահպանել էին ուդիները, լեզգիները և մի քանի այլ լեզգիալեզու փոքր ժողովուրդներ:

XI-XVI դդ. Բուն Աղվանք – Ալբանիայի տարածքի արևելյան հատվածը էթնոքաղաքական ու լեզվա-մշակութային լուրջ փոփոխությունների ենթարկվելով՝ Շիրվան անվանումն էր կրում[43]: Քաղաքական առումով XI դ. մինչև XVI դ. երրորդ տասնամյակի վերջը Շիրվանը Շիրվանշահերի պետության սիրտն էր՝ Շամախի և Բաքու կենտրոններով, որոնք իրենց ուրույն տեղն էին գրավում Այսրկովկասի միջնադարյան քաղաքների կողքին[44]:

XVI դ. երկրորդ կեսից մինչև XVIII դ. առաջին քառորդը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի մեծ մասը Սեֆյան պետության Շիրվանի բեկլարբեկության (կենտրոնը՝ Շամախի) կազմում էր[45]: Իրանական պետության կազմում այդ բեկլարբեկության քաղաքական ու տնտեսական կարևորության մասին էր փաստում այն, որ տասներեք բեկլարբեկությունների շարքում Շիրվանը գրավում էր երկրորդ տեղը[46]:

XVI դարից Այսրկովկասի և Շիրվանի տարածքը դառնում է թուրք-իրանական ռազմական բախումների թատերաբեմ: Այսպես, XVI-XVII դդ. ընթացքում Օսմանյան կայսրության և Սեֆյան պետության միջև ընթացող պատերազմների հետևանքով

---

[43] «Շիրվան» եզրույթի մասին տե՛ս **Ա. Հակոբյան,** «Շիրվան» երկրանվան ծագման հարցի շուրջ, «Մերձավոր Արևելք» (հետայսու՝ ՄԱ), 2007, պր. 4, Եր., էջ 61-65:

[44] **Հ. Աշուրբեյլի,** Государство Ширваншахов (VI-XVI вв.), Баку, 1983; Очерки истории Южного Дагестана /**Х. Рамазанов, А. Шихсаидов,** Москва, 1964.

[45] Շիրվանի սահմանների մասին տե՛ս Tadhkirat al-muluk: A Manual of Safavid Administration. (circa 1137/1725). Persian text in facsimile (B. M. Or. 9496). Translated and explained by **V. Minorsky,** London, 1943, p. 167-168; **Ղ. Ալիշան,** Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 91:

[46] **Мухаммад-рафи Ансари,** Дастур ал-мулук (Устав для государей), Предисловие, перевод, примечания и указатели **А. Б. Вильдановой,** Ташкент, 1991, с. 26.

կնքված Ամասիայի (1555 թ.), Ստամբուլի (1590 թ.), Կասրե-շիրինի (1639 թ.) պայմանագրերով Այսրկովկասն ու Շիրվանը տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերը փոփոխելով անցնում են մե՛րթ օսմանյան, մե՛րթ սեֆյան տիրապետության տակ:

XVIII դ. սկզբին Շամախիի բնակիչների մեծամասնությունը պարսիկներ էին, ինչպես նաև բնակվում էին «զգալի թվով» հայեր և վրացիներ: Շիրվանում խոսակցական լեզուն պարսկերենն էր, իսկ թուրքերենը համարում էին գռեհիկ լեզու[47]: Հավելենք, նաև որ Շամախիի Մուստաֆա խանն ինքն իրեն «այնպիսի պարսիկ» էր համարում ինչպիսին Բաբա-խանն էր[48]:

XVIII դ. սկզբին Սեֆյան պետության կործանման հետևանքով Այսրկովկասում քաղաքական իրավիճակն ապակայունանում է՝ պարարտ հող նախապատրաստելով ռուս-թուրքական ռազմական ագրեսիայի համար: XVIII դ. առաջին քառորդում ռուսական կովկասյան քաղաքականության մեջ նպատակ էր դրվում բացառել Իրանից արտահանվող մետաքսի հումքի անգլիական և թուրքական առևտրականների մենաշնորհը: Հետևաբար, Պետրոս Ա կայսեր նախանշած արևելյան քաղաքականության գլխավոր նպատակն էր Արևելքի և Արևմուտքի միջև իրականացվող համաշխարհային առևտուրն ուղղել դեպի Ռուսաստանի տարածք: Նախատեսվում էր Իրանի տերության, Միջին Ասիայի և Հնդկաստանի հետ իրականացվող առևտրի արդյունավետության համար Կուր գետի ակունքի մոտ ռուս-կովկասյան առևտրային նոր կենտրոն հիմնել[49]:

Ռուսական պետության ռազմաքաղաքական և առևտրա-տնտեսական շահերն ապահովելու նպատակով Պետրոս Ա կայսրը 1722-1723 թթ. նախաձեռնում է արշավանք (Կասպիական կամ Պարսկական) դեպի Հյուսիս-արևելյան Այսրկովկաս և գրավում Դերբենդից Բաքու ընկած տարածքները: Պետերբուրգում 1723 թ. կնքված ռուս-

---

[47] **J. Bell,** Travels from St. Petersburgh in Russia, to various parts of Asia. A new edition, it one volume, Edinburgh, 1806, p. 45-46.

[48] АКАК, т. II, 1868, с. 662.

[49] **В. Лысцов,** Персидский поход Петра I. 1722-1723, Москва, 1951, с. 53; **О. Маркова**, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, Москва, 1966, с. 65.

իրանական պայմանագրով Դերբենդից մինչև Բաքու ձգվող տարածքներն անցնում են Ռուսական կայսրությանը[50]:

Թուրքական ռազմական ներխուժումը Շիրվան կանխելու նպատակով Ռուսաստանը փորձում էր Արևելյան Այսրկովկասը բաժանել ռուսական և թուրքական ազդեցության գոտիների: Կոստանդնուպոլսի 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրով Շամախին և այլ տարածքներ անցնում են Օսմանյան կայսրությանը՝ առանց զորքի տեղակայման իրավունքի[51]:

Քաղաքական իրադրությունն Այսկովկասում փոխվում է 1730-ական թթ., երբ Նադիր Ղուլի խանին[52] հաջողվում է վերամիավորել իրանական պետության հողերը: Ռեշտի (1732 թ.) և Գանձակի (1735 թ.) պայմանագրերի արդյունքում[53] նա կարողանում է վերադարձնել 1720-ական թթ. Ռուսական կայսրությանը զիջած բոլոր տարածքները[54]:

Նադիր շահի (1736-1747) մահից հետո Իրանում ծայր առած քաղաքական անկայուն իրավիճակը վրաց իշխան Օթար Թումանովը Ռուսաստանի Արտաքին գործերի կոլեգիային ուղղված զեկուցագրերում իրավամբ «խռովություն» էր անվանում[55]: Իրանական պետության տրոհման հետևանքով Շիրվանում առաջանում են Շաքիի, Դերբենդի, Ղուբայի, Շամախիի և Բաքվի կիսանկախ խանությունները՝ էթնիկ խայտաբղետ պատկերով:

XVIII դ. երկրորդ կեսին ռուսական կառավարության պաշտոնական գրագրություններում Հյուսիս-արևելյան Այսրկովկասը «Ադրեբիջան» եզրույթով, իսկ

---

[50] Договоры России с Востоком, политические и торговые, Собрал и издал **Т. Юзефович,** СПб., 1869, с. 185-189.

[51] Полное Собрание Законов Российской Империи (հետայսու՝ ПСЗРИ). Собрание первое, 1649-1825 гг., Под ред. **М. М. Сперанского,** т. VII, СПб., 1830, с. 303-308; История народов Северного Кавказа, Отв. ред. **А. Л. Нарочницкий,** Москва, 1988, с. 415; Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1535-1914, by **J. C. Hurewitz,** vol. I, Prinston, 1956, p. 42-45.

[52] Նադիրը ծագում էր աֆշարների թուրքմենական ցեղի կարակլյու տոհմից (տե՛ս Материалы по истории туркмен и Туркмении, том II, XVI-XIX вв. Иранские, бухарские и хивинские источники, Под ред. **В. Струве, А. Боровкова, А. Ромаскевич, П. Иванова,** Москва-Ленинград, 1938, 119):

[53] Договоры России с Востоком, политические и торговые, с. 194-202, 202-207.

[54] Տե՛ս **В. Гаджиев,** Разгром Надир-шаха в Дагестане, Махачкала, 1996.

[55] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Եր., 1955, էջ 107:

նրա կառավարիչներին «ադրեբիջանական խաներ»[56] կոչելը «զուտ տուրք էր պարսից հիշողությանը»[57]: Խոսքը Սեֆյան պետության չորս (Իրաք, ֆարս, Ազարբայջան և Խորասան) վարչական ու ֆինանսական միավորներից մեկի՝ Ազարբայջանի (կենտրոնը՝ Թավրիզ) մասին է[58], որն իր մեջ էր միավորում Չուխուր-Սաադի, Ղարաբաղի և Շիրվանի բեկլարբեկությունները[59]: Ասվածի համատեքստում է նաև XVIII դ. երկրորդ կեսի վավերագրերում կիսանկախ խանություններն ու նրանց քաղաքները «պարսկական» կոչելը[60]: Օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ Ա-ն (1774-1789 թթ.) նույնպես Այսրկովկասը շարունակում էր կոչել «Ադրբեջան», իսկ նրա խաներին՝ «ադրբեջանական խաներ» եզրույթով[61]: Վերջապես, 1830 թվականից հետո, երբ Այսրկովկասը դառնում է Ռուսական կայսրության վարչա-քաղաքական միավոր, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի նկատմամբ այդ եզրույթն այլևս չի կիրառվում՝ այն փոխարինելով «Այսրկովկաս» եզրով[62]:

Խորհրդային պատմագիտության մեջ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի տարածքը թյուրիմացաբար ներկայացվել է «Հյուսիս-արևելյան Ադրբեջան» եզրույթով, այսօրվա աշխարհագրական ու քաղաքական ընկալմամբ՝ պատմական հիշողությունից ջնջելով «Շիրվան» եզրը:

Մեր ուսումնասիրության շրջանակներում Հյուսիս-արևելյան Այսրկովկասի պատմաաշխարհագրական ու էթնոքաղաքական սահմանների մեջ ընդգրկել ենք Դերբենդի, Ղուբայի, Շամախիի, Բաքվի խանությունները, այսինքն՝ բացառությամբ Շաքիի: Պատճառն այն է, որ 1750-1780-ական թթ. Հյուսիս-արևելյան Այսրկովկասի քաղաքական պատմության մեջ Շաքիի խանությունը՝ ի տարբերություն Դերբենդի,

---

[56] **С. Бурнашев,** Описание областей Адребижанских в Персии и их политического состояния, Курск, 1793, с. 4-5.

[57] Հմմ. **Պ. Չորանյան,** Հայ-ռուս-վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 34:

[58] Tadhkirat al-muluk: A Manual of Safavid Administration. (circa 1137/1725). Persian text in fagsimile (B. M. Or. 9496). Translated and explained by **V. Minorsky,** London, 1943, p. 162.

[59] Նույն տեղում, էջ 164-168:

[60] ЦГВИА ф. 52, оп 1/194, д. 270, л. 41 об.

[61] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և մասնավորապես պատմական Հայաստանում XVI դ. երկրորդ կեսից), թուրքական պատմագիտությունը սկզբից մինչև XVIII դարի վերջերը, հտ. Ա, Կազմեց՝ **Ա. Խ. Սաֆրաստյան,** Եր., 1961, էջ 229:

[62] Տե՛ս **Л. Артамонов,** Северный Азербайджан. Военно-географический очерк, Тифлис, 1890, ч. I, с. 1.

Շամախիի և Բաքվի խանությունների, որպես ինքնուրույն քաղաքական ուժ էր ներկայանում: Այսպես, մինչև 1774 թ. Ղուբայի Ֆաթհ Ալի խանի՝ Շաքիի խանությունն իրեն ենթարկելու փորձերը, ավարտվում են անհաջողությամբ: Շաքիի Հուսեյն խանը 1779 թ. դառնում է դավադրության զոհ, որը կազմակերպել էին տեղի բեկերը՝ Հաջի Չելեբիի[63] որդի Աբդուլ Ղադիրի գլխավորությամբ: Վերջինս հայտնվում է Ղուբայի խանի ազդեցության ոլորտում՝ օգնելով նրան պայքարել Իբրահիմ խանի դեմ: Սպանված Հուսեյն խանի որդի Մուհամմադ Հասան խանը 1783/4 թթ. Ճարի ջամաաթների (այսպես կոչված ազատ համայնքներ) աջակցությամբ գրավում է Շաքիի խանությունը և հաշվեհարդար տեսնում խանի ու նրա յոթ որդիների հետ: Մուհամմադ Հասան խանը Շամախիի Մուհամմադ Սայիդ և Աղասի խաների աջակցությունը ստանալով՝ դիմադրություն է ցույց տալիս Ֆաթհ Ալի խանին: Շաքիի և Շամախիի խաների 1785 թ. միացյալ զորքը պարտություն է կրում, և Շաքիի ու Ղուբայի միջև հաշտություն է կնքվում՝ ամրապնդելով ամուսնական դաշինքով[64]: Վ. Լևիատովի կարծիքով՝ այդ պահից սկսած, Շաքին Ղուբայից որոշակի կախվածության մեջ է հայտնվում[65]: Մինչդեռ գրավոր սկզբնաղբյուրը փաստում է, որ Մուհամմադ Հասան խանը ինքնիշխան էր, թեև սեփական զորքի թիվը 2000-ից չէր անցնում և ֆինանսների բացակայության հետևանքով լեզգի վարձկանների օգնությանը դիմել չէր կարող: Այդ պատճառով նա ստիպված էր մերթ ընդ մերթ դաշնակցել Դերբենդի, Շամախիի, Դաղստանի տիրակալների հետ՝ Իբրահիմ խան Ջավանշիրի դեմ պայքարելու համար[66]:

Այսպիսով, XVIII դ. երկրորդ կեսին Շաքիի խանությունը (Ղարաբաղի[67] խանության[68] օրինակով), պահպանում էր որոշ ինքնիշխանություն՝ ուրույն

---

[63] Հայ մատենագիտության մեջ Հաջի Չելեբիի կամ Չալաբիի մասին տե՛ս Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ՝ տեառն **Սարգսի** Սանահնեցւոյ **Ջալալեանցի,** թեմական արքեպիսկոպոսի Հայոց Վրաստանի, Իմէրէթի և այլոց, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 368:

[64] **А. Бакиханов,** Гюлистан-Ирам, – Труды Общества обследования и изучения Азербайджана, вып. 47, Баку, 1926, с. 136.

[65] **В. Левиатов,** Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, с. 151.

[66] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 8.

[67] Արցախ-Ղարաբաղ անվանումներն իմաստային առումով նույնական են: Արցախ անվանումը հիշատակվում է անհիշելի ժամանակներից, իսկ Ղարաբաղ անվանումը հանդիպում է XIV-XV դդ. պարսկական, հայկական (հիշատակարաններ) և վրացական աղբյուրներում (տե՛ս **Շ. Մկրտչյան**, Արցախ (Պատմամշակութային ակնարկ), Եր., 1991, էջ 7, ծնթ. 3):

դերակատարում ունենալով Այսրկովկասի քաղաքական պատմության մեջ[69]: Ուստի, մեր հետագա ուսումնասիրության մեջ Շաքիի խանությունը կգտնի իր արժանի տեղը:

1.1 ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական զարգացումները Հյուսիս-արևելյան Այսրկովկասի պատմության համար կարևոր նշանակություն ունեցան: Նադիր շահի մահից հետո Իրանի պետությունը տրոհվել էր անընդմեջ միմյանց դեմ պայքարող մի շարք ինքնուրույն իշխանությունների, որոնցում «իւրաքանչիւր մասնաւոր գաւառ գրեթէ մի մի թագաւորութիւն ցուցին զինքեանս...»[70]:

Քաղաքական այդ գործընթացներից դուրս չէր նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասը, որտեղ առաջանում են Շաքիի, Դերբենդի, Ղուբայի, Շամախիի և Բաքվի կիսանկախ խանությունները՝ էթնիկ խայտաբղետ պատկերով:

XVIII դ. կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ձևավորված ինքնիշխան խանություններից առանձնանում էր Ղուբայի խանությունը: XVI-XVIII դդ. Ղուբան Շիրվանի բեկլարբեկության մի մասն էր և մինչև շահ Սուլեյմանի գահակալումը (1667-1694), որպես առանձին տիրույթ չէր հիշատակվում[71]: XVIII դ. սկզբին Ղուբայի խան է դառնում Ղարաղայթաղի տիրակալների՝ ուցմիների տոհմի Մաջալիս գյուղից սերված ճյուղի ներկայացուցիչներից մեկը: XVIII դ. երկրորդ կեսի աղբյուրները վկայում են, որ Դերբենդի խանը (այսինքն՝ Ֆաթհ Ալին) «մոլեռանդ ալիական էր» (շիա) և, ինչպես իր

---

[68] Ղարաբաղի խանության ձևավորման մասին տե՛ս **А. Магалян,** Арцахские меликства и возникновение карабахского ханства, – «Русский сборник: Исследования по истории России», Ред. О. Эльдман, т. VIII, Москва, 2010, с. 7-25.

[69] Շաքիի խանության XVIII-XIX դդ. քաղաքական պատմության մասին տե՛ս **С. Маркарян,** Независимое ханство Шакки в XVIII-XIX вв., – «Caucasica», Труды института политических и социальных исследований черноморско-каспийского региона, т. I, Под ред. В. А. Захарова, Москва, Изд-во «Панорама», 2011, с. 27-42.

[70] Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ժ, Մանր մատենագիրք (ԺԵ-ԺԹ), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1912, էջ 157-158:

[71] **И. Петрушевский,** Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв, Ленинград, 1949, с. 140.

տոհմի մեծ մասը, սերում էր ղայթաղներից[72]: Ղայթաղները կամ ղարաղայթաղները դաղստանյան ժողովուրդ են, դարգիններ մի խումբ, որը պատկանում է Կովկասյան լեզվաընտանիքի նախճա-դաղստանյան լեզվախմբին (1939 թվականից գրանցված են որպես դարգիններ)[73]:

Ավանդույթի համաձայն, Ղուբայի խանը իշխանության ժառանգական սկզբունքով նշանակվում էր անձամբ շահի կողմից՝ շիա դավանանքի ներկայացուցիչներից: 1720-ական թթ. Դաղստանում և Շիրվանում ծայր առած քաղաքական խառնակ ժամանակներին զոհ է գնում Ղուբայի Սուլթան Ահմադ խանը: Փրկվում է միայն Ահմադ խանի անչափահաս որդին՝ Հուսեյն Ալին, որն ապաստանում է Սամուր գետի վերին հոսանքներում գտնվող գյուղերից մեկում: Չափահաս դառնալուց հետո Հուսեյն Ալին ծառայության է անցնում Նադիր շահի մոտ և կարողանում է վերադարձնել Ղուբայի խանությունը[74]: Հուսեյն Ալի խանի մահից հետո իշխանությունը ժառանգաբար անցնում է խանի որդուն՝ Ֆաթհ Ալի խանին (1758 թ.)[75]:

Երիտասարդ Ֆաթհ Ալի խանը ձեռնամուխ է լինում խանության աշխարհաքաղաքական դիրքի ամրապնդմանը: Նա դեռևս 1756 թ. գրավել և Ղուբայի իշխանությանն էր միացրել Ապշերոնի թերակղզում գտնվող Սալիան բնակավայրը՝ «շահաստան միանգամայն ի կողմանէ ձկանց»[76], որը նախկինում պատկանում էր Ղուբայի խաներին[77]: Բանն այն է, որ Սալիանի միացումն ուներ տնտեսական մեծ

---

[72] **J. Reineggs and M. Bieberstein,** A General Historical and Topographical Description of the Mount Caucasus. Translated from the works of Dr. Reineggs and Marshal Bieberstein, by Charles Wilkinson, vol. 1, London, 1807, p. 139.

[73] Народы Дагестана, Отв. ред. **С. А. Арутюнов, А. И. Османов, Г. А. Сергеева,** Москва, 2002, с. 321-322.

[74] Խանության սահմանների մասին տե՛ս **Ղ. Ալիշան,** Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 94: **С. Броневский**, Новейшие географические [статистические и этнографические] и исторические известия о Кавказе, собранные и пополненные Семеном Броневским, ч. II, Москва, 1823, с. 377.

[75] **А. Бакиханов,** Гюлистан-Ирам, с. 130.

[76] Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ՝ տեառն **Սարգսի** Սանահնեցւոյ **Զալալեանցի,** էջ 367:

[77] **С. Гмелин,** Путешествие по России для исследования трех царств естества, СПб., 1785, ч. III, I половина, с. 58: Սալիան գավառի քաղաքական պատմության մասին տե՛ս **М. Чулков,** Историческое описание российской коммерции при всех портах и границах от древних времен до ныне настоящего и всех преимущественных узаконений по оной государя императора Петра Великого и ныне благополучно царствующей государыни императрицы Екатерины Великой т. II, кн. II, Москва, 1785, с. 623-624: Հմմ. **С. Броневский**, նշվ, աշխ., էջ 416-424:

նշանակություն և քանի որ այն հիմնականում «ձկնորսներով էր բնակեցված»[78], որոնք Ֆաթհ Ալի խանին հարկ էին վճարում, Սալիանի միավորումով Ֆաթհ Ալի խանի ձեռքում էր կենտրոնանում Կուր գետով կատարվող նավարկությունը[79]:

Սալիանի միացումը Ղուբայի խանությանը, բացի տնտեսականից, ուներ նաև ռազմավարական մեծ նշանակություն: Սալիանի տարածքով Ղուբայի խանը հայտվում էր Բաքվի ու Շամախիի խանությունների թիկունքում՝ իր քաղաքական կամքը թելադրելով նրանց: Այնուհետև Ֆաթհ Ալի խանը ձեռնամուխ է լինում Դերբենդի խանության գրավմանը:

Դերբենդը պատմության ողջ ընթացքում, իր աշխարհաքաղաքական դիրքի շնորհիվ, ռազմական բախումների թատերաբեմ էր և պարբերաբար թշնամիների հարձակումների է ենթարկվել: Էվլիյա Չելեբին (XVII դ.) նշում է, որ քաղաքն ամեն գիշեր լուսավորում էին նավթի լույսով, որովհետև յոթ ոխերիմ թշնամիներ ուներ[80]: Խանության[81] քաղաքական կենտրոն Դերբենդ քաղաքը՝ «Աղուանից երկրի նախադուռը»[82], XVII դ. վերջին և XVIII դ. սկզբից մեծ դեր է ունեցել ռուս-իրանական առևտրային կապերի զարգացման գործում[83]: Ժամանակակիցների դիտարկմամբ Դերբենդի նավահանգիստն իր աշխարհագրական դիրքով Կասպից ծովի արևմտյան ափում վատագույնն էր[84]: Դա չէր խոչընդոտում, որ խանության տարածքից ցամաքային (Ղզլար) և ծովային (Աստրախան) ճանապարհներով տարեկան մինչև 6 հազար փութ

---

[78] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13. л. 28; Подробное описание Персии и государств Кабула, Сеистана, Синди, Бальха, Белуджистана, земли Хорассана, также Грузии и персидских провинций, присоединенных к России, ч. II, Москва, 1829, с. 38.

[79] Կուր գետում կատարվող ձկնորսության, դրա համար խանին վճարվող գումարների մասին տե՛ս **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 115; **Marschall fon Bieberstein,** Tableau des provinces situées sur la cote occidentale de la mer Caspienne entre les fleuves Terek et Kour: St. Petersbourg, 1798, p. 24.

[80] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Չելեբի, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Ա. Սաֆրաստյանի,** Եր., 1967, էջ 102:

[81] Խանության սահմանների մասին տե՛ս **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 4; **Ղ. Ալիշան,** Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 94: Դերբենդի ամրոցի, խանի պալատի մասին տե՛ս **Marschall fon Bieberstein,** նշվ. աշխ., էջ 10; **В. Бакунина,** Персидский поход в 1796 г. Воспоминания Варвары Ив. Бакуниной. Перевод с французского В. В. Тимощук, – «Русская старина», т. 53, СПб., 1887, с. 359.

[82] **Մ. Բարխուտարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 110:

[83] **Н. Магомедов,** Дербент и Дербентское владение в XVIII – первой половине XIX в.: проблемы политического развития, автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических науки, Махачкала, 1999, с. 4.

[84] **W. Coxe,** Travels in Poland, Russia, Sweden and Denmark, the fifth edition, vol. III, London, 1802, p. 327.

տորոն արտահանվեր[85]: Խանության հաջորդ՝ Նիզաբադ նավահանգստի տարածքում գործում էր տոնավաճառ, ուր Շամախիի հայ և պարսիկ վաճառականները ուղտերով և ձիերով մետաքս էին բերում[86]:

1748 թ. Դերբենդի բնակիչները իշխանությունից հեռացնում են Նադիր շահի օրոք նշանակված կառավարչին և խան են հռչակում հարյուրապետ Մուհամմադ Հուսեյնին[87]: Շուտով քաղաքի բնակիչները՝ դժգոհ լինելով խանի ծանր հարկային քաղաքականությունից, գաղտնի բանակցելով Ֆաթհ Ալի խանի հետ, խոստանում են նրան հանձնել Դերբենդը[88]: 1759 թ. Դերբենդը գրավելով՝ Ֆաթհ Ալի խանը Մուհամմադ Հուսեյն խանին կուրացնում է, իսկ նրա հնգամյա որդուն՝ Ալի բեկին, սկզբում տանում է Ղուբա, ապա Բաքու: Դերբենդի խանը 1768 թ. կնքում է մահկանացուն, իսկ Ալի բեկը մնում է Բաքվի խանի մոտ:

Դերբենդի գրավման փաստը Ֆաթհ Ալի խանը շտապում էր հայտնել Իրանի տերության, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի իշխանություններին՝ որպեսզի ստանար նրանց քաղաքական համաձայնությունը: Քերիմ խանը (1750-1779) Իրանում ծավալվող քաղաքական գործընթացներով զբաղված լինելով, ընդունում է Դերբենդի գրավման փաստը, պայմանով, որ Ֆաթհ Ալի խանն իրեն պարսից պետության տիրակալ ճանաչի: Դերբենդի նվաճման մասին լուրը Ղուբայի խանը հայտնում է նաև օսմանյան սուլթանին: Վերջինս նվերներ և բարեմաղթանքներ է ուղարկում՝ հույս ունենալով ստանալ խանի բարեհաճությունը[89]: Ղուբայի խանը 1760 թ. հունվարին կատարվածի մասին տեղեկացնում է նաև Աստրախանի նահանգապետին՝ հույս հայտնելով, որ ռուսական առևտրականները կայցելեն քաղաք[90]:

---

[85] **Архив Государственного Совета,** т. 2, Совет в царствование императора Павла I. 1796-1801 гг, 1888, стб. 692 (այսուհետև՝ АГС).

[86] **Ф. Сойманов**, Описание Каспийского моря и чиненных на оном российских завоеваний, яко часть истории государя императора Петра Великого, СПб., 1763, с. 37-38.

[87] **С . Гмелин,** նշվ. աշխ., էջ 22-23:

[88] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 23: Հմմ. **А. Бакиханов**, Гюлистан-Ирам, с. 130; История Дагестана. т. I, Отв. ред. **В. Г. Гаджиев,** Москва, 1967, с. 375; The Encyclopaedia of Islam, Leiden, E. J. Brill, 1991, vol. 2, p. 206.

[89] **J. Reineggs and M. Bieberstein,** նշվ. աշխ., էջ 151-152:

[90] Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сборник документов, Отв. ред. **В. Гаджиев**, Москва, 1988, с. 91-92 (հետայսու՝ РДО).

Այսպիսով, կիսանկախ տիրակալները նպատակ չունեին Իրանի տերությունից, Ռուսական և Օսմանյան կայսրություններից որևէ մեկից քաղաքականապես կախվածություն ունենալ և դիմում էին *խուսանավելու քաղաքականությանը*:

Դերբենդի գրավումից հետո հարևան խանությունների՝ Բաքվի և Շամախիի հաշվին իր տիրույթների ընդարձակման խնդիրը Ֆաթհ Ալի խանի համար ժամանակի հարց էր դառնում՝ մեծացնելով Ղուբայի խանության քաղաքական ազդեցությունն Այսրկովկասում:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի կիսանկախ իշխանություններից էր Բաքվի խանությունը, որը գրեթե ամբողջությամբ ընդգրկում էր Ապշերոնի թերակղզու տարածքը[91]: Արդեն XI դ. Բաքուն Շիրվանշահերի պետության մաս էր կազմում, իսկ XII դ. նրա քաղաքական կենտրոնն էր: Մինչև XVIII դ. սկիզբը Բաքուն ղեկավարում էր Սեֆյան շահերի նշանակած կառավարիչը՝ հաքիմը: Վերջինս իշխանությունը կիսում էր հարյուրապետների հետ, որոնք ծագումով Գիլանից էին և Շիրվան էին ներթափանցել Խան-Ահմադ խանի 1592 թ. Աբբաս Ա-ի (1571-1629) դեմ բարձրացրած անհաջող ապստամբության հետևանքով:

Ռուսների կողմից XVIII դ. սկզբում Բաքվի գրավման հետևանքով հարյուրապետ Դերգահ Ղուլի բեկը դառնում է Բաքվի կառավարիչ՝ խանի տիտղոսով[92]: 1730 թ. հակառուսական տրամադրություններ ունենալու կասկածների պատճառով նա հեռանում է Իրան իր որդու՝ Միրզա Մուհամմադի հետ: Նադիր շահի օրոք վերջիններս խանի տիտղոս են ստանում, բայց Բաքվի խան է հռչակվում «հասարակ ծագում ունեցող գիլանցի ոմն Գալեմը», որը վայելում էր շահի «բարեհաճությունը»[93]: Շահի մոտ մեծ հարգանք և վստահություն վայելելով՝ Միրզա Մուհամմադը նշանակվում է Գիլանի վալի: Նադիր շահի մահվան լուրը ստանալով՝ նա շտապում է Բաքու, սպանում Գալեմին և խան հռչակվում: Միրզա Մուհամմադի մահից հետո (1768 թ.)

---

[91] Բաքվի խանության սահմանների մասին տե՛ս **Marschall fon Bieberstein**, նշվ. աշխ., էջ 24; **Ղ. Ալիշան,** Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 93: XVIII դ. Բաքու քաղաքի մասին տե՛ս **Marschall fon Bieberstein,** նշվ. աշխ., էջ 25; **J. Cook,** Voyages and Traveles Trough the Russia Empire, Tartary and Part of the Kingdom of Persia, vol. II, Edinburg, 1770, p. 379; **Հ. Գմելին,** նշվ. աշխ., էջ 78-81:

[92] Բաքվի խանների մասին տե՛ս Родословная таблица бакинских ханов, – Акты, собранные Кавказскою археографическою комиссиею, Под ред. **Ад. Берже,** Тифлис (հետայսու՝ АКАК), т. V, 1873, с. 1119.

[93] **Հ. Գմելին,** նշվ. աշխ., էջ 82:

իշխանությունը ժառանգաբար անցնում է որդուն՝ Մելիք Մուհամմադ խանին[94]: Մինչ այդ Միրզա Մուհամմադը հասցրել էր բարեկամանալ հարևանների հետ, «իսկ Ղուբայի Ֆեադալի խանի հետ, որը միւսներից վտանգաւոր կարող էր լինել նորա համար՝ ազգակցութեան մէջ մտաւ»[95] և իր որդուն ամուսնացրեց Ղուբայի խանի քրոջ հետ: Ուժեղ կամքի տեր կին լինելով՝ Հադիջա-բիկին իշխանությունից գրեթե հեռացնում է Բաքվի թուլակամ խանին և, միանձնյա կառավարելով, կյանքի է կոչում Ֆաթհ Ալի խանի քաղաքական ծրագիրը: Ուստի, Բաքվի խանությունը Ղուբայի խանի ընդարձակ տիրույթներից մեկը դարձավ:

Այսպիսով, Բաքվի խանության միավորումով Ղուբայի խանը հնարավորություն էր ստանում ուղիղ կապ հաստատել Սալիանի իր տիրույթի հետ: Սակայն Բաքվի խանությունը, բացի ռազմաքաղաքական հարմար դիրքից, ուներ նաև առևտրա-տնտեսական հարուստ ներուժ: Բաքվի խանությունը Շիրվանի մյուս տիրույթների համեմատությամբ աղի և նավթի արտադրության մեծ առավելություններ ուներ: Դրանց արտահանումն ապահովում էր խանություն անհրաժեշտ պարենամթերքների ներկրումը: Խանության տարածքում բազմաթիվ աղի լճերի առկայության[96] հետևանքով աղն իր արտահանման ծավալներով նավթից հետո գրավում էր երկրորդ տեղը: Բաքուն ծովով կապ ուներ Աստրախանի, իսկ ցամաքով՝ Թիֆլիսի, Երևանի, այսրկովկասյան մյուս խանությունների հետ:

XVIII դ. երկրորդ կեսին Կասպից ծովի ամենահարմար, ապահով և անվտանգ նավահանգիստը Բաքուն էր: Ի տարբերություն Աստրախանի նավահանգստի, որը Վոլգայի սառցապատման հետևանքով միայն վեց ամիս էր բաց՝ գործում էր ողջ տարին: Ըստ աղբյուրի՝ Բաքվի խանը Կասպից ծովում ավելի շատ նավեր (խոսքն առևտրական

---

[94] Նույն տեղում: Հմմ. **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., СПб., 1869, ч. II, с. 251; **И. Березин,** Путешествие по Дагестану и Закавказью, Казань, 1849, с. 215.

[95] **Մ. Սմբատեանց,** Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախւոյ թեմի, Տփխիս, 1896, էջ 378:

[96] Աղի լճերի մասին առավել մանրամասն տե՛ս Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. IV, СПб., 1836, с. 33-36.

նավերի մասին է) ուներ, քան Դերբենդի Ֆաթհ Ալի խանը[97]: Հայտնի է, որ Կասպից ծովով կանոնավոր նավարկում էր հայ վաճառական Սողոմոնյանի երկու առևտրային նավ[98]:

Այսպիսով, 1750-1780-ական թթ. Կասպից ծովի արևմտյան ափին՝ Դերբենդի, Ղուբայի, Շամախիի և Բաքվի խանություններում, Ղուբայի Ֆաթհ Ալի խանի քաղաքական գերիշխանությունն էր հաստատվել, որը պայմանավորված չէր էթնիկական ընդհանրությամբ: Ֆաթհ Ալի խանի քաղաքական ազդեցության տարածումը Շամախիի խանության վրա ամրապնդելու էր Ղուբայի ռազմաքաղաքական դիրքերն Այսրկովկասում:

Վերջապես, եթե Ֆաթհ Ալի խանին հաջողվեր իրեն ենթարկել Շամախիի խանությունը, ապա Ղարաբաղի և Շաքիի խանությունները նվաճելու հեռանկարներն առավել իրատեսական էին դառնում՝ ապահովելով Ղուբայի խանի միանձնյա գերիշխանությունը տարածաշրջանում:

Շամախիի խանությունը գտնվում էր Հյուսիս-արևելյան Այսրկովկասի սրտում և իր աշխարհագրական դիրքով կտրված էր Կասպից ծովից[99]: XVI-XVIII դդ. Շիրվանում բացակայում էին ուժեղ քոչվոր ցեղերը, և ցեղային վերնախավին պատկանող ժառանգական բեկլարբեկություններ և տիրույթներ չէին ձևավորվում[100]: Իրանում աֆղանների ապստամբությունից ոգևորված Սուրխայ խան Ղազիկումուխցին և Հաջի Դավուդ բեկը ավերիչ արշավանք են կազմակերպում դեպի Շամախի և 1721 թ. օգոստոսի 7-ին գրավում այն[101]: Սակայն Իրանում 1730-ական թթ. փաստացի իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելով՝ Նադիր Ղուլի խանն արշավում է «ի Հայս, ի Վիրս, յաշխարհն Աղուանից եւ յերկիրն Լէկզու»[102]: Հին Շամախիից արևմուտք 1734-

---

[97] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 43.

[98] Տե՛ս **Հ. Տէր-Աստուածատրեանց,** Վաճառականութիւնը Ռուսիայում: Պատմական տեսութիւն վավերաթղթերով (Է-ԺԸ դար), Պարիս, 1906, էջ 53:

[99] Խանության սահմանների մասին տե՛ս **С. Броневский**, նշվ. աշխ., էջ 424-425; **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 9:

[100] **И. Петрушевский,** նշվ. աշխ., էջ 137:

[101] **В. Гаджиев,** նշվ. աշխ., էջ 56-57:

[102] **Աբրահամ Երեւանցի,** Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թթ., Պատ. խմբագիր՝ պրոֆ. Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Եր., 1938, էջ 82:

1735 թթ. նա հիմնում է Նոր Շամախին[103]: Քաղաքը, ժամանակակցի փոխանցմամբ, ավելի մարդաշատ էր, քան Դերբենդն ու Բաքուն միասին վերցրած[104]:

Շիրվանի նախկին հարկահավաք Հաջի Մուհամմադ Ալի Սուֆի Նաբի Զարնավային 1748 թ. Նոր Շամախիի խան է դառնում և կառավարում մինչև 1761 թ., երբ սպանվում է խանչոբանի ցեղի Սարքարների տոհմից Ալի Վերդի բեկի որդիներ Մուհամմադ Սայիդ և Աղասի խաների կողմից: Ալի Վերդի բեկը Նադիր շահի օրոք «պատվավոր ազնվական էր»[105]: Նրա մահից հետո Մուհամմադ Սայիդ ու Աղասի խաներն իրենց էին ենթարկել Շիրվանի քոչվոր ցեղերին և հաստատվել Հին Շամախիում: Շուտով Մուհամմադ Սայիդը Քերիմ խան Զենդի ֆերմանի համաձայն, Հին Շամախիի խան է ճանաչվում[106]: Այդ քայլով Իրանի տերության տիրակալը երկու խնդիր էր լուծում: Նախ, նա փորձում էր Հյուսիս-արևելյան Այսրկովկասում, որը կիսանկախ էր, ի դեմս Հին Շամախիի խաների իրեն ենթակա կառավարիչներ ունենալ և ամրապնդել Իրանի տերության ազդեցությունը տարածաշրջանում: Մյուս կողմից, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի սրտում երկիշխանություն հաստատելով, կառավարելի իրավիճակ էր ստեղծվում: Ուստի, քաղաքականապես ապակայունացած Շիրվանը դառնալու էր կառավարելի՝ առաջին հնարավորության դեպքում վերադարձնել իրանական պետության կազմի մեջ:

Նոր Շամախիի բնակիչները, Հաջի Մուհամմադ Ալի խանի ծանր հարկային քաղաքականությունից դժգոհ, դիմում են Մուհամմադ Սայիդին: Վերջինս առանց վարանելու կատարում է շամախեցիների խնդրանքը և քաղաքը գրավելով, վերջ է դնում երկիշխանությանը: Նոր Շամախիում նա նայիբ (տեղակալ) է նշանակում, իսկ Հաջի Մուհամմադ խանը՝ մեկ տարի պատանդ մնալով Հին Շամախիում, կնքում է մահկանացուն:

---

[103] **Աբրահամ կաթողիկոս Կրետացւոյ** Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1870, էջ 65-66: Հմմ. **М. Арунова, К. Ашрафян,** Государство Надир-шаха Афшара (Очерки общественных отношений в Иране 30-40-х гг. XVIII в.), Москва, 1958, с. 58; **А. Бакиханов,** О походе Надир-шаха в Дагестан, – Сочинения. Записки. Письма. Ред. колл. **З. М. Буниятов** и др., Баку, 1983, с. 153.

[104] **J. Cook,** նշվ. աշխ., էջ 391:

[105] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 90:

[106] Նույն տեղում, էջ 90-91: Շամախիի խաների մասին տես՝ Родословная таблица шемахинских ханов, – АКАК, т. V, 1873, с. 1109-1118.

Շուտով Մուհամմադ Սայիդի և Ֆաթհ Ալի խանի հարաբերությունները լարվում են: Ղուբայի խանը խնդրանքով դիմում է օսմանյան սուլթանին՝ թույլ տալու գրավել Շամախին, ամրացնել ափամերձ տարածքները և ծառայել սուլթանին: Սուլթանից ստացած ֆերմանի հիման վրա Ֆաթհ Ալի խանը Շաքիի խանի օգնությամբ գրավում է Շամախին[107]՝ ստիպելով նրա խանին հարկ վճարել: Նշելի է, որ վեքիլից կամ սուլթանից ֆերման ստանալը XVIII դ. երկրորդ կեսին ամենևին էլ Այսրկովկասում իրանական կամ կամ թուրքական գերիշխանության մասին չէր փաստում: Խաները ժամանակ առ ժամանակ այդպիսի քայլի էին դիմում զուտ ապահովագրական նկատառումներով՝ իրենց գործողությունների համար վերջինների համաձայնությունը ստանալու նպատակով: Այդպիսով, խաները փորձում էին պահպանել իրենց հեղինակությունը սեփական տիրույթներում և ընդգծել քաղաքական առավելությունն ու հզորությունը հարևան խաների աչքերում: Հետևաբար, ֆերման ստանալու ավանդույթը խնդրո առարկա ժամանակամիջոցում կորցրել էր նախկին վասալային իմաստը և պահպանում էր նրա ձևական կողմը միայն:

Անվտանգության առումով Շամախին Հյուսիս-արևելյան Այսրկովկասում կենտրոնական դիրք էր զբաղեցնում «բաց» և անպաշտպան սահմաններով: XVIII դ. երկրորդ կեսին Այսրկովկասի ռազմաքաղաքական իրավիճակում Շամախիի ինքնուրույն գոյությունը բացառվում էր: Այն կռվախնձոր էր դարձել հարևան առավել հզոր խանությունների՝ Շաքիի, Ղարաբաղի, Ղուբայի և Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության միջև: Շամախիի տիրակալը հնարավորություն էր ստանալու վերահսկել Ղզլարից Բաքու ընկած տարածքները՝ իր ձեռքում կենտրոնացնել նրա ռազմավարական, տնտեսական և առևտրային գործառույթների մենաշնորհը, որպես լծակ հարևանների վրա ճնշում գործադրելու համար: Հետևաբար, Շաքիի և Ղարաբաղի խանությունների դեմ մղվող պայքարում Ֆաթհ Ալի խանը «պարտավոր էր» տիրանալ Շամախիի խանությանը:

Շամախին բոլոր կողմերից շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված հարևաններով և պարբերաբար ենթարկվելով լեզգիների հարձակումներին՝ ստիպված

[107] **Л. Меликсет-Беков,** Описание сопредельных с Грузиею стран второй половины XVIII века, – Труды Тбилисского государственного университета, т. XVIII, Тбилиси, 1941, с. 130.

էր ճանաչել Ֆաթհ Ալի խանին որպես իր քաղաքական ու ռազմական պաշտպանի: Սակայն փառասիրությունն ու «արծաթասիրությունը» Մուհամմադ Սայիդին ստիպում են հրաժարվել Ղուբային նախօրոք պայմանավորված հարկը վճարելուց: Շամախիի խանի քայլը պայմանավորված էր հարկատու լինելու փաստից ազատագրվելու և լիակատար ինքնիշխանություն ձեռք բերելու ցանկությամբ:

Ֆաթհ Ալի խանը 1767 թ. շարժվում է Շամախի, սակայն Մուհամմադ Սայիդ խանը հաշտություն է խնդրում՝ խոստանալով վճարել անհրաժեշտ հարկը[108]: Ղուբայի խանի հետագա փորձերը գրավել Շամախին պսակվում են անհաջողությամբ, քանի որ Մուհամմադ Սայիդի օգտին էր գործում Շաքիի Հուսեյն խանը: Վերջինս հասկանում էր, որ Շամախիի գրավումից հետո հզորացած Ֆաթհ Ալի խանի հաջորդ հարվածը լինելու էր Շաքիի խանության ուղղությամբ: Կարճ ժամանակ անց Շամախիի խանությունը կրկին հրաժարվում է հարկ վճարել Ղուբային: Այս անգամ Ֆաթհ Ալի խանը ստանում է Շաքիի խանի աջակցությունը (մեծ ավար ստանալու հեռանկարով[109]), դաշինք է կնքում Դաղստանի մի շարք առաջնորդների հետ և 1768 թ. շարժվում Շամախի ու գրավում այն: Շաքիի Հուսեյն խանը կուրացնում է Աղասի խանին, իսկ Մուհամմադ Սայիդին հանձնում է Ֆաթհ Ալիին: Շամախիի գրավումից հետո սահմանակից երկու մահալներ բաժին են ընկնում Շաքիի խանին[110]: Սակայն Ֆաթհ Ալի խանի ծրագրերի մեջ չէր մտնում Շաքիի իշխանության հզորացումը, և շուտով վերադարձնում է այդ մահալները, իսկ Հուսեյն խանը ձեռնունայն հեռանում է:

Շամախիի խանությունը նպաստավոր ռազմաքաղաքական դիրքից բացի, նաև կարևոր առևտրա-տնտեսական նշանակություն ուներ: Դեռևս XVI դ. անգլիացի ծովագնացներն ու առևտրականները մեծ հիացմունքով էին խոսում Շամախիի մասին[111]:

---

[108] ЦГАДА, Сношения России с Персией, 1767 г., д. 9, лл. 27 об. – 28.
[109] **J. Reineggs and M. Bieberstein,** նշվ. աշխ., էջ 192-193:
[110] **А. Бакиханов**, Гюлистан-Ирам, с. 132.
[111] Английские путешественники в Московском государстве в XVI веке, Пер. с англ. **Ю. В. Готье,** Ленинград, 1937, с. 203.

Սեֆյանների օրոք Շամախին Ռեշտի ու Գանձակի հետ մետաքսի մշակման խոշոր կենտրոններից մեկն էր[112]:

Աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Շամախին XVIII դ. շարունակում էր գրավել Արևմուտքի և Արևելքի վաճառականների ուշադրությունը [113] և, ըստ անգլիացի առևտրային գործակալ Վ. Քոքսի, դրա համար նա պարտական էր մետաքսին[114]: XVIII դ. սկզբին Շամախիում արտադրվող մետաքսի հումքի մեծ մասը գնում էր Սպահանի անգլիական և հոլանդական ֆաբրիկաները որոնք այն ուղարկում էին Հալեպ[115], իսկ տարեկան 400 տոննա արտահանվում էր Աստրախան[116]:

Շամախին ակտիվ դերակատարում ուներ նաև կովկասյան առևտրում, որտեղից Դերբենդ էին ներմուծում մետաքսի հումք և մետաքսե զանազան կտորներ, իսկ Թարքիից ու շրջակա բնակավայրերից՝ տորոն, մեղր, մրգեր, Կուբաչի գյուղում պատրաստված և կովկասյան լեռնականների մոտ մեծ տարածում գտած զենքեր (հրացաններ, ատրճանակներ)[117]:

Ղուբայի խանի ռազմաքաղաքական հնարավորությունները «ստիպում էին» թե՛ Ռուսական, թե՛ Օսմանյան կայսրություններին և թե՛ Իրանի տերության տիրակալներին հաշվի նստել Ֆաթհ Ալի խանի հետ: Վերջիններիս համար խանի քաղաքական կշիռը պայմանավորված էր նրա կովկասյան տիրակալների շրջանում ունեցած քաղաքական ազդեցությամբ: Ռուսական իշխանությունների պահանջով Հերակլ Բ արքայի (1762-1798) մոտ գտնվող ռուսական լիազոր ներկայացուցիչ Ս. Բուրնաշևին հանձնարարված էր կազմել տարածաշրջանի տիրակալների և նրանց տիրույթների քաղաքական համառոտ նկարագրումը: Աշխատության մեջ հիմնական շեշտը դրվում էր տիրակալների ռազմական հնարավորությունների վրա՝ նրանց դասակարգելով որպես

---

[112] **J. Hanway,** An Historical Account of the British Trade over the Caspian Sea, with the journal of travels from London through Russia into Persie; and back again through Russia, Germany and Holland, vol. I, London, 1753, p. 35.

[113] **Եսայի Հասան-Ջալալեանց**, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 33:

[114] **W. Coxe,** նշվ. աշխ., 328:

[115] **J. Bell,** նշվ. աշխ., էջ 67:

[116] **J. Forster,** նշվ. աշխ., էջ 256:

[117] Այս բնակավայրը VI-XV դդ. հայտնի էր Զիրիխգերան անվամբ, որի բնակիչներին XII դ. արաբ հեղինակ ալ-Գարնատին հիշատակում է որպես զինագործների, որոնք ջիզյա էին վճարում արաբ կառավարիչին (Путешествие Абу Хамида ал-Гарнати в Восточную и Центральную Европу (1131—1153 гг.), **О. Г. Большаков, А. Л. Монгайт,** Москва, 1971, с. 51):

«հզորների» և «նվազ հզորների»[118]: Ռուսաստանի համար այդ «բաժանումը» կարևորվում էր ոչ միայն խանությունների նկատմամբ սեփական քաղաքականությունը կառուցելու առումով, այլև որոշելու համար Օսմանյան կայսրության և Իրանի տերության համար խանությունների քաղաքական նշանակությունը:

Խաների ռազմական հզորությունը ոչ այնքան սեփական զինուժի առկայությամբ, որքան հարևան լեզգիներին վարձելու հնարավորությամբ էր պայմանավորված: Այդ առումով շահեկան էր Ղուբայի Ֆաթհ Ալի խանի դրությունը, քանի որ նրա իշխանությունն էին ճանաչում Սամուր գետի ավազանում գտնվող, այսպես կոչված, «անկախ միությունները»՝ Ալթիփարա, Դոքուզփարա, Միշկենջա, Ախտիփարա և Ռութուլ լեզգիաբնակ իշխանությունները և վեց գյուղեր՝ Բուդուղ, Խընալուք, Ջիք, Կրիզ, Ալիկ և Խապուտ[119]:

Ղուբայի խանը անհրաժեշտության դեպքում կարող էր մարտի դաշտ դուրս բերել 5000-6000 հեծելազոր և հետևակ՝ բաղկացած սեփական զինուժից ու հարևան վարձու լեզգիներից[120]: Ս. Գմելինի տվյալներով՝ խանի զինուժը կարող էր հասնել մինչև 40000-ի[121]: Այս հանգամանքը ստիպում էր Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաներին և Դաղստանի տիրակալներին հաշվի նստել Ղուբայի խանի հետ:

Հավելենք նաև, որ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների շարքում ռուսական շահերի համար Ղուբայի խանությունն առանձնահատուկ նշանակություն ուներ: Առաջին հերթին այն պայմանավորված էր առավելապես Ղուբայի աշխարհագրական բարենպաստ դիրքով: Խանությունը մյուսների համեմատ ամենից մոտ էր գտնվում կայսրության սահմաններին: Կասպից ծովի առևտրական երկու նավահանգիստները՝ Դերբենդն ու Բաքուն, Ղուբայի խանի վերահսկողության տակ էին գտնվում: Ղուբայի խանության տարածքով էր անցնում նաև Ղզլար տանող ցամաքային առևտրային ճանապարհը: Խանության տարածքը նաև ռազմավարական կարևոր նշանակություն ուներ: Անհրաժեշտության դեպքում ռուսական ցամաքային զորքը և

---

[118] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 4:
[119] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 50:
[120] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 38.
[121] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 24:

ռազմական նավատորմը կարող էին ճանապարհ հարթել դեպի տարածաշրջանի խորքը:

Այսպիսով, Շամախիի գրավումով Ֆաթհ Ալի խանի իշխանությունը գրեթե անսահմանափակ էր դարձել: Այդ տարածքով անցնող ամենահարուստ վաճառականները Մեքքա և Մեդինա ուխտագնացության համար պարտավոր էին Ֆաթհ Ալի խանին գումար վճարել: Ս. Գմելինի խոսքերով՝ ժամանակին Շիրվանում հաջիների հեղինակությունն այնպիսի չափերի էր հասնում, որ առանց նրանց համաձայնության ոչ մի կարևոր քայլ չէր կատարվում: Սակայն Ղուբայի խանը Շամախիի հաջիներին «զրկում է բոլոր կոչումներից» ու գերի տանում Դերբենդ և Ղուբա[122]: Այդ քայլը միտված էր ընդգծել Ֆաթհ Ալի խանի բացարձակ իշխանությունը շամախեցիների վրա՝ իբրև օրինակ Ղուբային ենթակա մյուս տիրույթների բնակիչների համար:

Ֆաթհ Ալի խանը կարող էր իր գերիշխանությունը ճանաչած քաղաքներում պարետ կամ կառավարիչ նշանակել և միջամտել խանությունների ներքին կյանքին: Այսպես, Շամախիի պարետ էր նշանակվել խանի եղբայր Աբդուլլա բեկը, սակայն կրկնակի հարկեր սահմանելու և անբարո կյանք վարելու համար պաշտոնից հեռացվել էր: Նոր պարետ էր նշանակվել Բաքվի խանը, սակայն շամախեցիների բողոքների հիման վրա նա նույնպես զրկվել էր պաշտոնից[123]:

Վերը նշված փաստերը թեև նվաճված տարածքներում Ֆաթհ Ալի խանի բացարձակ իշխանության մասին են վկայում, այդուհանդերձ, նա որոշակի անվստահություն ուներ տեղի բնակիչների նկատմամբ: Դա էր պատճառը, որ Ֆաթհ Ալի խանը որոշում է վերջ դնել երկու Շամախիների գոյությանը և շամախեցիներին ավելի վերահսկելի դարձնել: Այդ նպատակով 1769 թ. նա ավերում է Նոր Շամախին՝ քաղաքի բոլոր դարպասները փակելով և ջուր հեղեղելով դեպի ներս, իսկ բնակիչներին տեղափոխում է Հին Շամախի[124]: Ֆաթհ Ալի խանի անվստահությունը շամախեցիների նկատմամբ արտահայտվում էր նաև նրանով, որ իր հազվադեպ այցելությունների ժամանակ նա գիշերում էր Շամախիից քիչ հեռավորության վրա գտնվող գյուղում, ուր

---

[122] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 96-97:
[123] Նույն տեղում, էջ 97:
[124] ЦГАДА, ф. Сношения России с Персией, 1767-1769 гг., д. 16, л. 297.

բազեի որսով էր զբաղվում: Այս ամենի ականատեսը լինելով, Ս. Գմելինը փաստում է, որ Ֆաթհ Ալի խանը Շամախիի խանությանը որպես զենքով նվաճված նահանգ էր դիտում, որը նա կառավարում էր ոչ որպես «ժողովրդի հոր», այլ նվաճողի իրավունքով[125]: Սակայն 1776 թ. Ֆաթհ Ալի խանը Շամախիում վերականգնում է յոթ տարի Դերբենդում գերության մեջ գտնվող Մուհամմադ Սայիդ խանի իշխանությունը[126]:

1750-1770-ական թթ. Շամախիի քաղաքական անկայուն վիճակը մեծ հարված է հասցնում նաև նրա առևտրային գործին: Այսպես, Վ. Քոքսի դիտարկմամբ՝ եթե Ղուբայի խանի անկանոն հարկերը չլինեին, ապա Շամախին լի կլիներ թուրք և հույն վաճառականներով, իսկ ստեղծված պայմաններում միայն հայ և հնդիկ առևտրականներն էին գործում[127]:

Այսպիսով, Ղուբայի խանի գերիշխանությունը ճանաչած Բաքվի, Շամախիի և Հյուսիս-արևելյան Այսրկովկասի մյուս տիրակալները պարտավոր էին նրան տարեկան հարկ (դրամական), անհրաժեշտ պարեն և զինվորներ տրամադրել, քանի որ վերջինս տարածաշրջանի անվտանգության երաշխավորն էր թե՛ կովկասյան լեռնականներից, թե՛ «պարսից մյուս խաներից» պաշտպանելու հարցում: Ղուբայի խանը իրավասու էր անգամ զորք մտցնել Շամախի, եթե վերջինիս խանը հրաժարվեր սահմանված հարկը վճարել: Ֆաթհ Ալի խանի այդ գործառույթը մյուս խանությունների նկատմամբ Ս. Գմելինը կոչում էր «խնամակալություն» («оберегательство»)[128]: Բաքվի խանը՝ Ֆաթհ Ալի խանի փեսան, առժամանակ ազատված էր որոշակի հարկերից (բացի զորք ու պարեն տրամադրելուց) և նրա թույլտվությամբ իրեն էր պահում աղից ու նավթից ստացվող 35000-40000 ռուբլի եկամուտը, սակայն նա «Ղուբայի խանի պաշտպանության ներքո գտնվող իշխանիկ էր» [129]: Ավելին, Ս. Գմելինը նկատում է, որ այս հանգամանքը չէր կարող խանգարել, որ Ֆաթհ Ալի խանը ցանկացած պահի Բաքվի խանին քաղաքապետ

---

[125] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 97:
[126]**А. Серебров,** Историко-этнографическое описание Дагестана. 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева,** Москва, 1958, с. 186.
[127] **W. Сохе**, նշվ. աշխ., էջ 329:
[128] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 83:
[129] Նույն տեղում, էջ 83:

դարձներ [130]: Առաջ անցնելով նշենք, որ երբ Մելիք Մուհամմադ խանը մահանում է, ապա Բաքվի նոր խան Ֆաթհ Ալին է նշանակում[131]:

Ընդհանրացնելով քննարկվող նյութը կարող ենք եզրակացնել, որ XVIII դ. 50-70-ական թվականները Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների համար կարելի է որպես կիսանկախ խանությունների ձևավորման ժամանակահատված բնութագրել: Իրանական պետության նախկին վարչա-տարածքային միավորները վերածվել էին կիսանկախ խանությունների, իսկ Նադիր շահի օրոք վարչական, քաղաքական կամ հասարակական պաշտոններ զբաղեցրած անձինք, իշխանությունն իրենց ձեռքերում կենտրոնացնելով, կիսանկախ տիրակալ-կառավարիչներ՝ խաներ էին դառնում: Ուստի, XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական իրավիճակի համատեքստում «խան» եզրույթը իմաստային որոշակի փոփոխությունների էր ենթարկվել: Եթե նախկինում (Սեֆյան Իրանում, Նադիր շահի պետության շրջանակներում) խանը Սպահանից նշանակված իրանական պաշտոնյա էր, ով պատասխանատու էր շահի առաջ, ապա XVIII դ. երկրորդ կեսին խանը ինքնիշխան, անսահմանափակ իշխանությամբ և լիազորություններով օժտված արևելյան տիրակալ էր: Ավելին, ինքնիշխան խաները հաճախ ժառանգաբար էին փոխանցում իշխանությունը (Ղուբայում, Բաքվում)՝ փաստելով, որ նշված ժամանակահատվածում իրանական գերիշխանությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ձևական բնույթ էր կրում:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների ինքնիշխան հռչակվելու առաջին տարիներին խաների ձայնն ավելի հնչեղ էր: Պատճառն այն էր, որ Իրանը, Օսմանյան և Ռուսական կայսրությունները դեռևս չէին հստակեցրել իրենց այսրկովկասյան քաղաքականությունը՝ հնարավորություն ստեղծելով խաներին լինել ինքնիշխան: Խաների ինքնիշխան լինելու մասին էր փաստում 1747-1750 թթ. Դերբենդի խանությունում տեղի ունեցած միջադեպը: 1750 թ. հունվարին Աստրախանի նահանգապետը Կովկասի երկրամասի հրամանատարին հաղորդում էր, որ Դերբենդում գտնվող Ղզլարի երկու ազնվականներից նամակներ է ստացել (1749 թ. դեկտեմբերին),

---

[130] Նույն տեղում, էջ 83-84:

[131] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), – «Исторический вестник», № 23-24, Архивное управление при совете министров Груз. ССР, Тбилиси, 1970, с. 28.

որոնցում Դերբենդի Մուհամմադ Հուսեյն խանի կամայականությունների մասին են նշվում: Պատճառն այն էր, որ խանը ռուսական իշխանություններից պահանջում էր վերադարձնել Դերբենդի բնակիչ ոմն Յուսուֆի: Վերջինիս 1747 թ. մեկ ուրիշ թաթարի հետ ձերբակալել էին ձիերի գողության մեղադրանքով և ուղարկել Կրասնի Յար: Այժմ Դերբենդի խանը սպառնում էր այլևս չուղեկցել Իրան ուղևորվող ռուսաստանցիներին և հրաժարվում էր Դերբենդում ռուսական ազնվականների «պահել»[132]: Թեև Աստրախանի նահանգապետը գրավոր բացատրել էր խանին կատարվածի իսկությունը, այնուամենայնիվ խնդրում էր, որ Կովկասի երկրամասի հրամանատարը ևս բացատրական նամակ գրի Մուհամմադ Հուսեյն խանին:

Խաների ինքնիշխան կարգավիճակի մասին է վկայում նաև այն, որ 1764 թ. նոյեմբերի 23-ին, սենատի որոշմամբ աստրախանցի հայազգի ձեռնարկատեր Աբրամովին Ֆաթհ Ալի խանի «համաձայնությամբ» իրավունք էր տրվել Սալիանում ձկնորսական արդյունաբերություն հիմնել [133] : Հատկանշական է, որ ռուսական իշխանությունները խնդրո առարկայի շուրջ բանակցությունները վարում էին ոչ թե Զենդերի իրանական կառավարության, այլ Ղուբայի խանի հետ: Հետևաբար, Այսրկովկասի խաներն իրենք էին տնօրինում իրենց տիրույթների ներքին կյանքի բոլոր ոլորտները՝ շրջանցելով Շիրազում գտնվող իրանական կենտրոնական կառավարությունը:

Վերլուծելով Հյուսիս-արևելյան Այսրկովկասում խանությունների ներքաղաքական իրավիճակը XVIII դ. երկրորդ կեսին հաստատված քաղաքական իրողությունների համատեքստում, հարց է առաջանում, թե արդյո՞ք կարող էին Դերբենդի, Բաքվի և Շամախիի խանությունները պահպանել իրենց ինքնուրույն կարգավիճակը:

Նշենք, որ պատմական Շիրվանի տարածքն անընդհատ կովկասյան լեռնականների և իրանական խաների հարձակումների թիրախ էր: Շիրվանը XVI-XVIII դդ. Սեֆյան, ապա Նադիր շահի պետության և իրանական պետական համակարգի բաղկացուցիչ մասն էր՝ «զրկված» այդ խնդիրների ինքնուրույն կարգավորումից: Խնդրո առարկա ժամանակաշրջանում կիսանկախ քաղաքական միավորները՝

[132] РДО, с. 82-83.
[133] **М. Чулков,** История краткая российской торговли, Москва, 1788, с. 262.

խանությունները, ստիպված էին ինքնուրույն կազմակերպել իրենց անվտանգությունը կամ էլ առավել կայուն ուժի շուրջ միավորվել: Այսրկովկասի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական փոփոխությունների հետևանքով խաները պարտավոր էին առաջնորդվել «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքով: Առաջին տեղ էր մղվել խանությունների գոյության, նրանց անվտանգության ապահովման հարցը: Այդ իրադրության մեջ չկային մշտական դաշնակիցներ, կային մշտական շահեր, անվտանգության և ինքնիշխանության պահպանման հիմնախնդիրներ: Ինչպես, օրինակ՝ «Մելիք Մահմէդ խանը կառավարում էր Բագուայ խանութիւնը 21 տարի խաղաղութեամբ, առանց արտաքին յարձակումների ենթարկուելու, որովհետեւ նա ապաւինել էր իւր աներորդու հզօրութեանը. Ղուբայի Ֆեադալի խանին միւս խաները հպատակւում էին և իբրեւ աւատապետ բոլորն էլ հարկ էին վճարում: Ով չէր հնազանդում՝ ենթարկւում էր մահուան պատժի»[134]:

Ուստի, տարածաշրջանի քաղաքական զարգացումները խաներին այլընտրանք չէին թողել, քան ճանաչել իրենցից առավել ուժեղի՝ Ղուբայի Ֆաթհ Ալի խանի գերիշխանությունը և պարտավորվել տարեկան որոշակի հարկ վճարել: Նրա հետ հաշվի էին նստում նաև Դաղստանի տիրակալները, ինչպես, օրինակ՝ Թարքիի շամխալը (կառավարիչը): Դեռևս Սեֆյան շահերի օրոք շամխալը Բաքվի խանությունում սեփականության իրավունքով մեծ քանակությամբ գյուղեր ուներ, որոնք Նադիր շահի մահից հետո ստեղծված խառնակ իրավիճակում դուրս էին մնացել շամխալի իշխանությունից: Երբ Բաքվի նոր խան է դառնում անչափահաս Միրզա Մելիք Մուհամմադը, Թարքիի տիրակալը փորձում է վերադարձնել այդ գյուղերը, սակայն հանդիպում է Ֆաթհ Ալի խանի հակազդեցությանը[135]:

---

[134] **Մ. Սմբատեանց,** նշվ. աշխ., էջ 378:

[135] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 28-29.

1.2 ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԵՐԸ XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Հնուց ի վեր Կովկասը հայտնի է եղել որպես զանազան ցեղերի և ժողովուրդների օրրան՝ վառ արտահայտված բազմէթնիկ պատկերով: Բացառություն չէր նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասը, որը դարերի ընթացքում իր վրա է կրել օտար նվաճողների քաղաքական լուծը և ենթարկվել էթնո-մշակութային փոխակերպումների[136]:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի էթնոքաղաքական պատմության ուսումնասիրությունը սերտորեն կապված է տարածաշրջանի ժողովուրդների ճակատագրերի հետ: Խորհրդային պատմագիտության մեջ հարցը խիստ քաղաքականացվել է՝ արմատավորելով Հյուսիս-արևելյան Այսրկովկասի էթնիկ իրավիճակի՝ որոշակի գիտակցված խեղաթյուրման քաղաքականությունը, երբ «ուղղում էին» արխիվային վավերագրերի «թաթարներ» և «պարսիկներ» [137] հավաքական անվանումները՝ դրանք փոխարինելով «ադրբեջանցի» եզրույթով՝ իր ժամանակակից ընկալմամբ[138], և վարում էին այս տարածքներում ադրբեջանցիների գոյության փաստը «հնացնելու» քաղաքականությունը:

XVIII դ. 70-ական թ. առաջին կեսին տարածաշրջան այցելած ակադեմիկոս Ս. Գմելինը Դերբենդից մինչև Բաքու ընկած տարածքի մուսուլմանական բնակչության մասին նշում է, որ նրանք թաթարական և պարսկական արյուններից առաջացած «խառնուրդ» են [139] , որը դեռևս ձևավորված ժողովուրդ չէ: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի թաթարներին Կազանի և Աստրախանի թաթարներից զանազանելու համար XVIII դ. երկրորդ կեսի ռուսական ակադեմիական շրջանակները տալիս են

---

[136] **Մ. Բարխուտարեանց,** Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1902, էջ 12:

[137] Իրանի տերության պատմության իսլամական շրջանից մինչ այսօր «պարսիկ» անվանումը պարտադիր էթնիկ նշանակություն չունի (տե՛ս **Г. Асатрян,** Этническая композиция Ирана: от «Арийского простора» до азербайджанского мифа, Ер., 2012, с. 31-49): XVIII դարում այսպես էին կոչում իրանական ծագմամբ ժողովուրդներին, իսկ վաճառականների պարագայում այն կարող էր նշանակել իրանահպատակ (Իրանի տերության քաղաքացի), օրինակ՝ հայ:

[138] **Օ. Маркова,** նշվ. աշխ., էջ 77, ծնթ. 53:

[139] **Ս. Гмелин,** նշվ. աշխ., էջ 19:

«լեռնային թաթարներ» անվանումը [140] : 1770-ական թթ. Այսրկովկաս այցելած ակադեմիկոս Ի. Գյուլդենշտեդտը այստեղ բնակվող թաթարական երեք տիպի ժողովուրդներ էր տարբերում, այն է՝ կումիկների, թերեքեմենների (թերեքեմենները կամ թարաքամաները թուրքմեններին ազգակից ցեղեր են) և նողայների: Նրանց լեզվական ընդհանրությունը թուրքերենի հետ այնքան մեծ էր[141], որ գիտնականը դա համեմատում էր իտալերենի, իսպաներենի և պորտուգալերենի ընդհանրության հետ [142] : Ի. Գյուլդենշտեդտը նշում էր, որ Շիրվանում օգտագործվող թուրքական բարբառի թաթարերենը և թուրքերենը այնքանով են իրարից տարբերվում, որքան որ լատիներենն իտալերենից: Թաթարական երեք լեզուներից առավել մոտ էր թուրքերենին թերեքեմենների լեզուն: Թերեքեմենների էթնիկ տարածքներ Ի. Գյուլդենշտեդտը նշում էր Հարավային Դաղստանը, Դերբենդը, Շիրվանը՝ Ֆաթհ Ալի խանի ողջ տիրույթները՝ մինչև Սալիան [143] : Թարաքամա (թերեքեմեններ) ցեղի մասին տեղեկություններ են ամփոփված Արևելյան Վրաստանում ռուսական ներկայացուցիչ Ս. Բուրնաշևի՝ տարածաշրջանի պատմաքաղաքական զարգացումներին նվիրված փոքրածավալ աշխատության մեջ: Մուղանի դաշտում գտնվող այդ ցեղի մասին նա հաղորդում է, որ շուրջ 1500 ընտանիք Թալա Հասան խանի գլխավորությամբ ճանաչում էր Ֆաթհ Ալի խանի գերիշխանությունը[144]: Մինչև XX դ. սկիզբը թերեքեմենները դիտարկվել են որպես առանձին էթնոս, սակայն հետագայում նրանք միացվում (կոնսոլիդացնում) են ադրբեջանցիների հետ՝ պահպանելով էթնիկ ինքնանվանումն ու ինքնընկալումը: Հարևանները՝ կումիկները, դարգինները, նրանց կոչում են թերեքեմեններ, իսկ հյուսիսային կումիկները, ավարները, դարգինների մի մասը և մյուսները՝ փադար[145]:

---

[140] Описание всех в Российском государстве обитающих народов, также их житейских обрядов, вер, обыкновений, жилищ, одежд и прочих достопамятностей, ч. II, СПб., 1776, с. 45.

[141] Լեզվական ընդհանրությունների մասին է նշում նաև Ա. Բակիխանովը (տե՛ս **А. Бакиханов,** Происхождение племен, населяющих нынешние закавказские провинции, – Сочинения. Записки. Письма, 1983, Баку, с. 133):

[142] **И. Гюльденштедт,** Географическое и статистическое описание Грузии и Кавказа, СПб., 1809, с. 101.

[143] **Иоганн Антон Гильденштедт,** Путешествие по Кавказу в 1770-1773 гг. СПб., 2002, с. 257.

[144] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 11:

[145] Народы Дагестана, с. 507.

Հայկական աղբյուրներում նրանք հիշատակվում են թարաքամա անվամբ՝ «վրանաբնակաց և խաշնարածաց ազգ մի»[146]:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի երկրների ժողովուրդների և «իսկական պարսիկների» միջև տարբերությունները 1796 թ. Կասպիական արշավանքի մասնակից Մարշալ ֆոն Բիբերշտայնը բացատրում էր նրանց՝ Կովկասի այլ ազգերի, մասնավորապես, Կասպից ծովի հյուսիսային շրջանների թաթարական ցեղերի հետ խառնուրդի հանգամանքով: Նա այն կարծիքին էր, որ նրանք ավելի շուտ արժանի են անվանվելու Կովկասի թաթարներ, քան պարսիկներ: Այդ տարբերությունը Բիբերշտայնը հիմնավորում էր թաթարների լեզվական ու դավանական առանձնահատկություններով: Նաև գտնում էր, որ թաթարների լեզուն տարբերվում է Տավրիդայի (Ղրիմի) թաթարների լեզվից և փոքր-ինչ նմանություններ էր տեսնում Ուկրաինայի (Малороссия) և Ռուսաստանում եղած թաթարական խոսվածքների հետ: Պարսկերենն օգտագործվում էր միայն պետական գրագրություններում և Շիրվանի խանական միջավայրում: Պարսիկներից թաթարներին տարբերելու մյուս կարևոր գործոնը, ըստ Մ. Բիբերշտայնի, կրոնն էր: Թեպետ խաները և նրանց շրջապատը հետևում էին շիա դավանանքին, սակայն գրեթե ողջ Դաղստանում ու Շիրվանում հասարակ բնակչությունը հետևում էր սուննի դավանանքին[147]:

Անշուշտ, իրանալեզու ժողովուրդները Հյուսիս-արևելյան Այսրկովկասի հնաբնակ ժողովուրդներից էին և իրենց գոյությունն էին շարունակում XVIII դ. երկրորդ կեսին՝ թվային առավելությամբ: Այդ մասին գրավոր վկայություններ են պահպանվել Վ. Զուբովի Կասպիական արշավանքի (1796 թ.) ընթացքում ռուս սպաների կատարած ազգագրական հետազոտություններում[148], որտեղ ծխերի վերաբերյալ վիճակագրական տվյալները առնչվում են բացառապես հայերին, հրեաներին ու պարսիկներին: Դերբենդի շիադավան էթնիկ հանրության նկատմամբ որոշ հեղինակների մոտ հանդիպող

---

[146] **Եսայի Հասան Ջալալեանց,** Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, էջ 16:

[147] **Marschall fon Bieberstein,** նշվ. աշխ., էջ 89:

[148] **Ф. Симонович,** Описание Южного Дагестана. 1796 г.; **Н. Дренякин,** Описание Ширвана. 1796 г.; **П. Бутков**, Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде писем». 1796 г.; **А. Серебров,** Историко-этнографическое описание Дагестана. 1796 г.; **Ф. Ртищев,** Сведения о Дагестане. 1813 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева,** Москва, 1958:

«թաթեր» եզրույթը[149] պետք է դիտարկել պատմա-քաղաքական և էթնոմշակութային զարգացումների ֆոնին: Ի սկզբանե թյուրքերն այսպես էին կոչում իրանալեզու ժողովուրդներին, որպես թյուրքերենին վատ տիրապետողների և այլն: Ժամանակի ընթացքում իրանական զանազան էթնիկ խմբավորումների համար «թաթ» եզրը վերածվում է էթնոնիմի, որոնք տարբեր էին իրենց ծագումով ու մշակույթով[150]:

XIX դ. առաջին ռուս-պարսկական պատերազմից (1804-1813 թթ.) անմիջապես հետո Հյուսիս-արևելյան Այսրկովկասի էթնոքաղաքական նկարագրության մեջ նշվում են հայեր, հրեաներ և *սունի ու շիա դավանանքի մուսուլմաններ*[151]: Վերջիններիս տակ պետք է հասկանալ թաթարներին և տարածաշրջանի էթնիկ ամենահին շերտերից մեկին՝ իրանալեզու ժողովուրդներին: Դրանով Կովկասի ռուսական բարձրաստիճան զինվորական հրամանատարությունը հիմք էր դնում տարածաշրջանից «պարսիկ» (իրանցի) էթնոնիմի բնաջնջմանը և փոխարենը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի *արհեստականորեն թյուրքացման քաղաքականությանը*: Տեղացի ժողովուրդների համար վտանգավոր այդ քաղաքականությունը միտված էր ամրապնդելու ռուսական տիրապետությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում, պոկելու այն Իրանի տերությունից՝ արմատախիլ անելով «պարսիկ» էթնոնիմը: Իրանական տարրին որպես այլընտրանք ընտրվում է «մուսուլմաններ» անվանումը՝ շեշտը դնելով թաթարների վրա: Ծագելով ու զարգանալով ռուսական կայսրության ներսում՝ քաղաքական այս գործընթացն իր գագաթնակետին հասավ Խորհրդային Միության օրոք, երբ նախկին «կովկասյան, ադրբեջանական թաթարներ», «թյուրք» կամ «թաթար» անվանումները պաշտոնապես փոխարինվեցին «ադրբեջանցի» անվամբ[152]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հյուսիս-արևելյան Այսրկովկասի էթնիկ նկարագրի մեջ իրենց ուրույն տեղն էին զբաղեցնում շահսևանները (այսինքն՝ շահին

---

[149] **Ա. Серебров,** նշվ. աշխ., էջ 177 (հմմ. **П. Бутков,** Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письем». 1796 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева,** Москва, 1958, с. 204):

[150] **Г. Асатрян,** նշվ. աշխ., էջ 81:

[151] **Ф . Ртищев,** Сведения о Дагестане. 1813 г., с. 250.

[152] **В. Худадов,** Современный Азербайджан, – «Новый Восток», Москва-Ленинград, 1925, № 3, с. 167; **А. Алекперов,** Азербайджанцы, – Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 71-77; **Գ. Ստեփանյան,** Արևելյան Այսրկովկասում «ադրբեջանցի» էթնիկական գործառման հարցի շուրջը, – «Մերձավոր Արևելք», 2008, պր. V, Եր., էջ 142:

սիրողները)՝ Իրանի տերության հյուսիս-արևմտյան տարբեր հատվածներում գտնվող բազմաթիվ ցեղային խմբերի ամբողջությունը[153]: Նրանց ձևավորման հիմքում (առաջին Սեֆյան շահերի օրոք) նախատեսվում էր, որ շահսևաններ կարող էին դառնալ նաև ոչ թյուրքական ժողովուրդների ներկայացուցիչներ, օրինակ՝ կովկասյան ժողովուրդներ, քրիստոնյաներ[154]:

Շահսևանները Հյուսիս-արևելյան Այսրկովկաս էին վերաբնակեցվել Իրանի տերության ներքին նահանգներից, մասնավորապես, Մուղանի դաշտից [155] : Շահսևանների հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, երբ ամռան ամիսներին նրանք բարձրանում էին լեռները, իսկ ձմռանը բնակվում Շաբրանի մահալում, որի իրավունքը ստացել էին Ղուբայի Հուսեյն Ալի և Ֆաթհ Ալի խաներից[156]: Վերջինիս թույլտվությամբ շահսևանները Մուհամմադ խանի գլխավորությամբ Արդաբիլից վերաբնակվել էին Ղուբայի խանության Մուսկուր և Շաբրան մահալների Բայանդուրլի, Ուստաջլի, Չայլաղլի, Ղարադաղլի և մի շարք այլ գյուղերում՝ դառնալով Ֆաթհ Ալի խանի հարկատուները[157]:

Այսրկովկասի էթնիկ քարտեզի վրա իրենց տեղն ունեին իրանալեզու քրդերը, որոնք 2000-3000 ընտանիքի սահմաններում ապրում էին Արաքսի աջ ափին, Դերբենդի խանությունում[158] և այլն:

Ինչ վերաբերում է XVIII դ. երկրորդ կեսին Բուն Աղվանք – Ալբանիայի էթնիկ հանրությանը, ապա պետք է նշել, որ բացի իսլամ ընդունած ցեղերից քրիստոնյա բնիկ ժողովուրդների և ցեղերի հետնորդներ էին ուդիները: XIX դ. առաջին կեսի հայկական

---

[153] **R. Tapper,** Frontier nomads of Iran. A political and social history of the Shahsevan, Cambridge University Press, 1997, p. 24; նույնի՝ Shāhsevan in Ṣafavid Persia, – «Bulletin of the School of Oriental and African Studies», University of London, vol. 37, № 2 (1974), pp. 321-354.

[154] **Г. Асатрян,** նշվ. աշխ., էջ 54, ծնթ. 23:

[155] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 11-12: Շահսևանների մասին առավել մանրամասն տե՛ս նաև **И. Огранович,** Сведения о шахсевенах, – «Кавказский календарь» 1870, Тифлис, 1871, с. 68-84; The Encyclopaedia of Islam, vol. IX, Leiden, Brill, 1997, p. 221-225.

[156] **А. Серебров,** նշվ. աշխ., էջ 177: Հմմ. **С. Броневский,** նշվ. աշխ., էջ 382-383:

[157] **Ф. Симонович,** նշվ. աշխ., էջ 147:

[158] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 17: Հմմ. **А. Серебров,** նշվ. աշխ., էջ 177:

աղբյուրների փոխանցմամբ ուդիները կամ ուտիները բնակվում էին Շաքիի նահանգի Վարդաշեն և Նիժ գյուղերում[159]:

XVIII դ. երկրորդ կեսի Հյուսիս-արևելյան Այսրկովկասի հոծ բնակչության մեծամասնությունն էին կազմում լեզգիները [160] : Լեզգիների զբաղեցրած էթնոքաղաքական տարածքը դեռևս XIV-XV դդ. եվրոպական աղբյուրները կոչում էին «Լեզգիստան» եզրույթով [161] : Համաձայն XVIII դ. գրավոր աղբյուրների՝ լեզգիներով բնակեցված ընդարձակ տարածքը վրացիները ևս կոչում էին Լեզգիստան [162] , որի էթնոքաղաքական սահմանը մի կողմից (ըստ Ի. Գյուլդենշտեդտի) Ալազան գետն էր, իսկ մյուս կողմից՝ Սամուրի գետափնյա շրջանները[163]: Հատկանշական է, որ 1720-ական թթ. (Ի. Գերբերի հաղորդմամբ) Լեզգիստան նահանգի մեջ էին մտնում Ղուբա և Շաքի բնակավայրերը[164], ինչը նրանցում ոչ թե թյուրքական ցեղերի, այլ կովկասյան (ավելի ստույգ՝ լեզգիական) ժողովուրդների թվական առավելության մասին է վկայում: Ավելին, եթե Ղուբայում օգտագործվող հիմնական լեզուն նա համարում է «թուրք-թաթարերենը», ապա Շաքիում՝ լեզգիերենը:

XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասում «աղվանական» կոչված ցեղերից շարունակում էին իրենց գոյությունը պահպանել խինալուղցիները, կրիզները, բուդուղները, ջիքերը և այլն, որոնց էթնիկական անվանումները պահպանվել էին միայն նրանց տեղանուններում (Բուդուղ, Խինալուղ, Կրիզ, Ջիք, Ալիկ և Խապուտ): XVIII դ. վերջի տեղեկություններով՝ Ղուբայի խանության Խինալուղի և Բուդուղի մահալները ընդունված էր կոչել Դաղստան[165], հավանաբար, հիմք ընդունելով նրանցում լեզգի էթնիկ տարրի թվական գերակշռությունը[166]:

---

[159] Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ՝ տեառն **Սարգսի** Սանահնեցւոյ **Ջալալեանցի,** էջ 379, 381:

[160] Լեզգիների մասին տե՛ս Народы Дагестана, с. 376-398; The Encyclopaedia of Islam, vol. V, Leiden E. J. Brill, 1986, p. 729-730.

[161] **Иоганн Шильтбергер,** Путешествие Иоганна Шильтбергера по Европе, Азии и Африке с 1394-го по 1427 год, – Кавказ: европейские дневники XIII-XVIII веков, Сост. **В. Аталиков,** Нальчик, 2010, вып. III, с. 16.

[162] Описание всех в Российском государстве обитающих народов, ч. II, СПб., 1776, с. 46.

[163] **И. Гюльденштедт,** նշվ. աշխ., էջ 115:

[164] **И. Гербер,** Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728, с. 107, 110.

[165] **Ф. Симонович,** նշվ. աշխ. էջ 144:

[166] Տե՛ս **М. Пашаева,** К этнической истории шахдагских народов, - Albania Caucasica, Сб. статей, Предисл., подгот. **А. Аликберов, М. Гаджиев,** вып. I, Москва, 2015, 148-153.

Ըստ Ի. Գերբերի հիշատակությունների՝ Շահդաղ լեռան շրջակայքում ապրող այդ ժողովուրդները լեզգիերենի կրողներ և ուղղադավան իսլամի (իմա՝ սուննի) հետևորդներ էին[167]: «Շահդաղյան խմբի ժողովուրդների» լեզվի յուրահատկության մասին XIX դ. երկրորդ կեսին հաղորդում էր նաև դաղստանյան ժողովուրդների լեզուների գիտական դասակարգմամբ զբաղվող կոմս Պ. Ուսլարը: Նա նշում էր, որ Խինալուղում, Բուդուղում և Կրիզում գործածվող լեզվի մասին հարևան լեզգիները հավաստիացնում էին իրեն, թե ոչ մի ընդհանրություն չկա իրենց լեզվի հետ[168]:

XVIII դ. երկրորդ կեսի գրավոր աղբյուրները հիշատակություններ են թողել Հյուսիս-արևելյան Այսրկովկասում հրեաների մասին[169]: Այսպես, հրեաներ էին ապրում Դերբենդի խանությունում[170], իսկ Ղուբա քաղաքի դիմաց գտնվում էր հրեական Կուլգատ գյուղը (200 ծուխ)[171], որտեղ չորս սինագոգ էր գործում:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի XVIII դ. երկրորդ կեսի էթնոքաղաքական խճանկարում իրենց ուրույն տեղն էին զբաղեցնում հայերը[172]: Ս. Գմելինի վկայությամբ՝ Դերբենդ քաղաքում 1770-ական թթ. շուրջ 4000 ընտանիքներ կային, որոնցից 100-ը՝ հայկական էին[173]: Աղբյուրների համաձայն՝ 1780-ական թթ. Թոփրաքկալեից քիչ հեռու, Գուրգենչայ գետի աջ ափին, դեպի լեռները ձգվող շուրջ 30 գյուղից 15-ը հայկական էին[174]: Հ. Արղությանի՝ 1796 թ. փետրվարի 24-ին գեներալ Ի. Սավելևին գրած նամակում հիշատակվում է Դերբենդի շրջակայքում հայկական ինը գյուղերի մասին[175]: XVIII դ.

---

[167] **И. Гербер**, նշվ. աշխ. էջ 80-83: Խորհրդային տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ում գտնվող Շահդաղ լեռան անունից նրանց ընդունված էր կոչել «շահդաղյան խմբի ժողովուրդներ» անվանումով (տե՛ս Народы Кавказа, Под ред. **Б. А. Гарданова, А. Н. Гулиева, С. Т. Еремяна, Л. И. Лаврова, Г. А. Нерсесова, Г. С. Читая,** Москва, 1962, т. II, с. 199):

[168] **Барон П. Услар,** Этнография Кавказа. Языкознание. VI. Кюринский язык, Тифлис, 1896, с. 6.

[169] Կովկասում հրեաների պատմության դասակարգումը տե՛ս **И. Давид,** История евреев на Кавказе, В 2-х томах, Тель-Авив, 1991, т. I, с. 26.

[170] **J. Reineggs and M. Bieberstein,** նշվ. աշխ., էջ 158:

[171] **А. Серебров,** նշվ. աշխ., էջ 205: Հմմ. **С. Броневский,** նշվ. աշխ., էջ 384:

[172] XVIII դ. երկրորդ կեսին հայերի մասին տե՛ս Описание всех в Российском государстве обитающих народов, ч. IV, СПб., 1799, с. 45–54: Արևելյան Այսրովկասում հայերի տեղաբաշխվածության մասին մանրամասն տե՛ս **Գ. Ստեփանյան,** Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), 2010:

[173] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 19; **Жизнь Артемия Араратского,** уроженца селения Вагаршапат близ горы Арарат, ч. II, СПб., 1813, с. 115.

[174] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 23.

[175] Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг., Сборник документов, Под ред. **М. Нерсисяна**, Ер., 1990 (հետայսու՝ АРО), т. IV, с. 423.

վերջի քաղաքական իրադարձությունների հետևանքով հայկական բնակչության կտրուկ անկում է նկատվում: Հովհաննես արքեպիսկոպոսի ջանքերով Աղվանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի 1818 թ. կազմած նվիրակության պատրաստած ցուցակում Դերբենդ քաղաքում հիշատակվում է ընդամենը 15-20 հայկական տուն[176]:

Ղուբայի խանությունում հայերը հիմնականում ապրում էին Մուսկուրի մահալում և ունեին շուրջ 180 տուն, վեց եկեղեցի (10 հոգևոր սպասավոր)[177]: Ղուբա քաղաքի մերձակա տարածքներում մի քանի հայկական տներ կային, որոնցից մեկում իջևանել էր Ս. Գմելինը: Նիզաբադ կայանից ոչ մեծ հեռավորության վրա էր գտնվում հայկական Բարագուն (կամ Վարագուն) կոչվող գյուղը[178], որը մտնում էր Նիզաբադի շրջանի մեջ[179]: Հայեր էին ապրում նաև Ռուստյումի մահալում, որի Քիլվար գյուղի հայկական եկեղեցին, ըստ ավանդության, կառուցվել է 1637 թ., ս. Գրիգոր Լուսավորչի հիմնած և օծած մատուռի տեղում[180]: Ավանդույթի համաձայն, Քիլվարի հայկական փայտաշեն եկեղեցու հին սեղանը պահպանվել էր ս. Գրիգորիսի ժամանակներից (IV դ.), որի ճակատային մասում պահպանվել էին անծանոթ գրությամբ արձանագրություններ[181]:

Դեռևս XV դ. անգլիացի ճանապարհորդ Ա. Ջենկենսոնի վկայությամբ, Շամախին բնակեցված էր գլխավորապես հայերով[182]: Ս. Գմելինի հաղորդմամբ Շամախիում կար 50 հայկական ընտանիք[183], որոնք խաղողի այգիների մշակությամբ և գինեգործությամբ էին զբաղվում[184]: Ս. Բուրնաշևի վկայությամբ 1780-ական թթ. Շամախիի խանությունում

---

[176] **Գ. Ստեփանյան,** Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, էջ 46:
[177] **П. Бутков,** Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письем». 1796 г., с. 205.
[178] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 48:
[179] **J. Reineggs and M. Bieberstein,** նշվ. աշխ., էջ 162:
[180]**Մ. Սմբատեանց,** նշվ. աշխ., էջ 542:
[181] Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Աշխատասիրութեամբ տեառն **Սարգսի** Սանահնեցւոյ **Ջալալեանցի,** էջ 424:
[182] **Հ. Հակոբյան,** Ուղեգրություններ, աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հտ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր, Եր., 1932, էջ 372; Английские путешественники в Московском государстве, с. 205.
[183] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 96:
[184] **Marschall fon Bieberstein,** նշվ. աշխ., էջ 24:

2000 քրիստոնյա ծուխ կար[185]: Դարի վերջին Շամախիում հիշատակվում էր 70 հայկական տուն, իսկ խանության 15 գյուղերում՝ 470 տուն[186]:

Հայկական հոծ բնակչությունն իր առանձնահատուկ դերակատարությունն ուներ նաև Շաքիի խանության էթնիկ խճանկարում, որտեղ նրանք հիմնականում կենտրոնացած էին 62 գյուղերում[187]:

Ս. Բուրնաշևի տվյալներով՝ 1780-ական թթ. Բաքու քաղաքում ապրում էին քրիստոնյա վաճառականների մի քանի ընտանիքներ[188]: XVIII դ. վերջին Բաքվում պարսկական 500-620 և հայկական 40 ծուխ կար, իսկ խանության 34 գյուղերում՝ 580-850 ծուխ[189]: Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից 1818 թ. կազմված Աղվանից կաթողիկոսության Շամախու հայոց թեմի մասին նվիրակության պատրաստած ցուցակում Բաքու քաղաքում հիշատակում է 40 հայկական տուն[190]:

Ս. Գմելինը նշում էր, որ Սալիան գավառում գյուղերը անկանոն կերպով սփռված էին Կուրի երկու ափերով, որոնցում ապրում էին պարսիկներ, թաթարներ և «ոչ մեծ քանակությամբ հայեր»[191]: Սալիանում հայկական բնակչության գոյության մասին է փաստում այն հանգամանքը, որ 1765 թ. Էջմիածնի կազմված «նվիրական վիճակների» սահմանները ճշտող փաստաթղթում, ի թիվս հայկական այլ բնակավայրերի, հիշատակվում է նաև Սալիանը[192]:

Այսպիսով, XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասը ժողովրդագրական վառ արտահայտված բազմէթնիկ պատկեր ուներ, ուր եկվոր քոչվոր բնակչության կողքին իրենց կեցությունն էին շարունակում պահպանել Բուն Աղվանքի բնակիչները՝ ուդիները, լեզգիները, ինչպես նաև հայերը, հրեաները, իրանական ժողովուրդները և այլք: Ավելին, XVIII դ. երկրորդ կեսին ռուսական տպագիր

---

[185] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 10:
[186] **И. Дренякин,** նշվ. աշխ., էջ 164-167:
[187] **А. Серебров,** նշվ. աշխ., էջ 180:
[188] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 11: Բաքու քաղաքի հայության պատմության մասին առավել մանրամասն տե՛ս **Գ. Ստեփանյան,** Բաքու քաղաքի հայության պատմությունը (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Եր., 2011:
[189] **С. Броневский,** նշվ. աշխ., էջ 401: Հմմ. **И. Дренякин,** նշվ. աշխ., էջ 168; **А. Серебров**, նշվ. աշխ. էջ 178:
[190] **Գ. Ստեփանյան,** Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, էջ 46:
[191] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 112-113:
[192] Դիւան հայոց պատմութեան, Գիրք Գ, մասն Բ, **Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը** (1763-1767), Խմբագրեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1894, էջ 802:

սկզբնաղբյուրներում ու պաշտոնական գրագրություններում հանդիպող «թաթարներ» և «պարսիկներ» էթնիկական անվանումների նույնացումը ժամանակակից «ադրբեջանցիներ» ընկալման հետ չի համապատասխանում պատմական իրականությանը:

1.3. ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Հյուսիս-արևելյան Այսրկովկասը մեծ տերությունների ռազմաքաղաքական, առևտրա-տնտեսական ու քաղաքակրթական խաչմերուկի կիզակետում գտնվելով, մշտապես իր վրա է կրել պատմական բոլոր ժամանակաշրջանների վայրիվերումները: Դրանք առաջին հերթին իրենց բացասական (երբեմն՝ կործանարար) ազդեցությունն են ունեցել տեղի ժողովուրդների, մասնավորապես, հայերի սոցիալ-իրավական դրության վրա:

Հնուց ի վեր հայերը բնակվել են Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ողջ տարածքում և ենթարկվել տարածաշրջանում կատարվող ռազմաքաղաքական փոփոխությունների ազդեցությանը: Հայ ազգաբնակչությունը մշտապես ստիպված է եղել պայքարել իր կրոնի և մշակութային արժեքային համակարգի պահպանման համար: Ֆիզիկական գոյության օրհասական խնդրին զուգընթաց առաջնահերթ էր հայ ինքնության պահպանումը: Բացառություն չէր նաև Իրանի տերության, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի ակտիվ դերակատարմամբ պայմանավորված XVIII դ. պատմական և քաղաքական իրադարձություններով լի երկրորդ կեսը: Խանությունների ինքնուրույն գոյությունը իր բացասական հետևանքն ունեցավ առավելապես տարածաշրջանի ոչ մուսուլմանական բնակչության՝ հայերի, հրեաների և հնդիկների սոցիալ-իրավական կարգավիճակի համար:

Հայտնի է, որ XVI-XVIII դդ. ընթացքում Հյուսիս-արևելյան Այսրկովկասը կամ Շիրվանը մտել է Սեֆյան Իրանի տերության պետական համակարգի ֆինանսա-վարչական ու հարկային կարևորագույն բաղադրիչներից մեկը համարվող

«Ազարբայջան» միավորի մեջ: Սոցիալ-իրավական հարաբերությունները Իրանի տերության կենտրոնական իշխանության և հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի հետ, կառուցվում էին այդ համակարգի միջոցով և նրա սահմաններում: Սեֆյան պետության կազմում հայերը, ինչպես և հրեաները, բացի այլ հարկերից, պարտավոր էին շահին վճարել ջիզյա (գլխահարկ՝ յուրաքանչյուր հասուն տղամարդու հաշվարկով)[193]:

Հայերից գանձվող ջիզյան ժամանակի ընթացքում անընդհատ ավելացող լրացուցիչ գումարների ու տոկոսների պատճառով խոշորացել էր և հաճախ կազմում էր մի ամբողջ գյուղից գանձվող հարկերի կեսից ավելին[194]: Հայտնի է, որ Սեֆյան վերջին շահ Սուլթան Հուսեյնի օրոք խստացվում է հարկահավաքության համակարգը: Այսպես է վկայում Եսայի Հասան Ջալալյանը «...զամենայն սահմանս երկրի, գիւղօրէից և ագարակաց, զհող, զջուր, զայգի, զանդաստան, զծառ, զտունկ և զամենայն ինչ գրեցին»[195]: Նրա պատկերավոր խոսքով՝ «նորահնար չարիք»-ն[196] իր ծանր հետևանքներն ունեցավ հայերի համար, քանի որ ջիզյան եռապատկվել էր:

Խորհրդային պատմագիտության մեջ այն տեսակետն է արտահայտվել, թե XVIII դ. երկրորդ կեսին կիսանկախ խանությունների ժամանակաշրջանում ջիզյան կամ գլխահարկը դադարել էր գոյություն ունենալ: Արևելագետ Ի. Պետրուշևսկին թյուրիմացաբար որպես հիմք ընդունում էր Կովկասում ռուսական հրամանատարության կողմից 1823 թ. Ղարաբաղի, Շաքիի և Շամախիի նահանգներում իրականացրած վիճակագրական «Նկարագրություններում» այդ հարկատեսակի բացակայության փաստը[197]: Նա եզրակացնում էր, որ հետագայում ևս Նադիր շահի կողմից ջիզյայի վերացման կարգը որոշ խանություններում պահպանվել էր: Սակայն ըստ Հ. Փափազյանի՝ Հայաստանում ջիզյա հարկատեսակը շարունակել է գոյություն ունենալ մինչև XVIII դ. վերջը[198]: Թեև հարցին յուրովի լուծում է տալիս նաև Վ.

---

[193] Tadhkirat al-muluk, p. 180.
[194] **А. Папазян,** Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ер., 1972, с. 235.
[195] **Եսայի Հասան Ջալալեանց,** Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, էջ 16:
[196] Նույն տեղում:
[197] **И. Петрушевский,** նշվ. աշխ., էջ 285:
[198] **А. Папазян**, նշվ. աշխ., էջ 234:

Գրիգորյանը Երևանի խանության 1780-1790-ական թթ. պատմությունը շարադրելիս. հիմք ընդունելով Հայկական մարզի կառավարիչ Ալ. Ճավճավաձեի և Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի միջև 1828 թ. նամակագրությունը, նա եզրակացնում է, որ խանության ժամանակաշրջանում «հայերը ազատ են եղել հավատի հարկից»[199]:

Վերը նշված փաստարկները ժամանակագրական, պատմաքաղաքական իրավիճակի ու ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացման տեմպերի առումով չեն կարող ամբողջապես համապատասխանել իրականությանը: Օրինակ, Շաքիի խանությունում խանական կառավարման ժամանակաշրջանում մահալները ղեկավարվում էին սուլթանների ու բեկերի կողմից, իսկ ռուսական իշխանության օրոք 1820-1830-ական թթ. վարչական նոր բաժանումների հետևանքով ստեղծվում է մահալային նայիբի պաշտոնը[200]: Այս տրամաբանության մեջ է ընկալվում նաև այն իրողությունը, որ 1820-ական թթ. ռուսական իշխանությունների կատարած խանությունների նկարագրություններում միևնույն մահալի տարբեր գյուղերի նույն հարկատեսակի չափը տարբեր է: Օրինակ՝ բաշ-փուլին (գլխահարկ) Ղարաբաղում Տաթևի մահալի Տաթև գյուղի 53 ծխերից հավաքագրվում էր 200 ռուբլի խանական փողով, Շինաթաղ գյուղի 12 ծխերից՝ 50 ռուբլի, իսկ Շինուհայր գյուղի 56 ծխերից՝ 360 ռուբլի և այլն[201]:

Հայտնի է, որ 1807 թ. Շաքիի խանության հայերը աղերսագիր են գրում Ի. Գուդովիչին՝ միջամտելու Ջաֆար Ղուլի խանի հավատի դիմաց գանձվող հարկի համար: Հետաքրքրականն այն է, որ շաքեցիները մատնանշում են այն հանգամանքը, որ Շաքիի կառավարության իրավունքը ստանալով՝ խանը հարկահավաքմամբ «վերադառնում է» իրենց տառապանքներ պատճառելուն[202]: Այսինքն՝ XVIII դ. երկրորդ կեսին ջիզյան պետք է, որ գոյություն ունենար Շաքիում, ինչպես նաև մյուս խանություններում:

---

[199] Հարցի շուրջ մանրամասն տե՛ս **Վ. Գրիգորյան,** Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Եր., 1958, էջ 54:

[200] АКАК, т. VIII, 1881, с. 473.

[201] Описание Карабагской провинции, составленное в 1823 году, действительным статским советником **Могилевским** и полковником **Ермоловым 2-м,** Тифлис, 1866, с. 122, 123.

[202] Присоединение Восточний Армении к России. Сборник документов, т. I, Под ред. **Ц. Агаяна**, Ер., 1972, с. 429, 430, 431.

Ավելին, 1770-1790-ական թթ. սկզբնաղբյուրներն ի տարբերություն խորհրդային պատմագիտական մտքի պնդումների՝ ուղիղ հակառակն են փաստում[203]: Այսպես, Վ. Զուբովի 1796 թ. Կասպիական արշավանքի մասնակից Պ. Բուտկովի վկայությամբ Ղուբայի խանության հայերն ու հրեաները սահմանված հարկերից բացի պարտավոր էին խանին վճարել՝ ամուսնացածները՝ 1 ռուբլի, իսկ չամուսնացածները՝ 55 կոպեկ[204]: Արշավանքի մյուս մասնակից Ֆ. Սիմոնովիչի աղբյուրների համաձայն՝ ամուսնացածները խանին վճարում էին 2 ռուբլի 10 կոպեկ, իսկ չամուսնացածները՝ 1 ռուբլի 10 կոպեկ[205]:

Հայերի սոցիալ-իրավական դրությունը նույնն էր նաև Շամախիում, ուր բնակչությունը խանի գանձարան հաստատագրված հարկեր էր վճարում յուրաքանչյուր ընտանիքից 100 ռուբլու չափով[206]: Շամախիի հայ ազգաբնակչությունը հարկերից բացի պարտավոր էր խանին ջիզյա վճարել տարեկան 2 ռուբլի և 40 կոպեկ, չամուսնացածները՝ 1 ռուբլի և 20 կոպեկ, իսկ մինչև 20 տարեկանները ազատված էին հարկերից[207]:

Անհրաժեշտության դեպքում Շամախիում խանը ցանկացած ճանապարհով հավաքում էր պահանջվող մթերքը, պարենը, ձիերը, անասունը, փողը, սակայն հիմնական ծանրությունն ընկնում էր հայերի վրա[208]:

1780-ական թթ. առաջին կեսին ռուսական լրտեսական աղբյուրների փոխանցմամբ՝ «հասարակ ժողովուրդը» և «պարսից ազգաբնակչությունը, մասնավորապես, հայերը» ինչպես Ֆաթհ Ալի խանից, այնպես էլ իրենց մյուս խաներից դժգոհ էին, քանի որ շուրջ երեսուն տարի ձգվող ավատատիրական կռիվները հյուծել էին տեղի ժողովուրդներին՝ անասելի չափերի հասցնելով հավաքվող հարկերը և զինվորագրելով բնակիչներին[209]:

---

[203] **С. Гмелин,** նշվ. աշխ.; **Ф. Симонович**, նշվ. աշխ.; **Н. Дренякин,** նշվ. աշխ.; **П. Бутков,** Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письем». 1796 г.; **А. Серебров**, նշվ. աշխ.:
[204] **П. Бутков,** Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письем». 1796 г., с. 205.
[205] **Ф. Симонович,** նշվ. աշխ., էջ 150:
[206] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 96:
[207] Նույն տեղում, էջ 96:
[208] Նույն տեղում, էջ 97-98:
[209] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 20.

Կիսանկախ խանությունների քաղաքներում հայերը, պարսիկներն ու թաթարները խառն էին ապրում և պարտավոր էին հյուրընկալության (կոնալղա) [210] պարտավորությունը կատարել: Այսպես, Ղարաբաղի խանությունում Շուշիի բնակիչները պարտավոր էին խանի հյուրերին ընդունել, հոգալ նրանց և ձիերի կարիքներն առանց դրամական վարձատրման[211]: Ըստ Ս. Գմելինի, Դերբենդում հայերը «խանին ոչ մի հարկ չէին վճարում՝ փոխարենը պարտավորվելով ոստիկանական պարտավորություններ կատարել[212]:

Հայերը Շամախիում և Դերբենդում օտարերկրացիներին բնակարաններ տրամադրելուց բացի, պարտավոր էին քաղաքի դարպասների մոտ պահակային ծառայություն կատարել, քանի որ «ինչպես Դերբենդում, այնպես էլ Շամախիում առավել շատ վստահում էին հայերին, քան թաթարներին ու պարսիկներին»[213]: Դերբենդում հայերի վստահելի բնակիչներ լինելու մասին է վկայում Ս. Գմելինի հաղորդած այն փաստը, որ խանի շրջապատում մշտապես հայեր կային[214]: Դա այն դեպքում, երբ Դերբենդը Ֆաթհ Ալի խանի ժառանգական տիրույթը չէր, այլ վերջինիցս նվաճվել էր զենքով, իսկ տվյալ պարագայում վստահել տեղացիներին (այն էլ այլադավան)՝ մեծ ռիսկ էր: Մյուս կողմից, խանի կողքին «մշտապես» ներկայություն կարող էին ունենալ միայն նրա վստահելի մարդիկ: Ֆաթհ Ալի խանի և Դաղստանի տիրակալների միջև 1774 թ. Ղուբայի խանության Գավդուշան կոչվող դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտում խանի զորքի շարքերում արիաբար կռվում էին շուրջ 70 հայեր, որոնից 20-ը զոհվում են՝ մեծ կորուստներ հասցնելով թշնամուն[215]:

Ս. Գմելինը գրում է, որ բարձր հարկեր սահմանելու համար Բաքվի հասարակ քաղաքացիները Մելիք Մուհամմադ խանին չէին սիրում ու տարածված էր այն համոզմունքը, որ Բաքվում «արդարադատություն չես գտնի»: Հատկապես այդ միտքը առկա էր հայերի շրջանում, որոնք ցանկանում էին այնքան գումար գտնել, որ

---

[210] **А. Папазян,** նշվ. աշխ., էջ 238:
[211] Описание Карабагской провинции, составленное в 1823 году, с. 8.
[212] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 19:
[213] Նույն տեղում, էջ 98-99:
[214] Նույն տեղում, էջ 44:
[215] РДО, с. 152.

կարողանան խանի ճնշումներից ազատվել: Բաքվեցիները դժգոհում էին նաև խանի պահանջած գումարի չափերից, քանի որ իրենք գրեթե ի վիճակի չէին լինում այն վճարել[216]:

Նշված ժամանակաշրջանում հայերը նկատելի դերակատարում և մեծ ավանդ ունեին տարածաշրջանի տնտեսական զարգացման գործում: Ինչպես XVIII դ. առաջին կեսին, այնպես էլ նրա երկրորդ կեսին Շիրվանում կատարվող առևտրի հիմնական մասը կատարվում էր հայերի և այնտեղ գտնվող հնդիկների միջոցով[217]: Ճանապարհորդ Ջ. Ֆորստերի խոսքերով՝ հիշյալ հայ և հնդիկ վաճառականները միասին կարող էին ապահովել Շիրվանի ապրանքաշրջանառությունը[218]: Ի դեպ, հայ վաճառականները տարածքի ու լեզվի իմացության շնորհիվ առավել նախընտրելի վիճակում էին նախկին իրանական պետության սահմաններում: Իրանական տարածքներում հայերը հաջողությամբ էին զբաղվում նաև աղամանդի և մարգարիտի վաճառքով[219]:

Փաստորեն, ինչպես հարյուր տարի առաջ, այնպես էլ XVIII դարում, հայերի դերը իրանական առևտրում անգերազանցելի էր մնում: Այս առնչությամբ հիշատակության են արժանի Պիեդրո դելա Վալեի խոսքերը, թե հայերը պարսից շահի համար այն նույն նշանակությունն ունեն, ինչ ջենովացիները՝ իսպանական թագավորի համար. «ո՛չ թագավորը կարող է առանց նրանց, ո՛չ էլ նրանք՝ առանց թագավորի»[220]:

Աղբյուրի վկայությամբ՝ Կասպից ծովի արևմտյան ափին և Շամախիում հայ վաճառականները զբաղվում էին մաքսանենգությամբ[221]: Ավելին, Հյուսիս-արևելյան Այսրկովկասում հայերի ֆինանսական հնարավորությունները թույլ էին տալիս իրենց ձեռքում պահել խանությունների ոչ միայն առևտրական, այլև տնտեսական զգալի լծակները: Օրինակ, հացաբույսերի մշակության առումով Դերբենդի խանությունում հարուստ հողատարածքներ չկային, և հացի պակասություն էր զգացվում: Ս. Գմելինի

---

[216] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 84:
[217] **J. Forster,** նշվ. աշխ., էջ 228:
[218] Նույն տեղում, էջ 256:
[219] ЦГВИА ф. 52, оп 1/194, д. 270, л. 41 об.
[220] Viaggidi Pietro della Valle il Pellegrino, descritti da lui medesimo in Lettere familiari all'eruditosuo Amico Mario Schipano, La Persia, parte II, vol. II, Roma, 1658, Lettera 14 da Sphahande' 24 di settembre 1621, par. VIII, p. 244; **B. L. Zekiyan,** The Iranian Oikumene and Armenia, – «Iran & the Caucasus», vol. IX, № 2, 2005, p. 245.
[221] **W. Coxe,** նշվ. աշխ., էջ 323:

վկայությամբ, իրավիճակն ավելի էր սրվում «պարսկական իշխանիկների» նույնիսկ ամենաչնչին ընդհարման դեպքում, և ալյուրի գինը հասնում էր 15 և ավելի ռուբլու: Նադիր շահի՝ Շիրվան կատարած արշավանքի ժամանակ Դերբենդում ալյուրի գինը հասել էր 20-30 ռուբլու, ինչի հետևանքով շատ հայեր արագ հարստանում են[222]:

XVIII դ. երկրորդ կեսի գրավոր սկզբնաղբյուրների վերլուծությունը փաստում է, որ հայերը կարողանում էին փողով իրենց գյուղերը որոշ չափով զերծ պահել այլ ժողովուրդների բնակեցումից: Այսպես, Ղուբայի խանության Շաբրանի[223] մահալում կողք-կողքի ապրող հայկական և մուսուլմանական ընտանիքները թեև ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում էին, սակայն խանին ավելին էին վճարում, որպեսզի հրեաներն իրենց մոտ չապրեն[224]: Մեկ այլ վկայություն էլ վերաբերում է Մայր Աթոռի ֆինանսական միջոցներից կաթողիկոսի կողմից Երևանի խանին վճարվող 5000 ռուբլի գումարին՝ որպեսզի հայկական գյուղերում մուսուլմաններ չբնակեցվեն[225]:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի հայ ազգաբնակչության սոցիալ-իրավական կարգավիճակի հաջորդ հարթակը պայմանավորված էր հայոց եկեղեցու հետ հարաբերություններով: Այսպես, Բուն Աղվանք – Ալբանիայի տարածքը թեև XVIII դ. երկրորդ կեսին վաղուց կորցրել էր իր պատմա-քաղաքական ու հոգևոր-մշակութային նշանակությունը, սակայն, ըստ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի, «Գեանջայ քաղաքն, Շամախի, Շիրվան, Բագու, Դարբանդ, Նուխի, Պարտաւ, Խաչենու երկիրն, և բոլոր տունն Աղուանից» շարունակում էին ճանաչել Մայր Աթոռի առաջնորդությունը[226]: Վերջինս Աղվանից կաթողիկոսությունից ինչպես տերունի կոչվող մյուս թեմերից (օսմանյան, պարսից, վրաց և ռուսաց ենթակայությամբ տարածքներից), երեք տարին մեկ հոգեբաժնի և այլ եկամուտներ էր հավաքում:

---

[222] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 19-20:

[223] Շիրվանշահերի օրոք Շաբրանում դրամատուն է գործել, որտեղ 1331-1360 թթ. ընցաթքում դրամներ են հատվել (տե՛ս **Zeno,** (Oriental Coins Database, www.zeno.ru), no. 137385):

[224] **J. Reineggs and M. Bieberstein,** նշվ. աշխ., էջ 162:

[225] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 18:

[226] **Զամբռ,** Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն: Համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի **Սիմէօնէ** ցաւահար եւ վշտակոծ **կաթուղիկոսէ Երեւանցւոյ,** Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1873, էջ 51:

Ս. Գմելինը հիշատակություն է թողել նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի կրոնական ու դավանական իրավիճակի մասին: Նրա խոսքերով՝ Բաքու քաղաքի «գլխավոր օրենքը» շիա ուղղության մուսուլմանությունն էր, սակայն հանդուրժողականություն էր ցուցաբերվում նաև սուննիների նկատմամբ, իսկ հայերն իրենց պատարագը գաղտնի էին կատարում[227]: Դա փաստում է, որ խանական իշխանությունները հետապնդում էին հայերին ազատ դավանանքի համար: Շամախիում Ս. Գմելինը ականատես է լինում մի տեսարանի, երբ հայկական երկու վանքերը պատրաստվում էին խանին 1000 ռուբլի նվիրատվություն տալ և վախենում էին, որ Ֆաթհ Ալի խանը մոտ ապագայում կարող էր կրկնել պահանջը[228]:

Այսպիսով, կիսանկախ խանությունների ժամանակաշրջանի համար կարևոր հարց էին նաև հայերի նկատմամբ իրականացվող ոչ միայն սոցիալական հալածանքները, այլև կրոնական անհանդուրժողականությունը: Զուգահեռներ անցկացնելով XVIII դ. առաջին քառորդում հայերի սոցիալ-իրավական կարգավիճակի հետ՝ կարող ենք փաստել, որ Իրանում կենտրոնական իշխանության թուլացմանը պարբերաբար հետևում են հալածանքները հայ բնակչության նկատմամբ: Այսպես, ճիզվիտ Յոհան Լա Մացը 1702 թ. սեպտեմբերի 1-ին Շամախիից գրում էր, որ հայերն այնտեղ զարմանալի չափերի հասնող խոշտանգումների են ենթարկվում: Հոգևորականը նշում էր, որ նրանց վրա անհիմն տուգանքներ են նշանակվում, իսկ գյուղացիներն այն աստիճան են կեղեքված, որ գրեթե բոլորը մտածում են քաղաքներից ու գյուղերից հեռանալու մասին և եթե ապաստանելու տեղ ունենային, ապա նրանցից ոչ ոք չէր մնա[229]:

XVIII դ. սկզբին ռուս պետական գործիչ Ա. Վոլինսկու տեղեկություններով՝ նահանգի բոլոր քաղաքներում և գյուղերում առկա էր հայկական հոծ բնակչություն իրենց վանքերով: Քրիստոնյաների նկատմամբ ծանր հարկային քաղաքականության հետևանքով հայ բնակիչներից շատերը ստիպված դավանափոխ էին լինում[230]:

---

[227] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 81: Բաքվի Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցման տարեթիվը չի պահպանվել, սակայն հայտնի է, որ վերանորոգվել է 1789 թ (**Մ. Սմբատեանց,** նշվ. աշխ., էջ 373):

[228] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 97-98:

[229] Письма и донесения иезуитов о России конца XVII и начала XVIII века, СПб., 1904, с. 107.

[230] Путешественники об Азербайджане. Сборник, Под ред. **Э. М. Шахмалиева,** т. I, Сост. и автор вступ. статьи З. И. Ямпольский, Баку, 1961, с. 375.

XVIII դ. 20-ական թթ. Իրանում Սեֆյան արքայատոհմի անկումից հետո Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ծայր առած քաղաքական խժդժությունները իրենց հետևանքն են թողնում Շիրվանի էթնոդավանական իրավիճակի վրա: Կապաղակում (Ղաբալայում), որտեղ հայերն ամենաշատն էին և բավական հարուստ էին, ավերածություններից ու թալանից զերծ մնալու համար փրկագին են վճարում Հաջի Դավուդ բեկին: Ֆիզիկական բնաջնջումից բացի նրանց սպառնում էր նաև դավանափոխությունը, որը հաճախակի երևույթ էր դարձել բեկի որդու՝ Կապաղակի նորանշանակ (1727 թ.) նայիբի իշխանության օրոք: Ժամանակակցի հաղորդմամբ՝ հայերը դիմանում են ամեն տեսակի կտտանքների և հալածանքների, սակայն դավանափոխ չեն լինում: Այդ ժամանակ նայիբը բռնի ուժով է նրանց մզկիթներ տանում և դավանափոխություն պարտադրում[231]: Հաջի Դավուդ բեկը մերժելով դրանում իր մասնակցության հնարավորությունը՝ առաջարկում է հայերին մեծամեծ նվերներով այցելել իրեն ու քրիստոնեությունը ազատ դավանելու իրավունք ստանալ[232]: Ի վերջո հայերը և հրեաները ստիպված էին տարբերանշան կրել՝ դեղին լաթի կտորի տեսքով[233]:

Ի դեպ, կրոնական հալածանքները քրիստոնյաների (հայերի) նկատմամբ չեն շրջանցում նաև Շիրվանի մուսուլմանական բնակչությանը: Ըստ Ի. Գերբերի՝ Շամախիի, Զավադի, Ղաբալայի, Սալիանի մուսուլմանական բնակչության մեծ մասը նախքան խառնակ ժամանակները (1720-ական թթ.) շիաներ են եղել: Շամախիում Սուրխայ խանի և Դավուդ բեկի քաղաքական իշխանության հաստատման հետևանքով շիա դավանանքի մուսուլմանական բնակչությունը վախից թաքցնում էր այդ հանգամանքը, երբեմն էլ ստիպված դառնում էր սուննի[234]: Այդ քաղաքականությունը պայմանավորված էր նրանով, որ խռովարար խանն ու բեկը թուրքամետ քաղաքականություն էին վարում և շիա լինելը սպառնում էր ֆիզիկական ոչնչացմամբ[235]:

---

[231] Հայերի բռնի ուժով դավանափոխ լինելու մասին հաղորդումներ տե՛ս նաև **Զ. Արզումանյան,** Փաստաթղթեր Անդրկովկասի քաղաքական դրության մասին (1723 թ. առաջին կես), – ԼՀԳ, 1974, № 3, էջ 109:

[232] **И. Гербер,** նշվ. աշխ., էջ 116-117:

[233] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., СПб., 1869, ч. II, с. 10-11.

[234] **И. Гербер,** նշվ. աշխ., էջ 95:

[235] Նույն տեղում, էջ 94-96, 99-100:

Ճնշումները հայ ազգաբնակչության նկատմամբ շարունակվում էին նաև 1730-ական թթ.: Այսպես, 1736 թ. Մուղանի դաշտում անցկացվող համաժողովի օրերին Աբրահամ Կրետացի կաթողիկոսը խնդրում է Նադիր շահին թույլ տալ Շամախիի ամրոցից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող վայրում շամախեցի հայերին բնակություն հաստատել, քանի որ «զի էր օդն ապականեալ, և տեղն՝ շողային և ջուրն՝ պակաս և տաճկունք, որք են լակզիք և սուննիք, վշտացուցանէին և նեղացուցանէին զտառապեալսն, այսինքն՝ զազգն մեր»: Կաթողիկոսի խնդրանքի մեջ պարտադիր մաս էր կազմում նոր վայրում եկեղեցի կառուցելու իրավունք ստանալը. «զի անհնար է հայոց ազգին առանց եկեղեց[ւ]ոյ բնակիլ ի տեղի մի՝ թէև դրախտ իցէ»[236]: Ավելին, Աբրահամ Կրետացու ջանքերով շահը վերացնում է նաև հավատի համար գանձվող հարկատեսակը՝ ջիզյան: Նադիր շահի հրամանի (1741 թ.) համաձայն՝ բոլոր հաքիմներից ու ամիլներից պահանջվում էր «թույլ չտալ» հայ կանանց, տղաների և աղջիկների «բռնի պարտադիր մուսուլմանացումը»՝ սպառնալով պատժել կարգազանցներին[237]:

Սիմեոն Երևանցին նշում է, որ համաձայն Ազադ խանի ռաղամի (հրամանի) «զի Հայքն զօրէնս իւրեանց համարձակ պաշտիցեն, և կաթուղիկոսն ըստ օրինին իւրեանց կառավարեսցէ զազգն իւր, և մի՛ ոք խառնիցի և կամ ներհակիցէ»[238]:

Աղբյուրի վկայությամբ՝ Քերիմ խան Զենդի օրոք Իրանում հայերին թույլատրվում էր քրիստոնեական համայնք ունենալ և եկեղեցիներ կառուցել: Շիրազում գտնվող «Գուրգեն անունով մի հայ հանդիսանում էր իր ազգի առաջնորդն ու սուլթանը», իսկ Քերիմ խանը նրան իր մոտ ընկերն էր համարում[239]: Իսկ Էնզելիի նավահանգստում նա հարկահավաք և քալանթար էր նշանակել Սարգիս անունով մի հայի[240]: Մինչդեռ Ֆաթհ Ալի խանի դաժանությունները չէին շրջանցում նաև հայ հոգևոր սպասավորներին: Այսպես, Մուղանի դաշտում ավազակախմբով թափառող Շամախիի կույր Աղասի

---

[236] **Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ** Պատմագրութիւն անցիցն իւրոյ եւ Նատր-Շահին պարսից, ի Վաղարշապատ – Ս. Էջմիածին, 1870, էջ 65:

[237] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, Պրակ 4 (1734-1797), Կազմեց՝ **Ք. Կոստիկյան,** Եր., 2008, վավերագիր 17, էջ 50:

[238] Հմմ. Ջամբռ, էջ 226:

[239] **J. Reineggs and M. Bieberstein,** նշվ. աշխ., էջ 109:

[240] АВПР, 1763 г., Фонд Сношения России с Персией, оп. 77/1, д. 1, л. 45.

խանին ալյուր վաճառելու համար Ֆաթհ Ալի խանը հրամայում է հայկական վանքերից մեկի քահանային հրապարակայնորեն և մեծ դաժանությամբ պատժել:

Հին և Նոր Շամախիների միջակայքում գտնվում էին հինգ հայկական գյուղեր՝ Մերզանի, Մադրասա, Սաղիան, Քերքենջ և Քելուխոնի, որոնք խիստ ավերածությունների էին ենթարկվել Ֆաթհ Ալի խանի կողմից Շամախիի գրավման ժամանակ (1769 թ.)[241]: Այս գյուղերի շրջանում գտնվող երկու վանքերի հոգևոր սպասավորները վախենում էին բացահայտորեն օգտագործել եկեղեցական անոթներ, սրբապատկերներ և այլ պարագաներ, քանի որ խանը կարող էր բռնագրավել դրանք: Այդ պատճառով էլ հայկական վանքերում Աստվածամոր սրբապատկերից բացի ոչինչ ցուցադրված չէր, գրում է Ս. Գմելինը[242]:

XVIII դ. երկրորդ կեսին կիսանկախ խանությունների գոյության ընթացքում կրոնական և հարկային ճնշումները մեծանում են նաև ոչ քրիստոնյաների նկատմամբ: Այսպես, Դերբենդի խանության Ուլուսի մահալի Թոփրակ Կալե կոչվող բնակավայրը հիշատակվում է որպես կռապաշտների՝ կրակապաշտ գաբրերի քաղաք: Ա. Սուվորովի խոսքերով՝ 1780-ական թթ. սկզբին քաղաքի և նրա բնակիչների՝ իրանալեզու գաբրերի[243] մասին միայն ավերակներն էին հիշեցնում, քանի որ բնակիչներն արդեն չկային[244]: Տարածքը պատկանում էր Ֆաթհ Ալի խանին և դատելով այն փաստից, որ Դերբենդի խանությունը նա նվաճել էր դեռևս 1759 թ., ապա ենթադրելի է, որ քաղաքի ու գաբրերի ճակատագրի հարցում խանը բացասական դերակատարում է ունեցել, և բնակավայրը դատարկվել էր:

Նման ճակատագրին էին արժանացել նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի մյուս հնաբնակները՝ կրակապաշտ հնդիկները: Քերիմ խանի ժամանակ Բաքվի խանությունում ապրող կրակապաշտ հնդիկները խանին պարբերաբար հարկեր էին

---

[241] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 96:
[242] Նույն տեղում, էջ 107:
[243] Գաբրերի մասին տե՛ս **П. Зубов,** Картина кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель, в историческом, статистическом, этнографическом, финансовом и торговом отношениях, ч. IV, СПб., 1835, с. 80-83: Հմմ. **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 66-67; **J. Reineggs and M. Bieberstein,** նշվ. աշխ., էջ 163; **С. Броневский,** նշվ. աշխ., էջ 407-410; **Ղ. Ալիշան,** Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 92-93; The encyclopaedia of Islam, V. II, Leiden, 1991, p. 970-971.
[244] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 23.

վճարում և արտակարգ այլ միջադեպերի համար դրամական վճարներ էին կատարում: Սակայն Իրանի տերության վեքիլի մահից հետո (1779 թ.) իրավիճակը փոխվում է հոգուտ խաների անսահմանափակ իշխանության, որը սահուն կերպով կամայականության էր վերաճում[245]:

Ընդհանրացնելով աղբյուրագիտական նյութը կարող ենք փաստել, որ ի տարբերություն իրանական գահակալների (Նադիր շահ, Ազադ խան, Քերիմ խան Զենդ) Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ինքնիշխան խաները այլադավանների՝ հայերի, հրեաների և հնդիկների նկատմամբ, կրոնական հանդուրժողականություն գրեթե չէին ցուցաբերում:

XVIII դ. երկրորդ կեսին տարածաշրջանում ծայր առած քաոսի հետևանքով ակտիվանում են բնակչության տեղաշարժերը: Հակոբ Շամախեցի կաթողիկոսը նշում է, որ Սեֆյան պետության անկումից հետո շուրջ 40 տարի «թագաւորութիւն կարմրագլխաց» չէր հանդարտվում» [246] : Ապակայունացած իրավիճակը Թավրիզի շրջակա գյուղերից և այլ վայրերից մի խումբ հայերի ստիպում է ընտանիքներով 1753 թ. մեկնել Էնզելի՝ Աստրախան տեղափոխվելու և այնտեղ հիմնավորվելու նպատակով[247]:

Բնակչության (հատկապես, հայերի) տեղաշարժերն Այսրկովկասում այնքան էին ահագնացել, որ տեղերում որոշ հոգևորականներ չէին կարողանում ճիշտ կազմակերպել հոգևոր տուրքերի հավաքագրումը: Հարցը կարգավորելու նպատակով միջամտում է Հակոբ Շամախեցի կաթողիկոսը՝ կարգադրելով, որ ժողովուրդը որ վիճակում որ հաստատված է, այնտեղ էլ վճարի եկեղեցուն հասանելիք տուրքը[248]:

Տարածաշրջանի էթնոքաղաքական պատկերի փոփոխման գործում չափազանց բացասական ազդեցություն ունեցավ Աղա Մուհամմադ (1742-1797) խանի 1795 թ. արշավանքը: Վարդան Օձնեցու վկայությամբ՝ 1796 թ. սկզբին «եղև սաստիկ սովոյ աշխարհին Աղուանից, Արցախայ, Սիւնեաց և Գանձակայ, քանզի ասպատակ զօրաց

---

[245] **А. Серебров,** նշվ. աշխ., էջ 178-179:
[246] ՄՄ, ձեռ. 2911, էջ 102բ: Հմմ. **J. Perry,** The Zand Dynasty, – The Cambridge history of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge, 1991, vol. VII, p. 96.
[247] ՄՄ, Կաթողիկոսական դիվան (հետայսու՝ ԿԴ), թղթ 1, վավ. 26, էջ 1-2:
[248] ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վավ. 52, էջ 1:

Մահմադ շահի այրեալ էին զարմտիս երկրին», որի հետևանքով մեծ ծավալների է հասնում գաղթը[249]:

Վ. Զուբովի Կասպիական արշավանքը (1796 թ.) ողբերգական հետևանք ունեցավ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի հայ բնակչության համար: Ռուսական զորքի հանկարծակի նահանջի հետևանքով հայերը հայտնվել էին խաների վրեժխնդրության հեռանկարի առջև: Հետևաբար, Դերբենդի, Ղուբայի, Շամախիի, Բաքվի խանությունների հայերը զանգվածաբար սկսեցին լքել իրենց բնակավայրերը՝ Աստրախան և Հյուսիսային Կովկաս գաղթելով[250]: Միայն Դերբենդից և Մուշկուրից դեպի Հյուսիսային Կովկաս էր գաղթել 610 ընտանիք՝ 5212 մարդ[251]: Սենատի 1799 թ. ապրիլի 15-ի որոշմամբ՝ Դերբենդից գաղթած հայերին մերձակա պետական հողերից հատկացումներ են կատարվում[252]:

Աղա Մուհամմադ խանի 1795 և 1797 թթ. արշավանքներն աղետաբեր եղան նաև Արցախի հայ բնակչության համար, որոնց մի մասը 1797-1798 թթ. գաղթում է Պարսկաստան, Վրաստան և Ռուսաստան[253]: Սովի սարսափելի հետևանքների մասին Հ. Արղությանը 1796 թ. ցավով գրում էր. «մինչ զի զորդիս վաճառել և զկինս՝ առօրեայ կտորիկ հացի միոյ, և որ անտանելին է, սաստկութիւն սովուն և զհաւատն սուրբ տայ ուրանալ»[254]:

Այսրկովկասում ծագած խառնակ իրավիճակից շուրջ 5000 ընտանիք Ղարաբաղից հեռացել էր Շաքի, Շիրվան և շրջակա այլ վայրեր[255]: Արցախահայերին հաջողվում է Շաքի-Շիրվան պատմական հատվածում հիմնադրել հայկական նոր բնակավայրեր՝ ապահովելով ինքնության շարունակական գոյությունն այդ տարածքներում:

---

[249] «Բազումք ի Հայոց և սակաւք ի տաճկաց անցին ի Վրաստան, ի Սոմխեթ, յԵրեւան, ի Կարս և յաշխարհն Սարմատացւոյ՝ ի Մօզդոք և Ղզլար» (ՄՄ, ձեռ. 4331, էջ 91բ-92ա):

[250] **Հր. Աճառյան,** Հայ գաղթականության պատմություն, Եր., 2002, էջ 108: Տե՛ս նաև **Պ. Չորանյան,** Հայերի իրավական ու տնտեսական կարգավիճակը Ռուսաստանում XVIII դարի 80-90-ական թթ., – ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 75-94:

[251] Տե՛ս **Պ. Չորանյան,** Ռուսահայոց գաղթօջախի բնակչության քանակական կազմը (XVIII դարի վերջին քառորդ), – ՊԲՀ, 1998, № 3, էջ 64:

[252] ПСЗРИ, т. XXV, с. 619.

[253] **Ա. Մաղալյան,** Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Եր., 2007, էջ 93:

[254] ՄՄ, ձեռ. 2951, էջ 121բ:

[255] Russia and the Armenians of Transcaucasia, 1797-1889. A documentary record. Annotated translation and commentary by **George A. Bournoutian,** Costa Mesa, 1998, p. 19.

Արտահայտվել է անգամ՝ թերևս չափազանցված մի տեսակետ, թե XVIII դ. վերջին հայ ազգային մտավորականության ազատ Հայրենիք ստեղծելու ջանքերը դարձան Հայաստանի քաղաքական ու սոցիալ-մշակութային ձգտումների «կարապի երգը»[256]:

Այսպիսով, XVIII դ. երկրորդ կեսին Իրանում կենտրոնացված պետության բացակայության պայմաններում Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ձևավորված կիսանկախ խանություններում կտրուկ վատթարանում է հայերի և մյուս ոչ մուսուլմանական ժողովուրդների սոցիալական և իրավական դրությունը:

1.4. ԴՐԱՄԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պատմագիտության մեջ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում XVIII դ. երկրորդ կեսին դրամահատության հիմնախնդիրն ուսումնասիրվել է ապրանքադրամային փոխհարաբերությունների[257], դրամահատության պատմության ընդհանուր պատկերի վերլուծության[258], դրամների տեսակների քննության և նկարագրության[259] տեսանկյուններից: Դրամագիտական ուսումնասիրությունները նվիրված են խանություններում դրամական շրջանառության ձևերի և զարգացման աստիճանների, դրամական համակարգի կառուցվածքի, շրջանառվող դրամների տեսակների, քաշի, կշռի լուսաբանմանը՝ ուշադրությունից դուրս թողնելով խնդրի պատմագիտական կողմը:

XVIII դ. երկրորդ կեսին Իրանական նախկին պետության տարածքում շրջանառության մեջ էին Սեֆյան շահերի և Աֆշար տիրակալների (Նադիր շահ, Ադիլ

---

[256] Տե՛ս **A. Ferrari,** Nobility and Monarchy in Eighteen Century Armenia; Preliminary Remarks to a New Study, – «Iran & the Caucasus», vol. VIII, 2004, № 1, p. 62.

[257] **Г. Абдуллаев,** Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80-х гг. XVIII в., Баку, 1958.

[258] **А. Раджабли,** Нумизматика Азербайджана (Очерки истрии монетного дела и денежного обращения Азербайджана), Баку, 1997.

[259] **Е. Синицына,** Денежное обращение Азербайджана (Гянджинского, Карабахского, Шемахинского, Шекинского, Бакинского, Дербентского и Кубинского ханств) во второй половине XVIII – первой четверти XIX в., Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Баку, 1992.

շահ, Իբրահիմ, Շահրուխ) հատած դրամները [260], սակայն Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաներն ինքնուրույն դրամահատություն են իրականացրել։

Փաստորեն, եթե խանություններն ինքնուրույն դրամ են հատել, ուրեմն քաղաքականապես անկախ են եղել, քանի որ Իրանական պետությունում արծաթ և ոսկի[261] դրամներ հատելու իրավունքը վերապահված էր միայն շահին։ Խնդրո առարկա թեման անհրաժեշտ է քննել Իրանում XVIII դ. երկրորդ կեսին իրականացվող դրամահատության պատմության համատեքստում։

Նադիր շահի մահից հետո Իրանի տերության կառավարիչները սեփական անունով դրամներ չեն հատել, քանի որ երկրի օրինական և ճանաչված տիրակալներ չէին։ Այդ դրամները կոչվում էին *անանուն* կամ *իմամական*՝ շիա դավանանքի 12 իմամների անուններից։ Դրամների երեսին նշվում էին շիա դավանանքին պատկանող գրություններ, որոնք անուղղակի ձևով կրկնում էին դրամը հատող խանի անունը։ Դեռևս Շիրվանշահերի մի ճյուղ, որը պատմագիտության մեջ հայտնի է Դերբենդի արքայատոհմ (1382-1538 թթ.) անվանումով, խուսանավելով աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, շիա դավանանքին բնորոշ գրություններով անանուն դրամահատություն էր իրականացնում[262]։

XVIII դ. երկրորդ կեսին Իրանում հատվող դրամների երեսին հիմնականում արձանագրվում էր «Ժամանակի տիրակալ» գրությունը, որը ձևականորեն նվիրվում էր շիա դավանանքի մեջ անհետացած 12-րդ իմամ Մահդիին, սակայն անուղղակի հիշատակում էր Քերիմ խան Զենդին։ Վերջինս իր հատած դրամներին թողնում էր Ալլահի 99 անուններից մեկը համարվող «Օ՛, Քարիմ» գրությունը։ Հետաքրքրական է, որ Քերիմ խանի 1758 թ. հատած արծաթ դրամի հակառակ երեսին «Օ՛, Քարիմ» բացականչությունը դեռևս չկար[263]։ Սակայն 1759 թվականից հետո, երբ նրան հաջողվում

---

[260] Ի տարբերություն Հյուսիս-արևելյան Այսրկովկասի, Թիֆլիսի դրամատանը 1723 թվականից Սեֆյան շահերի անունից դրամնահատություն չի իրականացվել, քանի որ թուրքերը գրավել էին քաղաքը։ Թիֆլիսից թուրքերի վտարումից հետո (1735 թ.) այստեղ Սեֆյան Աբբաս Գ-ի (1731-1736) անունից վերջին դրամն է հատվել (տե՛ս Т. **Кутелия,** Грузия и Сефевидский Иран, Тбилиси, 1979, с. 110)։

[261] XVIII դ. երկրորդ կեսին Այսրկովկասի խանություններում ոսկյա դրամներ չեն հատվել։ Բացառություն էր կազմում Թիֆլիսի դրամատունը (տե՛ս **Д. Капанадзе,** Грузинская нумизматика, Тбилиси, 1955, с. 121)։

[262] Տե՛ս **Е. Пахомов,** Клады Азербайджана и других республик и краев Кавказа, вып. IX, Баку, 1966, с. 84-86։ Սակայն արդեն շեյխ Իբրահիմ Բ-ի (1502-1524) օրոք Շամախիում հատած դրամը կրում էր նրա տիտղոսն ու անունը (Նույն տեղում, էջ 88)։

[263] **Zeno,** (Oriental Coins Database, www.zeno.ru), no. 39424.

է Իրանի տերության մեծ մասի նկատմամբ գերիշխանություն հաստատել «Օ՛, Քարիմ» գրությունը հայտնվում է աբբասիների վրա։

Իրանի տերության մյուս տիրակալ Ալի Մուրադ խան Զենդի (1779-1785 թթ.) հատած դրամները կրում էին «Օ՛, Ալի» գրությունը, Ջաֆար խան Զենդի (1785-1789 թթ.) դրամները իմամ Ջաֆարի անունից էին[264], իսկ Աղա Մուհամմադ խան Ղաջարի Սպահանում 1789 թ. հատած շահի (=50 դինար) դրամը կրում էր «Օ՛, Մուհամմադ» գրությունը[265]։

Ակադեմիկոս Ս. Գմելինը փաստում էր, որ XVIII դ. երկրորդ կեսին Իրանում յուրաքանչյուր խան ինքնուրույն դրամ էր հատում և գին սահմանում։ Գիլանում հատված դրամը Մազանդարանում մեկ այլ գին ուներ։ Համապատասխանաբար Մազանդարանի դրամը գնային այլ արժեք ուներ Գիլանում։ Այդ երկու դրամները Թավրիզում բոլորովին ուրիշ արժեք էին ստանում[266]։

Դրամային այդ քաղաքականությունը զանազան չարաշահումների տեղիք էր տալիս։ Ըստ Ս. Գմելինի, երբ Գիլանի խանը տեղեկանում է, որ մետաքս գնելու նպատակով վաճառականներ են ժամանել Ռեշտ, ապա յուրաքանչյուր դուկատի ինքնարժեքից արհեստականորեն 25 կոպեկ նվազում է։ Վաճառականները ստիպված են լինում այդ գնով առևտուր կատարել, իսկ վերադարձին տեղեկանում են, որ դրամի ինքնարժեքը վերականգնվել է և դարձել 50 կոպեկ[267]։ Անշուշտ, այս հանգամանքը բացասական ազդեցություն էր թողնում տարածաշրջանում կատարվող առևտրի վրա։

XVIII դ. երկրորդ կեսին հատվող դրամները միտում չունեին ընդգծելու խաների քաղաքական ինքնուրույնությունը։ Այսպես, Քերիմ խան Զենդի մահից հետո (1779 թ.) Իրանում ձևական կառավարիչ է դառնում նրա որդին, սակայն գահակալական պայքարը շարունակվում է Քերիմ խանի Սաղրք և Զեքի զորավարների և նրա ազգական Ալի Մուրադ խանի միջև[268]։ Սաղրք խանը 1779-1782 թթ. աբբասիների վրա պահպանում

---

[264] **Ch. L. Krause, C. Mishler**, Standard Catalog of World Coins. Eighteenth century. 1701–1800, Edited by George Cuhaj, 6th edition, Krause Publications, 2013, p. 994.

[265] **Ch. L. Krause, C. Mishler**, Standard Catalog of World Coins. Eighteenth century. 1701–1800, Edited by George Cuhaj, 5th edition, Krause Publications, 2010, p. 889.

[266] **С. Гмелин**, նշվ. աշխ., էջ 205-206։

[267] Նույն տեղում, էջ 206։

[268] История Ирана с древнейших времен до конца XVIII века, Под ред. **В. В. Струве, И. Орбели, И. Петрушевского,** Ленинград, 1958 с. 327.

էր «Օ՛, Քարիմ» բացականչությունը[269]: Այդ քայլով նա ջանում էր իր իշխանությունը Քերիմ խանից բխեցնել և ապահովել դրա օրինականությունը: Իսկ Ալի Մուրադ խանը, որը Քերիմ խան Զենդի հորեղբորորդին էր և իշխանության օրինականության խնդիր չուներ, դրամների վրա շիա գրություններով ընդգծում էր իր քաղաքական «առավելությունը» գահի մյուս հավակնորդների նկատմամբ:

XVIII դ. երկրորդ կեսին Իրանում վարվող դրամական քաղաքականությունն արտացոլվում էր նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում:

Հայտնի է, որ Այսրկովկասում Թիֆլիսում, Երևանում, Շամախիում, Գանձակում և այլ վայրերում շահական դրամատներ՝ զառաբխաններ էին գործում, որտեղ տեղական կարիքների համար պղնձյա[270] դրամներ են հատվել: Պատմական տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ Իրանական պետությունում դրամահատության գործը վարձակալության իրավունքով հաճախ վստահվել է հայերին [271] : Իրանական իրականության մեջ դրամահատությունը հայերին փոխանցելու ավանդույթը շարունակվում էր նաև XVIII դարում: Այսպես, Աբրահամ Կրետացի կաթողիկոսը վկայում է, որ Երևանում զառաբխանե բացելու և այն մելիք Հակոբջանին հանձնելու խնդրանքով ինքը դիմել է Նադիր Ղուլի խանին և թույլտվություն ստացել[272]: Թեև XVIII դ. երկրորդ կեսին այսրկովկասյան խանություններում լայնորեն կիրառվել է դրամատների վարձակալությունը, սակայն վկայություններ, որ դրանք գտնվել են հայերի ձեռքում, գոնե մեզ հայտնի չեն:

Այսրկովկասում XVIII դ. երկրորդ կեսին ինքնուրույն դրամահատություն առաջինն իրականացվել է Գանձակի խանությունում[273]:

---

[269] **Ch. L. Krause, C. Mishler**, Standard Catalog of World Coins. Eighteenth century. 1701–1800, Edited by George Cuhaj, 5th edition, Krause Publications, 2010, p. 889.

[270] Պղնձյա դրամները հայտնի էին *ֆելս* կամ *ֆուլուս* անվանումով, որը պղնձյա դրամների արաբերեն ընդհանրական անունն էր: Սկզբնական շրջանում դրանք բյուզանդական դրամների նմանակումներն էին՝ հունա-արաբական գրություններով: Սակայն 695 թ. դրամական բարեփոխման հետևանքով դրամներին հայտնվեցին միայն Ղուրանից հատվածներ, խալիֆի անունը, հատման տարեթիվը և այլն: Ֆելս էին կոչվում 1-9 գրամ քաշ ունեցող պղնձյա բոլոր դրամները: Պարսից շահերի և Բուխարայի ամիրների հատած պղնձյա դրամները նշվում են ֆուլուս անվանումով (Տե՛ս **В. Гладкий,** Словарь нумизмата, Москва, 2006, с. 265):

[271] **Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը,** Պատ., խմբագիր՝ Ս. Տեր-Ավետիսյան, Եր., 1938, էջ 56, 62, 63, 123, 124:

[272] **Աբրահամ Կրեցատի,** Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն և ծանոթագրություններ՝ Ն. Ղորղանյանի, Եր., 1973, էջ 72:

[273] Գանձակի խանությունում դրամահատության մասին տե՛ս **А. Акопян,** Серебрянный чекан Гянджинского ханства (1747-1814), - Эпиграфика Востока, 29, (2011), с. 29-38; նույնի՝ Восемнадцатая

Թեև Դերբենդի խանությունը ինքնուրույնություն էր ձեռք բերել 1747 թ., սակայն դրամ հատել սկսել են 1780-ական թվականներից մինչև 1806 թ.՝ կրելով «Օ՛, Ալի» գրությունը [274]: Պատմագիտության մեջ տեսակետ գոյություն ունի, թե Դերբենդում դրամահատարանը հիմնվել է Ֆաթհ Ալի խանի կողմից խանությունը Ղուբային միավորելուց հետո և նրա ջանքերով [275]: Սակայն 1930-ական թթ. Կախեթում հայտնաբերվել է Շիրվանշահերի օրոք (1423 թ.) Դերբենդում հատած արծաթյա դրամ[276]: Դերբենդում դրամահատության մասին է փաստում նաև այն, որ 1741 թ. այստեղ արծաթյա դրամներ (շահի և ռուփի (=10 շահի) են հատվել[277]:

XVIII դ. երկրորդ կեսին Դերբենդի դրամատանը հատված դրամներից հայտնի են 1785, 1786 թթ. «Ժամանակի տիրակալ» գրությամբ աբբասիներ [278]:

Դրամագիտական հետազոտությունները փաստում են, որ XVIII դ. երկրորդ կեսին Շամախիի խանությունում անանուն արծաթյա դրամները հատվել են երկու փուլով: Առաջին շրջանի դրամահատությունը կատարվել է Հին Շամախիում սկսած 1753 թվականից շիա գրություններով, իսկ երկրորդ շրջանը՝ Նոր Շամախիում (Աղսու) սկսած 1760-ական թվականներից «Օ՛, Քարիմ» գրությամբ[279]: Շամախիի խանությունում երկու տիպի դրամների գոյությունը պայմանավորված էր վարչա-քաղաքական իրողություններով: Այսպես, Հին Շամախիում առաջին տեսակի աբբասիների գոյությունը վկայում է, որ նրա տիրակալները փորձում էին իրենց իշխանությունը բխեցնել Սեֆյանների արքայատոհմից՝ օրինականացնելով այն: Իսկ Նոր Շամախիում Սարքարների խանական տոհմի ներկայացուցիչներն իրենց իշխանությունը ստացել էին Քերիմ խանից և հատում էին երկրորդ տիպի դրամներ[280]: Շամախիի Մուհամմադ Սայիդ

всероссийская нумизматическая конференция, Москва-Коломна, 20-25 апреля, Тезисы докладов и сообщений, Москва, 2015, с. 92-93.

[274] **Ch. L. Krause, C. Mishler**, Standard Catalog of World Coins. Eighteenth century. 1701–1800, Edited **by George Cuhaj,** 6th edition, Krause Publications, 2013, p. 100.

[275] **Е. Синицына,** նշվ. աշխ., էջ 94:

[276] **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. III, 1940, с. 54: Ընդհանուր առմամբ 1930-ական թթ. Դերբենդում հայտնաբերվել են հարյուրից ավելի IX-XIX դդ. թվագրմամբ բացառապես պղնձյա դրամներ (տե՛ս **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. IV, 1949, с. 33):

[277] **Ch. L. Krause, C. Mishler**, Standard Catalog of World Coins. Eighteenth century. 1701–1800, Edited **by George Cuhaj,** 5th edition, Krause Publications, 2010, p. 901.

[278] Նույն տեղում, էջ 100:

[279] **Е. Синицына,** նշվ. աշխ., էջ 59:

[280] Նույն տեղում, էջ 60:

(1763-1766 թթ.)[281], Ֆաթհ Ալի (1766-1788 թթ.), Ասկեր (1788 թ.), Կասըմ (1788-1794 թթ.)[282] և Մուստաֆա (1794-1820 թթ.) խաների կառավարման շրջանում Շամախիի դրամատներն ընդհանուր առմամբ թողարկում էին «Ժամանակի տիրակալ» պարսկերեն գրությամբ դրամներ[283]: Ուշագրավ է, որ Շամախիում 1766-1773 թթ. Ֆաթհ Ալի խանի հատած աբբասիների երեսին պարսկերեն «Ժամանակի տիրակալ», իսկ հակառակ կողմում՝ «Օ՛, Քարիմ» (1767, 1768, 1770, 1771, 1772 և 1773 թթ.) արաբերեն (1774-1781 թթ.) գրություններ են հայտնվում[284]: Հավանաբար Ֆաթհ Ալի խանը գիտակցում էր, որ տիրելով Շիրվանին իր քաղաքական ազդեցությունն Այսրկովկասում մեծացել էր և այդ կերպ փորձում էր փարատել Քերիմ խանի անհանգստությունը:

Ղուբայում ևս աբբասի դրամներ են հատվել «Ժամանակի տիրակալ», իսկ հակառակ երեսին՝ «Օ՛, Ալի» գրություններով (1777, 1798, 1799 թթ.)[285] և շարունակվել մինչև 1808 թ.[286]: Համեմատության կարգով նշենք, որ Շաքիի խանությունում դրամահատությունը շարունակվել էր մինչև 1826/27 թ.[287]:

Պատմագիտության մեջ կարծիք է արտահայտվել, թե XVIII դ. երկրորդ կեսին Բաքվի խանությունում գուցե դրամներ չեն հատվել[288]: Սակայն 1930-ական թթ. Խորհրդային Ադրբեջանում հայտնաբերվել են XV-XVI դդ. Բաքվի դրամատանը հատված անանուն պղնձյա դրամներ, որոնք փաստում են Բաքվում դրամահատության իրողության մասին[289]:

Ակադեմիկոս Ս. Գմելինը Հյուսիս-արևելյան Ասրկովկասում աբբասիների իրական քաշի մասին խոսելիս ի թիվս Դերբենդի և Շամախիի խանությունների հիշատակում էր նաև Բաքուն[290]: Ավելին, XVIII դ. երկրորդ կեսին Բաքվի խանը դրամատունը

---

[281] **St. Album,** Rare Coins, Auction 22, May 14-15, 2015, Santa Rosa, CA, 2015, no. 615. p. 49.
[282] Նույն տեղում, no. 616. p. 49.
[283] **Ch. L. Krause, C. Mishler,** Standard Catalog of World Coins. Eighteenth century. 1701–1800, Edited by George Cuhaj, 6th edition, Krause Publications, 2013, p. 99-100.
[284] Նույն տեղում, էջ 100:
[285] Նույն տեղում, էջ 99:
[286] Խորհրդային Ադրբեջանի Ղուբա քաղաքի տարածքում 1934 թ. հայտնաբերված 248 կտոր անանուն աբբասիների թվում էին նաև 1805-1808 թթ. Ղուբայում հատած դրամներ (տե՛ս **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. II, 1938, с. 59):
[287] **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. III, 1940, с. 65.
[288] **А. Раджабли,** նշվ. աշխ., էջ 125:
[289] **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. IV, 1949, с. 55-56; նույնի՝ Клады Азербайджана, вып. V, 1949, с. 38-39.
[290] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 206:

վարձակալության էր հանձնում, որից զգալի եկամուտներ էր ստանում[291]: Վերջապես, 1939 թ. հունվարի 18-ին հնագիտական պեղումների ժամանակ XVIII դ. երկրորդ կեսին Բաքվի դրամատան մակագրությամբ 13,92 գրամ քաշով անանուն պղնձյա դրամ է հայտնաբերվել[292]:

Նշենք նաև, որ Բաքվում ապրանքաշրջանառության շնորհիվ խանության տարածքում մեծ տարածում էին գտել ռուսական դրամները[293]:

Այսպիսով, XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում խաները տուրք էին տալիս Իրանում ծավալվող քաղաքական փոփոխություններին և դրամների երեսին շիա դավանանքին բնորոշ գրություններ դրոշմելով իրենց քաղաքական դիրքորոշումն էին արտահայտում: Մյուս կողմից, այդ դրամները փաստում էին այսրկովկասյան խաների Իրանի տերությունից քաղաքական կախվածության մասին:

Փաստորեն, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաները քաղաքականապես առավել հակված էին դեպի Իրանական պետությունը, քան Ռուսական և Օսմանյան կայսրությունները: Թեև օրինաչափ կլիներ, եթե նշված ժամանակաշրջանում իրանական և այսրկովկասյան տիրակալներն իրենց անուններից դրամներ հատեին՝ խախտելով Սեֆյան Իրանի դրամահատության ավանդույթը: Ավելին, դրամների երեսին այնպիսի գրություններ թողնեին, որոնք կընդգծեին իրենց քաղաքական ինքնուրույնությունը, ինչպես ժամանակին վարվել էր Նադիր շահը: Վերջինիս հատած դրամներին հայտնվում է մի գրություն, որը փաստում էր «կատարվածի» «օգտակարությունն» Իրանի տերության համար[294], իսկ գրության թվաբանական նշանակությունը համապատասխանում էր Նադիր շահի թագադրման տարեթվին[295]:

Սակայն XVIII դ. երկրորդ կեսին Իրանում կենտրոնաձիգ իշխանության բացակայության պայմաններում օրհասական էր դարձել Օսմանյան և Ռուսական

---

[291] **Ա. Ахвердов,** Описание Дагестан. 1804 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева,** Москва, 1958, с. 222.

[292] **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. IV, 1949, с. 84; Տե՛ս նաև նույնի՝ Клады Азербайджана, вып. V, 1949, с. 42.

[293] Բաքվի նավահանգստում 1930 թ. հայտնաբերվել են 1759-1807 թթ. հատված ռուսական դրամներ (տե՛ս **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. II, 1938, с. 66):

[294] Այսինքն՝ Սեֆյան արքայատոհմի վերացումը և նոր արքայատոհմի (Աֆշարների) հաստատումն Իրանում:

[295] **Е. Пахомов,** Монеты Грузии, Тбилиси, 1970, с. 231.

կայսրություններին աշխարհաքաղաքական նկրտումներին դիմակայելը։ Հետևաբար, Սեֆյան պետության դրամագիտական ավանդույթների պահպանումն անուղղակի ընդգծում էր Իրանի տերության տիրակալների պետականությունը վերականգնելու ջանքերը։

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում համաիրանական դրամահատության քաղաքականությանը հետևելը դիվանագիտական քայլ էր տարածաշրջանում ռազմաքաղաքական նկրտումներ ունեցող Օսմանյան և Ռուսական կայսրությունների նկատմամբ։

Մյուս կողմից, խանություններում հարկահավաքությունն իրականացվում էր խանական դրամով[296]։

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում XVIII դ. երկրորդ կեսին դրամների քաշի փոփոխման դինամիկան համահունչ էր իրանական դրամներում կատարվող փոփոխություններին։

Ամփոփելով դրամագիտական նյութը նշենք, որ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում XVIII դ. երկրորդ կեսին իրականացվող դրամահատությունը փաստում է, որ խանություններն առավել հակված էին դեպի Իրանական պետությունը։ Խաները, հետևելով իրանական դրամահատության կանոններին, հավատարմություն և հնազանդություն էին հայտնում Իրանի տիրակալներին։ Վերը նշվածը համահունչ էր խաների խուսանավելու քաղաքականությանը։ Հետևաբար, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններում XVIII դ. երկրորդ կեսին իրականացվող դրամահատությունը սխալ է ներկայացնել որպես պետականության բաղադրիչ[297]։

Համեմատության կարգով նշենք, որ «Ժամանակի տիրակալ» գրությամբ արծաթ դրամներ են հատվել նաև Թիֆլիսում։ Այս հանգամանքը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ մինչև 1766-1767 թթ. Թիֆլիսում հատվող դրամները նույնպես իրանական էին[298]։ Սակայն դեռևս 1708-1719 թթ. Թիֆլիսի դրամատունը պղնձյա դրամներին արձանագրում է Քարթլիի կառավարիչներ Վախթանգ Զ-ի և մյուսների

---

[296] **Ф. Симонович,** նշվ. աշխ., էջ 144, 150; **П. Бутков,** Выдержки из «Проекта отчета о персидской экспедиции в виде письем». 1796 г., с. 205; նույնի՝ Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г., с. 211; **А. Ахвердов,** նշվ. աշխ., էջ 222։

[297] **А. Раджабли,** նշվ. աշխ., էջ 119։

[298] Տե՛ս **Е. Пахомов,** Монеты Грузии, с. 235.

անունները[299]։ Վրաց Թեյմուրազ արքայի անունը 1748/49 թ.[300], իսկ Հերակլ Բ-ի հետ միասին 1755/56 թ.[301], հայտնվում է ֆուլուսների երեսին։ Արդեն 1765/66 թ. Հերակլ Բ արքայի անունը գրվում էր դրամներին վրաց Բագրատունիների զինանշանի, իսկ 1787 և 1789 թթ.՝ ռուսական երկգլխանի արծվի հետ միասին[302]։ Թիֆլիսի դրամատանը 1798/99 թթ. անվանական դրամներ է հատել նաև Գեորգի ԺԲ արքան (1798-1800)[303]։

Վերջապես, ի տարբերություն իրանական և այսրկովկասյան արծաթյա դրամների, վրացական դրամների քաշի իջեցում մինչև Ռուսական կայսրությանը միանալը տեղի չի ունենում[304]։

XVIII դ. առաջին քառորդի սկզբնաղբյուր «Թազքիրաթ-ալ մուլուքի» տվյալներով Սեֆյան Իրանում դրամահատության իրավունքի դիմաց դրամատները պարտավոր էին շահական գանձարան հատած դրամների որոշակի քանակի չափով հարկ՝ վաջիբի վճարել։ Հարկի հավաքագրմամբ զբաղվում էր զարաբ-բաշին, իսկ վերահսկողությունն իրականացնում էր մուայեր-ալ-մամալիքը [305]։ Սակայն XVIII դ. երկրորդ կեսին այսրկովկասյան ինքնիշխան խաները դրամահատության դիմաց Իրանի տերության կառավարիչներին որևէ հարկ չէին վճարում։ Ավելին, Բաքվի, Շամախիի խանություններում գործող դրամատները վարձակալության շնորհիվ խաներին մեծ եկամուտներ էին ապահովում։

Այսպիսով, թեև XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասում խանությունների տիրակալները դրամներ են հատել, սակայն քաղաքական ինքնուրույնության չափանիշ էր խաների ռազմական հնարավորությունները[306]։ Ուստի, խաների դրամ հատելու գործառույթը չէր դիտարկվում որպես քաղաքական ինքնուրույնության վկայություն։

Մյուս կողմից, խաների ռազմական ուժը հիմնականում ձևավորվում էր վարձու լեզգիների շնորհիվ, որոնք նախատեսվող թալանից բացի զգալի գումարներ էին

---

[299] **Т. Кутелия,** նշվ. աշխ., էջ 111։
[300] **Д. Капанадзе,** նշվ. աշխ., էջ 123։
[301] **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. II, 1938, с. 61.
[302] **Д. Капанадзе,** նշվ. աշխ., էջ 123, 124-128; **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. II, 1938, с. 63; նույնի՝ **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. IV, 1949, с. 81-82.
[303] **Д. Капанадзе,** նշվ. աշխ., էջ 126։
[304] **Е. Пахомов,** Монеты Грузии, с. 237.
[305] Tadhkirat al-muluk, p. 59.
[306] **С.Бурнашев,** նշվ. աշխ., էջ 4։

պահանջում։ Հետևաբար, դրամի կարիքը ստիպում էր խաներին կրկնակի դրամահատություն կատարել[307], իսկ արծաթի պակասությունը՝ մեծ քանակությամբ կեղծ դրամների արտադրությունը։ Այսպես Ս. Գմելինը նշում էր, որ Շամախիում, Դերբենդում և Բաքվում համատարած կեղծ դրամներ էին շրջանառվում և ինքն անձամբ Շամախիում առևտուր իրականացնելիս 75 ռուբլի էր կորցրել, քանի որ դրամը կիսով չափ արժեզրկված էր[308]։ Որպես դրամի հումք էր ծառայում նաև ռուսական ռուբլին, որը «պարսկական և թուրքական» վաճառականների միջոցով ներթափանցում էր Այսրկովկաս, իսկ Շիրվանի, Շաքիի, Ղարաբաղի և մյուս խաներն այն ձուլում էին սեփական «ցածրորակ դրամների»[309]։

Կեղծ դրամնահատության դեմ պայքարելու յուրօրինակ միջոց էր դրամներին «ռահիջ» (շրջանառվող) գրության արձանագրումը, որը վկայում էր դրամի օրինական և շրջանառվող լինելու մասին։ Նման գրություններ էին կրում XVIII դ. երկրորդ կեսի Դերբենդի, Ղուբայի, Գանձակի, Շամախիի դրամատներում հատած դրամները[310]։

Հետևաբար, խանական դրամների ուսումնասիրությունը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր է։ XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասում իրականացվող դրամահատությունն ունեցել է ավելի շուտ առևտրա-տնտեսական, քան՝ քաղաքական նշանակություն։

Ամփոփելով առաջին գլխում քննարկվող նյութը կարող ենք նշել, որ XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ձևավորված ինքնուրույն վարչա-քաղաքական միավորներ խանություններից յուրաքանչյուրն ուրույն աշխարհաքաղաքական ու առևտրա-տնտեսական[311] դերակատարություն ուներ։

Խանություններում իշխանությունն ամբողջապես կենտրոնացել էր խաների ձեռքում։ Ուստի, ինչպես Երևանի, այնպես էլ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաներին կիսանկախ կարգավիճակը «չափազանց ձեռնտու էր», քանի որ նրանք «ժառանգական

---

[307] Օրինակ, Ղարաբաղում հատած ֆուլուսը կրկնակի դրամնահատության էր ենթարկվել Շամախիում (տե՛ս **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. IV, 1949, с. 85)։ Դրամը հայտնաբերվել է Ադրբեջանում 1940 թ. գյուղատնտեսական աշխատանքերի ժամանակ։

[308] **С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 206։

[309] АКАК, т. 8, 1881, с. 65.

[310] **Е. Пахомов,** Клады Азербайджана, вып. VIII, 1959, с. 29, 30-31, 34, 51, նույնի՝ Клады Азербайджана, вып. V, 1949, с. 44։

[311] Դերբենդից, Շամախիից Թիֆլիսից ու կովկասյան այլ վայրերից Ղզլար ներմուծվող ապրանքների ցանկը տե՛ս **М. Чулков,** Историческое описание российского коммерции, с. 399-401.

էին դարձրել իրենց պաշտոնը, համարյա թագավորական իրավունքներ ունեին»[312], և Սիմեոն Երևանցի կաթողիկոսի բնորոշմամբ՝ ինքնագլուխ էին դարձել[313]:

Այսրկովկասում խաների քաղաքական ազդեցությունը պայմանավորված էր ռազմական ուժի (սեփական և վարձու) առկայությամբ: Ռուսական կայսրության համար խաների ռազմաքաղաքական կարգավիճակը լրացուցիչ ազդակ էր ոչ միայն սեփական քաղաքականությունը կառուցելու, այլև Օսմանյան կայսրության և Իրանի տերության վերաբերմունքը խանությունների նկատմամբ պարզելու համար:

1750-1770-ական թթ. Ղուբայի խանությանը հաջողվել էր գերիշխող դիրք գրավել խանությունների շրջանում՝ իր քաղաքական կամքը թելադրելով մյուսներին: Ղուբայի Ֆաթհ Ալի խանին հաջողվել էր օգտագործել խաների միջև գոյություն ունեցող հակասություններն ու շահերը՝ դրանք համադրելով կամ հակադրելով միմյանց և դիվանագիտական դաշինքներ կնքելով Այսրկովկասի տիրակալների հետ:

Ղուբայի խանի գերիշխանությունը ճանաչած խաները պարտավորվում էին տարեկան հարկ վճարել և առաջին իսկ պահանջով զինված ուժեր տրամադրել: Շամախիի խանության օրինակով կարողացանք բացահայտել տարածաշրջանում «հզոր տիրակալի» կարգավիճակ ունեցող խանի (իմա՝ Ֆաթհ Ալիի) քաղաքական գործառույթները:

XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների միջև ավատատիրական պայքարի գործընթացը խորհրդային պատմագիտությունը դիտարկում էր որպես «Հյուսիս-արևելյան Ադրբեջանի» հողերի քաղաքական մեկ կենտրոնի շուրջը միավորման գործընթաց[314]: Ավելին, «Ղուբայի խանություն» եզրույթը փոխարինվում էր «Հյուսիս-արևելյան Ադրբեջանի պետություն»-ով, իսկ նրա խանին՝ կոչում էին «պետության ղեկավար»[315]: Սակայն մեր կարծիքով, XVIII դ. երկրորդ կեսի այսրկովկասյան խաների, Հերակլ Բ արքայի՝ հարևան առավել թույլ իշխանությունների վրա քաղաքական գերիշխանություն հաստատելու ձգտումը սխալ է ներկայացնել որպես քաղաքական միավորման գործընթաց: Խաներից յուրաքանչյուրն իր

---

[312] **Վ. Գրիգորյան,** նշվ. աշխ., էջ 63-64:
[313] **Ջամբռ,** էջ 232:
[314] **Г. Абдуллаев,** Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965, с. 4.
[315] Նույն տեղում, էջ 5:

տիրույթների անվտանգության և անկախության ապահովումը փորձում էր իրականացնել ի հաշիվ առավել խոցելի հարևանի: Ավելին, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի կիսանկախ խանությունների դրամական քաղաքականությունը գրեթե չէր շեղվում համընդհանուր (համաիրանական) պետական դրամական քաղաքականությունից որպես նրա անբաժան մաս:

Ֆաթհ Ալի խանի շուրջ երեք տասնամյակ ձգվող քաղաքական գործունեության համար խորհրդային պատմագիտությունը նրան կոչում էր «հայրենի երկրի միավորման մարտիկ», «Ադրբեջանի ազգային միավորման համար պայքարող մարտիկ» [316] : Իրականում Ղուբայի խանը խելացի և հմուտ դիվանագետ-տիրակալ էր, որի գերագույն խնդիրն էր քաղաքական գերիշխանություն հաստատել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի, ապա ողջ Այսրկովկասի և անգամ՝ Իրանի տերության վրա: Ավելին, Ֆաթհ Ալի խանը որևէ կապ չունի այսօրվա ընկալմամբ «ադրբեջանցիներ» էթնիկ հանրության հետ, քանի որ պատկանում էր դաղստանյան ժողովուրդներից մեկին՝ ղայթաղներին:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասը պատմական զանազան փոփոխությունների ենթարկվելով՝ կերպարանափոխվել էր նաև էթնիկ առումով: XVIII դ. ընթացքում Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների հնաբնակ ժողովուրդները՝ հայերը, հրեաները, պարսիկները (հետագայում կոչված՝ թաթեր) և Բուն Աղվանքի ժողովուրդներից լեզգիներն ու լեզգիախոս փոքր ազգությունները շարունակում են այստեղ իրենց էթնոքաղաքական դերակատարումն ունենալ:

Թեև Սեֆյան շահերի վարած վերաբնակեցման քաղաքականության հետևանքով Այսրկովկասի ողջ էթնոդավանական պատկերը փոխվել էր հօգուտ մուսուլմանների, սակայն Հյուսիս-արևելյան Այսկովկասի խանությունների պատմամշակութային անցյալը հնուց ի վեր քրիստոնյա տարրի առկայության մասին էր վկայում:

Ուստի, կարող ենք եզրակացնել, որ Հ. Աբդուլլաևի այն դրույթը, թե XVIII դ. երկրորդ կեսին «Հյուսիս-արևելյան Ադրբեջանի» քաղաքական «միավորումը» տեղի էր ունենում էթնիկապես միատարր բնակչության (իմա՝ «ադրբեջանցիներ») ներսում, որն ուներ միասնական տարածք, լեզու և մշակույթ, իսկ «ադրբեջանական հողերի» միավորումը Ղուբայի կամ մեկ այլ քաղաքական կենտրոնի շուրջը նպաստելու էր

[316] **П. Валуев,** Фатали-хан Кубинский, Баку, 1942, с. 4.

«ազգային պետության» ստեղծմանը [317], չի համապատասխանում տարածաշրջանի պատմական և էթնոքաղաքական իրական պատկերին:

[317] **Г. Абдуллаев,** նշվ. աշխ., էջ 279-280:

ԳԼՈՒԽ II

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ XVIII Դ. 50-80-ԱԿԱՆ ԹԹ.

2.1 ՌՈՒՍ-ԻՐԱՆԱ-ՕՍՄԱՆՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ XVIII Դ. 50-70-ԱԿԱՆ ԹԹ.

Այսրկովկասի, մասնավորապես՝ նրա հյուսիս-արևելյան հատվածի քաղաքական պատմության համար XVIII դ. երրորդ քառորդը բախտորոշ նշանակություն է ունեցել: Նադիր շահի սպանությունից (1747 թ.) հետո, ըստ ժամանակի մի աղբյուրի, «խռովեալ Պարսկաստան՝ այր ընդ եղբօր ոգորէին իւրաքանչիւրոց աշխարհաց մարզպանք և գաւառակալք, ինքնագլուխ միապետէին, որք որջորջէին խան, սուլթան, բէկ, աղայ, ի հայ ազգէ ևս գտանէին մասնաւոր իշխօղք քալանթար, մէլիք և իւզբաշի անուամբ»[318]:

Իրանի տերության իշխող վերնախավի միջև ծայր է առնում պայքարը գերագույն իշխանության համար[319]. «նախարարք նորին սուր ի գործ արկեալ կրճատէին զիրեարս, ապա գտեալ իւրաքանչիւր ոք ի նոցանէ զմասն բաժնի յաշխարհացն Պարսից ի մարտից պարապէին»[320]: Իրավիճակն այնքան էր ապակայունացել, որ ռուսական գործակալ կապիտան Ասլանովը հաղորդում էր, թե ճանապարհների անապահովության հետևանքով իրեն չէր հաջողվել անցնել Աստրաբադից Հնդկաստան տանող ճանապարհով[321]:

Սանկտ Պետերբուրգում խիստ անհանգստացած էին քաղաքական այդ իրավիճակից՝ վախենալով ռուսական հարավային սահմաններին թուրք-իրանական

---

[318] Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, **Ղուկաս կաթողիկոս** (1780-1800), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1899, էջ 727; Հմմ. ՄՄ, ձեռ. 4331, էջ 54ա; ՄՄ ԿԴ, թղթ. 18, վավ. 195, էջ 16: Տե՛ս նաև **Мирза-Адигезаль-Бек,** Карабаг-наме, Баку, 1950, с. 45.

[319] Պատմութիւն Օսմանեան պետութեանց, Յօրինեաց **հ. Գաբրիէլ վ. Այվազովսքի Մխիթարեանց,** հտ. Բ, Վենետիկ, 1841, էջ 425:

[320] Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար, – **«Կռունկ Հայոց աշխարհին»,** Գ տարի, թիւ Դ, 1862, Թիֆլիս, էջ 283:

[321] ՄՄ, ԿԴ, թղթ. 2, վավ. 20, էջ 1-2:

հնարավոր ագրեսիայից: Ռուսական դեսպան իշխան Ա. Գոլիցինն Իրանից հաղորդում էր, որ հաշվի առնելով երկրի ներսում ծայր առած քաղաքական ճգնաժամը նման զարգացումը գրեթե բացառվում էր[322]:

Իրադրությունը փոքր-ինչ կայունանում է, երբ 1760 թ. Քերիմ խան Զենդին հաջողվում է գրեթե ողջ Իրանը վերամիավորել[323]: Թեև 1760-1770-ական թթ. ավատատիրական կռիվներն Իրանում ժամանակավորապես դադարել էին ու որոշակի տնտեսական կայունություն էր արձանագրվել[324], սակայն միավորված պետություն չստեղծվեց: Ինչպես արևմտյան հետազոտող Ջ. Փերրին է նկատում՝ Իրանի տերության պետական սահմանները 1765-1779 թթ. նախկին Սեֆյան պետության տարածքի ուղիղ կեսն էին կազմում[325]:

Քերիմ խան Զենդի իշխանությունը Կուրից հյուսիս ընկած տարածքներում ձևական բնույթ էր կրում՝ պարարտ հող նախապատրաստելով թուրքական ագրեսիայի համար: Պատահական չէր, որ Օսմանյան կայսրությունում Նադիր շահի մահվան լուրը մեծ ցնծություն էր առաջացրել[326]: Ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունը՝ տարածաշրջանում Իրանի «մշտական թշնամին»[327] ու մրցակիցը, շտապելու էր օգտվել աշխարհաքաղաքական փոփոխություններից: Եթե Օսմանյան կայսրությանը հաջողվեր տիրել նախկին իրանական պետության տարածքներին, ապա Ռուսական կայսրության հարավային սահմանների անվտանգությունը լուրջ հարցականի տակ կդրվեր: Ռուսական կողմի մտավախություններն անհիմն չէին, քանի որ Իրանը քաղաքական այն ուժն էր, ում հաջողվել էր XVI-XVIII դդ. ընթացքում կասեցնել օսմանյան ագրեսիայի տարածումը Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Աֆղանստանի, Հնդկաստանի ուղղությամբ, ինչպես նաև դեպի հարավ՝ Պարսից ծոց[328]:

---

[322] **С. Соловьев,** История России с древнейших времен, кн. V, т. XXI-XXV, СПб., 1896, с. 492.
[323] Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հտ. Գ (ԺԸ-ԺԹ դդ.), Թարգմանեց՝ **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Եր., 1955, էջ 176:
[324] **С. Алиев,** Междоусобные войны и борьба за верховную власть в Иране после распада империи Надир-шаха, – Иран. История и культура в средние века и новое время, Москва, 1980, с. 58.
[325] **J. Perry,** The Zand dynasty, p. 95.
[326] Պատմութիւն Օսմանեան պետութեանց, Յօրինեաց **հ. Գաբրիէլ վ. Այվազովսքի Մխիթարեանց,** էջ 426:
[327] **J. Perry,** Karim khan Zand, London, Oneworld, 2006, p. 107.
[328] **Վ. Բայբուրդյան,** Օսմանյան կայսրության պատմություն, Եր., 2011, էջ 342:

Ռուսաստանի կովկասյան քաղաքականության համար Օսմանյան կայսրությունը պատմականորեն առանձնահատուկ տեղ էր գրավում: Կասպից ծովի արևմտյան ափերը թե՛ Ռուսական, թե՛ Օսմանյան կայսրությունների համար ունեին ոչ միայն ռազմաքաղաքական, այլև առևտրա-տնտեսական մեծ նշանակություն: Առևտրային այդ ճանապարհը Օսմանյան կայսրությանը հնարավորություն էր տալիս՝ վերահսկելու Արևմուտքի և Արևելքի միջև իրականացվող առևտուրը, մասնավորապես՝ մետաքսի հումքի արտահանումը[329]: Շիրվանից ու Գիլանից արտահանվող մետաքսի հումքի առյուծի բաժինն արտահանվում էր Օսմանյան կայսրություն, որտեղ այն վերամշակվում էր և վաճառվում Հալեպում, Զմյուռնիայում, ապա տեղափոխվում Լոնդոն, Մարսել և Վենետիկ:

Մյուս կողմից, եթե XVII դ. վերջին և XVIII դարում Իրանի տերությունից Ռուսաստանի տարածքով արտահանվող ապրանքները հիմնականում գնում էին եվրոպական երկրներ, ապա XVIII դ. երկրորդ կեսին ռուսական զարգացող արդյունաբերությունն ամբողջությամբ կլանում էր ներմուծումը: Նոր զարգացող ռուսական մանածագործական արդյունաբերությունը մետաքսի հումքի և էժան ներկանյութերի մեծ պահանջարկ ուներ[330]: Օսմանյան կայսրության՝ Կասպից ծովի ափամերձ տարածքների նվաճումը կնշանակեր նաև ռուս-իրանական առևտրի կենտրոնացում թուրքական ձեռքերում և «ճանապարհ դեպի ռուսական ներքին սահմաններ»[331]:

Ռուս-թուրքական հարաբերությունների լարումը նաև Ղրիմի հարցի շուրջ որպես Սևծովյան հիմնախնդրի բաղադրիչ մաս՝ մեծ էր: Այդ առնչությամբ կանցլեր Մ. Վորոնցովը 1762 թ. հուլիսի 6-ին Եկատերինա Բ կայսրուհուն (1762-1796) ուղղած գրության մեջ նշում էր, որ Ռուսաստանի հարևանությունը Ղրիմի խանության հետ ավելի վտանգավոր է, քան Օսմանյան կայսրությունը: Ռուսաստանի պետական անվտանգության շահերից էր բխում Ղրիմի խանության, որպես անկախ իշխանություն

---

[329] История внешней политики России. XVIII век, Отв. ред. **А. Сахаров,** Москва, 1998, с. 151.

[330] Տե՛ս **П. Любомиров,** Очерки по истории русской промышленности. XVII, XVIII и начало XIX века, Москва, 1947.

[331] Архив князя Воронцова, Под ред. **П. И. Бартенева,** Москва, кн. XXV. Бумаги разного содержания, 1882, с. 300-301.

կամ ռուսական կայսրության մաս, «ազատագրումը» թուրքական տիրապետությունից: Այդ դեպքում Սև և Ազովի ծովերը, մերձավորարևելյան ու հարավային բոլոր տարածքները կհայտնվեին Ռուսաստանից կախվածության և վախի մեջ՝ առևտրի ուղղությունը տեղափոխելով դեպի Ռուսական կայսրություն[332]:

Այսպիսով, XVIII դ. երկրորդ կեսին ռուսական կառավարության կովկասյան քաղաքականության անկյունաքարն էր վերադարձը Պետրոս Ա-ի արևելյան քաղաքականությանը, որը 1750-1770-ական թթ. նոր բովանդակություն էր ստանում. այն է՝ Մերձկասպյան տարածքները մինչև Գիլան զենքով գրավելու ծրագրին հակադրվում էր *թուրքական վտանգը չեզոքացնելու և դիվանագիտական ճանապարհով Օսմանյան կայսրությանը հնարավոր հեռավորության վրա պահելու ռազմավարությունը*:

Ռուսական կայսրության համար լարված իրավիճակ էր ստեղծվել նաև միջազգային հարաբերություններում՝ կապված Պրուսիայի դեմ պատերազմի մեջ (1756-1763 թթ.) ներքաշվելու հետ[333]: Հետևաբար, ռուս-թուրքական հարաբերությունների սրումը, որի արդյունքն էր լինելու պատերազմը, քաղաքական զարգացումների անցանկալի սցենար էր: Տարածաշրջանային փոփոխությունները հաշվի առնելով, Ռուսական կայսրությունը գրեթե չէր արձագանքում Քարթլիի Թեյմուրազ Բ արքայի օգնության խնդրանքներին: Արևելյան Վրաստանին որևէ օգնության ցուցաբերումը կնշանակեր հարաբերությունների լարում Օսմանյան կայսրության հետ: Ուստի 1752 թ. ապրիլին Օսմանյան կայսրությունում գտնվող ռուս լիազոր ներկայացուցիչ Ա. Օբրեսկովին տրված ցուցումներում նշվում էր. «Եթե մենք ինքներս պարսկական գործերի մեջ չենք մտնում, ապա չենք կարող Բարձր Դռանը խորհուրդ տալ հետևելու մեր օրինակին»: Եվ պետք էր թուրքական նախարարներին «ներշնչել», որ Բարձր Դուռը թույլ տա պարսիկներին ինքնուրույն կարգավորել սեփական գործերը, քանզի նրանց թույլ լինելու պատճառով թուրքական սահմաններին ոչինչ սպառնալ չէր կարող[334]:

---

[332] Архив князя Воронцова, кн. XXV. Бумаги разного содержания, 1882, с. 309.

[333] История дипломатии, т. I, Под ред. **А. В. Зорина, В. С. Семенова, С. Д. Сказкина, В. М. Хвостова,** Москва, 1959, с. 355: XVIII դ. կեսի ռուս-թուրքական հարաբերությունների պատմությունը միջազգային հարաբերությունների համատեքստում տե՛ս նաև **Р. Михнева**, Россия и Османская империя в международных отношениях в середине XVIII века (1739-1756), Москва, 1985.

[334] **С. Соловьев,** История России с древнейших времен, кн. V, т. XXIII, СПб., 1896, с. 737: Ադիլ շահի կանանցից մեկը վրաց Թեյմուրազ արքայի դուստրն էր և ժամանակակիցների խոսքերով՝ շահն

Շուտով վրաց թագավոր Թեյմուրազ Բ-ի մահվան կապակցությամբ 1762 թ. հունվարին կանցլեր Մ. Վորոնցովի Հերակլ Բ-ին գրած ցավակցական նամակում արքայազն բառը Պետրոս Գ-ի (1761-1762) ձեռքով փոխարինված էր «սրբազան ցար» եզրույթով և նրան էր ուղարկում դրամական պարգև ու թանկարժեք նվերներ[335]: Նադիր շահի մահից հետո ռուսական կառավարությունն իր պաշտոնական գրագրություններում վրաց տիրակալին կոչում էր արքայազն, տիրակալ, բայց երբեք արքա, պատճառաբանելով, որ Օսմանյան կայսրությունն ու Իրանը այդ տիտղոսով չեն դիմում նրանց: Ռուսական դիվանագիտության նման շրջադարձը պայմանավորված էր Իրանում ծագած քաղաքական խռովությունների հետևանքով Արևելյան Վրաստանում օսմանա-իրանյան հնարավոր ազդեցության ուժեղացմամբ: Հետևաբար, փորձելով Այսրկովկասի նկատմամբ «անտարբեր վերաբերմունք» ցուցաբերել, ռուսական դիվանագիտությունը հիմնական շեշտը դնում էր Օսմանյան կայսրության *զսպման քաղաքական հայեցակարգի* վրա:

Սակայն Ռուսական կայսրությունը ևս փորձում էր օգտվել Իրանում միասնական պետության բացակայությունից և ակտիվացնում այսրկովկասյան քաղաքականությունը: 1750-ական թթ. կեսերին ձևավորվում է ռուս-իրանական առևտրի և ռուսական հյուպատոսության կենտրոնը Ռեշտից հյուսիս՝ Բաքու, տեղափոխելու գաղափարը: Թեև Բաքվի խանության ափերի մոտ 1756 թ. նավաբեկության ենթարկված Սուրբ Հովհաննես ռուսական առևտրային նավը թալանվել էր և խանի հրամանով, ողջ մնացած նավաստիներին ջրհորն էին նետել, այնուամենայնիվ, 1757 թ. հյուպատոսն ու ռուսական առևտրականները ժամանում են Բաքու:

Ռուսաստանի Արտաքին գործերի կոլեգիան 1758 թ. մարտի 23-ի հյուպատոս Պ. Չեկալևսկուն հանձնարարում էր՝ չնայած Բաքվի խանի հանդուգն վարքագծին ու կամայականություններին, «հանուն կայսերական շահերի» շարունակել մնալ Բաքվում: Վերջապես, Բաքվի խանի վարքագիծը կարող էր վատ օրինակ ծառայել մյուս խանների

«առանձնահատուկ սեր էր տածում» վրացիների նկատմամբ (**С. Гмелин,** նշվ. աշխ., էջ 177-178; **М. Чулков,** Историческое описание российского коммерции, с. 617):

[335] Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, /**В. Г. Мачарадзе,** ч. II, Посольство Теймураза II в Россию, Тбилиси, [б. и.], 1968, с. 490.

համար: Հյուպատոսը Ղուբայի և Շամախիի խաներից ռուսական առևտուրը Նիզաբադ տեղափոխելու առաջարկություն էր ստացել՝ խոստանալով ռուսական առևտրականների համար հարմար պայմաններ ստեղծել և վերադարձնել 1756 թ. թալանված նավի ապրանքներն ու գումարը: Հյուպատոսին հանձնարարվում էր Ղուբայի և Շամախիի խաներին «ներշնչել» Բաքվի խանի չարագործությունների մասին հիշողությունը՝ ընդգծելով, որ ինքը Նիզաբադ էր տեղափոխվել իրենց՝ «խաների ցանկությամբ»[336]: Սակայն 1758 թ. մարտի սկզբին Պ. Չեկալևսկին համոզվելով, որ խաներից «բարիք սպասել երբեք չի կարելի», հեռանում է Սալիան:

Փաստորեն, Ռուսաստանը ստիպված էր հարմարվել և հաշվի նստել ոչ միայն Գիլանի Հեդայեթ խանի, այլև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաների քմահաճությունների ու կամայականությունների հետ, որոնք անտեսում էին ռուս-իրանական պայմանագրերի առևտրային կետերը: Ռեշտի 1729 թ. փետրվարի 13-ի և 1732 թ. հունվարի 21-ին կնքած պայմանագրերով կողմերը պարտավորվում էին վաճառականների մահվան դեպքում նրանց ողջ ունեցվածքն ու անձնական իրերը անվնաս և ամբողջությամբ օրինական ժառանգներին կամ լիազորված անձանց վերադարձնել[337]: Սակայն Իրանի տերության և Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ինքնիշխան խաները չէին ցանկանում ճանաչել շահական կառավարության Ռուսաստանի հետ կնքած պայմանագրերը: Բաքվի և Ղուբայի խանությունների ափերի մոտ նավաբեկության ենթարկված առևտրական նավերը թալանվում էին խաների գիտությամբ: Ռուսական կողմը ստիպված էր խնդիրը քննարկել ինքնիշխան խաների հետ, քանի որ XVIII դ. երկրորդ կեսին Իրանական պետության փլուզումը փաստացի վերացրել էր իրանական տիրապետությունն Այսրկովկասում[338]:

Ավելին, այսրկովկասյան խաներն իրենց հուզող խնդիրները բարձրաձայնում էին ոչ թե Թավրիզում, ինչպես Սեֆյանների և Նադիր շահի օրոք էր, այլ անմիջական կապի մեջ էին մտնում Շիրազում գտնվող Զենդերի կառավարության հետ: Այս կերպ էր վարվել

---

[336] **В. Уляницкий,** Русские консульства за границей в XVIII веке, ч. I-II, Москва, 1899, Приложение 121, с. DXXXIII-DXXXV.

[337] Договоры России с Востоком, политические и торговые, с. 193, 197-199.

[338] **А. Иоаннисян,** Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия. Ер., 1958, с. XI.

Նախիջևանի Կերկելու ցեղի առաջնորդ Քերիմ-սուլթանը՝ խնդրելով վերականգնել իր ժառանգական իրավունքները[339]: Միաժամանակ Քերիմ խան և Ալի Մուրադ խան Զենդերը, Աղա Մուհամմադ Ղաջարը պարբերաբար Նախիջևանի ցեղային առաջնորդներին պաշտոններ էին տալիս Իրանի տերության տիրակալի ֆերմանով[340]: Սակայն նման տեղեկություններ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաների մասին հայտնի չեն (գոնե առայժմ): Հետևաբար կարող ենք փաստել, որ Քերիմ խան Զենդի իշխանությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում գրեթե բացակայում էր և տեղի խաների նկատմամբ չկար նախկին իրանական պետության վերահսկողությունը Ատրպատականի բեկլարբեկության միջոցով:

Այսրկովկասի տիրակալների Իրանի տերության կենտրոնական իշխանություններից քաղաքականապես անկախ լինելու մասին էր փաստում նաև այն, որ 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում սուլթանի պատվիրակները մեծամեծ նվերներով այցելում են Քերիմ խանին և խնդրում «խաղաղեցնել» Հերակլ արքային: Իրանի տերության տիրակալը պատասխանում է, որ ինքը չի կարող բավարարել խնդրանքը, քանի որ Հերակլ Բ արքան իրեն «չի լսում»[341], այսինքն՝ քաղաքական առումով ինքնուրույն է:

Այնուամենայնիվ, XVIII դ. երկրորդ կեսին այսրկովկասյան տիրույթները կանգնած էին անկախության պահպանման դժվարին խնդրի առջև, քանի որ 1750-1770-ական թթ. Այսրկովկասը քաղաքականապես միատարր չէր և բաժանված էր ազդեցության գոտիների՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության, Ղարաբաղի, Շաքիի և Ղուբայի խանությունների միջև: Առավել ուժեղ և ազդեցիկ քաղաքական միավոր էր Արևելյան Վրաստանը: Դեռևս Նադիր շահը (1744 թ.) Թեյմուրազ Բ-ին և նրա որդի Հերակլ Բ-ին ճանաչել էր համապատասխանաբար Քարթլիի ու Կախեթի կառավարիչներ՝ փաստացի վրացական այդ հողերի կառավարումը կենտրոնացնելով մեկ ընտանիքի ձեռքում: 1748-1750 թթ. Արևելյան Վրաստանից իրենց կախվածությունը

---

[339] Передняя Азия в документах (Серия памяти Ю. Н. Марра), кн. I, Нахичеванские рукописные документы XVIII-XIX вв., Пер. и коммент. **К. Н. Смирнова, Дж. Гаибова,** Под ред. **Ю. Н. Марра,** Тбилиси, 1936, с. 62-63.

[340] Тбилисская коллекция персидских фирманов, т. II, Сост. **М. А. Тодуа, И. К. Шамс,** Тбилиси, 1989, док. № 55, 56, 58-62, 64, 66, 68-69, 71-73, 76.

[341] Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, ч. III, вып. II, с. 499.

ճանաչեցին Երևանի, Նախիջևանի ու Գանձակի խաները՝ պարտավորվելով հարկ վճարել [342] : 1762 թ. հոր մահից հետո Հերակլ Բ-ն միավորել էր երկու թագավորությունները և իրեն հռչակել Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության արքա: Հերակլ Բ-ի օրոք վրացական զինված ուժերի ընդհանուր թվաքանակը հասնում էր 12000-ի[343]: Իրանի տերության կառավարիչ Քերիմ խան Զենդը ճանաչելով Հերակլ Բ-ին՝ հաստատել էր նրա իրավունքները Երևանի և Գանձակի խանությունների նկատմամբ[344]:

Այսրկովկասում խաների և տիրակալների ուժերի այս հարաբերակցության պահպանումը երկարաժամկետ կտրվածքով նախընտրելի էր թե՛ Ռուսական կայսրության, թե՛ Օսմանյան կայսրության և թե՛ Իրանի տերության համար, որոնց Այսրկովկասը պետք էր թույլ և մասնատված: Հետևաբար ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի այն դրույթը, թե XVIII դ. երկրորդ կեսին հաստատված աշխարհաքաղաքական իրավիճակում խանությունների անկախության համար իրական վտանգ կար Իրանից և Օսմանյան կայսրությունից[345]՝ միակողմանի է: Մեր կարծիքով, Ռուսական կայսրության քաղաքականությունն Այսրկովկասում ևս նվաճողական էր: Պարզապես, եթե առաջին երկու տերությունները կարող էին բացահայտ ռազմական միջամտության դիմել, ապա Ռուսական կայսրությունը՝ Հյուսիսային Մերձսևծովյան տարածքների հիմնախնդիր ունենալով և չցանկանալով սրել ռուս-թուրք-իրանական հարաբերությունները, դիվանագիտական միջամտության էր դիմում:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունները ինքնուրույնություն ստանալուն զուգահեռ, ձեռք էին բերել Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների հետ ինքնուրույն հարաբերություններ կառուցելու հնարավորություն: Անհրաժեշտ էին դիվանագիտական այնպիսի հմտություններ, որոնք թույլ կտային պահպանել խանությունների անկախությունը և հոգալ սեփական անվտանգության

---

[342] История Грузии, т. I, С древнейших времен до 60-х годов XIX века, Под ред. **Н. А. Бердзенишвили,** Тбилиси, 1962, с. 357-358.
[343] **А. Головин,** Историческое обозрение Грузии, 1864, с. 175.
[344] Նույն տեղում, էջ 363:
[345] **А. Иоаннисян,** Присоединение Закавказья к России, с. XII.

խնդիրները: Նշված ժամանակամիջոցում այդ խնդիրների ինքնուրույն իրագործումը դարձել էր գրեթե անհնար: Պետք էր ուժեղ և հուսալի դաշնակից գտնել: Իրանում միասնական պետության բացակայության պայմաններում դաշնակիցների ընտրությունը պետք էր կատարել Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև:

Խորհրդային պատմագիտության կարծրատիպի համաձայն, Այսրկովկասում «ժողովրդական լայն զանգվածները» թուրքական ագրեսիայից իրենց փրկությունը կապում էին միայն Ռուսաստանի հետ, իսկ խաները թուրք-իրանական տիրապետությանը նախընտրում էին ռուսական իշխանությունը[346]: Ինչ վերաբերում է «ժողովրդական լայն զանգվածներին», ապա դրանց տակ պետք է հասկանալ ոչ մուսուլմաններին՝ հայերին, հրեաներին, հնդիկներին և իրանալեզու ժողովուրդներին, որոնք խաների կամայականություններից իրենց փրկությունը կարող էին կապել Ռուսական կայսրության հետ: Սակայն ակնհայտ էր, որ այսրկովկասյան խաները նպատակ չունեին ամբողջովին ընդունելու Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրություններից որևէ մեկի գերիշխանությունը՝ կորցնելով սեփական ինքնիշխանությունը: Այդ մասին էին փաստում 1783 թ. հունվարին ռուսական պաշտոնական գրագրությունները: Ըստ այդ հաղորդումների՝ ի տարբերություն Ֆաթհ Ալի խանի՝ հասարակ ժողովուրդն անհամբերությամբ էր սպասում ռուսական զորքի հնարավոր ներխուժմանը տարածաշրջան[347]:

Խաներն իրենք էլ մեծ կասկածանքով էին վերաբերվում Ռուսական կայսրության բարեկամության մասին հավաստիացումներին: Այդ տրամաբանության մեջ է պետք դիտարկել նաև Ֆաթհ Ալի խանի կողմից 1770-ական թթ. սկզբին տարածաշրջան այցելած ռուսական ակադեմիական արշավախմբի (Ս. Գմելինի գլխավորությամբ) ընդունելությունը: Այսպես, երբ Ս. Գմելինը Ֆաթհ Ալի խանին է հանձնում Աստրախանի նահանգապետի երաշխավորագիր նամակը, ապա կարդալու ընթացքում կայսերական տիտղոսը հիշատակելիս, խանը ոտքի է կանգնում և խոնարհվում[348]: Մյուս կողմից, նա հրաժարվում է արշավախմբին ձիեր տրամադրել, որպեսզի ցամաքով Դերբենդից Բաքու

---

[346] **Հ. Հովհաննիսյան,** Присоединение Закавказья к России, с. XV.
[347] **Գ. Ցինցադզե,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 20.
[348] **Ս. Գմելին,** նշվ. աշխ., էջ 11:

ուղևորվեն՝ վախենալով, որ այդ կերպ նրանք հնարավորություն կունենան տարածքի մանրակրիտ ուսումնասիրություն կատարել: Դերբենդի հայերը, որոնք Ս. Գմելինի խոսքերով, մշտապես խանի շրջապատում էին գտնվում, հավաստիացնում էին, թե իրեն լրտես են համարում: Ըստ այդմ, «պարսիկները» գտնում էին, որ ինքը ռուս-թուրքական պատերազմի ընթացքում այցելել է տարածաշրջան ոչ թե գիտական ուսումնասիրություններ կատարելու, այլ տեղանքը զննելու համար: Ավելին, ճանապարհորդության վերջում Ֆաթհ Ալի խանը Ս. Գմելինին հայտնում է, որ նրա՝ քաղաքական նպատակներով բույսերի հավաքումն ամբողջությամբ կեղծիք է[349]:

Արշավախումբը բացահայտ թշնամական վերաբերմունքի է արժանանում Բաքվի խանի կողմից[350]: Վերջինս երբ տեղեկանում է, որ Ս. Գմելինը նավթահորեր է այցելել, հարցնում է նրան, թե այդյո՞ք Ռուսաստանում օտարերկրացուն թույլ կտային տեսնել նման բաներ: Իր այցի իրական նպատակները բացատրելու ակադեմիկոսի բոլոր փորձերն էլ անհաջողության են մատնվում: Ս. Գմելինը Բաքվում գտնվելու ողջ ընթացքում իր կացարանի շուրջ մշտապես պտտվող մարդկանց է նկատում, որոնք հետևում էին, թե ինչ են բերում ռուսական նավ և ինչ են տանում նավից[351]:

Նմանատիպ խոչընդոտների 1770-ական թթ. Դաղստանում Թարքիի շամխալից հանդիպել էր նաև ակադեմիկոս Ի. Գյուլդենշտեդտի արշավախումբը[352]: Ռուսական բանագնացների նկատմամբ մեծ անվստահություն ուներ Գիլանի Հեդայեթ խանը[353]:

Այսպիսով, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաների շրջանում թարմ էր պատմական հիշողությունն այն մասին, երբ XVIII դ. սկզբին Պետրոս Ա-ն շտապեց օգտվել Իրանում ծայր առած խռովություններից և կազմակերպեց Կասպիական արշավանքը: Քաղաքական կարճատեսություն կլիներ բացառել իրավիճակի հնարավոր կրկնությունը:

Ավելին, այսրկովկասյան տիրակալների, մասնավորապես, Ղուբայի Ֆաթհ Ալի խանի՝ ռուսական իշխանություններին գրած խնդրագրերը, կայսերական բարձր

---

[349] Նույն տեղում, էջ 42-44, 109:
[350] Նույն տեղում, էջ 61-62:
[351] Նույն տեղում, էջ 77:
[352] **И. Гюльденштедт,** նշվ. աշխ., էջ 116-117:
[353] Տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 2, վավ. 20, էջ 16:

հովանավորությունն ընդունելու և ռուսական զահին հավատարմություն հայտնելու մասին քայլերը նույնպես պետք է դիտարկել խաների՝ արտաքին քաղաքականության մեջ խուսանավելու համատեքստում՝ բացառելով դրանցում ռուսական կողմորոշման փաստի առկայությունը[354]:

Խաների խուսանավելու քաղաքականության մասին էր վկայում 1805 թ. Շամախիի Մուստաֆա խանի իշխան Պ. Ցիցիանովին ուղղված գրությունը, որտեղ նա նշուն էր, որ թեև ինքը և Իրանի տերության շահը պարսիկներ են, սակայն ինքը «ծառայող մարդ է» և սեփական տիրույթները պահպանելու համար «պարտավոր է ծառայել որևէ ուժեղ տիրակալի»[355]:

Վերջապես, այսրկովկասյան տիրակալների Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև խուսանավելու քաղաքականության փայլուն օրինակ էր Հերակլ Բ արքայի քաղաքականությունը: Այսպես, 1783 թ. հունվարին ռուսական գաղտնի աղբյուրները (իրազեկիչները) հաղորդում էին, որ վրաց Հերակլ արքան մի հայի միջոցով անհայտ բովանդակությամբ նամակ էր ուղարկել օսմանյան սուլթանին: Ըստ իրազեկիչների՝ մեծ վեզիրը տեսնելով հայ բանագնացին, զայրանում է, որ վրաց Հերակլ արքան ռուսական արքունիք իշխանների դեսպանություն է ուղարկում, պարսից տիրակալների մոտ՝ իր պաշտոնյաներին, իսկ Օսմանյան կայսրություն մի հայի է ուղարկել, և այն էլ կեղծ հավաստիացումներով, թե Հերակլ Բ արքան հավատարիմ է սուլթանին, իսկ փոխարենը օգնություն և հովանավորություն է փնտրում իրենց թշամիների մոտ[356]: Հետևաբար, թե՛ Իրանում, թե՛ Ռուսական և, թե՛ Օսմանյան կայսրություններում քաջատեղյակ էին խաների ու տիրակալների երկդիմի քաղաքականության մասին: Այսրկովկասում ազդեցության ռազմաքաղաքական լծակներ չունենալով՝ Իրանի տերությունը, Ռուսական և Օսմանյան կայսրությունները ստիպված էին խաների և տիրակալների հետ հարաբերություններ կառուցել առավելապես դիվանագիտական մակարդակով:

---

[354] Ֆաթհ Ալի խանին կոչել «Կովկասում ռուսական կողմորոշման ամենահետևողական» կողմնակիցներից մեկը՝ չի համապատասխանում պատմական իրականությունը (**Н. Магомедов,** նշվ. աշխ., էջ 24):
[355] АКАК, т. 2, 1868, с. 662.
[356] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 23.

Ոչ պակաս հետաքրքրական էին հայ բանագնացի Հերակլ Բ արքայի քաղաքական քայլերի վերաբերյալ հիմնավորումները: Ըստ նրա՝ «քիչ հզոր լինելու» հետևանքով Հերակլը սիպված էր հավատարմություն հայտնել ռուսական գահին, քանի որ Արևելյան Վրաստանը աշխարհագրորեն մոտ էր Ռուսաստանին: Վրացական թագավորությանը սպառնացող հաջորդ վտանգը «նախանձոտ պարսից խաների» հետ հարևանությունն էր: Վերջապես, լեզգիների և դաղստանյան ժողովուրդների մշտական հարձակումները վրացական բնակավայրերի վրա ու դրանց թալանը Հերակլ Բ արքային ստիպում են հնազանդություն հայտնել Ռուսական կայսրությանը[357]:

Այս համատեքստում է պետք դիտարկել նաև Գանձակի խանության դիրքորոշումը Աղա Մուհամմադ խանի արշավանքի ժամանակ: Ջավադ խանը 1803 թ. Ցիցիանովին գրում էր, որ 1796 թ. Գանձակը հանձնել է ռուսական իշխանություններին, որովհետև շահն այդ ժամանակ Խորասանում էր և ինքը «հարկ է համարում հնազանդվել նույնպես ուժեղ միապետի՝ ռուսական փադիշահին»[358]:

1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և՛ ռուսները, և՛ թուրքական կողմը ձգտում էին ստանալ խաների ու տիրակալների եթե ոչ ռազմական, ապա գոնե քաղաքական աջակցությունը: Ռուսաստանի իշխանությունները դեռևս պատերազմի նախաշեմին անհրաժեշտ էին համարում Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ազդեցիկ տիրակալի՝ Ֆաթհ Ալի խանի քաղաքական աջակցությունը ստանալ: Այսպես, 1765 թ. աշնանը խանին անձամբ նամակ է գրում Արտաքին գործերի կոլեգիայի նախագահ կոմս Ն. Ի. Պանինը: Նա փորձում էր ռուսական առևտրականների նկատմամբ Ֆաթհ Ալիի բարեհոգության մասին հավաստիքներ ստանալ՝ փոխարենը հայտնելով Եկատերինա Բ կայսրուհու բարեհաճությունը նրա նկատմամբ [359] : Ռուսական իշխանությունները Ֆաթհ Ալի խանի աջակցությունը օգտագործելու էին մյուս խաների, դաղստանյան տիրակալների հետ հարաբերությունների կարգավորման ժամանակ, որպեսզի վերահսկեն Օսմանյան կայսրության և խաների փոխհարաբերությունները:

---

[357] Նույն տեղում, էջ 23:
[358] АКАК, т. II, Тифлис, 1868, с. 459.
[359] РДО, с. 115.

Պատերազմի ողջ ընթացքում Այսրկովկասը դուրս չէր մնացել նաև Օսմանյան կայսրության ուշադրությունից: Ռուսական հետախուզությունը 1769 թ. հայտնում էր, որ սուլթանի կողմից նամակներ էին ուղարկվել Գանձակի, Շամախիի, Դերբենդի և Ղուբայի, Երևանի խաներին, վրաց տիրակալին, լեռնական առաջնորդներին՝ պահանջելով ճանաչել թուրքական հպատակությունը: Քանի որ Ֆաթհ Ալի խանի տիրույթները գտնվում էին Կասպից ծովի առափնյա շրջաններում, ապա նրանից պահանջվում էր արգելել ռուսական զորքի տեղաշարժը ծովով և ցամաքով՝ հանուն սեփական անվտանգության և «ընդհանուր օրենքի»[360]:

Մյուս դեպքում՝ 1771 թ., Ֆաթհ Ալի խանի գլխավորությամբ, դաղստանյան տիրակալներն ընդունել էին Արևելյան Վրաստան կամ Ղզլար արշավելու սուլթանի առաջարկը[361]: Խաների նման քաղաքական կեցվածքն առավել քան կանխատեսելի էր, քանի որ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի կիսանկախ խանությունների տիրակալների համար օրակարգային խնդիր էր սեփական անվտանգության ապահովումը: Վերադարձը իրանական պետական համակարգ սպառնում էր կարգավիճակի կորստով: Հետևաբար, հեռավոր և նույն կրոնը դավանող Կոստանդնուպոլսի գերագույն իշխանության ճանաչումն առավել նախընտրելի էր դարձել: Այդ պարագայում խանություններին կհաջողվեր պահպանել փաստացի ինքնուրույնությունը:

Այսպիսով, 1760-1770-ական թթ. Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաների վարած քաղաքականության վերլուծությունը փաստում է, որ խորհրդային պատմագիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, թե «մերձկասպյան նահանգներում թուրքերի նկատմամբ համակրանքի բացակայություն» կար[362], պետք է համարել չափազանցված:

Ռուսական իշխանությունները ռուս-թուրքական պատերազմի ընթացքում կովկասյան խաների ու տիրակալների վարքագիծը սթափ էին գնահատում: Ռուսական հյուպատոս Գ. Բոգոլյուբովը խաների քաղաքական կեցվածքը բացատրում էր ռուսական զենքի փայլուն հաղթանակներով և հնարավորության դեպքում կամ ապագայում ռուսական կողմի վրեժխնդրությամբ ու ներքաղաքական

[360] АРО, т . IV, с. 83.
[361] Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, ч. III, вып. II, с. 533-534.
[362] **О. Маркова,** նշվ. աշխ., էջ 142:

դրդապատճառներով[363]: Վերլուծելով աշխարհաքաղաքական իրավիճակը, հյուպատոսը չէր բացառում, որ Արևելյան Վրաստան արշավելու նախապատրաստությունների մասին լուրերը, մերթ ընդ մերթ հայտնվելով ու անհետանալով, նպատակ ունեին հաճոյանալու թուրքական կողմին և կասկած ու վտանգ արթնացնելու ռուսական կողմի մոտ: Մեկ այլ տարբերակով էլ Ֆաթհ Ալի խանը և Դաղստանի տիրակալները ցանկանում էին թանկարժեք նվերներ և հաճոյախոսություններ ստանալ նաև Ռուսական կայսրությունից: Ենթադրվում էր նաև, որ պատերազմում Ռուսաստանի հաղթանակի դեպքում խաները ի ցույց կդնեն այն հանգամանքը, որ իրենք պատերազմի ժամանակ թուրքերին օգնելու առիթ ունեցել են, բայց Ռուսական կայսրության հետ ունեցած «բարեկամության և հարևանության» պատճառով նրան «ոչ մի տխրություն չեն պատճառել»: Գ. Բոգոլյուբովը եզրակացնում էր, որ չի կարելի հույս դնել այդ «թեթևամիտ և ուխտադրուժ ժողովուրդների վրա»: Նա անհրաժեշտ էր համարում սահմանամերձ բոլոր անցակետերի անվտանգությանը ուշադրություն դարձնել: Միաժամանակ նախատեսվում էր Դաղստան և Ֆաթհ Ալի խանի տիրույթներ առևտրականների անվան տակ համապատասխան մարդկանց (այսինքն՝ գործակալներ, լրտեսներ) ուղարկել, որոնք իրենց հետ կտանեին Աստրախանի նահանգապետի նամակները՝ փորձելով համոզել հրաժարվել հակառուսական տրամադրություններից: Այդ խնդիրների համար ծախսերը նախատեսվում էր կատարել պետական միջոցներից[364]:

Փաստորեն, 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում թեև Հյուսիս-արևելյան Այսրկովկասի տարածքը զերծ էր ռազմական գործողություններից, այնուամենայնիվ, պատերազմի պասիվ մասնակցի վերածվելով, հայտնվել էր տեղեկատվական պատերազմի բովում:

1770-ական թթ. երկրորդ կեսը լարված էր նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասում և Դաղստանում: Տվյալ ժամանակամիջոցում, ըստ հայկական աղբյուրների, քաղաքականապես ուժեղացել էր «իշխողն Շամախու և Դարբանդու»՝ Դաղստանի

[363] Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, ч. III, вып. II, с. 613.
[364] Материалы по истории русско-грузинских отношений второй половины XVIII века, ч. III, вып. II, с. 613-614.

տիրակալների մրցակից Ֆաթհ Ալի խանը[365] : Դաղստանի տիրակալների ռազմական միացյալ ուժերի և Ֆաթհ Ալի խանի միջև Ղուբայի խանության Գավդուշան կոչվող դաշտավայրում 1774 թ.[366] տեղի է ունենում ճակատամարտ: Ղուբայի խանը՝ ծանր պարտություն կրելով, քաշվում է Սալիան, որտեղից նամակով ռազմական օգնություն է խնդրում Եկատերինա Բ կայսրուհուց[367]: Անելանելի իրավիճակում հայտնվելով, Ֆաթհ Ալի խանը ռուսական կառավարությանը խնդրում էր վերադարձնել «Շիրվանի շրջանը»՝ իրեն ռուսական կայսերական գահի համար աղոթող կոչելով[368]:

Հյուսիս-արևելյան Այսրկովկաս Ռուսաստանի ռազմական ներխուժման համար առիթ էր ծառայել Ղարաղայթաղի ուցմիի կողմից Սանկտ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի գիտական արշավախմբի ղեկավար ակադեմիկոս Ս. Գմելինի գերեվարումը և վերջինիս մահը 1774 թ.: Ավելին, Եկատերինա Բ-ի Կովկասյան գծի ռուսական զորքի հրամանատար գեներալ դը Մեդեմին 1774 թ. սեպտեմբերի 5-ին գրած ցուցումներում կատարված փաստին անդրադառնալով, նշում է, որ դաղստանյան տիրակալները և «պարսկական ղեկավարները» կովկասյան լեռնական ժողովուրդների հյուրընկալության սովորույթի խախտում են թույլ տվել[369]: Այսինքն, հաշվի առնելով այսրկովկասյան խնդիրների լուծման գործում դաղստանյան տիրակալների դերակատարությունը, կայսրության հպատակի նկատմամբ ուցմիի անհարգալից վերաբերմունքն արժանանում էր «մեղմ» գնահատականի:

Մյուս կողմից, Ռուսաստանը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի և Դաղստանի տիրակալների ավատատիրական հարաբերությունների քաղաքական միջնորդն ու դատավորն էր դառնում՝ իր այդ առաքելությունը ծառայեցնելով ռուսական կայսերական շահերին: Ռուսաստանի կառավարող շրջանակները գիտակցում էին, որ

---

[365] Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ը, **Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը,** մասն Բ (1767-1776), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1908, էջ 175: Հմմ. **J. Perry,** The Zand Dynasty, p. 96.

[366] Դաղստանյան աղբյուրները 1774 թվականը նշում են որպես Ֆաթհ Ալի խանի փախուստի տարեթիվ (**Т. Айтберов,** Надир-шах Афшар и дагестанцы в 1741 году, Махачкала, 2011, с. 149).

[367] Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ը, **Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը,** մասն Բ (1767-1776), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1908, էջ 458: Հմմ. **Искендер-Бек-Ганджинский,** Жизнь Фет-Али-хана Кубинского (Газ. «Кавказ», № 48, 1847, с. 221).

[368] РДО, с. 156-158.

[369] Сборник Императорского русского исторического общества, (այսուհետև՝ СИРИО), т. 135, СПб., 1911, с. 210.

սնծովյան չլուծված հիմնախնդիրների առկայության պարագայում Այսրկովկասում ռազմական միջամտությունը կխախտեր նաև ռուս-թուրքական հարաբերություններում հաստատված խաղաղությունը: Հետևաբար, նախքան որոշում կայացնելը պարտք էին համարում հայացք ձգել Օսմանյան կայսրության ուղղությամբ: Ռուս-թուրքական պատերազմից հետո միջազգային հարաբերություններում ի հայտ էր եկել Արևելյան հարցը, որը օսմանյան պետության տարածքը Ռուսաստանի և եվրոպական պետությունների միջև կռվախնձորի էր վերածում[370]:

Թուրքական պատմագիտության գնահատմամբ Քյուչուկ-Կայնարջիի (1774 թ.) պայմանագիրն Օսմանյան կայսրության համար 1699 թ. Կարլովիցի հաշտության պայմանագրից հետո ամենածանրն էր[371]: Թեև այդ պայմանագրով Օսմանյան կայսրությունը կորցրել էր քաղաքական վերահսկողությունը Ղրիմի խանության նկատմամբ, իսկ կայսրության պետական սահմանների երկարությունը կտրուկ կրճատվել էր հօգուտ Ռուսաստանի[372], այնուամենայնիվ, Օսմանյան կայսրությունը շարունակում էր պահպանել իր քաղաքական ազդեցությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում: Ուստի, ռազմական միջամտությունն այստեղ Օսմանյան կայսրության համար ռևանշի գնալու ազդակ կդառնար: Այդ պատճառով էր, որ երբ գեներալ դը Մեդեմն առանց կայսրուհու գիտության գրավում է Դերբենդը, իսկ Ֆաթհ Ալի խանը քաղաքի բանալիներն ուղարկում է Եկատերինա Բ կայսրուհուն, վերջինիս պատասխանը չի ուշանում: Զայրացած կայսրուհին Գ. Պոտյոմկինի՝ Կովկասում քաղաքական իրավիճակի մասին զեկույցի լուսանցքում կարմիր մատիտով հրամայում է անհապաղ վերադարձնել քաղաքը[373]: Միաժամանակ քաղաքական որոշում է

---

[370] The Cambridge History of Turkey, vol. III, The Later Ottoman Empire, 1603-1839, Edited by **Suraiya N. Faroqhi,** London, Cambridge University Press, 2006, p. 57.

[371] **Dr. M. A. Yalçınkaya**, İslahat Değişim Ve Diplomasi Dönemi (1703-1789), - Genel Türk Tarihi, cılt 7, Osmanlı, Editörler Hasan Celal Güzel Prof Dr Ali Birinci, Yeni Türkiye yayınları, Ankara, 2002, p. 94.

[372] **Е. Дружинина,** Кючук-Кайнарджийский мир 1774 года, Москва, 1955. Հմմ. **А. Миллер,** Оттоманская империя (Султанская Турция). Стеногр. лекц. прочит. в Высш. парт. школе при ЦК ВКП (б), Москва, [б. и.], 1946, с. 11; **А. Новичев,** История Турции, т. 1, Ленинград, 1963, с. 233-235.

[373] Նա գրում է. «черт велел к Дербенту идти», ապա ավելացնում. «Советую возвратить: его превосходительства кратчайшее дурачество из дурачеств есть лучшее» (СИРИО, т. 27, СПб., 1880, с. 59-60):

կայացվում՝ Հյուսիս-արևելյան Այսրկովկասում վերականգնել Ֆաթհ Ալի խանի իշխանությունը[374]:

Այսպիսով, Եկատերինա Բ կայսրուհին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ռազմաքաղաքական իրավիճակը հաշվի առնելով, որոշում է հրաժարվել ռազմական գործողություններից: Ռուսական կայսրությունը հետևողական էր Օսմանյան կայսրության նկատմամբ որդեգրած զգուշավոր քաղաքականություն իրագործելիս:

Սակայն ռուսական կառավարող շրջանակները գիտակցում էին, որ Դաղստանի տիրակալների ուժեղացումը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում կնշանակեր թուրքական ազդեցության մեծացում և դը Մեդեմի զորքի մուտքը տարածաշրջան կոչված էր կանխելու դա: Ռուսաստանը վերականգնում է քաղաքական հավասարակշռությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում, օգնելով Ֆաթհ Ալի խանին՝ վերամիավորելու մինչև 1774 թ. իր տիրույթները:

Գեներալ դը Մեդեմին ներկայացրած զեկուցագրում Ղզլարի պարետ Ի. Շտենդերը նշում էր, որ դաղստանյան տիրակալները հնարավորության դեպքում կպաշտպանեն թուրքական կողմին՝ բացառությամբ Ֆաթհ Ալի խանի, որը կարող էր հավատարիմ լինել Ռուսաստանին՝ ընդգծելով Ղուբայի խանի մյուս տիրակալներից դավանանքով տարբեր (իմա՝ շիա) լինելու հանգամանքը [375] : Սակայն Ռուսաստանը իր հարավային սահմանների մոտ չէր կարող հանդուրժել նոր և ուժեղ իշխանության գոյությունը: Դերբենդի բանալիների հետ Ֆաթհ Ալի խանը Եկատերինա Բ-ի անունով նամակ է ուղարկում, ուր դիվանագիտորեն հիշեցնում էր իր պապի և հոր բարեկամական վերաբերմունքը ռուսական գահի նկատմամբ: Խանը նշում է, որ ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Կարս եկած սուլթանի պատվիրակները ապարդյուն փորձում էին իրեն թանկարժեք նվերներով իրենց կողմը թեքել: Նա իր համար Ղրիմի խանի և վրաց թագավորի նման քաղաքական կարգավիճակի տրամադրում էր պահանջում [376]: Հեռատես Ֆաթհ Ալի խանը չի «մոռանում» ընդգծել, որ Քերիմ խանի վստահված անձինք ևս թանկարժեք նվերներով, զորքով ու մեծ գումարով ցանկանում էին իրեն «թեքել» դեպի

---

[374] СИРИО, т. 42, СПб., 1885, с. 401.
[375] РДО, с. 154.
[376] Նույն տեղում, էջ 158: Հմմ. **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 21.

Իրանը, սակայն ինքը հավատարիմ էր մնացել ռուսական գահին: Փաստորեն, Ֆաթհ Ալի խանը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ռուսական պետական շահերի համար իր քաղաքական նշանակությունն էր ընդգծում:

Այսպիսով, Ռուսաստանը տարածաշրջանում առաջին ռազմական միջամտության դեպքում հանդիպում էր ազդեցիկ խաներից մեկի՝ իր քաղաքական դիրքորոշումը «վաճառելու» ուղիղ առաջարկի հետ՝ չեզոքություն քաղաքական որոշակի կարգավիճակի և ռուսական արքունիքի հովանավորության դիմաց: Ֆաթհ Ալի խանի իշխանությունը վերականգնելով, Ռուսաստանն ընտրում էր արդեն ծանոթ և որոշ առումներով կանխատեսելի Դերբենդի և Ղուբայի խանի, քան Դաղստանի ազդեցիկ տիրակալների հաղթանակը: Սակայն, Ֆաթհ Ալի խանին պաշտպանելով՝ ռուսական կառավարությունը դաղստանյան տիրակալների մոտ կորցնում էր խաղաղարարի և արդար դատավորի իր համբավը: Մինչդեռ վերջիններիս քաղաքական դիրքորոշումը ռուս-իրանական և ռուս-թուրքական հարաբերություններում վճռորոշ էր:

Այդուհանդերձ, Եկատերինա Բ կայսրուհին 1775 թ. հոկտեմբերի 4-ին գեներալ դը Մեդեմին ուղղած հրամանագրում բացահայտում էր ռուսական կովկասյան քաղաքականության «կանոնները» «պարսից կողմի» վերաբերյալ: Այսպես, Ռուսաստանի շահերից էր բխում, որ Իրանը մնար առանց օրինական գերագույն իշխանության՝ անկախ ու անհաշտ «մասնավոր ղեկավարներով»: Ռուսական կողմի ոտնձգությունները Այսրկովկասի նկատմամբ կարող էին հանգեցնել Իրանի տերության միավորմանը մեկ միասնական պետության մեջ: Կայսրուհին չէր մոռանում նաև Օսմանյան կայսրության կովկասյան քաղաքականության մասին: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի շուրջ ծավալվող քաղաքական զարգացումները հաշվի առնելով, միևնույն ժամանակ չցանկանալով հարաբերությունները լարել Իրանի տերության և Օսմանյան կայսրության հետ, Եկատերինա Բ կայսրուհին գեներալ դը Մեդեմին գրում է, որ Դերբենդն իր աշխարհագրական դիրքով «Իրանի տերությանն է պատկանում» և նրա հետ հարաբերությունները բարդացնել Ռուսաստանը չի պատրաստվում: Ապա հրամայում է Ֆաթհ Ալի խանին խորհուրդ տալ՝ ինքնուրույն կարգավորել

հարաբերությունները ուցմիի հետ[377]: Նշելի է, որ Ղարաղայթաղի ուցմին դաղստանյան քաղաքական այն ուժն էր, ով կարող էր անհրաժեշտության դեպքում 10000 մարտիկ ռազմի դաշտ դուրս բերել[378] և այդ հանգամանքի հետ Ռուսաստանում ստիպված էին հաշվի նստել:

Դերբենդի և Ղուբայի խանի նկատմամբ Ռուսական կայսրության վերաբերմունքը չի փոխվում նաև այն բանից հետո, երբ ռուսական հետախուզությունը հայտնում է, որ Ֆաթհ Ալի խանը Ղուբայում, Շիրվանում և Սալիանում է թաքցնում 1775 թ. իր տիրույթների մոտ նավաբեկության ենթարկված վաճառական Սկվորցովի ապրանքների շուրջ կես միլիոնը և հրաժարվում է վերադարձնել ռուսական կողմին[379], իսկ կենդանի մնացած անդամներին էլ հրամայել է սպանել[380]:

Ավելին, ռուսական իշխանությունները լրտեսական խողովակներով տեղեկացվել էին (1777 թ.), որ Ֆաթհ Ալի խանը օգնական զորք է խնդրել Քերիմ խան Զենդից՝ խոստանալով իր քրոջը կնության տալ վեքիլի եղբորը: Դերբենդի խանը նշում էր, որ իր տիրույթներում գտնվող ռուսական զորքը ոչ մի օգնություն ցույց չի տալիս իր թշնամիների հետ պայքարում և թույլտվություն էր խնդրում Քերիմ խանից վտարել նրանց Դերբենդից[381]:

Այնուամենայնիվ, ռուսական հրամանատարության նախաձեռնությամբ, 1776 թ. գարնանը հանդիպումներ են կազմակերպվում Ֆաթհ Ալի խանի և Դաղստանի տիրակալների միջև: Վերջիններս ցանկանում էին զրկել Ֆաթհ Ալի խանին Դերբենդից՝ նրա տիրույթները սահմանափակելով միայն Ղուբայի խանության տարածքով: Միայն ռուսական հրամանատարության պահանջով են դաղստանցի տիրակալները հրաժարվում այդ գաղափարից [382] : Ղայթաղի ուցմին և Թաբասարանի ղադին (կառավարիչը), հաշտվելով Ֆաթհ Ալի խանի հետ, գրավոր ստորագրություն են տալիս՝

---

[377] СИРИО т. 135., СПб., 1911, с. 437.

[378] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 33: Ղայթաղի մասին տե՛ս The Encyclopaedia of Islam, vol. IV, Leiden, Brill, 1997, p. 847.

[379] **Վ. Մարտիրոսյան,** Նյութեր հայ-վրաց-ռուսական հարաբերությունների մասին (XVIII դ. երկրորդ կես), – ԼՀԳ, 1974, № 12, էջ 101-102:

[380] СИРИО, т. 145, СПб., 1914, с. 295.

[381] **Վ. Մարտիրոսյան,** Նյութեր հայ-վրաց-ռուսական հարաբերությունների մասին, էջ 102-103:

[382] История народов Северного Кавказа с древнейших времен до конца XVIII в., Отв. ред. **А. Л. Нарочницкий,** Москва, 1988, с. 447. Հմմ. РДО, с. 163.

այն խախտելու դեպքում ենթարկվել նորին կայսերական մեծության «անհապաղ զայրույթին» և արժանի պատժին: Շուտով Թաբասարանի տիրակալի ընտրության հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ Ռուսաստանը Ֆաթհ Ալի խանի նկատմամբ իր տրամաբանությունը ցուցադրելով, պաշտպանեց Դերբենդի խանի թեկնածուին: Ավելին, ելնելով խաներին չվանելու Ռուսաստանի քաղաքականությունից, կոմս Ն. Պանինը 1776 թ. փետրվարի 28-ի Ֆաթհ Ալի խանին ուղղված նամակում նրան ամենաբարձր տիտղոսներով էր կոչում[383]՝ ընդգծելով խանի՝ Ռուսական պետության համար ունեցած քաղաքական նշանակությունը:

Այսպիսով, 1750-1770-ական թթ. կարելի է բնութագրել որպես Ռուսական կայսրության և խանությունների փոխհարաբերությունների առաջին շրջափուլ: Ռուսաստանը Օսմանյան կայսրության զսպման ռազմավարությունը որդեգրելով և առժամանակ հրաժարվելով տարածաշրջան ռազմական միջամտություն կատարելուց, ընտրում է *դիվանագիտական միջամտության քաղաքականությունը*:

Մյուս կողմից, խաները սեփական ինքնիշխանությունը պահպանելու համար հավատարիմ էին Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների նկատմամբ *խուսանավելու հայեցակարգին*:

2.2 ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ 80-ԱԿԱՆ ԹԹ.

1780-ական թթ. Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունները երկրորդ փուլ են թևակոխում, որն էլ իր հերթին երկու շրջափուլերի էր բաժանված: Ընդհանուր առմամբ Ռուսական կայսրության և խանությունների հարաբերություններն այս փուլում ռուսական այսրկովկասյան քաղաքականության նոր մեխանիզմների կիրառմամբ են բնորոշվում, որոնք հաշվի էին առնում տարածաշրջանի աշխարհաքաղաքական փոփոխությունները: Ռուսաստանի և

[383] СИРИО, т. 145, СПб., 1914, с. 64.

խանությունների հարաբերությունների առաջին ենթափուլն ընդգրկում էր Քերիմ խան Զենդի մահվանից (1779 թ.) մինչև Գեորգիևսկի դաշնագրի կնքումը՝ 1783 թ.:

Իրանում Քերիմ խան Զենդի մահվան հետևանքով գերագույն իշխանության համար վերստին պայքար էր սկսվել: Շուտով Քերիմ խանի եղբորորդի Ալի Մուրադ Զենդին հաջողվում է առժամանակ (1782-1785 թթ.) միավորել Իրանի տերության պետական տարածքների մեծ մասը: Բացառություն էին կազմում դաջարների[384] տիրապետության տակ գտնվող Իրանի տերության հյուսիսային նահանգները և Կասպից ծովի առափնյա շրջանները: Հետևաբար, Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերի իրագործման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել: Տարածաշրջան ռազմական ներխուժման շարժառիթ կարող էին ծառայել ռուսական վաճառականների նկատմամբ Դերբենդի, Շամախիի, Բաքվի ու Ռեշտի խաների կամայականությունները: Այսպես, Էնզելիում 1779 թ. հունվարին նավաբեկության ենթարկված ռուսական առևտրական երկու նավերն ամբողջությամբ թալանվել էին: Թալանը վերադաձնելու վերաբերյալ հյուպատոսի պահանջները Ռեշտի կառավարչի լուրջ դիմադրությանն են հանդիպում: Գիլանի Հեդայեթ խանը մատնացույց էր անում Դերբենդի, Բաքվի խաների և Թարքիի շամխալի կամայականությունները: Նրա պնդմամբ՝ ռուսների բարեկամ «փոքրիկ խաները» յուրացնում էին ծովից իրենց ափն ընկած ապրանքները, ապա ինչո՞ւ ինքը նույն կերպ վարվել չէր կարող՝ Ռուսաստանի սահմաններից բավականաչափ հեռու գտնվելով: Ավելին, իրանցիները հայտարարում էին, որ հյուպատոսը պարտավոր էր անգամ խանի շան կամքին ականջ դնել[385]: Կոմերց կոլեգիայի նիստում քննում են Ռեշտում կատարվածը և «հաղորդումն ընդունում ի գիտություն»[386]: Միաժամանակ քաղաքական որոշում է կայացվում Գիլանի Հեդայեթ խանին և մյուսներին սաստելու համար ցամաքով և ծովով զինված ջոկատներ ուղարկել Իրան և վերականգնել անկում ապրող ռուսական առևտուրը (ռուս-իրանական առևտրային հարաբերությունների

---

[384] Դաջարների մասին տե՛ս **И. Петрушевский,** նշվ. աշխ., էջ 91; **Վ. Բայբուրդյան,** Իրանի տերության պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., 2005, էջ 398; Don Juan of Persia, A Shah Catholic 1560-1604. Transl. and ed. by **G. Le Strange,** London 1926, p. 46; The Encyclopaedia of Islam, vol. IV, Leiden, E. J. Brill, 1997, p. 387; **J. Perry,** The Zand Dynasty, p. 106-108.

[385] **В. Уляницкий,** նշվ. աշխ., էջ 623-624:

[386] Նույն տեղում, էջ 626:

վերլուծությունները ցույց էին տալիս, որ Իրանում խաղաղության հաստատման դեպքում Ռուսաստանը կարող էր մի քանի միլիոնի հասնող եկամուտ ստանալ[387]):

Խաների նկատմամբ ռուսական կառավարող շրջանակների դիրքորոշումը կոշտ ու վճռական էր: Ըստ իշխան Գ. Պոտյոմկինի՝ Ռուսաստանին հնազանդ խաների հետ պետք էր վարվել «մարդասիրաբար», իսկ անհնազանդներին՝ պատժել[388]: Արշավանք սկսելու պահին ռուսական իշխանություններն Այսրկովկասում տարածքային ձեռքբերումների և կայսրության սահմանների ընդարձակման հարց չէին դնում: Սակայն դա չէր նշանակում, թե բարենպաստ իրավիճակի առաջացման պարագայում նման հարցեր չէին կարող ի հայտ գալ՝ խաներին առանձնահատուկ տեղ հատկացնելով[389]:

Այսպիսով, կոմս Վոյնովիչի գլխավորությամբ 1781 թ. Իրան շարժվող արշավախմբի գլխավոր նպատակն էր հարմար տեղանքի ընտրությունը Կասպից ծովի ափին՝ ռուսական առևտուրն առավել ապահով դարձնելու և մինչև «հեռավոր արևելյան երկրներ» հասցնելու համար[390]:

Սկզբնական շրջանում Աստրաբադի Աղա Մուհամմադ խանի հետ բանակցությունները բարեկամական էին: Աստրաբադի ծովածոցում գտնվող Աշրեֆ բնակավայրի փոխարեն խանը տրամադրում է Գորոդովեցը, որը թուրքմենների հարձակումներից պաշտպանվելու համար ուժեղ ամրության վերածվեց: Այդ հանգամանքն Աղա Մուհամմադ խանի կասկածն առաջացրեց. նա պահանջեց քանդել ամրությունները, ինչից հետո ռուսական կողմի հետ հարաբերությունները սկսում են լարվել[391]: Սակայն Աղա Մուհամմադ խանը՝ չցանկացավ ռուսական իշխանությունների

---

387 Տե՛ս Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 63.

388 Տե՛ս А. В. Суворов, т. II, Документы, Под ред. **Г. П. Мещерякова,** Москва, 1951, с. 222.

389 Հմմ. **А. Иоаннисян,** Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 25.

390 Տե՛ս Экспедиция графа Войновича к восточному берегу Каспия, 1781, 1782 гг., – «Морской сборник», 1850, № IX, с. 227-296: Հմմ. **R. Gavin, G. Hambly,** Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty, – The Cambridge History of Iran, vol. VII, p. 115-116; Краткое описание жизни и службы Тайного Советника Карла Ивановича Габлица, – «Сын отечества», 1821, № XLIII, СПб., с. 109.

391 **Ад. Берже,** Граф Войнович в Персии в 1781 году, – «Русская старина», 1881, кн. X, с. 450-451.

հետ կապերը խզել, նամակագրության միջոցով փորձում էր նրա հետ շփման եզրեր գտնել[392]:

Իրանում ծավալվող քաղաքական զարգացումներն իրենց ուղղակի արձագանքն էին գտել նաև Այսրկովկասում: Մինչ Շիրազի, Սպահանի, Թավրիզի, Նախիջևանի կամ Ուրմիայի խաները միմյանց դեմ անողոք պայքար էին մղում իրանական գահին տիրանալու համար, Այսրկովկասում Իբրահիմ խանն[393] ու Ֆաթհ Ալի խանը փորձում էին «պղտոր ջրում ձուկ որսալ»[394]: Այստեղ քաղաքական գերիշխանության հասնելու համար հակամարտող երկու խմբավորումներ էին առաջացել, որոնցից մեկը ղեկավարում էր Հերակլ Բ արքան (նրան դաշնակցում էր Ղարաբաղի Իբրահիմ խանը), մյուսը՝ Ղուբայի Ֆաթհ Ալի խանը: Երկուսն էլ ռազմական մեծ հնարավորություններ ունեին և հարկ եղած դեպքում կարող էին վարձու լեզգիների օգնությանը դիմել[395]:

Այսրկովկասում ռազմաքաղաքական միանձնյա գերիշխանության համար Ֆաթհ Ալի խանին անհրաժեշտ էր հնազանդեցնել Ղարաբաղի խանությունը: Հարցը «խաղաղ ճանապարհով» լուծելու համար նա Ղարաբաղ է ուղարկում իր փեսային՝ Բաքվի Մելիք Մուհամմադ խանին: Սակայն Իբրահիմ խանը ձերբակալում է նրան և երկու տարի պատանդ պահում[396]: Ֆաթհ Ալի խանը Թարքիի շամխալի և Շամախիի խաների հետ միասին 1780-1781 թթ. երկու անհաջող արշավանք է կատարում դեպի Ղարաբաղ:

Ղուբայի խանն անհանգստացած էր Այսրկովկասում Հերակլ Բ-ի և Ղարաբաղի խանի քաղաքական դերի մեծացմամբ: Հաջողության հասնելու համար կողմերին պետք էր ստանալ Ռուսական կայսրության աջակցությունը: Դրանով պայմանավորված՝ նրանք միմյանց սևացնելու քաղաքականություն էին սկսել: Այսպես, Ղուբայի խանը ռուսական իշխանություններին գրում էր, թե տեղի խաների համար անընդունելի է, որ

---

[392] 1787 թ. Աղա Մուհամմադ խանը ռուս-իրանական բարեկամության հաստատման ակնկալիքով նամակ է գրում Պ. Պոտյոմկինին: Տե՛ս **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 136.

[393] Վերջինս պատանդ էր պահվում Ուրմիայի Ֆաթհ Ալի խանի մոտ և միայն 1760 թ. ազատություն ստանալով, Քերիմ խան Զենդի կողմից ճանաչվում է Ղարաբաղի խան (ՄՄ, ձեռ. 4331, էջ 45բ; The Life and Addventures of **Joseph Emin,** an Armenian, vol. II, London, 1792, p. 315).

[394] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 140.

[395] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 22, 40. Հմմ. **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 18.

[396] **М. Нерсисян,** А. В. Суворов и русско-армянские отношения в 1770-1780-х годах, Ер., 1981, с. 130.

Վրացին (իմա՝ Հերակլ Բ արքան) և Իբրահիմ խանը տիրանան «ադարբայջանական բոլոր քաղաքներին»[397]: Իր հերթին Հերակլ Բ արքան 1782 թ. Պ. Պոտյոմկինին ուղղված նամակում Ֆաթհ Ալի խանին անհավատ և կեղծավոր էր անվանում, ապա մեղադրում էր թուրքերի հետ նամակագրական կապ հաստատելու համար[398]:

Իրոք, Օսմանյան կայսրությունը և նրա եվրոպական գործընկերները (հատկապես՝ Ֆրանսիան) չէին կարողանում հաշտվել 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքների հետ, որոնք ամրագրված էին Քյուչուկ-Կայնարջիի պայմանագրում[399], որով Ռուսական կայսրության աշխարհաքաղաքական դիրքերը տարածաշրջանում անհամեմատ ամրացել էին՝ «կանխորոշելով» Ղրիմի միացումը Ռուսաստանին (պատերազմի արդյունքում Ղրիմի խանությունը ճանաչվել էր անկախ)[400]:

Դեռևս 1776-1779 թթ. թուրք-իրանական կոնֆլիկտի ժամանակ սուլթան Աբդուլ Համիդ Ա-ն Քերիմ խանի հետ այսրկովկասյան խաների մերձեցումը կանխելու նպատակով վերականգնում է հարաբերությունները նրանց հետ[401]: Բացի այդ, Ախալցխայի Սուլեյման փաշան սուլթանից հանձնարարական էր ստացել հակառուսական կոալիցիա կազմել այսրկովկասյան խաներից ու դաղստանյան տիրակալներից[402]: Սուլթանը փորձում էր Իրանի տերության հետ հնարավոր ռազմական բախման ժամանակ թանկարժեք նվերներով ու խոստումներով ստանալ խաների եթե ոչ աջակցությունը, ապա գոնե չեզոքությունը: Իրոք, ինքնիշխան խաները, տարածաշրջանում ռուսական ազդեցության ամրապնդումից վախենալով, թեքվում էին

---

[397] Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, Под ред. **А. А. Цагарели,** СПб., т. II, вып. II, 1902, с. 21.

[398] Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х – начало 90-х годов XVIII в.), с. 56.

[399] Սույն պայմանագրի ամբողջական բնագիրը տե՛ս Собрание важнейших трактатов и конвенций, заключенных Россией с иностранными державами (1774-1906). С введением и примечанием проф. **В. Н. Александренко,** Варшава, 1906, с. 1-10: Տե՛ս նաև **Е. Дружинина,** նշվ. աշխ.:

[400] **Н. Сотавов,** Северный Кавказ в русско-иранских и русско-турецких отношениях в XVIII веке. От Константинопольского договора до Кючук-Кайнарджийского мира. 1700-1774 годы, Москва, 1991, с. 172, 178.

[401] **S. Shaw,** Iranian relation with the Ottoman Empire, – The Cambridge History of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, vol. VII, Cambridge, 1991, p. 311.

[402] Из истории русско-грузинских взаимоотношений X-XVIII вв., **Ш. А. Месхиа, Я. З. Цинцадзе,** Тбилиси, 1958, с. 140.

դեպի Օսմանյան կայսրություն[403]: Վերջինս Դաղստանի լեռնական ժողովուրդներին սիրաշահելու քաղաքականությանը դիմելով, մեծ հույսեր էր կապում նաև Հյուսիսային Կովկասի ժողովուրդների հետ[404]:

1783 թ. հունվարի 24-ին Պ. Պոտյոմկինին ուղղված գրության մեջ Ֆաթհ Ալի խանը դատապարտում էր Հերակլ Բ արքայի դաշնակցային սերտ կապն Իբրահիմ խանի հետ՝ նշելով, որ վերջինիս մոտ պատանդ էին պահվում Գանձակի խանն ու Ղարադաղի խանի որդին՝ ստիպելով հարկ վճարել: Խանը կասկածի տակ է առնում Հերակլ Բ-ի՝ Ռուսաստանին հավատարիմ լինելու փաստը՝ պահանջելով «հանգիստ թողնել պարսկական խաներին», քանի որ Ռուսաստանն ինքն էլ է «հանգիստ թողնում նրանց», հետևաբար, Հերակլ Բ արքան իրավունք չուներ միջամտել խանությունների ներքաղաքական կյանքին: Ֆաթհ Ալի խանը պատրաստ էր հրաժարվել վրաց թագավորի հետ ունեցած թշնամանքից, եթե վերջինս օգնություն չտրամադրեր Իբրահիմ խանին[405]:

Իր հերթին Հերակլ Բ-ն գրում էր, որ ինքն Իբրահիմ խանի հետ դաշինք ունի՝ անհրաժեշտության դեպքում վերջինիս ռազմական օգնություն տրամադրելու մասին: Հեռատես արքան՝ Ֆաթհ Ալի խանի հետ հարաբերությունները սրել չցանկանալով, ռուսական կողմին խնդրում է միջամտել վեճին և հետ պահել Ղուբայի խանին Ղարաբաղ արշավելուց: Նա առիթը բաց չէր թողնում իշխան Պ. Պոտյոմկինի մոտ կասկած սերմանել Ֆաթհ Ալի խանի՝ ռուսական գահին հնազանդ լինելու վերաբերյալ: Վրաց Հերակլ Բ արքան նշում էր, որ Ղուբայի խանը խոստանում է մի բան, իսկ սրտում բոլորովին այլ բան է: Ըստ Հերակլ Բ-ի, ռուսական գահի համար առավել օգտակար կարող էր լինել Ղարաբաղի խանը, քան Ֆաթհ Ալին, որի հնազանդությունը վախի վրա էր հիմնված[406]:

---

[403] **С. Бурнашев,** նշվ. աշխ., էջ 5:

[404] Описание событий в Грузии и Черкесии по отношению к Оттоманской империи от 1192 по 1202 г. хиджры (1774-1784) , Сочинение **Джевдета-паши,** Перевод с турецкого с предисловием и примечаниями **М. А. Гамазова,** – «Русский архив», 1888, т. III, Москва, с. 372, 374.

[405] РДО, с. 175.

[406] Межкавказские политические и торговые связи Восточной Грузии, с. 65.

Նշելի է, որ Ղարաբաղի խանի ռուսամետ կողմնորոշումն անկեղծ չէր, քանի որ Հայոց պետականության վերականգնումը վտանգում էր խանության գոյությունը: Դեռևս 1783 թ. ապրիլի 6-ին Գ. Պոտյոմկինը Պ. Պոտյոմկինին տված հրամանագրում նշում էր, որ Իբրահիմ խանին տապալելուց հետո Ղարաբաղը հայկական մարզի մաս էր կազմելու[407]: Ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների 1780-ական թթ. առաջին կեսի գրագրությունների քննությունը փաստում է, որ Հայոց պետականության վերածնման հարցը նպատակ ուներ ռուսական ազդեցության տակ պահել վրաց թագավորին և Ղարաբաղի խանին[408]: «Շատ պարզ էր այս բոլորից, որ Եկատերինան Հայոց հարցն այնքան եռանդուն կերպով առաջ էր քաշել սոսկ իր շահերի համար, այն է՝ Ղարաբաղի խանության վրա իր քաղաքական տիրապետությունը տարածելու համար» – գրում է Լեոն[409]:

Ռուսաստանի համար Ղարաբաղի խանությունը մեծ ռազմաքաղաքական և առևտրա-տնտեսական կարևորություն ուներ: Այն դարպաս էր համարվում՝ ուղի դեպի Իրան, որն Արևելյան Վրաստանն աշխարհագրորեն մոտեցնում էր Բաքվին, իսկ Կուր-Արաքս գետկիցի մոտ գտնվող Ջավադ բնակավայրը ղարաբաղյան տարածքներին միացնելու պարագայում՝ Աստրախանից Ջավադ և Սալիան «ոչինչ չարժեցող» ապրանքները հնարավոր կլիներ փոխանակել մետաքսի և այլ ապրանքների հետ[410]:

Այսպիսով, Ռուսական կայսրության և Հյուսիս-արևելյան Այսրկովկասի 1780-ական թթ. փոխհարաբերությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ռուսական իշխանությունները կասկածանքով էին վերաբերվում այսրկովկասյան տիրակալներին: Ավելին, Այսրկովկասում ծավալվող միջավատատիրական խառնակությունները ռուսական կառավարող շրջանակները դիտարկում էին կայսրության շահերի տեսանկյունից: Այդպես էր վարվում Պ. Պոտյոմկինը Գ. Պոտյոմկինին 1783 թ. գրած նամակում, երբ քննության էր առնում Ֆաթհ Ալի խանի Արևելյան Վրաստան արշավելու որոշումը: Այս փաստաթղթից պարզ է դառնում նաև, որ վրաց Հերակլ արքան և խաները չէին վայելում ռուսական կողմի վստահությունը: Պ.

---

[407] АРО, т. 4, с. 239.
[408] Հմմ. **Պ. Չորանյան,** նշվ. աշխ., էջ 149:
[409] **Լեո,** Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հտ. Գ, Գիրք Դ, Եր., 1973, էջ 346:
[410] АКАК, т. II, 1868, с. 703.

Պոտյոմկինն անվստահություն էր արտահայտում Հերակլ Բ արքայի ռուսական գահին հավատարիմ լինելու հարցում: Սակայն Ղարադաղում և Ղարաբաղում «բարձրացված սուրը» հակասում էր կայսերական շահերին և Ֆաթհ Ալի խանին խիստ տոնով հանձնարարվում էր «հանգիստ թողնել» Հերակլ Բ արքային: Ղուբայի և Դերբենդի խանի խոստումներն ու «նենգ բնույթը» կասկածի առնելով՝ Պ. Պոտյոմկինի հանձնարարությամբ խանի բանագնաց Հաջի բեկին վերադարձի ճանապարհին ռուսական մի սպա էր ուղեկցում[411]:

Ֆաթհ Ալի խանի նկատմամբ ռուսական իշխանությունների անվստահությունն անհիմն չէր: Այսրկովկասում քաղաքական գերիշխող դիրք գրավելու միտումով, Ֆաթհ Ալի խանը փորձում էր կյանքի կոչել Քերիմ խան Զենդի հավակնոտ ծրագիրը՝ Արևելյան Վրաստանում իշխանափոխության հարցը: Այսպես, Իրանի տերության տիրակալը՝ չկարողանալով իր տիրապետությունը տարածել Այսրկովկասի վրա, որպես խաղաքարտ օգտագործում էր Վախթանգ Զ-ի (1703-1724 թթ. Քարթլիի թագավոր) թոռանը՝ թագաժառանգ Ալեքսանդրին: Այդ նպատակով Քերիմ խանը 1777-1778 թթ. Գիլանի Հեդայեթ խանի միջոցով դաղստանյան տիրակալներին և խաներին փորձում էր նվերներով իր կողմը գրավել, սակայն նրա վերահաս մահը ձախողում է ծրագիրը[412]: Իշխան Ալեքսանդրը Թարքիի շամխալի օգնությամբ շարունակում է պայքարը վրացական գահի համար: Նա Իմերեթի Սողոմոն թագավորի մոտից Հյուսիս-արևելյան Այսրկովկաս է անցնում կաբարդացիների, օսերի և Սուլակ գետի վերին ավազանում բնակվող կումիկների տարածքներով՝ փորձելով ստանալ նրանց քաղաքական աջակցությունը: Այդ փաստը հայտնի է դառնում ռուսական իշխանություններին և 1782 թ. նոյեմբերի 9-ին Ղզլարի պարետը գրավոր զգուշացնում է տալիս Աքսայ բնակավայրի տիրակալին՝ պահանջելով դադարեցնել «որսորդների» հավաքագրումը, ապա թե ոչ՝ սպառնում է ֆիզիկական բնաջնջմամբ[413]:

1782 թ. օգոստոսին վրաց արքայազնը հյուրընկալվում է Դերբենդի և Ղուբայի Ֆաթհ Ալի խանի կողմից: Ռուսական իշխանությունները Ֆաթհ Ալի խանից պահանջում են

---

[411] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 18.
[412] АКАК, т. I, 1866, с. 91.
[413] Տե՛ս РДО, с. 175.

արքայազն Ալեքսանդրին գաղտնի Ռուսաստան տեղափոխել: Ֆաթհ Ալի խանը փորձելով արդարանալ, բացատրական նամակ է գրում: Ալեքսանդր խանին իր տանը ապաստանելու փաստը Ֆաթհ Ալի խանը բացատրում էր հյուրընկալության կանոններով և քանի որ իր տիրույթները Նորին Մեծությանն էին պատկանում՝ ինքը պատրաստ էր կատարելու նրա կամքը[414], սակայն չէր շտապում փոխանցել վրաց իշխանին: Պ. Պոտյոմկինը 1783 թ. աշնանը զինված ուժեր է կենտրոնացնում Սուլակ և Թերեք գետերի շրջանում՝ ստիպելով Թարքիի շամխալին և Ղուբայի Ֆաթհ Ալի խանին հրաժարվել Ղարաբաղ արշավելուց, նաև ռուսներին հանձնել իշխան Ալեքսանդրին՝ ընծա ընդունելով 500 ոսկի և ծխախոտի ոսկե տուփ[415]:

Ռուսական կայսրության և խանությունների 1780-ական թթ. փոխհարաբերությունների առաջին շրջափուլն ամփոփելով նշենք, որ Իրանում Քերիմ խանի մահով պայմանավորված քաղաքական քաոսը նաև Այսրկովկասում էր ապակայունացրել աշխարհաքաղաքական իրադրությունը: Ուժեղացել էին տարածաշրջանը ազդեցության գոտիների վերաբաժանելու Ֆաթհ Ալի և Իբրահիմ խաների, ինչպես նաև Հերակլ Բ արքայի ձգտումները:

Խանությունների և Ռուսական կայսրության փոխհարաբերությունների 1780-ական թթ. երկրորդ շրջափուլը պայմանավորված էր Այսրկովկասում աշխարհաքաղաքական նոր իրավիճակի ի հայտ գալով՝ Քարթլիի և Կախեթի միացյալ թագավորության նկատմամբ ռուսական հովանավորության հաստատմամբ:

1783 թ. կնքած Գեորգիևսկի դաշնագրով[416] Արևելյան Վրաստանը հրաժարվում էր ինքնուրույն քաղաքականությունից և ամբողջությամբ հայտնվում ռուսական ազդեցության ոլորտում[417]: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի և Դաղստանի տիրակալների մոտ առաջացած խուճապային տրամադրությունները ստիպում էին նրանց դիմել Ռուսաստանին և քաղաքական հովանավորություն խնդրել[418]:

---

[414] Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. II, вып. II, с. 21.
[415] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 134. Հմմ. РДО, с. 175; **Г. Кикодзе,** Ираклий Второй, Тбилиси, 1945, с. 58.
[416] Սույն դաշնագրի ամբողջական տեքստը տես՝ ПСЗРИ, т. XXI, с. 1013-1017.
[417] Տե՛ս **Н. Киняпина,** Кавказ и Средняя Азия во внешней политике России, Москва, 1984, с. 49-51.
[418] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 134-135.

Դաշնագրի ստորագրումը ռուսական կովկասյան քաղաքականության համար շրջադարձային էր, քանի որ ամրապնդում էր վերջինիս ռազմաքաղաքական դիրքերը տարածաշրջանում: Այդ հանգամանքով պայմանավորված, Ռուսական կայսրությունը կովկասյան տիրակալների և խաների նկատմամբ առավել կոշտ դիրքորոշում էր որդեգրել: Այսպես, Իբրահիմ խանը հայկական թագավորության վերստեղծման Ռուսաստանի ծրագրերից վախենալով, իր հնազանդությունն էր հայտնում ռուսական գահին և պատրաստակամ էր հարկ վճարել, իսկ իշխան Պ. Պոտյոմկինը նկատում էր, որ «հարկը, որ հարկում է ռուսական կայսրուհին՝ հավատարմությունն է»[419]:

Խորհրդային պատմագիտության կարծիք է արտահայտվել, թե Գեորգիևսկի դաշնագրից հետո Ֆաթհ Ալի խանի մոտ «անկասկած ուժեղանում է ռուսամետ կողմնորոշումը»[420]: Իրականում ուղիղ հակառակն էր տեղի ունենում: Այսրկովկաս ռուսական զորքի հնարավոր ներխուժման լուրերը, որոնք նախքան Գեորգիևսկի դաշնագրի կնքումն էին պտտվում, Ֆաթհ Ալի խանի բացասական արձագանքն էին արժանացել[421]:

Այսպիսով, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաներն անհանգստացած էին տարածաշրջանում ռուսական իշխանության ամրապնդմամբ: Արևելյան Վրաստանի նկատմամբ ռուսական հովանավորության հաստատումը խանությունների ինքնուրույնությանն ուղղված սպառնալիք էր դիտվում: Իրավիճակն ավելի է սրվում, երբ ռուսական քաղաքական ներկայությունն Արևելյան Վրաստանում ռազմական ուժերի տեղակայմամբ է ամրապնդվում: Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար XVIII դ. 80-ական թթ. բնութագրվում են որպես Կովկասում ռուսական իշխանության վերականգնման ժամանակաշրջան[422]: Սակայն ռուսական զորքի (թեև փոքրաթիվ) տեղակայումը Արևելյան Վրաստանում խախտում էր ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում[423]՝ թե՛ այսրկովկասյան տիրակալների

---

[419] Նույն տեղում, էջ144:
[420] **О. Маркова,** նշվ. աշխ., էջ 179:
[421] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 20.
[422] **F. Kazemzadeh,** Iranian relations with Russia and the Soviet Union, to 1921, – The Cambridge History of Iran, vol. VII, p. 325.
[423] Նույն տեղում, էջ 328:

շրջանում, թե՛ Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների աշխարհաքաղաքական շահերի համատեքստում:

Ռուսաստանի դիրքերն Այսրկովկասում ավելի են ամրապնդվում, երբ տեղի է ունենում կայսրության շահերի համար իրականացված «մեծ գործը»[424]՝ Ղրիմի միացումը (համաձայն 1784 թ. հունվարի 8-ի կոնվենցիայի): Դրանով ռուսական ռազմանավերի համար ուղիղ ճանապարհ էր բացվում դեպի Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցներ[425]: Ռուս պատմաբան Վ. Դեգոևն իրավացիորեն նշում է, որ Սանկտ Պետերբուրգում, մինչև Ղրիմի հիմնախնդրի վերջնական հանգուցալուծումը, «չէին շտապում վիճել» ո՛չ Իրանի տերության, ո՛չ էլ Օսմանյան կայսրության հետ: Հանդես էին գալիս Այսրկովկասում ստատուս քվոյի պահպանման օգտին[426] և չէին շտապում բացահայտ հովանավորել կողմերից որևէ մեկին: Այսրկովկասի և մերձկասպյան խանությունների նկատմամբ իրականացվող պասիվ՝ *«անտարբերության քաղաքականությունը»* փոխարինվում է *ակտիվ դիվանագիտությամբ*[427]:

Իրանի տերության մեծ մասի կառավարիչ Ալի Մուրադ խանի գերագույն խնդիրն էր ամրապնդել իշխանությունը երկրի ներսում: Դրա իրագործումը հնարավոր էր միայն հյուսիսային նահանգների և մերձկասպյան տարածքների միավորման պարագայում: Նպատակին հասնելու համար Ալի Մուրադ խանին անհրաժեշտ էր պայքարել ղաջարների դեմ: Նա, որպես դաշնակից, ընտրում է Ռուսական կայսրությանը՝ հաշվի առնելով տարածաշրջանում վերջինիս տնտեսական ու ռազմաքաղաքական շահերը: Ռուսական կառավարող շրջանակները պատրաստ էին Ալի Մուրադ խանին որպես Իրանի տերության շահ ճանաչել՝ այսրկովկասյան որոշ շրջաններից հրաժարվելու և դրանք ռուսական հովանու ներքո փոխանցելու պայմանով[428]: Ուստի, ռուսական դիվանագիտությունը Այսրկովկասի քաղաքական քարտեզը վերաձևելու տարբերակ է

---

[424] Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, бывшаго в Грузии с 1783 по 1787 г., Под ред. **А. А. Цагарели,** СПб., 1901, с. 6.

[425] **С. Жигарев,** Русская политика в Восточном вопросе (ее история в XVI-XIX веках, критическая оценка и будущие задачи), Москва, 1896, с. 225.

[426] **В. Дегоев,** Большая игра на Кавказе, Москва, 2003, с. 26.

[427] Հմմ. **Օ. Маркова,** նշվ. աշխ., էջ 159:

[428] Տե՛ս **Պ. Չորանյան,** Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները, էջ 59: Հմմ. **J. Perry,** The Zand Dynasty, p. 96.

մշակում: Նախատեսվում է ստեղծել հայկական թագավորություն, որն իր մեջ տարածքներ էր միավորելու նաև Օսմանյան կայսրությունից, իսկ Դերբենդից մինչև Գիլան ընկած տարածքների վրա ստեղծվելու էր այսպես կոչված, Աղվանք (Ալբանիա) անվանումով պետությունը: Արևմտավրացական իշխանություններն ու Իմերեթն անցնելու էին Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ Ախալցխայի շրջանն ու Գանձակի խանությունը՝ Արևելյան Վրաստանին[429]: Վերջինիս համար մեծ էր Գանձակի խանության նշանակությունը, քանի որ նրա տարածքով էին անցնում Թիֆլիսից դեպի Իրան և Հնդկաստան գնացող քարավանային ճանապարհները: Գանձակում ծայր առած ցանկացած խառնակություն պարենային պակասորդ էր առաջացնում Թիֆլիսում [430]:

Ռուսական ծրագրերում Աղվանքի սահմանների մասին հստակ պատկերացում չկար: Մի դեպքում դրանք հասնում էին Դերբենդից մինչև Գիլան, մյուս դեպքում՝ Դերբենդից Բաքու ընկած տարածքերն անցնելու էին ռուսական տիրապետության տակ՝ Աղվանքի քաղաքական սահմանները թողնելով հարավիրանական շրջանների տարածքում[431]:

Այսպիսով, Աղվանից թագավորության հիմնումը նպատակ ուներ Կուրի աջափնյակում ապահովելու ռուսական գերիշխանության հաստատման օրինականությունը (լեգիտիմությունը)[432]: Թեև նախագիծը չիրականացավ Ալի Մուրադ խանի վերահաս մահվան պատճառով (1785 թ.), այնուամենայնիվ, Կասպից ծովի արևմտյան ափերը մուսուլմանական խաների գերիշխանության ներքո միավորելու գաղափարը ռուսական այսրկովկասյան քաղաքականության համար կրկին կենսունակ է դառնում 1790-ական թթ. երկրորդ կեսին: Չկայացած այդ «գործարքի» պատմագիտական գնահատականը տրվել է պատմաբան Պ. Չոբանյանի կողմից, ով ձախողման պատճառները տեսնում է ոչ միայն Ալի Մուրադ խանի մահվան, այլև խանի

---

[429] Տե՛ս **А. Иоаннисян,** Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 136-139: Ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների պահանջով 1780-ական թթ. կեսերին Ս. Բուրնաշևը կազմել էր Այսրկովկասի քարտեզը, որտեղ Գանձակի խանությունը ներառված էր Արևելյան Վրաստանի սահմանների մեջ: Այդ մասին հայտնի է դառնում Հերակլ Բ արքայի Պ. Պոտյոմկինին 1784 թ. փետրվարի 15-ին գրած նամակից (տե՛ս Межкавказские политические и торговые связи Восточной, с. 140):

[430] С. Бурнашев, նշվ. աշխ., էջ 16:

[431] **А. Иоаннисян,** Россия и армянское освободительное движение, с. 137-138.

[432] Տե՛ս **В. Тунян,** Историческое пристрастие Азербайджана к истории Армении: мифы и реалии, Ер., 2013, с. 157.

երկդիմի քաղաքականության մեջ՝ որպես Ռուսաստանի նկատմամբ զուտ դիվանագիտական խայծի[433]:

Ալի Մուրադ խանի մահվան հետևանքով Իրանում կրկին գահակալական կռիվներ են սկսվում: Շուտով նրա եղբորը՝ Զաֆար խան Զենդին, հաջողվում է հաղթող դուրս գալ պայքարից (1785-1789): «Բայց բազումք ի նախարարաց գլուխ ամբարձեալ՝ ոչ կամեցան հնազանդիլ նմա. և առաւել ևս Մահմադ խան Մազանդարանայ՝ որդի Հասան խանին», – գրում է Միքայել Չամչյանը[434]: Աղա Մուհամմադ խանն Ալի Մուրադ Զենդի մահվան լուրն առնելով փախուստի էր դիմել Շիրազից և մտել գահակալական պայքարի մեջ:

Այսպիսով, XVIII դ. 80-ական թթ. երկրորդ կեսում Իրանը շարունակում էր գոյություն ունենալ իբրև Պարսից թագավորություն՝ «առանց թագաւորի. և իւրաքանչիւր նախարար իշխէ իւրում գաւառի, գրեթէ ամենեքին լեալ ինքնագլուխ»[435], – ինչպես Միքայել Չամչյանն է գրում:

Անկայուն էր քաղաքական իրավիճակը նաև Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ու Դաղստանում: Ղուբայի խանը՝ չկարողանալով լուծարել վրաց-ղարաբաղյան դաշնությունը, հայացքն ուղղել էր դեպի Իրան՝ փորձելով գահ բարձրացնել ոմն Աբբաս Միրզայի (իբր Սեֆյան արքայատոհմի ներկայացուցիչ և շահ Հուսեյնի ժառանգներից մեկը): Վրաց Հերակլ Բ արքան այդ կապակցությամբ գրում էր, թե Ֆաթհ Ալի խանին չի հաջողվի անցկացնել այդ կեղծիքը, քանի որ տարածաշրջանում հայտնի են Ղուբայի խանության մեծությունը և նրա խանի քաղաքական կշիռը, և Իրանի տերության ժողովուրդը նույնիսկ բնաջնջվելու դեպքում անգամ, չի հանդուրժի, որ Ղուբայից «ինչ-որ մեկը» շահ դառնա[436]: Այնուամենայնիվ, Ֆաթհ Ալի խանը 1784 թ. մեծաթիվ զորքով շարժվում է Արդաբիլ, Մեշքին և այնտեղ կառավարիչներ է նշանակում: Սակայն Ղուբայի խանը վրաց-ղարաբաղյան զինակցությունը քանդելու մտադրությունից չէր հրաժարվել: Այսպես, երբ 1785 թ. Հերակլ Բ-ն Իբրահիմ խանի հետ արշավում են Գանձակ Ֆաթհ Ալի խանը վրաց արքային առաջարկում է միասնաբար դուրս գալ Իբրահիմ խանի դեմ: Հաղթանակի դեպքում արցախահայությունը անցնելու էր

---

[433] **Պ. Չորանյան,** Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները, էջ 438:
[434] **Միքայէլ Չամչեանց,** Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թուականը), հտ. Գ, Եր., 1984, էջ 861:
[435] Նույն տեղում:
[436] Межкавказские политические и торговые связи Восточной Грузии, с. 77.

վրացական գերիշխանության տակ, իսկ մուսուլմանները՝ Ղուբայի խանի[437]: Հերակլ Բ արքան՝ առաջարկությունը մերժելով, հանում է զորքը պաշարումից և օգնության ուղարկում Ղարաբաղ:

Ֆաթհ Ալի խանի իշխանության ընդարձակումը դժգոհություն էր առաջացրել նաև Դաղստանի տիրակալների մոտ: Ղարաղայթաղի ուցմին և ավար խանը՝ ռուսական իշխանությունների աջակցությունը ստանալով, արշավանք էին նախապատրաստում դեպի Ֆաթհ Ալի խանի տիրույթները: Նշենք, որ Ղարաղայթաղի ուցմին 1786 թ. Պ. Պոտյոմկինին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի քաղաքական քարտեզի վերաձևման հետաքրքիր տարբերակ էր առաջարկում. տարածաշրջանում խաղաղության հաստատման համար առաջարկվում էր Դերբենդում իշխանությունն «անհապաղ» Իմամ Ղուլի խանի թոռանը, Ղուբայում՝ Ֆաթհ Ալիին, իսկ Բաքվում՝ Բաքվի խաներին հանձնել: Ծրագրի իրականացման համար ուցմին խնդրում էր 2000-անոց ռուսական զորաբանակ ուղարկել [438] : Փաստորեն, Ղարաղայթաղի տիրակալը Ռուսաստանի ռազմաքաղաքական միջամտությամբ ձգտում էր թուլացնել Հյուսիս-արևելյան Այսրկովկասում Ֆաթհ Ալի խանի քաղաքական ազդեցությունը: Անգամ առաջարկվում էր արմատախիլ անել Օսմանյան կայսրության հրահրած շեյխ Մանսուրի (Ուշուրմայի) շարժումը: Աղբյուրների հանաձայն, շեյխ Մանսուրի 6000-անոց զորաջոկատում կային հայեր, չերքեզներ, թաթարներ, թուրքեր և այլն [439] : Պ. Պոտյոմկինը Ղարաղայթաղի տիրակալի առաջարկությունն անպատասխան է թողնում՝ Այսրկովկասում պահպանելով Ֆաթհ Ալի խանի Ռուսաստանի կովկասյան քաղաքականության համար շուրջ երեք տասնամյակ կանխատեսելի գերիշխանությունը: Գ. Պոտյոմկինի կոշտ արձագանքը Ֆաթհ Ալի խանին ստիպում է զորքը ցրել և վերադառնալ: Սակայն Կովկասի գեներալ-նահանգապետ Պ. Պոտյոմկինը չցանկանալով Ֆաթհ Ալի խանին դուրս թողնել ռուսական ազդեցության ոլորտից, 1786 թ. աշնանը նրան նամակում «պատվական խան» եզրույթով էր դիմում[440]:

---

[437] **В. Мартиросян,** Новые документы о политическом положении Закавказья (80-е XVIII в.), – ՊԲՀ, 1979, № 3, էջ 92:
[438] РДО, с. 190.
[439] СИРИО, т. 47, СПб., 1885, с. 180.
[440] РДО, с. 201.

Երկրորդ ռուս-թուրքական պատերազմի (1787-1791 թթ.) ընթացքում Այսրկովկասի խաների համար թանկարժեք նվերներով ու մեծ գումարով Ֆաթհ Ալի խանի մոտ էր ժամանել Սուլեյման փաշայի ներկայացուցիչը: Սուլթանի ֆերմանում նշվում էր, որ ռուսները պատրաստվում են գրավել ողջ «Պարսից թագավորությունը»: Ուստի առաջարկվում էր համատեղ հարձակվել Արևելյան Վրաստանի վրա և «ռուսներին վտարել կամ կոտորել»[441], ինչպես նաև «ընդդիմանան վրաց և կործանեն և Երեւանու տիրեն»[442]:

Մինչդեռ պատերազմի նախաշեմին վրաց տիրակալը՝ Ախալցխայի Սուլեյման փաշայի հետ չհարձակման մասին պայմանագիր է կնքում ու ռուսական զորքի հետ արշավում է Գանձակ: Սակայն ռուսական զորքը Ս. Բուրնաշևի գլխավորությամբ Գանձակից վերադառնում է, իսկ արշավանքը՝ ձախողվում[443]:

Ռուսաստանը հաշվի առնելով, որ Իրանում քաղաքականապես ուժեղացած Աղա Մուհամմադ խանը կփորձի բորբոքել թշնամանքը Ֆաթհ Ալի և Իբրահիմ խաների միջև, աջակցում է, որ Հերակլ Բ-ի և Ֆաթհ Ալի խանի միջև (1787 թ.) քաղաքական դաշինք կնքվի: Ռուսական կայսրությունն այդ դաշինքը որպես իր ազդեցության ոլորտում պահելու լծակ էր օգտագործելու դեպի Օսմանյան կայսրությունը քաղաքականապես կողմորոշված Իբրահիմ խանի դեմ[444]: Դաշինքն իր բնույթով հարձակողական էր՝ տարածաշրջանը ազդեցության գոտիների վերաբաժանելու, տիրակալների միջև հնարավոր ռազմական բախումները բացառելու, ինչպես նաև թուրք-իրանական ագրեսիան չեզոքացնելու համար: Դրանով Ռուսական կայսրությունը վերահաստատում էր ուժերի հավասարակշռությունը թե՛ Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների, թե՛ այսրկովկասյան տիրակալների միջև:

Մինչդեռ 1780-ական թթ. կեսերին Աղա Մուհամմադ խան Ղաջարին հաջողվում է իրեն ենթարկել Սպահանը և հայացքն ուղղել դեպի Այսրկովկաս: Այդ հանգամանքը Ֆաթհ Ալի խանին ստիպում է կայսերական հովանավորություն ստանալու խնդրանքով

---

[441] **В. Мартиросян,** Новые документы о политическом положении Закавказья (80-е XVIII в.), с. 95.
[442] ՄՄ, ձեռ. 4496, էջ 136բ-137ա:
[443] **Давид Багратиони,** История Грузии, Текст издал и снабдил вступительной статьей и указателями **А. Рогава,** Тбилиси, 1971, с. 167.
[444] Հմմ. **В. Дегоев,** նշվ. աշխ., էջ 31:

ռուսական իշխանություններին դիմել[445]: Ի պատասխան դրա, Կովկասի գեներալ-նահանգապետ Պ. Պոտյոմկինը 1786 թ. նշում է, որ Ֆաթհ Ալի խանի՝ Ռուսաստանի առջև ունեցած ծառայությունները չեն կարող առանց փոխհատուցման մնալ և խոսքն ավարտում է հռետորական նոտայով. «Դուք, պատվական խան, փառք փնտրելով, *ուրիշ որտե՞ղ* (ընդգծումը մերն է – *Գ.Մ.*) կարող եք այն գտնել, եթե ոչ Մեծի հովանու ներքո»[446]: Հասկանալի էր, որ Ֆաթհ Ալի խանի քաղաքական դերակատարումը ռուսական կովկասյան քաղաքականության համար չէր նվազել, քանի որ նրա իշխանությունն էին ճանաչում Դաղստանի, Շիրվանի տիրակալները և Ատրպատականի որոշ խաներ[447]:

Շուտով լարվում են Ղուբայի խանի և Ռուսական կայսրության հարաբերությունները (1787 թ.): Կասպից ծովի ափամերձ տարածքներում ռուսական երկու առևտրային նավերի նավաբեկության հետևանքով ողջ ապրանքը թալանվել էր, իսկ փրկված նավաստիների նկատմամբ բռնություն էր գործադրվել: Իշխան Պ. Պոտյոմկինը վերջնագրի ձևով Ֆաթհ Ալի խանից պահանջեց «այսուհետև արգելել Բաքվի Միրզա Մուհամմադ խանին նման հանդգնություն գործել», վերադարձնել ափ նետված ապրանքները և ձերբակալված նավաստիներին: «Իսկ եթե դուք այս ամենը չկատարեք, – գրում էր իշխանը, – ապա չեք կարող մեղադրել, որ ես այս քայլերի մասին կհայտնեմ նորին պայծառափայլություն Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինին, իսկ թե դրանից ինչպիսի հետևանքներ կարող են լինել՝ դժվար չէ պատկերացնել»[448]:

Ռուսական հովանավորությունը ստանալու Ֆաթհ Ալի խանի «ջանքերը» խաթարվում են 1787 թ.՝ ռուս-թուրքական պատերազմի սկսվելու պատճառով: Կայսրության կառավարող շրջանակները խանի՝ ռուսական գահի հովանավորությունը ճանաչելու անկեղծության վերաբերյալ մեծ կասկածանքներ ունեին: Այդ մասին Պ. Պոտյոմկինը հայտնում է Գ. Պոտյոմկինին 1787 թ. ապրիլին՝ նշելով, որ Ֆաթհ Ալի խանը որպեսզի ռուսական գահին հավատարմություն հայտնելու իր խոստումներից խույս

---

[445] СИРИО, т. 47, СПб., 1885, с. 193.
[446] РДО, с. 201.
[447] **А. Бакиханов,** նշվ. աշխ., էջ 138:
[448] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 125.

տա, դժգոհություն է հայտնում, թե իր բանագնացին ավելի քիչ ուշադրություն է դարձվել Գ. Պոտյոմկինի կողմից, քան Ումմա խանի պատվիրակին[449]:

Հետաքրքրական է ավար խանի պատվիրակին ավելի մեծ ընդունելության արժանացնելու վերաբերյալ Ղուբայի խանի հեգնական դիտարկումը: «Անարդար» այդ վերաբերմունքը նա բացատրում էր Ումմա խանի Արևելյան Վրաստան արշավելու և գերիներ տանելու հանգամանքով: Այնուհետև խանը հիշեցնում էր, որ դաղստանյան տիրակալները այդ թվում նաև Ավարայի խանի ընտանիքի շատ անդամներ հաշվի են նստում իր հետ, սակայն ինքը չգիտի, թե ինչու են Ումմա խանի պատվիրակին 1000 ռուբլի, կառք և վեց ձի նվիրել, իսկ իր պատվիրակին՝ 500 ռուբլի[450]:

1789 թ. հունվարին Ֆաթհ Ալի խանն ու Հերակլ Բ արքան դաշնակցում են Իբրահիմ խանի դեմ: Կողմերը ծրագրում էին, որ գարնանը Ղուբայի խանն անցնելու էր Արաքսը և շարժվելու Իրանի տերության խորքը, իսկ Հերակլը՝ վերահսկելու էր իրավիճակն Այսրկովկասում ու Դաղստանում: Սակայն Ֆաթհ Ալի խանի վերահաս մահը խառնում է պլանները. «որով կրկին զօրացեալ Իբրահիմ անդրէն արծարծէ զիւրն չարութիւն յայլ և այլ սահմանակից տեղիս իշխանութեան իւրոյ»[451]:

Ամփոփելով Ֆաթհ Ալի խանի շուրջ երեք տասնամյակ ընթացած քաղաքական գործունեությունը, եզրակացնենք, որ ինքնիշխան տիրակալը Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների նկատմամբ խուսանավելու քաղաքականության միջոցով ջանում էր պահպանել իր գերիշխանությունը տարածաշրջանում: Նրա քաղաքականության «ռուսական» ուղղությունը 1780-ական թթ. միտված էր տարածաշրջանում աստիճանաբար մեծացող «դաջարական վտանգին» դիմակայելուն:

Այսպիսով, 1780-ական թթ. առաջին կեսին Ռուսական կայսրությունը, հաջողությամբ լուծելով Մերձսնծովյան, մասնավորապես, Ղրիմի հիմնախնդիրը, Այսրկովկասի առավել ազդեցիկ տիրակալների՝ Հերակլ Բ արքայի և Ղուբայի Ֆաթհ Ալի խանի նկատմամբ հմտորեն կիրառում էր *քաղաքական հավասարակշռության*

---

[449] Նույն տեղում, էջ 93-94:
[450] Նույն տեղում, էջ 124:
[451] Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ա-Բ (1780-1834), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1893, էջ 14:

սկզբունքը՝ թույլ չտալով միաբևեռ ուժի ի հայտ գալը: Հասնելով Ֆաթհ Ալի խանի և Հերակլ Բ-ի միջև դաշինքի կնքմանը՝ Ռուսաստանը հասկանում էր, որ նրանց ծավալապաշտական նկրտումները վաղ, թե ուշ բախվելու էին միմյանց: Հետևաբար, Ռուսական կայսրությունը ձգձգում էր ռուսական հովանավորությունը ճանաչելուն ուղղված՝ Ֆաթհ Ալի խանի հետ վարվող բանակցությունները:

Ինչ վերաբերում է Հյուսիս-արևելյան Այսրկովկասի մյուս խաների և Ռուսական կայսրության փոխհարաբերություններին, ապա դրանք ևս չի կարելի բարեկամական (առավել ևս «ռուսամետ») անվանել: Այսպես, 1780-ական թթ. երկրորդ կեսին Բաքվի խանի կամայականությունները ռուսական առևտրականների նկատմամբ այնպիսի չափերի էին հասել, որ Միրզա Մուհամմադ խանը բարձր մաքսատուրքեր էր սահմանել անգամ Բաքվի մոտով անցնող նավերի նկատմամբ[452]:

Այսպիսով, Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների ռազմաքաղաքական և առևտրա-տնտեսական շահերի համատեքստում XVIII դ. երկրորդ կեսի Հյուսիս-արևելյան Այսրկովկասի քաղաքական պատմության վերլուծությունը ցույց տվեց, որ խանությունների ինքնիշխանությանը նրանք սպառնում էին հավասարապես: Ի տարբերություն XVIII դ. առաջին կեսի, երբ ռուս-թուրք-իրանական հարաբերությունները կարգավորվել էին մի շարք միջպետական պայմանագրերով, 1750-1780-ական թթ. Իրանը, Ռուսական և Օսմանյան կայսրությունները «գործում են» *դիվանագիտական չեզոքության ռազմավարության քողի տակ* ՝բացառելով ռազմական ներխուժումը տարածաշրջան:

Այսպես, Իրանը չէր համակերպվում «պատմականորեն իրեն պատկանող» երկրամասի կորստի և այնտեղ հակառակորդ տերությունների (Ռուսական և Օսմանյան կայսրությունների) ազդեցության ուժեղացման փաստի հետ: Թեև Քերիմ խան Զենդը ձգտում էր վերահաստատել Իրանի տերության «պատմական իրավունքներն» Այսրկովկասի նկատմամբ, սակայն բավարար չափով ռազմաքաղաքական ու դիվանագիտական ներուժ չունենալով, փաստացի ճանաչում էր նրանց կիսանկախ կարգավիճակը:

---

[452] **Г. Цинцадзе,** Материалы к истории русско-грузинских отношений (1782-1791), с. 125.

Օսմանյան կայսրությունը ևս ի զորու չլինելով միայնակ լուծել այսրկովկասյան հիմնախնդիրը և հաշվի առնելով ռուս-իրանական հնարավոր համագործակցությունը (1720-1730-ական թթ. օրինակով), դիմում է այսրկովկասյան խաներին և տիրակալներին սիրաշահելու քաղաքական մարտավարությանը:

Ռուսական կայսրության այսրկովկասյան քաղաքականության համար անհրաժեշտ էին լուծումներ, որոնք թույլ կտային կարգավորել հարաբերությունները թե՛ Օսմանյան կայսրության և Իրանի տերության, թե՛ այսրկովկասյան տիրակալների հետ: Ըստ այդմ, XVIII դ. երկրորդ կեսի ռուսական այսրկովկասյան քաղաքականությունը կառուցվում էր երկու հարթություններում՝ քաղաքական հարաբերություններ Իրանի տերության և Օսմանյան կայսրության հետ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի շուրջ և նրա ներսում՝ խանությունների ու տիրակալների հետ: Առաջին հարթությունում ռուսական դիվանագիտությունն Իրանի տերությանը սիրաշահելու նպատակով այսրկովկասյան տարածքները կոչում էր «պարսից կողմեր», իսկ «օսմանյան վտանգը» հաշվի առնելով՝ չեզոք վերաբերմունք էր ցուցաբերում խանությունների և Արևելյան Վրաստանի նկատմամբ: Երկրորդ հարթությունը Ռուսաստանի և խանությունների փոխհարաբերությունների պատմությունն է ներկայացնում: 1750-1780-ական թթ. առաջին կեսին Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերին անհրաժեշտ էր հավասարակշռված ու կայուն Այսրկովկաս, բայց՝ միմյանց նկատմամբ թշնամաբար տրամադրված խաներով ու տիրակալներով: Ավելին, որոշ դեպքերում նախատեսվում էր թշնամանք սերմանել խաների միջև՝ նրանց քաղաքականապես թուլացնելու նպատակով: Օրինակ՝ խոսքը վերաբերում է 1780-ական թթ. առաջին կեսում Ղուբա-Ղարաբաղյան հակամարտության ընթացքում ռուսական իշխանությունների որդեգրած քաղաքականությանը[453]:

Ընդհանրացնելով 1750-1780-ական թթ. Հյուսիս-արևելյան Այսրկովկասի և Ռուսական կայսրության փոխհարաբերությունների քաղաքական պատմությունը եզրակացնենք, որ այն բաժանված էր երկու շրջափուլերի: Առաջին շրջափուլն ընդգրկում է 1750-1770-ական թթ., երբ ռուսական դիվանագիտությունը՝ Այսրկովկասում

[453] Տե՛ս ЦГВИА, ф. 52, оп. 1/194, д. 350, ч. 1, лл. 4-5.

և Դաղստանում թուրք-իրանական աշխարհաքաղաքական գործոնը հաշվի առնելով, ի տարբերություն Պետրոս Ա-ի որդեգրած քաղաքական ուղենիշի, առժամանակ հրաժարվում է տարածաշրջանում ռազմական միջամտություն կատարելուց. *ռազմաքաղաքական ներկայությունը փոխարինվում է քաղաքական ազդեցության հաստատմամբ:* Փոխարենը Ռուսական կայսրությունում ուշի-ուշով հետևում էին Այսրկովկասում և Դաղստանում ծավալվող ներքաղաքական զարգացումներին՝ վերջիններիս շահերը համադրելով կամ հակադրելով միմյանց: Հետևաբար, 1750-1770-ական թթ. խանությունների նկատմամբ ռուսական քաղաքականությունը *դիվանագիտական միջամտության բնույթ* էր կրում՝ Այսրկովկասում *հեշտ կառավարվող* իրավիճակ ստեղծելով: Ուստի, Հյուսիս-արևելյան Այսրկովկասում Ռուսական կայսրության *դիվանագիտական միջամտության քաղաքականությունը* աստիճանաբար վերածվում էր հայեցակարգի՝ *հակակշիռների ստեղծման մեխանիզմի*:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի նկատմամբ Ռուսական կայսրության քաղաքականության 1780-ական թթ. երկրորդ շրջափուլը բաժանվում էր երկու ենթափուլերի՝ տարածաշրջանում կատարվող աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների հաշվառմամբ: Այն է՝ Քերիմ խան Զենդի մահից (1779 թ.) մինչև Գեորգիևսկի դաշնագրի կնքումը (1783 թ.) և Գեորգիևսկի դաշնագրից մինչև երկրորդ ռուս-թուրքական պատերազմը (1787-1791 թթ.): 1780-ական թթ. Ռուսական կայսրությունը՝ հաջողությամբ լուծելով Մերձսևծովյան, մասնավորապես Ղրիմի հիմնախնդիրը, Այսրկովկասի ուժեղագույն տիրակալների՝ Հերակլ Բ արքայի և Ղուբայի Ֆաթհ Ալի խանի նկատմամբ հմտորեն կիրառում էր *քաղաքական հավասարակշռության սկզբունքը*՝ թույլ չտալով միաբևեռ ուժի ի հայտ գալը:

Մյուս կողմից, 1750-1780-ական թթ. Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության քաղաքական հարաբերությունների վերլուծությունը ժխտում է խորհրդային պատմագիտության այն դրույթը, թե խաները հակաթուրքական տրամադրություններ ունեին և քաղաքականապես կողմնորոշված էին դեպի Ռուսաստանը:

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունները կիսանկախություն ստանալուն զուգահեռ, Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների հետ ինքնուրույն դիվանագիտական հարաբերություններ կառուցելու հնարավորություն էին ձեռք բերել: 1750-1780-ական թթ. նրանք ստիպված էին իրենց անվտանգությունն ու անկախությունը պահպանել՝ դիմելով Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև *խուսանավելու քաղաքականությանը:* Ավելին, խաները իրական վախ ունեին, օրինակ՝ Ռուսական կայսրության նկատմամբ. «իբրև շուն դօղան ի յահէն մեր ամենառողորմած կայսրուհոյն», – գրում էր Հ. Արղությանը 1785 թ.[454]: Խորհրդային պատմագիտության մեջ այսրկովկասյան տիրակալների խուսանավելու քաղաքականությունը ընդունված էր կոչել «երկերեսանիություն»[455], որը քաղաքագիտական առումով, թերևս, ընդունելի չէ:

Մեր կարծիքով, խաների և տիրակալների Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների նկատմամբ վարվող քաղաքականությունն անհրաժեշտ է դիտարկել XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական պատմության համատեքստում, որպես սեփական անվտանգության և ինքնիշխանության պահպանմանը միտված խուսանավելու հայեցակարգի բաղադրիչ:

---

[454] ՄՄ, ձեռ. 4496, էջ 137ա:

[455] **А. Иоаннисян,** Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 35.

ԳԼՈՒԽ III

ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ

3.1 ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ XVIII Դ. 90-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Օսմանյան կայսրությունը և նրա եվրոպական գործընկերները, մասնավորապես Ֆրանսիան, չէին կարողանում հաշտվել 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքների հետ, որոնց հետևանքով Ռուսաստանի դիրքերը Հյուսիսմերձսևծովյան տարածաշրջանում անհամեմատ ամրապնդվեցին:

Ռուս-թուրքական հարաբերությունները 1774-1787 թթ. բնորոշվում են որպես զինադադարի ժամանակաշրջան, երբ կողմերը նոր պատերազմի էին նախապատրաստվում: Դրա անխուսափելիության մասին մարգարեաբար նկատել էր օսմանյան մեծ վեզիր Մուհամմադ փաշան: Քյուչուկ-Կայնարջիի պայմանագրի վավերացման նպատակով Կոստանդնուպոլիս ժամանած իշխան Ն. Ռեպնինին նա ասել էր, որ եթե Ղրիմն անկախություն ստանա, իսկ Կերչն ու Ենիկալեն մնան ռուսների ձեռքերում, ապա ինքը չի խոստանում, որ պայմանագիրը երկարաժամկետ կլինի[456]:

Կոստանդնուպոլսում Ռուսական կայսրության դեսպան Յ. Բուլգակովը 1785 թ. փետրվարին հաղորդում էր, որ Ղրիմի կորուստը թուրքերից առավել դժվար էին տանում ֆրանսիացիները, որոնք սուլթանին ստիպում էին բարձրացնել այդ հարցը[457]: Դեսպանի փոխանցմամբ (1786 թ. մայիսի 1 /12)՝ Բարձր Դուռն Ախալցխայի Սուլեյման փաշային գաղտնի հանձնարարել էր 10000 թուրք զինվոր ուղարկել Կովկաս՝ լեզգիներին ոտքի հանելու համար[458]:

Վերսալի պայմանագրի կնքումից (1768 թ.) մինչև 1787 թվականը Արևելքում ռուս-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների լարվածություն էր նկատվում:

---

[456] **А. Петров,** Вторая русско-турецкая война в царствование Екатерины II. 1787-1791 гг., т. I, 1787-1789 гг., СПб., 1880, с. 7.
[457] СИРИО т. 47, с. 139.
[458] СИРИО т. 27, СПб., 1880, с. 392.

Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը 1780-ական թթ. պայմանավորված էր Լևանտի առևտրի զարգացմամբ, որին «խոչընդոտում էր» ռուսական առաջխաղացումն Արևելքում [459] : 1787 թ. ֆրանս-ռուսական առևտրային պայմանագրի կնքման և Ֆրանսիայում հեղափոխական իրադրության առաջացման հետևանքով ֆրանսիական դիվանագիտությունը կորցնում է հետաքրքրությունն արևելյան հարցերի նկատմամբ: Սակայն դա չէր խանգարում, որ ֆրանսիական ոսկին շարունակեր իր ազդեցիկ դերակատարությունն ունենալ Օսմանյան կայսրության կովկասյան խնդիրների լուծման գործում: Այսպես, Շեյխ Մանսուրը շուրջ 2000 ֆրանսիական ոսկի էր բաժանել կովկասյան ժողովուրդներին, որոնք Ղուրանի վրա երդվել էին՝ խոստանալով արշավել Ղզլար[460]:

Օսմանյան կայսրությունը ռուսական առաջխաղացման դեմ մենակ մնալով, վերադառնում է կովկասյան տիրակալներին սիրաշահելու քաղաքական մարտավարությանը և նրանց մոտ գործակալներ է ուղարկում: Սելիմ Գ սուլթանի (1789-1807) և մեծ վեզիրի անունից Շաքիի, Շամախիի, Ղարաբաղի, Դաղստանի տիրակալներին մեծամեծ նվերներ ուղարկելով, առաջարկվում էր Անապայի գրավման ժամանակ միանալ Ղզլար կազմակերպող արշավանքին[461]:

XVIII դ. 90-ական թթ. Ղարաբաղի, Գանձակի, Դերբենդի, Ղուբայի և Շաքիի խանությունները, Քարթլիի և Կախեթի թագավորությունը շարունակում էին որպես Այսրկովկասի ամենաազդեցիկ քաղաքական միավորներ մնալ: Սակայն Հյուսիս-արևելյան Այսրկովկասում Ֆաթհ Ալի խանի մահից հետո (1789 թ.) աշխարհաքաղաքական նոր իրավիճակ էր առաջացել: Ղուբայի խանությունը կարող էր «ազատ հարևանների» քաղաքական զոհը դառնալ և այդ պատճառով խանի մահվան լուրը շուրջ մեկ ամիս գաղտնի էր պահվել [462] : Այսպես, Ղուբայի խանությունից «անկախացել էր» Շամախին: Շաքիի Մուհամմադ Հասան խանը Ֆաթհ Ալի խանի

[459] **А. Иоаннисян,** նշվ. աշխ., էջ 139:
[460] Неизданные документы академика Буткова, – «Кавказский сборник», т. XX, Тифлис, 1899, с. 407.
[461] Նույն տեղում, էջ 391: Հմմ. **Р. Магомедов,** Общественно-экономический строй Дагестана в XVIII – начале XIX вв., Махачкала, 1957, с. 360; **Н. Смирнов,** Политика России на Кавказе в XVI-XIX вв., Москва, 1958, с. 166.
[462] РДО, с. 213.

մահվան լուրն առնելով՝ հարձակվում է Շամախիի վրա և այնտեղից վտարում Ղուբայի Ֆաթհ Ալի խանի որդի Ահմադին: Շամախիի խան է դառնում Ղարաբաղի Իբրահիմ խանի մոտ ապաստանած Մուհամմադ Սայիդ խանի որդին՝ Ասկեր բեկը[463], ապա նրա եղբայրը՝ Կասիմ բեկը: Շուտով Շամախիի Աղասի խանի որդի Մուստաֆան վարձու լեզգիների օգնությամբ գրավում է Շամախին, իսկ Կասիմ խանը փախչում է Շաքիի խանություն[464]: Կասիմ խանը խնդրում է Ղուբայի Շեյխ Ալի խանին վերականգնել իրեն Շամախիի խանի պաշտոնում: Ղուբայի և Շաքիի խաները 1794 թ. պաշարում են Նոր Շամախին, բայց հաջողության հասնել չեն կարողանում[465]: Օգտվելով առիթից՝ Շաքիի Մուհամմադ Հասան խանի եղբայր Սելիմ բեկը 1795 թ. գրավում է Շաքիի խանությունը: Մուհամմադ Հասան խանն Աղա Մուհամմադ խանից ստացած օժանդակ զորքով շտապում է Շաքի, բայց ծանր պարտություն է կրում: Աղա Մուհամմադ խանը, զայրացած այդ պարտությունից, հրամայում է կուրացնել Շաքիի Մուհամմադ Հասան խանին և աքսորել Թավրիզ[466]:

Շամախիի խանի օգնությամբ Մուհամմադ Հասան խանին հաջողվում է Շաքիից վտարել և վերականգնել իշխանությունը: Շաքիի և Շամախիի խանությունների միջև քաղաքական դաշինքն ամրապնդվում է ամուսնությամբ, բայց քանի որ Մուհամմադ Հասան խանը կույր էր, ապա Շաքիի խանությունում փաստացի իշխանությունը գտնվում էր նրա փեսայի՝ Մուստաֆա խանի ձեռքում[467]:

Ֆաթհ Ալի խանի մահից հետո Բաքվի խանը դեռևս որոշ հարկային պարտավորություններ էր կատարում՝ հօգուտ Ղուբայի: Բաքվում Մելիք Մուհամմադից հետո իշխանությունը ժառանգում է որդին՝ Միրզա Մուհամմադը: Որոշ ժամանակ անց վերջինս հրաժարվում է հարկ վճարել Դերբենդի և Ղուբայի Ահմադ խանին, որն էլ Բաքվի խան է ճանաչում Մելիք Մուհամմադի հորեղբորը՝ Մուհամմադ Ղուլիին: Միրզա Մուհամմադ խանն ու նրա մայրը աքսորվում են Ղուբա: Որոշ ժամանակ անց Բաքվի

---

[463] **А. Серебров,** նշվ. աշխ., էջ 188:
[464] Նույն տեղում, էջ 190-191:
[465] **А. Бакиханов,** նշվ. աշխ., էջ 141:
[466] Աղա Մուհամմադ խանի սպանությունից (1797 թ.) հետո Մուհամմադ Հասան խանը փախչում է Շամախիի Մուստաֆա խանի մոտ:
[467] **А. Серебров,** նշվ. աշխ., էջ 192, 195:

խանի մորը հաջողվում է համոզել իր եղբոր որդուն՝ վերականգնելու Միրզա Մուհամմադի իշխանությունը: Ահմադ խանի վաղաժամ մահվան հետևանքով գործը շարունակում է նրա եղբայր Շեյխ Ալի խանը: Նա Միրզա Մուհամմադ խանի հետ զորքով մոտենում է Բաքվի մատույցներին և օգնության հասած ռուսական զորքի միջամտությամբ ստիպում է Մուհամմադ Ղուլի խանին եկամուտների կեսը տալ Միրզա Մուհամմադին: Մուհամմադ Ղուլի խանի մահից հետո իշխանությունը ժառանգաբար անցնում է նրա որդուն՝ Հուսեյն Ղուլի խանին: Վերջինս հրաժարվում է վճարել հասանելիք եկամուտը, իսկ Միրզա Մուհամմադ խանն ընտանիքով ապաստանում է Շեյխ Ալի խանի մոտ: Վերջինս կրկին զորքով շարժվում է Բաքու և քաղաքի մոտ ճամբար է հիմնում: Այդ ժամանակ Շաքիի Մուհամմադ Հասան խանը Շեյխ Ալի խանից օգնություն է խնդրում Ղազիկումուխի խանի հարձակմանը դիմակայելու համար: Շեյխ Ալի խանը Միրզա Մուհամմադին 1000 զինվոր թողնելով՝ վերադառնում է: Հուսեյն Ղուլի խանը ստեղծված իրավիճակից օգտվելով, հանկարծակի հարձակվում է Միրզա Մուհամմադի վրա և գերեվարում նրան ու ընտանիքով տանում Բաքու[468]:

Ֆաթհ Ալի խանի մահից հետո Հյուսիս-արևելյան Այսրկովկասում անկայուն իրավիճակը փաստում էր, թե որքան թույլ էր Ղուբայի խանության շուրջ ձևավորված քաղաքական միավորումը[469]:

Նշված ժամանակաշրջանում Զենդերի արքայատոհմի իշխանությունն Իրանում թուլացել էր, և այդ իրավիճակում Դերբենդի և Ղուբայի նորընծա Ահմադ խանը շտապում էր «բարեկամական նամակագրություն» հաստատել Կուբանի և Կովկասի կորպուսների գլխավոր հրամանատար Պ. Թեքելիի հետ: Ռուսական գահին հավատարմություն հայտնելով, նա խոստանում էր հովանավորել ռուս վաճառականությանը[470]: Ավելին, Ահմադ խանը ռուսական հրամանատարությանն է

---

[468] Նույն տեղում, էջ 189-190: Հմմ. Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սալիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից՝ որք ի Շամախւոյ թեմի, գրեց **Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց,** Տփխիս, 1896, էջ 472-482:

[469] Տե՛ս **Մահբուբե Մեդիղի,** Հարավային Կովկասի տեղական իշխանությունների փոխհարաբերությունները Իրանի կենտրոնական իշխանության հետ XVIII դարի վերջից մինչև 1828 թվականը, թեկնածուական ատենախոսություն, Եր., 2014, էջ 31:

[470] РДО, с. 212-213.

փոխանցում կովկասյան տիրակալներին հասցեագրված (1790 թ.) Սելիմ Գ սուլթանի նամակները՝ թուրքական հովանավարությունը ճանաչելու առաջարկով[471]:

Ղուբայի խանի «ռուսամետությունը» պայմանավորված էր ոչ միայն արտաքին վտանգներով, այլև Այսրկովկասի ներսում և նրա շուրջ ձևավորված անկայուն ռազմաքաղաքական իրավիճակով: Ղուբայի և Դերբենդի խանությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասն ու Դաղստանը երեք տասնամյակ գրեթե միանձնյա քաղաքական ազդեցության տակ պահելով՝ այժմ նոր իրավիճակում էր հայտնվել: Հետևաբար, Ահմադ խանը, որպես իր հեռատես հոր քաղաքական ուղեգծի շարունակող, փորձում էր ռուսական իշխանությունների աջակցությամբ վերականգնել խանության ազդեցությունը տարածաշրջանում:

Նորընծա Ահմադ խանին իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն էր ուղարկում Ախալցխայի Սուլեյման փաշան: Առաջարկելով մասնակցել Բատալ փաշայի Ղզլար կատարվող արշավանքին՝ նա հույս էր հայտնում, որ խանը հավատարիմ կմնա իր հոր քաղաքականությանը: Բանն այն է, որ հայրը բարեկամական հարաբերություններ էր պահպանում թուրքական իշխանությունների հետ և «ջանասիրաբար *նման* (ընդգծումը մերն է – *Գ. Մ.*) ծառայություններ էր մատուցում թուրքական արքունիքին»[472]:

Ռուսական կայսրությունը՝ չցանկանալով իր ազդեցությունից դուրս թողնել Ղուբայի խանությունը, «առանձնահատուկ» վերաբերմունք էր ցուցաբերում նրա նկատմամբ: Այսպես, վերահսկողություն էր սահմանված Ղզլարի մաքսակետով Այսրկովկաս կամ Դաղստան տեղափոխվող ապրանքների, մասնավորապես, երկաթի նկատմամբ: Սակայն ստեղծված քաղաքական իրադրությունը հաշվի առնելով, 1790 թ. հոկտեմբերի 28-ին Աստրախանի նահանգապետը հանձնարարում է Ահմադ խանի նկատմամբ «առանձնահատուկ հարգանք» ցուցաբերել և թույլատրել Ղզլարի մաքսակետով 500 փութ երկաթի տեղափոխումը[473]:

---

[471] **Е. Козубский,** նշվ. աշխ., էջ 106: Թե՛ շամխալը, թե՛ Դերբենդի խանը բանագնացների միջոցով ռուսական իշխանություններին գրավոր «բացատրություններ են» տալիս կատարվածի մասին (տե՛ս Неизданные документы академика Буткова, – «Кавказский сборник», т. XX, с. 390-392):

[472] Неизданные документы академика Буткова, – «Кавказский сборник», т. XX, с. 392-393.

[473] РДО, с. 218.

1791 թ. մարտին Ահմադ խանը մահանում է, իսկ իշխանությունն անցնում է նրա 13-ամյա եղբորը՝ Շեյխ Ալի խանին: Վերջինս իր բանագնացին Գեորգիևսկ է ուղարկում և հավատարմություն հայտնում ռուսական գահին՝ բացասական վերաբերմունք ցուցաբերելով Աղա Մուհամմադ խանի նկատմամբ: Շեյխ Ալի խանը հաղորդում էր, որ թուրքերն իր օգնությունն են «խնդրել» և շարունակում են «խնդրել», սակայն ինքը չի պատրաստվում Ռուսական կայսրությունից բացի որևէ մեկին ծառայել[474]: Խանը ռուսական իշխանություններին է ուղարկում Ախալցխայի Սուլեյման փաշայի նամակը, որում իրեն առաջարկվում էր ճանաչել թուրքական հովանավորությունը[475]:

Բանակցությունները դադարում են բանագնացի վերահաս մահվան պատճառով, իսկ Շեյխ Ալի խանը չէր շտապում նոր պատվիրակություն ուղարկել: Պատճառն այն էր, որ Աղա Մուհամմադ խանը 1791 թ. բանակ էր դրել Մուշկիանբար կոչվող վայրում. «և կոչելն առ ինքն զիշխօղսն երկրացս. յորոց շատքն գնացին, և մերն և այլք հեռաւորք զընծայս յղեցին, և հպատակութիւն ցուցին, բայց ի Շուշւոյ Իբրահիմ խանէն», – գրում է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը[476]: Հրավերքը մերժում են նաև Շամախիի, Թալիշի, Շաքիի ու Գանձակի խաները՝ բավարարվելով միայն նվերներ ուղարկելով[477]: Ղուկաս Կարնեցու բնորոշմամբ՝ իշխող խաները «ի նոցանէ մօտակայքն գնացին առ նա, ի հիս անորքն մարտ և ընծայս յղրկեցին, հպատակութիւն ցուցանիլով»[478]: Սակայն Քերիմ խան Զենդի ազգական Լյութֆ Ալի խանը, «որ արդէն նուաճուած էր համարվում», 1791 թ. մեծ զորաբանակով շարժվում է Սպահան: Լուրն առնելով Աղա Մուհամմադ խանը

---

[474] Նույն տեղում, էջ 223:

[475] Նույն տեղում, էջ 392-393:

[476] Դիւան հայոց պատմութեան, Գիրք Թ, **Հովսէփ կաթողիկոս Արղութեան** (1778-1800), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1911, էջ 136: «Նայ, – վկայում էր Վարդան Օձնեցին, – նոյնպես կոչեաց զի Իբրահիմ խանն Ղարաբաղայ, բայց նա դաշնակից եղեալ ըստ Հերակլ արքային վրաց ու Մուստաֆայ խանին Թալիշայ, ոչ գնաց» (ՄՄ, ձեռ. 4331, էջ 75բ):

[477] ՄՄ, ձեռ. 4501, էջ 368բ:

[478] ՄՄ, ԿԴ, թղթ. 6, վավ. 166: Հմմ. Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ա-Բ (1780-1834), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1893, էջ 25: Տե՛ս նաև **Ք. Կոստիկյան,** Իրանի տերության պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ խանի 1795 թ. ղարաբաղյան արշավանքի մասին, – ՄՄԱԵԺ, հտ. XXVII, Եր., 2011, էջ 339:

շտապում է ընդառաջ՝ իր զորահրամանատարներին թողնելով Ատրպատականում[479] և «ոստիկան» կարգելով «ի Դաւրէժ՝ ի վրա Հայաստանի զՍուլէյման խան»[480]:

Շահի նկրտումներն Այսրկովկասի նկատմամբ այսքանով չեն սահմանափակվում և նա «ժամադիր եղեալ գալ ի գարնան ի վրա Իբրահիմ խանին և Հերակլ արքային վրա»[481]:

Խորհրդային պատմագիտության մեջ առկա է այն տեսակետը, թե 1787-1791 թթ. ռուս թուրքական պատերազմի ժամանակ ռուսական կառավարող շրջանակների ուշադրությունից դուրս էր մնացել «դաջարական վտանգը» [482] : Այն մասամբ է համապատասխանում իրականությանը, քանի որ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի նկատմամբ վարվող քաղաքական ուղեգիծը շարունակում էր մնալ որպես արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Եկատերինա Բ կայսրուհին 1791 թ. իշխան Գ. Պոտյոմկինին գրած նամակում ցավով էր նշում, որ Ամերիկայից ու Սիբիրից լուրերն ավելի շուտ են մայրաքաղաք հասնում, քան Կովկասից[483]: Ռուսական դիվանագիտության կարկառուն ներկայացուցիչ Գ. Պոտյոմկինի կովկասյան հարցերով առավել շատ, քան ռուսական արտաքին քաղաքականության եվրոպական ուղղությամբ հետաքրքված լինելու մասին էր նշում նրա ժամանակակից բրիտանացի դիվանագետ Հարրիսը[484]:

Նկատելի է, որ 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Կովկասը կրկին հայտնվել էր տեղեկատվական պատերազմի դաշտում: Այսպես, թուրքական իշխանություններն ակտիվացնում են լրտեսական ցանցի գործունեությունը Կովկասում [485] , իսկ կոմս Գ. Տոտլեբենի գլխավորությամբ 40000-անոց կովկասյան

---

[479] Նիւթեր ազգային պատմութեան համար, Երեւելի կազունք ի Պարսկաստան, Աշխատասիրութեամբ՝ **Գ. Շերմազանեանի,** Ռոստով (Դոնի վերայ), 1890, էջ 14:
[480] ՄՄ, ձեռ. 4331, էջ 76ա:
[481] Նույն տեղում: Հմմ. ՄՄ, ձեռ. 4501, էջ 368բ:
[482] **Օ. Маркова,** նշվ. աշխ., էջ 286:
[483] Императрица Екатерина II и кн. Потемкин, Подлинная переписка, – «Русская старина», 1876, т. XVII, декабрь, СПб., с. 646.
[484] Исторический очерк кавказских войн от их начала до присоединения Грузии, Под ред. **В. Потто**, Тифлис, 1899, с. 155.
[485] Տե՛ս Погром Батал-паши на берегах Кубани 30 сентября 1790 года, Журнал кампании по Кавказской линии покойного генерала от инфантерии и кавалера Ивана Ивановича Германа, Екатеринодар, 1896, с. 3: Հմմ. РДО, с. 213, 217.

կորպուսին պետք էր հակաթուրքական տրամադրություններ արթնացնել Արևելյան Վրաստանի, Գուրիայի, Մեգրելիայի, Իմերեթի և հարակից տարածքների ժողովուրդների շրջանում[486]:

1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի հաղթական ավարտից հետո Կովկասում Ռուսական կայսրության շահերին սպառնացող թուրքական վտանգը գործնականում բացառվեց: Նշելի է, որ պատերազմի ընթացքում ռուսական հրամանատարությունը տեղեկություններ ուներ կովկասյան ժողովուրդների՝ թուրքերին աջակցելու մասին[487]:

Ռուսաստանի քաղաքականությունն Այսկովկասի նկատմամբ արտահայտված էր Եկատերինա Բ կայսրուհու 1792-1793 թթ. հրամանագրերում, որտեղ հիմնական շեշտը դրվում էր տեղի խաներին և առաջնորդներին ռուսական ազդեցության ոլորտում պահելու վրա՝ նրանց շահագրգռելով առևտրային արտոնություններով և այլ «օգուտներով»[488]: Այսինքն՝ Ռուսական կայսրությունը բացառում էր ուժի կիրառումը խանությունների և իշխանությունների նկատմամբ: Ավելին, Ի. Գուդովիչին 1793 թ. ապրիլի 19-ին հասցեագրված կայսերական հրամանագրով նախատեսվում էր օգտվել Իրանի տերության քաղաքական անկայունությունից ու Կասպից ծովի ափամերձ ժողովուրդներին («առանց երկմտանքի») հովանավորության տակ առնել: Թուրքական գործոնը հաշվի առնելով՝ հանձնարարվում էր խուսափել ծովից հարավ-արևմուտք ապրող ժողովուրդներին ռուսական հովանավորության ներքո ընդունելուց: Նախատեսվում էր գրավել Բաքվից քիչ հեռու գտնվող ու «պարսկական խաներից» ոչ մեկին չպատկանող Կասպից ծովում գտնվող Ժիլոյ կղզին և այն ռուսական ռազմական ու առևտրական նավերի կայանատեղի դարձնել[489]:

---

[486] **А. Петров,** Война России с Турцией и польскими конфедерантами, 1769-1774 гг., т. I, год 1769, СПб., 1866, с. 116.
[487] Журнал кампании по Кавказской линии, покойного генерала от инфантерии и кавалера Ивана Ивановича Германа, 1790 года от 22 сентября по 30-е число, – «Отечественные записки», 1825, ч. XXIV, СПб., с. 353.
[488] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 286-287.
[489] РДО, с. 225-226.

Այսպիսով, Ռուսաստանը 1790-ական թթ. սկզբին ծրագրում էր իրականացնել *կայսրությանը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի միացումը խաղաղ ճանապարհով՝ պահպանելով Օսմանյան կայսրության զսպման ռազմավարության դրույթները:*

Այսրկովկասի խանությունները դուրս չէին մնում նաև Աղա Մուհամմադ խանի ռազմաքաղաքական ծրագրերից: Այսպես, Աղա Մուհամմադ խանն իր կովկասյան քաղաքականության մեջ հետևում էր ինչպես Ռուսական պետության, այնպես էլ Օսմանյան կայսրության քաղաքական ուղենիշին: Խանի մոտ խորհրդակցության ժամանակ (1793 թ.) որոշվում է չխզել «հին կապերը» Ռուսաստանի հետ[490]: Ի. Գուդովիչը հուսադրող հաղորդագրություն է ուղարկում Եկատերինա Բ կայսրուհուն այն մասին, որ Աղա Մուհամմադ խանը Էնզելիում գտնվող ռուսական վաճառականների նկատմամբ դժվարություններ չի ստեղծում[491]: Իրականում, Աղա Մուհամմադ խանը սպասողական դրության մեջ էր՝ ռուսական աջակցությունը ստանալու և իր դիրքերն Իրանում ամրապնդելու համար: Միաժամանակ Աղա Մուհամմադ խանը նամակագրության մեջ էր թուրքական իշխանությունների հետ, որոնք պատրաստ էին իրեն շահ ճանաչել, եթե կարողանար վերադարձնել Արևելյան Վրաստանը[492]: Ուստի, 1792 թ. հունվարի 12-ին Ռուսաստանի Պետական Խորհուրդը քննության է առնում Գիլանի Մուրթուզա Ղուլի խանի օգնության մասին խնդրանքը՝ ի հակակշիռ Իրանում օրեցօր ուժեղացող Աղա Մուհամմադ խանի[493]: Գիլանի, Աստրաբադի և Մազանդարանի Մուրթուզա Ղուլի խանը պատրաստ էր Ռուսաստանի տրամադրության տակ դնել մի շարք նահանգներ և Էնզելիի թերակղզին նավահանգստային քաղաքով, ռուսական վաճառականությանը ընդմիշտ ազատել հարկերից և այլն: Նա հույս ուներ ստանալ Կասպից ծովի ռուսական նավատորմի ռազմական օգնությունը և 300 զինվոր՝ Աղա Մուհամմադ խանի դեմ պայքարելու համար[494]: Ռուսաստանի «դանդաղկոտությունը»

---

[490] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 329.

[491] Материалы для истории Северного Кавказа 1781-1792 гг. – «Кавказский сборник», т. XVIII, Тифлис, 1897, с. 417.

[492] М. И. Кутузов. Документы, Под ред. **Л. Бескровного,** т. I, Москва, 1950, с. 247.

[493] Նրա մասին տե՛ս Жизнеописание Ага-Магомет-Хана Каджара, основателя ныне царствующей в Персии династии, с кратким обозрением последовавших по его смерти главнейших происшествий, СПб., 1835: Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանին կոչում էին «Աղա-Մամատ-Շահ, Ներքինի-Շահ և Չէզոք-Շահ» (**Մ. Բարխուտարյանց,** Պատմութիւն Աղուանից, հտ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 123):

[494] АГС, т. I, 1869, с. 790.

պայմանավորված էր Մուրթուզա Ղուլի խանի հետ հարաբերությունները չփչացնելու ցանկությամբ և քաղաքական հաշվարկով[495] ՝ անհրաժեշտության դեպքում նրան հակադրելով Աղա Մուհամմադ Ղաջարին:

1793 թ. ամռանը Սուլեյման խանը մեծ զորաբանակով ժամանում է Թավրիզ՝ ստանալու համար տեղի խաների հնազանդությունը: Նա Ղարաբաղի խանին խալաթ ու սուր է ուղարկում, և նրանց միջև «ձևական սիրալիր հարաբերություններ են հաստատվում»[496]: Սուլեյման խանի ժամանելուց հետո Սադեղ խան Շաղաղին, Նասիր խան Շահսևանը, Նախիջևանի Քյալբա՛լի խանը, Երևանի Մուհամմադ խանը, Գանձակի Ջավադ խանը, Մարաղայի Ահմադ խանը, Բայազետի կառավարիչ Իսհաղ Փաշան, «գալով Սուլեյման խանի մոտ, ծառայության են անցնում»[497]:

1793 թ. Այսրկովկասում ստեղծված իրավիճակից անհանգստացած, Ռուսաստանի Պետական Խորհրդում քննարկվում էր Բաքվի ու Դերբենդի խանությունների՝ ռուսական հովանավորության տակ անցնելու հարցը[498]: Դերբենդի ու Ղուբայի Շեյխ Ալի խանը՝ Այսրկովկասում իրանական ուժերի աշխուժացումից վախենալով, շտապում է ճանաչել ռուսական իշխանությունը: Նրա ներկայացուցիչ Միրզա Հասանը խանի անունից Գեորգիևսկում հավատարմության երդում է տալիս (1793 թ.)[499]: Սակայն երբ Ի. Գուդովիչը պահանջում է (հոկտեմբերի 9-ին), որ Շեյխ Ալի խանն անձամբ ստորագրի հավատարմության մասին փաստաթուղթը՝ խանը հրաժարվում է[500]: Շեյխ Ալի խանի պահվածքը քաղաքական դրդապատճառներ ուներ, քանի որ Սուլեյման խանն արդեն հեռացել էր Այսրկովկասից, իսկ վտանգը՝ չեզոքացվել: Խանը սահմանափակվում է միայն Ղուրանը համբուրելով ու հավատարմության նամակ ուղարկելով: Այնուամենայնիվ, 1794 թ. փետրվարի 20-ի Պետական Խորհրդում որոշվում է

---

[495] Տե՛ս **Պ. Չորանյան,** Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից, – ՊԲՀ, 1991, № 2:
[496] Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները **Ք. Կոստիկյանի,** Եր., 2000, էջ 67:
[497] Նույն տեղում, էջ 340:
[498] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս РДО, с. 225-226.
[499] АГС, т. 1, ч. II, с. 796.
[500] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 294.

բավարարել խանի պահանջը և հովանավորության գործընթացը կազմակերպելու նպատակով Սանկտ Պետերբուրգ է մեկնում խանի ներկայացուցիչը[501]:

Հավատարիմ լինելով խուսանավելու հայեցակարգին՝ Շիրվանի Մուստաֆա խանը, Ղարաբաղի Իբրահիմ խանը, Թարքիի շամխալը, Օմար խանը և դաղստանյան այլ տիրակալներ Շեյխ Ալի խանի պատվիրակի միջոցով 1794 թ. հպատակության փաստաթուղթ են ուղակվում Սելիմ Գ սուլթանին: Նրանք պատրաստ էին 1795 թ. սկզբին 200 հազարանոց զորքով գրավել Թերեք և Կուբան գետերի շրջակայքում գտնվող քաղաքներն ու շարժվել Ղրիմ: Խաները փաստում էին, որ հանուն կրոնի իրենք անգամ դրամի դիմաց թույլ չեն տվել ռուսական զորքին իրենց տարածքներով Ասիայի խորքերն անցնել [502] : Թեև Սելիմ Գ սուլթանը խոստանում էր նրանց աջակցել, իրականում ժամանակ էր շահում, իսկ կովկասյան տիրակալների բանագնացը ռուսներից որոշակի գումար ստանալով՝ մեկնում է Գեորգիևսկ:

Այսպիսով, պատմագիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, թե Ֆաթհ Ալի խանի ավանդական «ռուսամետ» քաղաքականությունը շարունակվում էր նրա հետնորդների օրոք[503] այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Ֆաթհ Ալի խանի մահից հետո Ղուբայի խանության քաղաքական դիրքերը խարխլվել էին՝ խոցելի դառնալով թե՛ այսրկովկասյան, թե՛ դաղստանյան տիրակալների համար: Պատահական չէր, որ Ֆաթհ Ալի խանի ենթակայության տակ գտնվող ժողովուրդները, ինչպես նաև Դաղստանի, Դերբենդի, Ղարաղայթաղի, Ղուբայի, Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Գանձակի, Թալիշի, և Մուղանի դաշտի, անգամ Գիլանի բնակիչներն, իրենց համաձայնությունն էին հայտնել խանի պաշտոնում Ֆաթհ Ալիի ավագ որդուն՝ Ահմադին տեսնելու համար[504]:

Ուստի, Իրանում Աղա Մուհամմադ խանի դիրքերի ամրապնդումը հարկադրում էր Ղուբայի խանին «ռուսամետ» քաղաքականություն վարել: Շեյխ Ալի խանը 1795 թ. սկզբին իր հնազանդությունն էր հայտնում Աղա Մուհամմադ խանին, քանի որ վերջինս հաշվեհարդար էր տեսել Քերմանի բնակիչների հետ (1794 թ.), գերել էր Լութֆ Ալի

[501] АГС, т. 1, ч. II, с. 796-797.
[502] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 298-299.
[503] **Дж. Мустафаев,** Северные ханства Азербайджана и Россия (конец XVIII–начало XIX в.), Баку, 1989, с. 39.
[504] РДО, с. 213.

խանին ու «շահ կոչեցեալ» իրեն [505] «և սկսալ հարստութիւն Ազգին Ղաջարաց ի Պարսկաստան»[506]: Նշելի է, որ թեև Աղա Մուհամմադ խանը 1796 թ. մայիսին իրեն շահ էր հռչակել, սակայն փաստացի նրա իշխանությունն Իրանում հաստատվել էր դեռևս 1780-ական թթ.: Շիրազի անկումից հետո մեծ տերությունները դիվանագիտական հարաբերություններ էին հաստատում Աղա Մուհամմադ խանի հետ՝ Ղաջարներին համարելով իրանական գահի միակ հնարավոր հավակնորդներ[507]:

Ուստի, երբ 1795 թ. սկզբին Իրանի տերության մեծ մասը նվաճված էր, Շեյխ Ալի խանն ապրիլին մեծ շուքով ընդունում է շահի պատվիրակին և իր ներկայացուցիչ Խադիր բեկին մեծամեծ նվերներով ուղարկում Իրան[508]: Վերջապես, խանը չէր մոռանում նաև իր արտաքին քաղաքականության ռուսական ուղղության մասին՝ առաջ քաշելով ռուսական հովանավորությունը ճանաչելու իր պայմանները: Պատմագրության այն դրույթը, թե Շեյխ Ալի խանի «անկայուն» քաղաքականության հետևանքով Ղուբայի խանությունը չընդունվեց ռուսական հովանու ներքո [509] ՝ չի համապատասխանում իրականությանը: Ինչպես Այսրկովկասի մյուս տիրակալները, այնպես էլ Ղուբայի խանը, 1790-ական թթ. երկրորդ կեսին կիսանկախ կարգավիճակը պահպանելու համար կրկին դիմում էին Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև *խուսանավելու քաղաքականությանը*: Այն լուրջ փորձության էր ենթարկվել 1795 թ., երբ Աղա Մուհամմադ խանը՝ վերջնականապես ամրապնդելով դիրքերն Իրանում, հնազանդություն էր պահանջում Ատրպատականի, Այսրկովկասի և Դաղստանի տիրակալներից:

Միավորված իրանական պետության փաստը լուրջ անհանգստություն էր առաջացրել ռուսական կառավարող շրջանակների մեջ: Ռուսական կայսրությունը գործնական քայլերի դիմելով, ստիպված էր ակտիվացնել իր քաղաքականությունը

---

[505] Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, **Ղուկաս կաթողիկոս** (1780-1800), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1899, էջ 633: 1795 թ. դաղստանյան աղբյուրները հիշատակում են որպես «ախտա-խանի» Թիֆլիս, Շուշի և Շամախի կատարած ավերիչ արշավանքի տարեթիվ (**Т. Айтберов,** նշվ. աշխ., էջ 145):

[506] ՄՄ, ձեռ. 4331, էջ 79ա:

[507] Очерки новой истории Ирана (XIX-начало XXв.), Отв. ред. **Л. М. Кулагина,** Изд-во Наука, 1978, с. 10-11.

[508] **Е. Козубский,** նշվ. աշխ., էջ 107:

[509] **Дж. Мустафаев,** նշվ. աշխ., էջ 41:

խանությունների նկատմամբ: Սակայն, երբ Բաքվի Հուսեյն Ղուլի խանը ռուսական հովանավորության մասին պայմանագիրը կնքելու նպատակով Գեորգիևսկ է ժամանում և Ի. Գուդովիչից խնդրում է իրանական հնարավոր ագրեսիայի դեպքում ռազմական նավատորմ ուղարկել, հստակ պատասխան չի ստանում: Իրականում մի կողմից Ռուսաստանը ձգտում էր ազդեցության ոլորտից դուրս չթողնել Դաղստանի և Այսրկովկասի տիրույթները, մյուս կողմից՝ չէր շտապում գործնականում աջակցել նրանց: Եկատերինա Բ կայսրուհին Ի. Գուդովիչին 1795 թ. սեպտեմբերի 4-ին տրված հանձնարարականում պահանջում էր մերձկասպյան ժողովուրդների շրջանում պահպանել ռուսական գահին հավատարիմ տրամադրություններն ու նրանց «լռությունը»[510]:

Աղա Մուհամմադ խանը 1795 թ. Այսրկովկաս արշավելու նախօրյակին զորքը բաժանել էր երեք մասի[511]: Զորքի մի մասը Մուղանի դաշտով ուղարկել էր Շիրվան և Դաղստան (աջ ուղղություն), մյուսն իր եղբայրներ Ալիղուլի և Ջաֆարղուլի խաների գլխավորությամբ՝ դեպի Երևան (ձախ ուղղություն): Վերջիններս մեծ գումար էին ստացել Հայոց կաթողիկոսից[512]: Երրորդ զորաբանակը նրա առաջնորդությամբ շարժվում էր Ղարաբաղի խանություն (Շուշի)[513]: Շուրջ մեկ ամիս Շուշիի ամրոցն անհաջող պաշարելուց հետո Աղա Մուհամմադ խանը հեռանում է դեպի Խաթունարխ բնակավայր[514]: Վրացական իշխանություններին հաջողվել էր ձեռք բերել ավար խանին ուղղված Աղա Մուհամմադ խանի նամակը, որում առաջարկվում էր Կախեթի կողմից հարձակվել Արևելյան Վրաստանի վրա[515]: Զուգահեռաբար Աղա Մուհամմադ խանը

---

[510] **Н. Дубровин,** История войны и владычества русских на Кавказе, ч. III, СПб., 1886, с. 22.

[511] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 332. Հմմ. **Н. Дубровин,** Георгий XII последний царь Грузии о присоединение ее к России. СПб., 1867, с. 12.

[512] АВПР, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184: Հմմ. **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 332; **Н. Дубровин,** Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 13.

[513] АВПР, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184, об: Հմմ. **R. Gavin, G. Hambly,** Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty; Жизнеописание Ага-Магомет-Хана Каджара, с. 20; **Мирза Адигезал-бек,** նշվ. աշխ., էջ 27:

[514] АВПР, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184, с. 2.

[515] АВПР, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184, об.

Արևելյան Վրաստանի դեմ էր ուղղել նաև Ճարի լեզգիներին՝ յուրաքանչյուրին առաջարկելով 100 ռուբլի[516]:

Փաստորեն, ռուսական իշխանությունները հավաստի տեղեկություններ ունեին դեպի Թիֆլիս նախապատրաստվող արշավանքի մասին, սակայն գործնական քայլեր չէին իրականացնում իրավիճակը փրկելու համար:

Այսպիսով, Արևելյան Վրաստանը ռուսական զինված ուժերի հեռանալուց (1787 թ.) գրեթե մեկ տասնամյակ անց միայնակ ու անպաշտպան էր մնացել իրանական վտանգի առաջ, իսկ շրջակա մուսուլմանական խանությունները (բացառությամբ Ղարաբաղի) վախից ճանաչել էին Իրանի տերության տիրակալի իշխանությունը[517]: Իրանական մի քանի տասնյակ հազարի հասնող զորքի դեմ Հերակլ Բ արքայի տրամադրության տակ կար 2700 զինվոր և շուրջ 2000-ն էլ Իմերեթի Սողոմոն Բ-ի օգնական ուժերն էին[518]: Աղա Մուհամմադ խանի՝ Թիֆլիսի ավերումից [519] հետո Ռուսաստանում Այսրկովկաս արշավելու քաղաքական որոշում է կայացվում, քանի որ պետությանը ձեռնոց էր նետված և անհրաժեշտ էր վերականգնել ոտնահարված հեղինակությունը[520]:

Այսրկովկասյան իշխանություններից հակահիրանական կոալիցիա կազմելու առաքելությամբ 1795 թ. հոկտեմբերի 28-ին Դերբենդ է ժամանում Ի. Գուդովիչի ներկայացուցիչը: Երբ հայտնի է դառնում, որ Ռուսական կայսրությունը շահին պատժելու համար պատրաստվում է զորք ուղարկել, կովկասյան տիրակալները հնազանդություն են հայտնում ռուսական գահին՝ հրաժարվելով Աղա Մուհամմադ խանի նկատմամբ ունեցած «քաղաքական համակրանքից»: Դերբենդում շտապում են

---

[516] АВПР, ф. Сношения России с Грузией, д. 455, л. 184, об. Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. I, 1891, с. 93-94.

[517] **В. Потто,** Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, т. I, вып. I, СПб., 1887 с. 271.

[518] **Теймураз,** Взятие Тифлиса Ага-Магомед ханом в 1795 году, Тифлис, 1895, с. 6.

[519] Թիֆլիսի ավերման մասին մանրամասն տե՛ս Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ժ, Մանր մատենագիրք (ԺԵ-ԺԹ դդ.), Հրատարակեց՝ **Գիւտ քահ. Աղանեանց,** Թիֆլիս, 1912, էջ 353-374: Աղա Մուհամմադ խանը Թիֆլիսից տանում է մի քանի զինագործների, որոնց Թեհրանում ծառայության է նշանակում՝ բարձր վարձատրություն սահմանելով (**Теймураз,** Взятие Тифлиса Ага-Магомед ханом в 1795 году, с. 13-14): Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը՝ Թիֆլիսի ավերման մասին լսելով, նոյեմբերի 27-ին Գրիգորիոպոլիսից նամակ է գրում «վշտակիր թագաւոր» Հերակլ Բ-ին (ՄՄ, ձեռ. 2951, էջ 82բ-83): Նա շեշտում էր, որ նախքան աղետը ինքը շատերին է գրել՝ տեղեկացնելով վերահաս սպառնալիքի մասին, բայց նրանք չցանկացան հավատալ ռուսական գահի նկատմամբ վրացական իշխանական տան անկեղծությանը: Տե՛ս Письма архиепископа Иосифа Аргутинского о Грузии (1795-1796 гг.), – «Кавказская старина», 1872, год I, № 2, Тифлис, с. 29.

[520] Հայ ժողովրդի պատմություն, հտ. Դ, **Պատ.** խմբագիր՝ **Լ. Խաչիկյան**, Եր., 1972, էջ 238:

բացատրել, որ Թիֆլիսի գրավման առիթով իրենք հարկադրված են եղել տոնախմբություն կազմակերպել[521], քանի որ շահի պատվիրակն այդ ժամանակ գտնվում էր Ղուբայում: Ի դեպ, այդ առիթով տոնախմբություններ էին կազմակերպվել նաև Շաքիում և Բաքվում, իսկ Աղա Մուհամմադ խանին շնորհավորական ուղերձներ էին ուղարկվել:

Միաժամանակ Շեյխ Ալի խանը շարունակում էր խուսանավելու քաղաքականությունը՝ թանկարժեք նվերներ պատրաստելով շահի համար[522], քանի որ նրանից ընդունել էր Շիրվանի նայիբի կոչումը[523]: Ավելին, Դերբենդի խանը ձերբակալում է ռուսական հովանավորությունը ստանալու խնդրանքով Աստրախան ուղևորվող Թալիշի Միր-Մուստաֆա խանի բանագնացին: Թալիշի խանին միայն ամիսներ անց է հաջողվում Աստրախան ներկայացուցիչ ուղարկել:

Այսպիսով, 1774-1791 թթ. ընթացքում Ռուսաստանին հաջողվել էր հաստատվել Մերձսևծովյան տարածքում, լուծել Ղրիմի հիմնախնդիրը և ակտիվացնել այսրկովկասյան քաղաքականությունը: Հետևաբար, Իրանում կենտրոնական իշխանության բացակայությունը համապատասխանում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերին: Այդ իրավիճակը հնարավորություն կտար խաղաղ ճանապարհով իրականացնել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի միացումը կայսրությանը: Հակառակ դեպքում, Աղա Մուհամմադ խանը ձգտելու էր Նադիր շահի օրինակով վերականգնել Սեֆյան պետության սահմանները, քանի որ Կովկասից հարավ ընկած տարածքները Իրանական պետության սկզբունքորեն անբաժանելի հատվածներն էին համարվում[524]:

Այսպիսով, Աղա Մուհամմադ խանին հաջողվեց Նադիր շահի մեթոդներով՝ ռազմական միջամտությամբ, Իրանի տերության ազդեցության ոլորտ վերադարձնել

---

[521] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 342.

[522] **Е.Козубский,** նշվ. աշխ., էջ 107:

[523] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 332; **Н. Дубровин,** Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 11. Ավարայի Օմար (Ումմա) խանին առաջարկվել էր Դաղստանի սարդարի պաշտոնը (**П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 333):

[524] **J. Perry,** The Zand Dynasty, p. 95.

Արաքսից հյուսիս ընկած տարածքները, որոնք Աֆշարների և Զենդերի օրոք, շուրջ 40 տարի Իրանի տերության գերիշխանությունից դուրս էին մնացել:

Աղա Մուհամմադ խանի՝ Արևելյան Վրաստան ներխուժումը մարտահրավեր էր ռուսական կայսրությանը: Դա «մեծ հարված» հասցրեց «ռուսաց արևելից շահերին» և «բոլորովին վայր ձգեց» Ռուսական կայսրության «վարկը» այսրկովկասյան խանությունների շրջանում[525]:

Խաների Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների նկատմամբ որդեգրած *խուսանավելու հայեցակարգը* 1795 թվականին կորցրել էր իր կենսունակությունը և Հյուսիս-արևելյան Այսրկովկասը վերադարձրել էր Իրանի տերության պետական համակարգ: Ռուսաստանը ստիպված էր վերանայել իր կովկասյան քաղաքականության տարածաշրջանային հայեցակարգը: Ուժերի հավասարակշռությունը վերականգնելու համար նա Կուր-արաքսյան միջագետքի տարածքը *զենքի ուժով նվաճելու ճանապարհով* պետք է ընթանար:

3.2 Վ. ԶՈՒԲՈՎԻ 1796 Թ. ԿԱՍՊԻԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1790-ական թթ. Ռուսական կայսրությունը երկու ռուս-թուրքական պատերազմներում հաղթելով և Մերձսևծովյան տարածքներում հաստատվելով՝ հայացքն ուղղել էր Հյուսիս-արևելյան Այսրկովկաս և Իրան[526]: Հետաքրքրական է, որ XVIII դ. վերջին ռուսական դիվանագիտության մեջ պետության անվտանգության առումով կասկածի տակ էր դրվում Ղրիմի հարցի կարևորությունը, ի տարբերություն Բալթիկ ծովի հիմնախնդրի: Լոնդոնում գտնվող ռուսական դեսպան Ս. Վորոնցովը 1790 թ. Մ. Վորոնցովին գրում էր, որ ինքը 30 Ղրիմ կտար Հելսինգֆորսի և Սվեաբորգի համար, առանց որոնց Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքին վտանգ էր

---

[525] **Ռաֆֆի,** Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հտ. 10, Եր., 1959, էջ 270: Հմմ. **Լեո,** նշվ. աշխ., էջ 391:

[526] Տե՛ս **Պ. Չորանյան,** Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ), – ՊԲՀ, 1991, № 2, էջ 55-65:

սպառնում[527]: Սակայն Ռուսաստանում բարձր էին գնահատում Օսմանյան կայսրության հետ ձեռք բերված խաղաղությունը, ինչը «պարսկական գործերին» անդրադառնալու հնարավորություն էր տալիս: Եկատերինա Բ կայսրուհին բացառում էր «Հունական կայսրության» (իմա՝ «Հունական նախագիծ») վերածնման գաղափարը, քանի որ Ռուսական կայսրության կովկասյան քաղաքականության համար օրակարգային էին Իրանում և Այսրկովկասում ծավալվող իրադարձությունները: Բարոն Գրիմին գրած 1795 թ. սեպտեմբերի 12-ի նամակում նա նշում էր, որ Սելիմ Գ սուլթանին «հրահրում են» (խոսքը եվրոպական գործընկերների մասին է) պատերազմ սկսել ռուսների դեմ և շուրջ 600 թուրք զինվոր եվրոպական տիպի զորավարժանքներ են անցկացնում, իսկ Դանուբի ափերին 60 հազարանոց բանակ է կանգնած, և քանի որ առաջին անգամ չէ, ուստի, «կգա ժամանակն ու խելքի կգան», – եզրափակում էր կայսրուհին[528]:

Իրանում տիրող քաղաքական իրավիճակը պատկերավոր է բնութագրել կոմս Ա. Վորոնցովը կոմս Ս. Վորոնցովին 1796 թ. ապրիլին գրած նամակում՝ նշելով, որ Իրանը ոչնչացնում էր ինքն իրեն[529]: Մինչդեռ Աղա Մուհամմադ խանը նպատակադրվել էր վերականգնել Սեֆյանների օրոք գոյություն ունեցող պետական սահմանները:

Եկատերինա Բ կայսրուհու 1796 թ. փետրվարի 19-ի Վ. Զուբովին՝ («զոր ղզլայաղ կոչէին (ոսկեռտն)»[530]), տված հրամանագրով Այսրկովկաս արշավելու քաղաքական որոշում էր կայացվում: Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունների պատմությունը թևակոխում է չորրորդ փուլ: Փաստաթուղթը բացահայտում էր ռուսական այսրկովկասյան քաղաքականության նոր ուղենիշերը: Ռուսական կայսրությունը հստակեցնում էր դիրքորոշումը խաների նկատմամբ՝ նրանց բաժանելով «բարի մտադրություններ» ունեցողների (Բաքվի, Թալիշի)[531] և մյուսների: Կայսրուհին Դերբենդի Շեյխ Ալի խանին անվանում էր

[527] Архив князя Воронцова, кн. IX, Бумаги графа Семена Романовича Воронцова, ч. II, 1876, с. 173-174.
[528] Новооткрытые письма императрицы Екатерины Второй к барону Гримму, 1787-1796 гг., – «Русский архив», 1878, т. X, Москва, с. 222.
[529] Архив князя Воронцова, кн. XXV. Бумаги разного содержания, 1882, с. 163.
[530] ՄՄ, ձեռ. 4331, էջ 93ա:
[531] РДО, с. 228.

«թեթևամիտ ու անհետևողական»՝ հանձնարարելով հօգուտ Ռուսական կայսրության շահերի նրան հոր քաղաքական ուղի «վերադարձնել»[532]:

Հերակլ Բ արքային քաղաքական գործողությունների ազատություն էր տրվում սեփական ուժերով Երևանի և «ադերբիջանական» մյուս խաներին հնազանդության բերելու համար: Երևանի խանության աշխարհագրական դիրքը հաշվի առնելով՝ ռուսական իշխանությունները զերծ էին մնում Երևանի խանի նկատմամբ պատժիչ գործողություններից[533]: Նկատելի է, որ Երևանի բերդը Այսրկովկասի ռազմավարական ու ռազմաքաղաքական ուժեղագույն ամրոցներից մեկ էր: Երևանի բերդին միանձնյա տիրող աշխարհաքաղաքական ուժը (Օսմանյան կամ Ռուսական կայսրությունը) հնարավորություն էր ստանալու իշխել Թիֆլիս – Բաքու – Լենքորան – Երևան ռազմաքաղաքական քառանկյունուն:

Կովկասյան կորպուսի ռազմական գործողությունները Կուր գետով մինչև Գանձակ և Ղարաբաղ էին տարածվելու՝ շրջանցելով թուրքական սահմանային տարածքները: Թե՛ ցամաքային, թե՛ ծովային գործողություններում առանձնահատուկ դերակատարում էր ստանում պարենի և ռազմամթերքի համար պահեստ համարվող Բաքուն: Մուրթուզա Ղուլի խանին Իրանում իշխանության բերելու և Աստրաբադում ու Էնզելիում հենակետ կառուցելու նպատակով աշնան սկզբին արշավանք էր կազմակերպվելու դեպի Գիլան[534]:

Անհրաժեշտ էր Հերակլ Բ արքային, Շիրվանի, Ղարաբաղի խաներին, մելիքներին ու դաղստանյան մյուս տիրակալներին նամակներ ուղարկել և բացատրել, որ ռուսական զորքի ներխուժումը տարածաշրջան ազատագրական նպատակներ ուներ: Դերբենդի, Բաքվի, Թալիշի և Ղարաբաղի խաներին Մուրթուզա Ղուլի խանի անունից ևս նամակներ էին ուղարկվելու: Դրանով Ռուսական կայսրությունը փորձում էր կովկասյան տիրակալների մոտ ընդունելի դարձնել Իրանի տերության գահի համար իր

---

[532] Նույն տեղում, էջ 229:

[533] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 332; **Н. Дубровин,** Георгий XII последний царь Грузии и присоединение ее к России, с. 33-34.

[534] РДО, с. 231. Հմմ. АКАК, т. VI, ч. II, 1875, с. 816; **Х. Ибрагимбейли,** Россия и Азербайджан в первой трети XIX века (Из военно-политической истории), Москва, 1969, с. 55. Աստրաբադը կարող էր դառնալ Կասպից ծովով Հնդկաստանի հետ կատարվող առևտրի խորացման համար լավագույն նավահանգիստ (Русско-индийские отношения в XIX в. Сборник архивных документов и материалов, Отв. ред. **П. М. Шаститко,** Москва, 1997, с. 38).

նախընտրելի թեկնածուին՝ Մուրթուզա Ղուլի խանին: Ի դեպ, Մուրթուզա Ղուլի խանի մասին իր նամակներում մեծ հիացմունքով էր խոսում Եկատերինա Բ կայսրուհին՝ ընդգծելով նրա բնածին խելքը, բարեկրթությունը և սերը արվեստի նկատմամբ[535]:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ 1795 թվականից հետո Այսրկովկասի և Դաղստանի ներքին զարգացումներին Ռուսական կայսրության միջամտությունը *կանխատեսելի և հավասարակշռված տարածաշրջան ունենալու ցանկությամբ էր* պայմանավորված: Նպատակին հասնելու համար ռուսական իշխանությունները չէին բացառում նաև ռազմական միջամտությունը՝ «անհնազանդներին ու կամակորներին պատժելու» միջոցով: Վ. Զուբովին ուղղված նամակում Եկատերինա Բ կայսրուհին հանձնարարում էր խնայել իրեն և զորքը՝ Շեյխ Ալի խանին երեխա անվանելով, որն իրեն որպես «չարաճճի մարդ էր» ցուցադրում[536]: Ռուսական զինված ուժերին իրավունք էր վերապահված նրանց հեռացնել քաղաքներից ու շրջաններից, ապա Աստրախան ուղարկել (փաստացի՝ արտաքսել), իսկ «ջանասեր և հավատարիմ» խաներին և տիրակալներին՝ վերականգնել իրենց տիրույթներում: Ավելին, վերջիններս ռուսական գահին հետագա ծառայությունների համար կարող էին պարգևատրվել «կամակորների և անհնազանդների» հաշվին[537]: Դերբենդի գրավումից հետո քաղաքի բեկերի որոշ մասին ռուսական հրամանատրությունը տեղափոխում է Աստրախան[538]:

1796 թ. մարտին ռուսական իշխանությունները հրապարակում են «Ռուսական զորքերի մուտքը Պարսկաստանի սահմաններ՝ այդ պետությունում իշխանության զավթիչ Աղա Մուհամմադ խանի դեմ» վերտառությամբ հրովարտակը[539]: Փաստաթղթից պարզ է դառնում, որ ռուսական իշխանությունները պատմական անցյալին տուրք տալով, Հյուսիս-արևելյան Այսրկովկասի տարածքը որպես իրանական պետության մաս էին ընդունում: Որպես արշավանք սկսելու պաշտոնական պատճառ, նշվում էր Աղա

---

[535]Սանկտ Պետերբուրգում եղած ժամանակ Մուրթուզա Ղուլի խանը մեկ ամսվա մեջ հասցրել էր երեք անգամ այցելել Էրմիտաժ՝ օրական 3-4 ժամ անցկացնելով արվեստանոցներում՝ հետևելով վարպետների աշխատանքին (տե՛ս Новооткрытые письма императрицы Екатерины Второй к барону Гримму, с. 231):

[536] Письма и записочки Екатерины Великой к графу Валерьяну Александровичу Зубову (1789-1796) – «Русский архив», 1886, т. III, СПб., с. 273.

[537] РДО, с. 231.

[538] **А. Бакиханов,** նշվ. աշխ. էջ 144:

[539] Սույն հրովարտակի ամբողջական տեքստը տե՛ս ПСЗРИ, т. XXIII, с. 876.

Մուհամմադ խանի՝ Արևելյան Վրաստան ներխուժումը[540]: Հրովարտակում Աղա Մուհամմադ Ղաջարին Իրանում «իշխանության զավթող» էին կոչում և՝ կասկածի տակ առնում նրա օրինականության հարցը: Ռուսական կողմը այսրկովկասյան խաներից պահանջում էր չհամագործակցել «գիշատիչ» Աղա Մուհամմադ խանի հետ և սպառնում էր նրանց ռուսական զահի թշնամիներ հայտարարել[541]: Այսպիսով, առկա էին բոլոր նախադրյալներն Այսրկովկաս ռազմական ներխուժում իրականացնելու համար:

Հետևաբար, կարող ենք փաստել, որ 1790-ական թթ. առաջին կեսերին Արևելյան Վրաստանի ճակատագրի նկատմամբ ռուսական կառավարող շրջանակների «քաղաքական անտարբերությունը» տարածաշրջանում գործողությունների ազատություն ստանալու ձգտումով էր պայմանավորված: Ի դեպ, Արևելյան Վրաստանին օգնություն տրամադրելու մասին սեպտեմբերի 4-ի հրամանը մայրաքաղաքից Կովկաս միայն հոկտեմբերի 1-ին է հասնում[542]: Այսպիսով, 1796 թ. մարտի 26-ին Ղզլար է ժամանում ռուսական զորքի հրամանատար Վ. Զուբովը և գեներալ-անշեֆ Ի. Գուդովիչից ընդունում հրամանատարությունը[543]:

Սակայն ռուսական զորքի մուտքը տարածաշրջան միանշանակ չընդունվեց նրա բնակիչների շրջանում: XVIII դ. ռուսական զորքի և բարձրաստիճան հրամանատարության համար Այսրկովկասը աշխարհագրական և էթնոքաղաքական, լեզվա-մշակութային առումներով դեռևս «անառիկ» էր մնում: Ռուսական իշխանություններն այդ հանգամանքը արշավանքից առաջ հաշվի էին առել: 1796 թ. փետրվարի 19-ին Վ. Զուբովին տրված հանձնարարականում նախատեսվում էր Այսրկովկասի բնակիչների շրջանում հայերեն, վրացերեն, պարսկերեն բացատրական նամակներ կազմել և նշել Ռուսական կայսրության «բարի նպատակները»՝ Աղա Մուհամմադ խանի դաժանություններից այդ ժողովուրդներին ազատագրելու

---

[540] Աղա Մուհամմադի Վրաստան կատարած արշավանքի մասին տե՛ս Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), Աշխատասիրությամբ՝ **Ռ. Տ. Տիտանյանի,** Եր., 1981; ՄՄ, ԿԴ, թղթ. 18, վավ. 195, էջ 16:

[541] ПСЗРИ, т. XXIII, с. 878.

[542] Очерки истории СССР. Период феодализма. Россия во второй половине XVIII в., Под ред. **А. И. Барановича, Б. Б. Кафенгауза,** Москва, 1956, с. 734-735.

[543] Կասպիական արշավանքի ընթացքում ռուսական զորքի կազմի մասին տե՛ս Хроника кавказских войск, в двух частях, Составил генерал-майор в отставке **А. Л. Гизетти,** Тифлис, 1896, с. 14.

ցանկությունը: Խաղաղ բնակչության նկատմամբ ռուսական զորքերը պետք է արդարադատություն, հավասարություն, սեփականության անձեռնմխելիության և դավանանքի ազատության սկզբունքների պահպանում ցուցաբերեին[544]:

Այնուամենայիվ, 1796 թ. մայիսին Այսրկովկասի ժողովուրդներին ուղղված Վ. Զուբովի ուղերձից պարզ էր դառնում, որ ռուսները արշավանքի հենց սկզբից տարածաշրջանի ժողովուրդների ոչ բարեկամական վերաբերմունքին էին հանդիպել: Վ. Զուբովի խոսքերով, ռուսական զորքերը Այսրկովկաս էին եկել նրանց պաշտպանելու նպատակով: Ավելին, նա հայտարարում էր, որ ինքը տեղի ժողովուրդներից նման վերաբերմունք չի սպասում, այլ խոստանում է պաշտպանել նրանց «ընդհանուր թշնամու» (իմա՝ Աղա Մուհամմադ խան) ոտնձգություններից և ազատել նրա կեղեքող բռնակալական լծից[545]: Փաստաթղթում նկատելի էր այն միտքը, թե Իրանի տերության տիրակալը գերագույն իշխանությունը «զավթել էր» խաբեությամբ, խարդավանքով և դաժանությամբ:

Վ. Զուբովի Այսրկովկասի ժողովուրդներին ուղղած շրջաբերականը որոշ իմաստով հակադարձում է խորհրդային պատմագիտության այն տեսակետին, թե խանությունների ժողովուրդները ցնծությամբ էին դիմավորում ռուսական զորքերին[546] և նրանց շրջանում մեծանում էր «ռուսական կողմնորոշումը»[547]: Այսպիսով, խաների «ռուսամետ» դիրքորոշումը քաղաքական պահի թելադրանքով էր պայմանավորված: Դերբենդի պաշարման ժամանակ մի խումբ հայեր հպատակություն ստանալու խնդրանքով դիմում են ռուսական հրամանատարությանը և նամակների մի կապոց են փոխանցում նրանց: Դրանցում Շեյխ Ալի խանը Ղազիկումուխի խանից, լեզգիներից և

---

[544] АРО, с. 420. Հմմ. РДО, с. 229; **Н. Дубровин,** Поход графа В. А. Зубова в Персию в 1796 году, – «Военный сборник», 1874, февраль, № 2, с. 229.

[545] АРО, с. 431.

[546] **Дж. Мустафаев,** նշվ. աշխ., էջ 49: Իհարկե, խոսքն այստեղ հայ ազգաբնակչության մասին չէ, որոնք մեծ ոգևորությամբ սպասում էին ռուսական զորքին՝ նրանց վերագրելով ազատարարի համբավ (АРО, с. 433-434, 435):

[547] Присоединение Азербайджана к России и его прогрессивные последствия в области экономики и культуры (XIX – начало XX вв.), Под ред. **А. Гулиева, В. Мочалова,** Баку, 1955, с. 19.

դաղստանյան այլ տիրակալներից օգնություն էր խնդրում՝ փոխարենը ստրուկներ և պարգևատրություն առաջարկելով[548]:

Այսրկովկասյան քաղաքականությունն ակտիվացնելով ռուսական իշխանությունները փորձում էին տարածաշրջանում հակահիրանական կոալիցիա ստեղծել: 1795 թ. հոկտեմբերին Ի. Գուդովիչը Շեյխ Ալի խանին առաջարկել էր միավորվել Դաղստանի տիրակալների հետ և դիմադրել Աղա Մուհամմադ խանին[549]: Սակայն Դերբենդի խանը հակված էր համագործակցել Իրանի տերության տիրակալի հետ: Նա փակվում է քաղաքում և դիմադրության պատրաստվում: «...Զուբով մեծաւ բազմութեամբ ելանէ ի Ղզլար և դիմէ ի Դրբանդ և Շխալի խան որդի Ֆաթալի խանին ընդդիմացեալ յարդարէ զպատերազմ», – գրում է ժամանակակիցը[550]: Շեյխ Ալի խանն ու նրան աջակցող դաղստանյան տիրակալներն իրենց այդ քայլը քաղաքն Աղա Մուհամմադ խանի ավերման վտանգով էին բացատրում: Խանը ձերբակալում է հակահիրանական կոալիցիա ստեղծելու նպատակով Դերբենդ ժամանած ռուսական սպային և ուցմիի սպառնացող նամակից հետո միայն (ռուսական զորքերն այդ պահին գտնվում էին Ղարաղայթաղում) ազատ է արձակում: Ո՛չ Իրանի տերությունից, ո՛չ Օսմանյան կայսրությունից ռազմական օգնություն չստանալով՝ Շեյխ Ալի խանը մայիսի 10-ին Դերբենդը հանձնում է ռուսներին, որոնց զորքին մեծ աջակցություն էր ցուցաբերում քաղաքի հայ բնակչությունը[551]: Դերբենդի գրավման համար գեներալ Վ. Զուբովը ս. Գեորգիի II աստիճանի շքանշանի է արժանանում[552], իսկ որոշ ժամանակ անց Դերբենդը պաշտոնապես Ռուսական կայսրությանը միացված է հայտարարվում[553]:

Դերբենդի անկումը խուճապ էր առաջացրել տարածաշրջանի խաների և տիրակալների շրջանում: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հունիսի 4-ին Ղուբայի, իսկ հունիսի 13-ին Բաքվի խաները բանալիներն ինքնակամ հանձնում են

---

[548] Историческое известие о походе российских войск в 1796 году в Дагестан и Персию, под командою графа Валериана Александровича Зубова, – «Отечественные записки», 1827, ч. XXXI, СПб., с. 147.

[549] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 350.

[550] Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), Աշխատասիրությամբ՝ **Ռ. Տ. Տիտանյանի,** Եր., 1981, էջ 160:

[551] Տե՛ս ՄՄ, ձեռ. 2951, էջ 104բ:

[552] Сборник сведений о геогриевских кавалерах и боевых знаках отличий кавказских войск, составлено по архивным документам А. Гизетти, Под ред. **В. Потто,** Тифлис, 1901, с. 4.

[553] **В. Потто,** Кавказская война в отдельных очерках, эпизодах и легендах, с. 289.

ռուսական հրամանատարությանը: Միաժամանակ ռուսական զորքը հունիսին մոտենում է Հին Շամախիին [554] և Կուրտ բուլաղի մոտ գտնվող ճամբարից բանակցություններ է վարում Շամախիի, Շաքիի, Ղարաբաղի և Գանձակի խաների հետ: Ռուսական ռազմական ճամբարից Հ. Արղությանը 1796 թ. սեպտեմբերի 14-ին նամակ է գրում Հերակլ Բ արքային՝ խնդրելով հավաստիացնել խաներին, որ ռուսական իշխանությունները նպատակ չունեն իրենց զրկել իշխանությունից[555]:

Այսրկովկասյան խաների տարակուսանքն ու վախը ռուսական զորքերի նկատմամբ տրամաբանական էր, քանի որ ռուսական զենքի հաղթարշավը խանությունների համար ինքնիշխանության կորուստ էր նշանակում: Մյուս կողմից, Ղարաբաղի, Շիրվանի և Դաղստանի տիրակալների՝ իրանական հրոսակների գործողություններից երկրի հետագա ավերման մտավախությունը ստիպում էր նրանց օգնության խնդրանքով ռուսական իշխանություններին դիմել[556]:

Այսպիսով, ռուսական զորքերը կարճ ժամանակում գրավել էին Ղազիկումուխը, Դերբենդը, Բաքուն, Շաքին, Շամախին, Ղարաբաղը, Գանձակը[557] և Կասպից ծովի ողջ ափը՝ Թերեք գետից մինչև Կուր գետի հունը: Նախատեսվում էր ռազմական գործողությունները նոր թափով վերսկսել 1797 թ. գարնանը և շարժվել դեպի Գիլան, ապա՝ Թեհրան: Արշավանքից առաջ ռուսական հրամանատարությունը որպես լրտեսներ է ուղարկում հայերի[558], որոնք տիրապետում էին պարսկերենին, լավ գիտեին տեղանքի աշխարհագրությունը և հարմարված էին բնակլիմայական պայմաններին:

---

[554] **П. Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., с. 389, 390; Հմմ. ՄՄ, ձեռ. 4331, էջ 92բ:

[555] **С. Гасарджян, В. Восканян,** Материалы по русско-закавказским отношениям конца XVIII в., – ՊԲՀ, 1977, № 1, էջ 238:

[556] История России изложенная персиянином, Пер. **Ад. Берже, –** «Русская старина», 1879, т. XXIV, янв., СПб., с. 168.

[557] Վրաց արքայազն Ալեքսանդրը դեռևս 1796 թ. փետրվարին պաշարել էր Գանձակը, սակայն պարենի պակասության պատճառով դադարեցրել էր պաշարումը: Երբ Աղա Մուհամմադ խանը Թիֆլիսը ավերելուց հետո վերադառնում է Իրան, Ղարաբաղի Իբրահիմ խանը («Իբրահիմ խան Արցախայ») դաշնակցելով Հերակլ արքայի հետ, 1796 թ. մարտին 3000-անոց զորքով և նույնքան էլ լեզգիներով, անհաջող հարձակվում է Գանձակի Ջավադ խանի վրա («Վարձ այս կովկասիան զօրաց իւրաքանչիւրի անձին էր եօթն կամ տասն դատակ, և մէկ լիտր դմակ ոչխարի» (ՄՄ, ԿԴ, թղթ. 18, վավ. 195, էջ 30): Ղատակ կամ դատաք (թուրք.) նշանակում է բամբակե ներկած կտոր, որից արխալուղ էին կարում (տե՛ս Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հտ. Ա (1780-1785), Աշխատասիրությամբ՝ **Վ. Գրիգորյանի,** Եր., 1984, էջ 565):

[558] Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арарат, с. 167.

Հյուսիս-արևելյան Այսրկովկասի վերաբերյալ ռուսական դիվանագիտության ծրագրերը բացահայտվում էին Վ. Զուբովի՝ գեներալ Ի. Սավելևին ուղղված 1796 թ. սեպտեմբերի 20-ի գրության մեջ: Ռուսական կայսության ռազմաքաղաքական շահերի համար Դերբենդի և Ղուբայի խանությունների նշանակությունը կարևորելով՝ Վ. Զուբովը ծրագրում էր դրանք ռուսական վերահսկողության տակ պահել՝ խանական տոհմը պահպանելով: Նախատեսվում էր Դերբենդում Ֆաթհ Ալի խանի դուստր Փերիջա խանումին իշխանության բերել Դերբենդում, իսկ խանի որդուն՝ Հասան բեկին՝ Ղուբայում: Նպատակահարմար էր միավորել Դերբենդի խանությունը և Թարքիի շամխալությունը՝ Փերիջա խանումին ամուսնացնելով շամխալի որդու հետ (այդ ժամանակ շամխալը իշխանությունից հրաժարվել էր հօգուտ որդու)[559]:

Փաստորեն, 1750-1780-ական թթ. ընթացքում վերածնվում էր Ֆաթհ Ալի խանի ստեղծած լայնարձակ իշխանապետությունը, բայց ռուսական գերիշխանության ներքո, իսկ Թարքիի շամխալության միջոցով հնարավորություն էր ստեղծվում վերահսկել Դաղստանի մյուս իշխանություններին: Անհրաժեշտության դեպքում շամխալը կարող էր մինչև 40000 հետևակ մարտի դաշտ դուրս բերել: Թարքիի շամխալը Շամախիի, Ղուբայի և Բաքվի խանություններում մի շարք գյուղերի էր տնօրինում, որպես «նվեր» և դրանցից տարեկան եկամուտ էր հավաքագրում շուրջ 30000 ռուսական արծաթ՝ փողով[560]:

Արշավանքը դեռևս չավարտած՝ ռուսական իշխանություններն արդեն մշակել էին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի հեռանկարի տեսլականը: Պ. Զուբովին ուղղված 1796 թ. հոկտեմբերի 15-ի նամակում Վ. Զուբովը նշում էր, որ Դաղստանի և Շիրվանի միավորումը հնարավորություն կտար վերահսկել Թերեք գետից մինչև Կուր գետն ընկած տարածքների ռազմաքաղաքական ու առևտրա-տնտեսական իրավիճակը: Եթե Բաքուն դառնար ռուսական, ապա, բաց սահմաններով ու անհարմար աշխարհագրական դիրք ունեցող Շամախիի խանությունը հարկադրված կլիներ ճանաչել ռուսական գերիշխանությունը: Այդ դեպքում հնարավոր կլիներ վերահսկել և ի

[559] **Н. Дубровин,** История войны и владычества русских на Кавказе, ч. III, с. 156-157.
[560] Архив АН СССР, ф. 99, оп. 2, № 13, л. 40; **П. Бутков,** Сведения о кубинском и дербентском владениях. 1798 г., – История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, Под ред. **М. О. Косвена** и **Х. М. Хашаева,** Москва, 1958, с. 211.

վերջո, որպես Կովկասյան գծի անվտանգության լավագույն երաշխիք հպատակեցնել Դաղստանի լեռնական ժողովուրդներին[561]:

Փաստորեն, Վ. Զուբովի քաղաքական ծրագրով Հարավային Դաղստանի և Շիրվանի տարածքների վրա Ռուսական կայսրության հովանու ներքո մուսուլմանական պետություն էր ստեղծվելու: Նոյեմբերի 6-ին մահանում է Եկատերինա Բ կայսրուհին, և գահ բարձրացած Պավել Ա-ն (1796-1801) Կասպիական արշավանքը դադարեցնելով, շրջադարձային փոփոխություններ է մտցնում կայսրության կովկասյան քաղաքական ուղեգծում: Սակայն դա չէր նշանակում, թե ռուսական կառավարող շրջանակները հրաժարվել էին Այսրկովկասից: Ժ. Անանյանն իրավացիորեն նշում է, որ թեև XVIII վերջին ամբողջ Հյուսիսային սևծովյան շրջանն արդեն գտնվում էր կայսրության տիրապետության տակ, իսկ երկու ռուս-թուրքական պատերազմներն ավարտվել էին Ռուսաստանի հաղթանակով, այնուամենայնիվ, կայսրությունն ի վիճակի չէր իրականացնել Այսրկովկասի միացումը[562]: Ռուսական կայսր Պավել Ա-ն և նրա շրջապատը գտնում էին, որ ռուսական զորքին հաջողվել էր վերականգնել Աղա Մուհամմադ խանի ավերիչ արշավանքից հետո Այսրկովկասում խախտված ռազմավարական կայունությունը: Այդ անհրաժեշտությունը հատկապես չեզոքացավ Իրանի տերության տիրակալի սպանությունից հետո 1797 թ.:

Այսպիսով, XVIII դ. 90-ական թթ. Ռուսական կայսրությանը հաջողվել էր կյանքի կոչել Պետրոս Ա-ի արևելյան քաղաքականության ուղենիշը. ռուսական վերահսկողություն հաստատել Դերբենդից մինչև Իրանի տերության խորքը ձգվող տարածքներում որպես Հնդկաստան տանող հուսալի ճանապարհ: Հետևաբար, 1790-ական թթ., Ռուսական կայսրությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների հետ հարաբերությունները հստակ կառուցում էր իր ռազմաքաղաքական և առևտրա-տնտեսական շահերի համատեքստում: Բաքու քաղաք-նավահանգիստը համարվում էր ռուս-իրանական առևտրային հարաբերությունների զարգացման «միակ հարմար և

---

[561] **Н. Дубровин,** История войны и владычества русских на Кавказе, ч. III, с. 158-159.

[562] **Ժ. Անանյան**, Հայ-ռուսական հարաբերությունները, նախադրյալները, փուլերը, պրոբլեմի նկատմամբ մոտեցումները, – ԼՀԳ, 1991, № 1, էջ 16:

շահավետ» վայրը[563]: Նրա ռազմավարական նշանակությամբ էր բացատրվում այն, որ քաղաքում ամրություններ կառուցելու նպատակով նախատեսվում էր 1797 թ. հատկացնել 283 859 ռուբլի, իսկ Թարքիին՝ 90634 ռուբլի[564]: Բացի այդ՝ նախատեսվում էր Կուր և Արաքս գետերի գետկիցից խառնարանից քիչ հեռու՝ Ջավադի մոտակայքում, Կուրի ձախ ափին, քաղաք-ամրություն կառուցել՝ կոչելով Եկատերինասերդ[565], որպես Ռուսական կայսրության ռազմական, քաղաքական, առևտրային ու տնտեսական շահերի ռազմավարական հենակետ:

Այսպիսով, 1791 թվականից սկսած Ռուսական կայսրության և խանությունների քաղաքական հարաբերությունների պատմությունը զարգացման *երրորդ շրջափուլն է* թևակոխում և շարունակվում է մինչև Աղա Մուհամմադ խանի 1795 թ. ձեռնարկած արշավանքն Այսրկովկաս: Զենդերի արքայատոհմի երերուն վիճակից օգտվելով, և երկրորդ ռուս-թուրքական պատերազմում հաղթելով, Ռուսաստանը ծրագրում էր իրականացնել կայսրությանը Հյուսիս-արևելյան Այսրկովկասի *միացումը դիվանագիտական ճանապարհով*:

Խորհրդային պատմագիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, թե 1795 թ. Այսրկովկասի խաների վերաբերմունքն Աղա Մուհամմադ խանի նկատմամբ «ակնհայտորեն թշնամական էր» [566] ՝ չի համապատասխանում իրականությանը: Այսրկովկասի խաների քաղաքական վարքագիծը խանությունների անվտանգության խնդիրներով էր թելադրված:

Կուրից հյուսիս գտնվող կիսանկախ խանություններն, ի դեմս Աղա Մուհամմադ խանի արշավանքի, առաջին անգամ քաղաքական կարգավիճակի կորստյան իրական վտանգի հետ բախվեցին: Մյուս կողմից, «1795 թ. թիֆլիսյան աղետը»[567] կասկածի տակ էր առել Ռուսական կայսրության հովանավորության օգտակարությունը: Արդյոք

---

[563] **В. Зубов,** Общее обозрение торговли с Азиею, – «Русский архив», 1873, кн. I, с. 886.
[564] **Н. Дубровин,** История войны и владычества русских на Кавказе, ч. III, с. 194.
[565] **В. Зубов,** նշվ. աշխ., էջ 889-890:
[566] **В. Левиатов,** նշվ. աշխ., էջ 166:
[567] Ժամանակակից ռուսական պատմագիտության մեջ այդպես են կոչում 1795 թ. Աղա Մուհամմադ խանի ներխուժումը Թիֆլիս (**О. Айрапетов, М. Волхонский, В. Муханов,** Дорога на Гюлистан… Из истории российской политики на Кавказе во второй половине XVIII – первой четверти XIX в, Москва, 2014, с. 13):

արժե՞ր հանուն ռուսական հովանավորության «դաջարական վտանգին» ենթարկվել[568]: Հատկանշական է, որ 1780-ական թթ. Արևելյան Վրաստանում հատվող պղնձի դրամների վրա երկգլխանի ռուսական արծիվ էին պատկերում[569]՝ մուսուլմանական (հիջրայի) և քրիստոնեական թվագրմամբ, սակայն 1796 թվականից այն վերանում է[570]:

Խուսանավելու հայեցակարգը 1795 թ. կորցրել էր իր կենսունակությունը, և Հյուսիս-արևելյան Այսրկովկասը վերադարձվել էր Իրանի տերության պետական համակարգ: Խանությունների համար հասունացել էր Ռուսական, Օսմանյան կայսրությունների և Իրանի տերության միջև քաղաքականապես կողմնորոշվելու պահը:

1747-1791 թթ. ռուսական իշխանությունները Օսմանյան կայսրության զսպման քաղաքականության հայեցակարգին հավատարիմ լինելով, Իրանը վերամիավորելու համար իրանական խաների շրջանում «երկրորդ Նադիր խանին էին փնտրում»: Բավականաչափ ռազմաքաղաքական ռեսուրսներ չունենալով Օսմանյան կայսրությանը հակազդելու համար, Ռուսաստանը փորձում էր նրան հակադրել միավորված Իրանական պետությունը և հավասարակշռել ուժերի բաշխումը տարածաշրջանում: Հետևաբար, եթե Աղա Մուհամմադ խանը Իրանի տերության գահին հաստատվեր մի քանի տասնամյակ առաջ, ապա Ռուսաստանը «կներեր խանին՝ նրա նետած հանդուգն մարտահրավերի համար»[571]:

XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական վիճակը Ռուսական կայսրությանը ստիպում էր վերանայել խանությունների նկատմամբ այսրկովկասյան քաղաքականության հայեցակարգը: 1796 թ. փետրվարին Վ. Զուբովին տրված հրամանագրով ձևավորվում է Ռուսաստանի այսրկովկասյան քաղաքականության *չորրորդ շրջափուլը* (մինչև 1796 թ. նոյեմբեր)՝ հիմք դնելով Հյուսիս-արևելյան Այսրկովկասը *զենքի ուժով միավորելու հայեցակարգին*: Ռուսական պետության աշխարհաքաղաքական դիրքերի

---

568 Հմմ. **M. Atkin,** The strange death of Ibrahim Khalil Khan of Qarabagh, – «Iranian Studies», vol. XII, № ½ (Winter-Spring, 1979), p. 85.

569 **Е. Пахомов**, Монетные клады Азербайджана и Закавказья - Труды о-ва обследования и изучения Азербайджана, вып. III, Баку, 1926, с. 71.

570 **Е. Пахомов,** Монеты Грузии, с. 263-264.

571 Հմմ. **Ժ. Անանյան,** նշվ. աշխ., էջ 15:

վերահաստատման նպատակով կազմակերպվում է Կասպիական արշավանքը՝ նպատակ ունենալով Արևելյան Կովկասում ռուսական գերիշխանություն հաստատել և «պատժել» Աղա Մուհամմադ խանին:

Ռուսաստանի հարավային սահմաններից վտանգի հեռացման հնարավորությունը ռուսական կառավարող շրջանակները 1796 թ. տեսնում էին Կասպից ծովի արևմտյան ափին անվտանգության գոտու ստեղծմամբ՝ ի դեմս մուսուլմանական բուֆերային իշխանությունների:

Ամփոփելով նշենք, որ Ռուսական պետության XVIII դ. երկրորդ կեսի այսրկովկասյան քաղաքականությունը շարունակում էր Պետրոս Ա-ի նվաճողական քաղաքականությունը և պարարտ հող նախապատրաստեց XIX դ. առաջին կեսին այն իրագործելու համար: Այսպես, 1800 թ. կայսր Պավել Ա-ն որոշում է Արևելյան Վրաստանը միացել Ռուսական կայսրությանը: Այդ հավակնոտ ծրագիրը կյանքի է կոչում Ալեքսանդր Ա կայսրը (1801-1825) 1801 թ. սեպտեմբերի 12-ի հրովարտակով[572]:

Հաշվի առնելով Այսրկովկասում ռուսական ազդեցության ուժեղացումը Ղարաբաղի, Շաքիի, Շամախիի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի խանությունները 1805-1806 թթ. ճանաչում են Ռուսական կայսրության գերիշխանությունը: Գյուլիստանի 1813 թ. հոկտեմբերի 12-ի հաշտության պայմանագրով այդ խանություններն անցնում են Ռուսական կայսրությանը[573] և XIX դ. առաջին կեսին ենթարկվում վարչա-տնտեսական փոփոխությունների[574]:

---

572 Սույն հրովարտակի ամբողջական տեքստը տես՝ ПСЗРИ, т. XVI, с. 782-784.

573 Սույն դաշնագրի ամբողջական տեքստը տես՝ ПСЗРИ, т. XXXII, с. 641-645.

574 Տե՛ս **В. Тунян,** Административно-экономическая политика самодержавия России в Закавказье. I пол. XIX в., Ер., 2007.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-արևելյան Այսրկովկասը Սև և Կասպից ծովերի ավազանի աշխարհաքաղաքական կարևորագույն հանգույց է՝ ռազմավարական ճանապարհ դեպի Մերձավոր Արևելք, և մշտապես գտնվել է տարածաշրջանային զարգացումների կենտրոնում՝ իր ուրույն դերակատարումն ունենալով ծավալվող քաղաքական գործընթացներում: Այս համատեքստում կարևորվում է XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների քաղաքական դերակատարումը, որոնք հայտնվել էին Իրանի տերության, Օսմանյան և Ռուսական կայսրությունների ռազմաքաղաքական և առևտրա-տնտեսական շահերի ոլորտում: Այս գործոնը ենթադրում էր որոշակի քաղաքական հարաբերությունների ձևավորում Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և վերոնշյալ շահագրգիռ տերությունների միջև:

Այս հարաբերութունների ուսումնասիրումը օգնում է ընդգծել ռազմավարական կարևորություն ունեցող այն հիմնահարցերը, որոնք կառուցողական դերակատարում ունեն ձևավորվող աշխարհաքաղաքական գործընթացներում:

Թեմայի շրջանակներում նպատակ ունենալով հետազոտել Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների և Ռուսական կայսրության հարաբերությունները XVIII դ. երկրորդ կեսի աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների համատեքստում և քննական դիտարկման ենթարկելով XVIII դ. երկրորդ կեսի Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունների ձևավորման գործընթացը, էթնոքաղաքական պատկերը, Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների նկատմամբ խանությունների ռազմավարությունը, ռուս-իրանական հակամարտության մեջ նրանց քաղաքական դիրքորոշումը, Ռուսական կայսրության հետ հարաբերությունների շրջափուլերի ուսումնասիրությունը՝ կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1. XVIII դ. երկրորդ կեսին տպագիր սկզբնաղբյուրներում և պաշտոնական գրագրություններում հանդիպող «թաթարներ» և «պարսիկներ» էթնիկական անվանումների նույնացումը այսօրվա ընկալմամբ «ադրբեջանցիների» հետ՝ չի համապատասխանում պատմական իրականությանը:

2. XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի տարածքում «ադրբեջանցի» էթնոս XX դ. քաղաքական ընկալմամբ գոյություն ունենալ չէր կարող։

3. Ինչպես պատմական նախորդ ժամանակաշրջաններում, XVIII դ. երկրորդ կեսին ևս հայ բնակչությունը պարտավորված էր գլխահարկ վճարել կիսանկախ խաներին։ Վերջիններիս ճնշումներից զերծ չէին նաև հայոց հոգևոր կենտրոնները՝ վանքերն ու եկեղեցիները։ Ի տարբերություն իրանական տիրակալների (Նադիր շահ, Ազադ խան, Քերիմ խան Զենդ)՝ Հյուսիս-արևելյան Այսրկովկասի ինքնիշխան խաները այլադավանների նկատմամբ կրոնական հանդուրժողականություն գրեթե չէին ցուցաբերում։ Հայկական բնակչության նկատմամբ տարվող սոցիալական ծանր քաղաքականությունը և կրոնական անհանդուրժողականությունը ստիպում էին հայերին բռնել գաղթի ճամփան։ Պատկերն ամբողջանում էր 1790-ական թթ. երկրորդ կեսին Աղա Մուհամմադ խանի արշավանքից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակի հետևանքով։

4. XVIII դ. երկրորդ կեսի քաղաքական իրավիճակի համատեքստում «խան» եզրույթը իմաստային որոշակի փոփոխությունների էր ենթարկվել։ Եթե նախկինում (Սեֆյան Իրանում, Նադիր շահի պետության շրջանակներում) խանը Սպահանից նշանակված իրանական պաշտոնյա էր, ով պատասխանատու էր շահի առջև, ապա XVIII դ. երկրորդ կեսին խանն ինքնիշխան, անսահմանափակ իշխանությամբ և լիազորություններով օժտված արևելյան տիրակալ էր։ Ավելին, ինքնիշխան խաները հաճախ ժառանգաբար էին փոխանցում իշխանությունը (Ղուբայում, Բաքվում)՝ փաստելով, որ նշված ժամանակահատվածում իրանական գերիշխանությունը Հյուսիս-արևելյան Այսրկովկասում ձևական բնույթ էր կրում։

5. XVIII դ. երկրորդ կեսին Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանությունները շարունակում էին Իրանի տերության համընդհանուր (համաիրանական) պետական դրամական քաղաքականության ավանդույթը։ Այսրկովկասյան խաները դրամահատության գործառույթն օգտագործում էին իրանական տիրակալների նկատմամբ իրենց քաղաքական դիրքորոշումը դրսևորելու համար։ Այդ փաստով նրանք իրականացնում էին որոշակի դիվանագիտություն, որն համահունչ էր Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խաների խուսանավելու քաղաքականությանը։

6. 1750-1780-ական թթ. Կասպից ծովի արևմտյան ափին՝ Դերբենդի, Ղուբայի, Շամախիի և Բաքվի խանություններում հաստատվել էր Ղուբայի Ֆաթհ Ալի խանի քաղաքական գերիշխանությունը, որը պայմանավորված չէր էթնիկական ընդհանրությամբ: Խնդրո առարկա ժամանակաշրջանում առաջին պլան էր մղվել խանությունների գոյության, նրանց անվտանգության ապահովման հարցը: Այդ իրադրության մեջ չկային մշտական դաշնակիցներ, կային մշտական շահեր, անվտանգության և ինքնիշխանության պահպանման հիմնախնդիրներ: Խանություններն ստիպված էին ինքնուրույնաբար կազմակերպել իրենց անվտանգությունը կամ էլ առավել կայուն ուժի շուրջ միավորվել: Տարածաշրջանի քաղաքական զարգացումները խաներին այլընտրանք չէին թողել, քան ճանաչել իրենցից առավել ուժեղի՝ Ղուբայի Ֆաթհ Ալի խանի գերիշխանությունը:

7. Ղուբայի Ֆաթհ Ալի խանի կողմից Շիրվանում իրականացվող նվաճողական քաղաքականությունը հնարավոր է դիտարկել Շիրվանշահերի պետության ավանդական քաղաքականության համատեքստում:

8. XVIII դ. երկրորդ կեսին Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների հետ ինքնուրույն դիվանագիտական հարաբերություններ կառուցելու հնարավորությունը թույլ էր տալիս Հյուսիս-արևելյան Այսրկովկասի խանություններին (Դերբենդ, Ղուբա, Բաքու, Շամախի) իրենց անվտանգությունն ու կիսանկախ կարգավիճակը պահպանել՝ դիմելով Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև *խուսանավելու քաղաքականությանը:*

9. Իրանի տերության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների ռազմաքաղաքական և առևտրա-տնտեսական շահերի համատեքստում XVIII դ. երկրորդ կեսի Հյուսիս-արևելյան Այսրկովկասի քաղաքական պատմության վերլուծությունը ցույց տվեց, որ խանությունների ինքնիշխանությանը նրանք սպառնում էին հավասարապես:

10. Ի տարբերություն XVIII դ. առաջին կեսի, երբ ռուս-թուրք-իրանական հարաբերությունները կարգավորվել էին մի շարք միջպետական պայմանագրերով, 1750-1780-ական թթ. Իրանը, Ռուսական և Օսմանյան կայսրությունները «գործում են» *չեզոքության ռազմավարության քողի տակ*՝ բացառելով ռազմական ներխուժումը տարածաշրջան:

